«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 1

«28» օգոստոսի 2025թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին խորհրդի 56 անդամները

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Օրակարգի հաստատում։
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
2. Մանկավարժական խորհրդի կազմի ընտրություն։
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
3. Մանկավարժական խորհրդի քարտուղարի ընտրություն։
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
4. 2024-2025 ուսումնական տարվա կատարած աշխատանքների ամփոփում և նոր ուսումնական տարվա անելիքներն ու խնդիրները։
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
5. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնական պլանի, տարիֆիկացիոն ցուցակի, դասացուցակի, դասաբաշխման քննարկում։
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
6. 2024-2025 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունքները և 2025-2026 ուսումնական տարվա խնդիրները։
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
7. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական պլանի քննարկում։
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)
8. 2025-2026 ուսումնական տարվա առարկայական ծրագրերի, օրացուցային-թեմատիկ պլանների, արտադասարանական խմբակների օրացուցային-թեմատիկ պլանների քննարկում։
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
9. Առարկայական մասնախմբերի նախագահների, դասվար-դաստղեկների, լաբորանտների, արտադասարանական խմբակների ղեկավարների հաստատում։
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
10. ՄԿԱ գծով համակարգողի, առարկայական մասնախմբերի նախագահների, դասվար-դաստղեկների, լաբորանտների, հատուկ մանկավարժի, գրադարանավարների, ուսուցչի օգնականների աշխատանքային պլանների քննարկում։
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
11. Դպրոցի ներքին կարգապահական կանոնների քննարկում։
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
12. 2025-2026 ուսումնական տարվա ԱՈՒՊ-ների, ԿԱՊԿՈՒ աշակերտների՝ դասապրոցեսին ներկա լինելու դասաժամերի քանակի և ուսուցչի կողմից օրվա պլանում այդ աշակերտների կրթության կազմակերպման վերաբերյալ նշում կատարելու մասին։
(զեկուցող՝ Ա. Ծատրյան)
13. Գրավոր աշխատանքների, լաբորատոր աշխատանքների, գործնական աշխատանքների և թեմաների ամփոփումների քանակի ու տեսակների քննարկում։
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
14. Ըստ նոր ՀՊՉ-ների՝ 1-9-րդ դասարաններում գնահատման չափանիշների հաստատում։
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
15. Դպրոցում երկարօրյա խմբերի կազմակերպում։
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
16. Նախագծային աշխատանքների թեմաների, պլանների, թեմատիկ պլանների, ղեկավարների, մատյանների և հանձնաժողովների կազմի հաստատում։
(զեկուցող՝ Ա. Առստամյան)

17. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում դասալսումների, փոխադարձ դասալսումների իրականացում:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

18. Դպրոցի 2024-2025 ուսումնական տարվա ներքին գնահատման հաշվետվության ներկայացում:

(զեկուցող՝ Մ. Մկրտչյան)

19. Դպրոցի հիմնանորոգման աշխատանքների հետ կապված՝ մինչև հիմնանորոգման ավարտը դասերի երկհերթ կազմակերպում:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

20. Դպրոցի վարչատնտեսական մասի աշխատողներ՝ Նարեկ Առստամյանին, Սիմոն Մաթունցին, Սամվել Գիգորյանին, Վարուժան Հարությունյանին աշխատավարձի 100%-ի չափով պարգևատրելու մասին հարցի քննարկում:

(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)

Լսեցին 1. Օրակարգի հաստատման մասին հարցը

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել մանկավարժական խորհրդի նիստի օրակարգը:

Լսեցին 2. Մանկավարժական խորհրդի կազմի ընտրության մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը ներկայացրեց այն կարգը, ըստ որի սահմանվում է հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի ձևավորման գործընթացը: Ըստ ներկայացված կարգի՝ մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են ուսումնական հաստատության բոլոր մանկավարժական աշխատողները: Խորհրդի նախագահին ի պաշտոնե հանդիսանում է դպրոցի տնօրենը, իսկ քարտուղարը ընտրվում է խորհրդի կազմից՝ բաց և թափանցիկ քվեարկությամբ: Նշվեց, որ խորհրդի ձևավորումը և գործունեությունը կարևոր նշանակություն ունեն ուսումնական հաստատության կառավարման արդյունավետության, ուսումնական գործընթացի բարելավման և գործընկերային համագործակցության խորացման տեսանկյունից:

Արտահայտվեցին՝ Անդամներ

Մանկավարժական խորհրդի անդամները նշեցին, որ ներկայացված կազմի վերաբերյալ որևէ առարկություն չունեն՝ ընդգծելով, որ այն լիովին համապատասխանում է սահմանված կարգին և ապահովում է դպրոցի բոլոր մանկավարժական աշխատողների ներկայացվածությունը խորհրդում: Նրանց կարծիքով՝ նման ընդգրկուն կազմը կնպաստի քննարկումների արդյունավետությանը և կբարձրացնի խորհրդի կողմից կայացվող որոշումների հիմնավորվածությունը:

Որոշեցին՝ Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա մանկավարժական խորհրդի կազմը.

1. Ավանեսյան Սերգեյ
2. Գևորգյան Արմիդա
3. Առստամյան Արաքսյա
4. Հովսեփյան Արտուր
5. Հայրապետյան Ալեքսանդր
6. Գալստյան Նունե
7. Աղաբեկյան Անուշ
8. Մալխասյան Կարինե
9. Ավագյան Գայանե
10. Գրիգորյան Վարդ
11. Փարսադանյան Տաթևիկ

12. Աղաբեկյան Անահիտ
13. Հարությունյան Արմինե
14. Ջավահիրյան Իրինա
15. Պողոսյան Կարինե
16. Դոլունց Արուս
17. Շալունց Ռիտա
18. Հարությունյան Սոնա
19. Սարգիսջանյան Անուշ
20. Հովսեփյան Շահանե
21. Սարգսյան Լիլիթ
22. Պետրոսյան Մարգարիտա
23. Հայրապետյան Մարիամ
24. Գյուրջյան Շահանե
25. Բաղդասարյան Լուսինե
26. Գրիգորյան Գայանե
27. Գրիգորյան Լիանա
28. Գրիգորյան Թագուհի
29. Դանիելյան Մերի
30. Խաչատրյան Ռուզաննա
31. Բակունց Արմանուշ
32. Օհանյան Հայկ
33. Ալավերդյան Հերմինե
34. Զեյնալյան Ալլա
35. Բաղդասարյան Սիրուշ
36. Մարտիրոսյան Արփինե
37. Դաջունց Անուշ
38. Մկրտչյան Մերի
39. Ակլունց Շահանե
40. Ղուլյան Օլյա
41. Արզումանյան Կարինե
42. Հարությունյան Մարետա
43. Արզումանյան Ռոբերտ
44. Աբգարյան Աննա
45. Միրզոյան Սոնա
46. Հովհաննիսյան Թամարա
47. Ծատրյան Արփինե
48. Ակլունց Կարինե
49. Բակունց Հայարփի
50. Օհանյան Հասմիկ
51. Էլյազյան Անուշ
52. Երիցյան Արշալույս
53. Ղուլունց Օլյա
54. Շեգունց Կարինե
55. Հովսեփյան Հեղինե
56. Մաշուրյան Սյուզաննա
57. ԾԽ ներկայացուցիչ

Լսեցին 3. Մանկավարժական խորհրդի քարտուղարի ընտրության մասին հարցը։

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը տեղեկացրեց, որ նախորդ ուսումնական տարում մանկավարժական խորհրդի քարտուղարի պարտականությունները կատարել է Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման ուսուցչուհի Ալլա Զեյնալյանը։ Նա նշեց, որ հաշվի առնելով վերջինիս պատասխանատվությամբ և արդյունավետությամբ կատարված

աշխատանքը՝ նպատակահարմար է Ալլա Զեյնալյանին առաջարկել շարունակել մանկավարժական խորհրդի քարտուղարի պարտականությունները նաև նոր ուսումնական տարում, եթե վերջինս չի ունենա առարկություններ։

Արտահայտվեցին՝ Ա. Գևորգյանը, Ա. Առստամյանը։

Արտահայտվողները միաձայն աջակցեցին զեկուցողի առաջարկությանը՝ նշելով, որ նպատակահարմար է մանկավարժական խորհրդի քարտուղարի պաշտոնը թողնել անփոփոխ։ Նրանք ընդգծեցին, որ Ալլա Զեյնալյանը պատասխանատվությամբ է կատարել իր պարտականությունները և ցուցաբերել նախաձեռնողականություն ու կազմակերպչական բարձր կարողություններ։ Այդ պատճառով առաջարկվեց հնարավորություն տալ նրան շարունակել մանկավարժական խորհրդի քարտուղարի պարտականությունները նաև ընթացիկ ուսումնական տարում։

Որոշեցին՝ Ալլա Զեյնալյանի թեկնածությունը կրկին հաստատել 2025-2026 ուսումնական տարվա մանկավարժական խորհրդի քարտուղարի պաշտոնում։

Լսեցին 4. 2024-2025 ուսումնական տարվա կատարած աշխատանքների ամփոփման և նոր ուսումնական տարվա անելիքների ու խնդիրների մասին հարցը։

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը մանրամասն ներկայացրեց 2024-2025 ուսումնական տարում դպրոցում իրականացված աշխատանքների հիմնական ուղղությունները, ձեռքբերումներն ու հաջողությունները՝ ընդգծելով ուսումնական, դաստիարակչական և կազմակերպչական ոլորտներում գրանցված նկատելի առաջընթացը։ Նշվեց, որ տարվա ընթացքում իրականացված նախաձեռնությունները նպաստել են կրթական գործընթացի արդյունավետության բարձրացմանը, ուսուցիչների մասնագիտական աճին և աշակերտների ուսումնական առաջադիմությանը։

Արտահայտվեցին՝ Մ. Դանիելյանը, Ա. Սարգիսջանյանը

Մանկավարժական խորհրդի անդամների մասնակցությամբ կազմակերպվեց արդյունավետ և կառուցողական քննարկում, որի ընթացքում վերլուծվեցին կատարված աշխատանքները, մատնանշվեցին հաջող փորձերը և քննարկվեցին նաև առկա բացթողումները։

Խորհրդի անդամները հանդես եկան տարբեր առաջարկություններով՝ ուղղված կրթական գործընթացի որակի բարձրացմանը և ուսումնական միջավայրի շարունակական բարելավմանը։ Քննարկման ընթացքում առանձնահատուկ ուշադրություն դարձվեց նոր ուսումնական տարվա առաջնահերթություններին, սպասվող փոփոխություններին և դրանց արդյունավետ իրականացման համար ձեռնարկվելիք քայլերին։

Արտահայտվողներն առաջարկեցին հիմք ընդունել զեկուցողի կողմից ներկայացված դպրոցի գործունեության հաշվետվությունը. հաշվի առնելով նաև առկա բացթողումները՝ գործունեությունը գնահատել լավ։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն դպրոցի 2024-2025 ուսումնական տարվա կատարողականը։

Լսեցին 5. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնական պլանի, տարիֆիկացիոն ցուցակի, դասացուցակի, դասաբաշխման քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը տեղեկացրեց, որ 2025-2026 ուսումնական տարվա ուսումնական պլանի, տարիֆիկացիոն ցուցակի և դասացուցակի կազմման հիմքում ընկած են եղել գործող օրենսդրական և նորմատիվ փաստաթղթերը՝ ներառյալ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի համապատասխան որոշումները, ինչպես նաև տնօրենության և առարկայական մեթոդմիավորումների առաջարկությունները։

Նա շեշտեց, որ ուսումնական պլանի, տարիֆիկացիոն ցուցակի, դասացուցակի և դասաբաշխման ձևավորման գործընթացում լիարժեքորեն հաշվի են առնվել դպրոցի պայմաններն ու հնարավորությունները՝ ապահովելով ուսումնական գործընթացի կազմակերպման իրատեսական և արդյունավետ մոտեցում։

Ջեկուցողը ներկայացրեց նաև առաջարկություն՝ 2025-2026 ուսումնական տարվա համար ստեղծել տարիֆիկացիոն հանձնաժողով և հաստատել դրա անվանական կազմը.

- Կոստանդյան Դավիթ – վարչատնտեսական մասի համակարգող
- Ավանեսյան Սերգեյ – տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար
- Թոխունց Մայրանուշ – գլխավոր հաշվապահ
- Հովսեփյան Արտուր – արհմիության նախագահ
- Պետրոսյան Մարգարիտա – Օտար լեզուների մեթոդմիավորման նախագահ, ուսուցիչ
- Առստամյան Արաքսյա – տնօրենի տեղակալ
- Հայրապետյան Ալեքսանդր – կառավարման խորհրդի անդամ, ուսուցիչ

Նշվեց, որ հանձնաժողովը կիրականացնի տարիֆիկացիոն գործընթացի կազմակերպումն ու վերահսկողությունը՝ ապահովելով դրա թափանցիկությունն ու արդյունավետությունը։

Արտահայտվեցին՝ Ռ. Շալունցը, Մ. Պետրոսյանը, Ա. Դաջունցը, Մ. Դանիելյանը, Ա. Աբգարյանը, Ա. Առստամյանը, Մ. Թոխունցը

Մեթոդմիավորման նախագահներն իրենց խոսքում անդրադարձան նախորդ ուսումնական տարվա ավարտին իրականացված նախնական ժամաբաժանմանը՝ նշելով, որ այն կատարվել է սահմանված կարգի համաձայն։ Ժամաբաժանման հիմք են հանդիսացել հանրակրթական պետական չափորոշիչը, առարկայական չափորոշիչներն ու ծրագրերը։ Արտահայտվողները կարևորեցին դպրոցի առարկայական մասնախմբերի կողմից կատարված նախնական և հիմնական ժամաբաժանումների պահպանումը՝ դրանք համարելով արդյունավետ և հիմնավորված։

Քննարկման ընթացքում անդրադարձ կատարվեց նաև դպրոցական բաղադրիչի տրամադրման հարցին։ ՄՄ նախագահները նշեցին, որ այդ հարցը մանրամասն քննարկվել է մեթոդմիավորումներում և առաջարկվել է 2025-2026 ուսումնական տարում ևս շարունակել նույն սկզբունքը՝ դպրոցական բաղադրիչը տրամադրել այն առարկաներին, որոնք այն ունեցել են նախորդ ուսումնական տարում։ Նրանք հավելեցին, որ 1-9-րդ դասարաններում դպրոցական և անհատական բաղադրիչների բաշխումն իրականացվել է սահմանված կարգի համաձայն՝ ապահովելով ուսումնական գործընթացի համաչափությունը և արդյունավետությունը։

Այնուհետև Արաքսյա Առստամյանը մանրամասն ներկայացրեց 2025-2026 ուսումնական տարվա ուսումնական պլանը՝ ներկայացնելով առարկայացանկը, շաբաթական ժամերի առավելագույն քանակը և դրանց բաշխման սկզբունքները՝ հիմնավորելով ընդունված լուծումները գործող նորմատիվ փաստաթղթերով։

Արաքսյա Առստամյանը նաև խոսեց դպրոցական և անհատական (ընտրովի) բաղադրիչների տրամադրման մասին, առաջարկեց դպրոցական բաղադրիչը տրամադրել հետևյալ սկզբունքով.

- 1-ին դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Կերպարվեստ» առարկային՝ 1 դասաժամ, «Ֆիզկուլտուրա» առարկային՝ 1 դասաժամ։
- 2-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 5 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Ես և շրջակա աշխարհը» առարկային՝ 2 դասաժամ, «Տեխնոլոգիա» առարկային՝ 1 դասաժամ։

- 3-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Ռուսաց լեզու» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Ես և շրջակա աշխարհը» առարկային՝ 1 դասաժամ։
- 4-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Ռուսաց լեզու» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Ես և շրջակա աշխարհը» առարկային՝ 1 դասաժամ։
- 5-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 5 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «ԹԳՀԳ» առարկային՝ 1 դասաժամ, «Տեխնոլոգիա» առարկային՝ 1 դասաժամ։
- 6-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 6 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «ԹԳՀԳ» առարկային՝ 1 դասաժամ, «Տեխնոլոգիա» առարկային՝ 1 դասաժամ, «Ֆիզկուլտուրա» առարկային՝ 1 դասաժամ։
- 7-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Հայոց լեզու» առարկային՝ 1 դասաժամ, «Ռուսաց լեզու» առարկային՝ 1 դասաժամ։
- 8-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 3 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Գրականություն» առարկային՝ 1 դասաժամ։
- 9-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 2 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ։

Արաքսյա Առստամյանն առաջարկեց նաև 1-9-րդ դասարաններում անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել հետևյալ սկզբունքով.

- 1-ին դասարանում անհատական (դպրոցական) բաղադրիչից ժամաքանակ չի հատկացվում
- 2-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը
- 3-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը
- 4-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը
- 5-րդ դասարանում շաբաթական 3 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 1-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ)։
- 6-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ)։

- 7-րդ դասարանում շաբաթական 12 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 4-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել՝
  - արտադասարանական խմբակների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ)։
  - նախագծային աշխատանքների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ։
- 8-րդ դասարանում շաբաթական 12 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 4-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել՝
  - արտադասարանական խմբակների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ) և «Մասնագիտական կողմնորոշման ակումբ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 1 դասաժամ (երկու կիսամյակների համար)։
  - նախագծային աշխատանքների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ։
- 9-րդ դասարանում շաբաթական 12 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 4-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել՝
  - արտադասարանական խմբակների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ) և «Մասնագիտական կողմնորոշման ակումբ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 1 դասաժամ (երկու կիսամյակների համար)։

նախագծային աշխատանքների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ։

Արտահայտվողները խոսեցին նաև տարիֆիկացիոն ցուցակի մասին: Հաշվապահ Մայրանուշ Թոխունցը ներկայացրեց 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի տարիֆիկացիոն պլանը, անդրադարձ կատարեց փոփոխություններին։

Որոշեցին՝ Հիմք ընդունելով տնօրենության, առարկայական մեթոդմիավորումների առաջարկությունները, հաշվի առնելով սահմանված համապատասխան պայմանների առկայությունը՝ մանկավարժական խորհուրդը որոշեց (կցվում է).

1. Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի տարիֆիկացիոն պլանը, ուսումնական պլանը, դասաբաշխումը, դասացուցակը։
2. Դպրոցական բաղադրիչը տրամադրել հետևյալ սկզբունքով.
   - 1-ին դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Կերպարվեստ» առարկային՝ 1 դասաժամ, «Ֆիզկուլտուրա» առարկային՝ 1 դասաժամ։
   - 2-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 5 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Ես և շրջակա աշխարհը» առարկային՝ 2 դասաժամ, «Տեխնոլոգիա» առարկային՝ 1 դասաժամ։

- 3-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Ռուսաց լեզու» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Ես և շրջակա աշխարհը» առարկային՝ 1 դասաժամ։
- 4-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Ռուսաց լեզու» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Ես և շրջակա աշխարհը» առարկային՝ 1 դասաժամ։
- 5-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 5 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «ԹԳՀԳ» առարկային՝ 1 դասաժամ, «Տեխնոլոգիա» առարկային՝ 1 դասաժամ։
- 6-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 6 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «ԹԳՀԳ» առարկային՝ 1 դասաժամ, «Տեխնոլոգիա» առարկային՝ 1 դասաժամ, «Ֆիզկուլտուրա» առարկային՝ 1 դասաժամ։
- 7-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Հայոց լեզու» առարկային՝ 1 դասաժամ, «Ռուսաց լեզու» առարկային՝ 1 դասաժամ։
- 8-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 3 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Գրականություն» առարկային՝ 1 դասաժամ։
- 9-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 2 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ։

3. Անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել հետևյալ սկզբունքով.
   - 1-ին դասարանում անհատական (դպրոցական) բաղադրիչից ժամաքանակ չի հատկացվում
   - 2-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը
   - 3-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը
   - 4-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը
   - 5-րդ դասարանում շաբաթական 3 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 1-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ)։
   - 6-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ)։

- 7-րդ դասարանում շաբաթական 12 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 4-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել՝
  - արտադասարանական խմբակների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ)։
  - նախագծային աշխատանքների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ։
- 8-րդ դասարանում շաբաթական 12 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 4-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել՝
  - արտադասարանական խմբակների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ) և «Մասնագիտական կողմնորոշման ակումբ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 1 դասաժամ (երկու կիսամյակների համար)։
  - նախագծային աշխատանքների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ։
- 9-րդ դասարանում շաբաթական 12 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 4-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել՝
  - արտադասարանական խմբակների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ) և «Մասնագիտական կողմնորոշման ակումբ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 1 դասաժամ (երկու կիսամյակների համար)։

նախագծային աշխատանքների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ։

Լսեցին 6. 2024-2025 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունքների և 2025-2026 ուսումնական տարվա խնդիրների մասին հարցը։

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ նախորդ ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունքները ընդհանուր առմամբ գոհացուցիչ են եղել։ Նա ընդգծեց, որ տարվա ընթացքում դպրոցը կարևոր հաջողություններ է գրանցել ինչպես ուսումնական, այնպես էլ մրցութային և օլիմպիական հարթակներում։ Տարածքային, մարզային և հանրապետական փուլերի առարկայական օլիմպիադաներում դպրոցի աշակերտները հանդես են եկել արժանապատվորեն՝ գրանցելով մրցանակային տեղեր և արժանանալով խրախուսանքի։

Զեկուցողը հատուկ նշեց նաև «Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիրի կողմից կազմակերպված «Հանրապետական հանրակրթական բաց օլիմպիադա 2025»-ում գրանցված հաջողությունները, ինչը վկայում է ուսուցիչների հետևողական աշխատանքի և աշակերտների գիտելիքների որակի մասին։

Նշվեց, որ գոհացուցիչ են եղել նաև գիտելիքների ստուգումների և ավարտական քննությունների արդյունքները։ Միաժամանակ արձանագրվել

են մի շարք թերություններ, որոնց վերացման համար, ըստ զեկուցողի, անհրաժեշտ է ցուցաբերել հետևողականություն, համագործակցային մոտեցում և շարունակական բարեխիղճ աշխատանք՝ ապահովելու ուսումնական գործընթացի ավելի բարձր արդյունավետություն առաջիկա ուսումնական տարում:

Արտահայտվեցին՝ Ռ. Շալունցը, Մ. Պետրոսյանը, Մ. Դանիելյանը, Ս. Ավանեսյանը, Ա. Առստամյանը, Ա. Գևորգյանը

Ռ. Շալունց, Տարրական դասարանների ՄՄ նախագահ

Տարրական դասարանների մեթոդմիավորումը նախորդ ուսումնական տարում պատշաճ կերպով կատարել է իր աշխատանքները: Նոր չափորոշիչների ներդրման հետ կապված երկրորդ դասարաններում գնահատումն իրականացվել է բնութագրիչներով: Կատարվել են դասալսումներ, իրականացվել արդյունավետ քննարկումներ: Պարզվել է, որ վերոնշյալ առարկաների դրվածքները դպրոցում բավարար հիմքերի վրա են: Իհարկե, եղել են նաև թերություններ, որոնց շտկման նպատակով իրականացվել են նպատակաուղղված քայլեր»:

Մ. Պետրոսյան, Օտար լեզուների ՄՄ նախագահ

Օտար լեզուների մեթոդմիավորումը նախորդ ուսումնական տարում պատշաճ կերպով կատարել է իր աշխատանքները: Մեթոդմիավորման ուսուցիչների կողմից ուսումնական տարվա ընթացքում իրականացվել են փոխադարձ դասալսումներ, կատարվել են քննարկումներ:

Մ. Դանիելյան, Հումանիտար առարկաների ՄՄ նախագահ

Հումանիտար առարկաների մեթոդմիավորումը նախորդ ուսումնական տարում իր աշխատանքները կատարել է պատշաճ կերպով: Մեծ ուշադրություն է դարձվել համագործակցային ուսուցման մեթոդներին, դասապրոցեսում աշակերտների ընդգրկվածությանը, ինքնուրույնությանը, ուսումնական տարվա ընթացքում հետևողականորեն վերահսկվել է չափորոշչահեն կրթության իրականացումը, վեր են հանվել գնահատման համակարգի խնդիրները նոր չափորոշիչներով դասավանդվող դասարաններում:

Ա. Առստամյան, տնօրենի տեղակալ

Նախորդ ուսումնական տարում դպրոցում ուսումնական գործընթացը կազմակերպվել է արդյունավետ և պատշաճ կերպով: Դասալսումների արդյունքները ցույց են տվել, որ ուսուցիչները հետևողականորեն իրականացնում են չափորոշչահեն կրթություն՝ համահունչ նոր ծրագրային պահանջներին: Կրթական համակարգում իրականացվող բարեփոխումները դրական ազդեցություն են ունենում ուսուցման որակի և արդյունքների վրա՝ խթանելով նորարարական մոտեցումների կիրառումը:

Ուսուցման բարձր արդյունավետությունը ապահովելու համար անհրաժեշտ է հաշվի առնել սովորողների տարիքային առանձնահատկությունները, գիտելիքների կայունությունը և մտքի ճկունության զարգացումը: Այս համատեքստում մեծ կարևորություն ունի նաև դասավանդման մեթոդների ճիշտ ընտրությունն ու համադրությունը: Ուսուցիչները հաջողությամբ կիրառում են ավանդական և ժամանակակից մեթոդների համակցություն, ինչը նպաստում է սովորողների ակտիվ մասնակցությանը և կրթական գործընթացի որակի բարձրացմանը:

Ա. Առստամյանը հատուկ անդրադարձել է նաև մատենավարությանը՝ շեշտելով, որ ուսուցիչները պետք է հետևողականորեն կատարեն ամենօրյա գրառումները էլեկտրոնային մատյաններում՝ բացառելով բացթողումները: Նա կարևորել է նաև թեմատիկ պլանների և մատյանի օրացուցային համապատասխանությունը, ինչը երաշխավորում է ուսումնական գործընթացի կազմակերպվածությունն ու հաշվետվողականությունը:

Ա. Գևորգյան, ՄԿՄ գծով համակարգող

Ուսումնական տարվա ընթացքում դպրոցում տեղի են ունեցել միջոցառումներ, մրցույթ-վիկտորինաներ: Սովորողները ակտիվ մասնակցություն են ունեցել համադպրոցական, տարածքային միջոցառումներին: Դպրոցում գործող արտադասարանական առարկայական, գեղարվեստական խմբակների մեծ մասը ծառայել են իրենց նպատակին, ունեցել են գործունեության հստակ ծրագիր:

Որոշեցին՝ Հանձնարարել տնօրենությանը և մասնախմբերի ղեկավարներին.

1. Ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանում նկատի ունենալ զեկուցման մեջ և հարակից ելույթներում կատարած առաջարկությունները:
2. Դասի արդյունավետության բարձրացման նպատակով ուշադրություն դարձնել դասերի պլանավորմանը՝ հաշվի առնելով ծրագրային և չափորոշչային պահանջները:
3. Դասավանդման որակը և սովորողների առաջադիմությունը բարձրացնելու նպատակով կիրառել նորագույն տեխնոլոգիաներ՝ կարևորելով ուսուցման ավանդական և ժամանակակից մեթոդների ճկուն և արդյունավետ համադրումը:
4. Հետևողականորեն իրականացնել մեթոդմիավորումների, արտադասարանական դաստիարակչական աշխատանքները:
5. Աշակերտներին ապահովել դասագրքերով, դասագրքերի վարձավճարների գանձումն իրականացնել սահմանված ժամկետում:
6. Իրականացնել ամենօրյա վերահսկողություն դասագրքերի հետ խնամքով վերաբերմունքին, ուշադրության կենտրոնում պահել ուսումնական գույքի, շենքի օգտագործման և պահպանման հարցերը:

Լսեցին 7. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական պլանի քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքի պլանը՝ ներկայացնելով դրա հիմնական ուղղությունները, նպատակներն ու ակնկալվող արդյունքները: Նա մանրամասնորեն անդրադարձավ պլանի առանձին կետերին՝ ընդգծելով դրանց նպատակային նշանակությունը և իրականացվող միջոցառումների կրթական ու դաստիարակչական արժեքը:

Զեկուցողը նշեց, որ պլանը մշակվել է՝ հիմք ընդունելով նախորդ տարվա ձեռքբերումներն ու վերլուծված թերությունները, և նպատակ ունի ապահովելու աշակերտների բազմակողմանի զարգացում, ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպում և դպրոցի դաստիարակչական միջավայրի հարստացում:

Նա նաև կարևորեց ուսուցիչների, աշակերտների և ծնողների համագործակցության դերը պլանի արդյունավետ իրականացման գործում՝ ընդգծելով, որ առաջիկա ուսումնական տարում կկենտրոնանան աշակերտակենտրոն մոտեցումների, հայրենասիրական դաստիարակության, արժեքահենք կրթության և ստեղծագործական նախաձեռնությունների խթանման վրա:

Արտահայտվեցին՝ Մանկավարժական խորհրդի անդամները

Արտահայտվողները միաձայն առաջարկեցին հավանություն տալ 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական պլանին և ընդգծեցին անհրաժեշտությունը այն սահմանված կարգով հրապարակելու, որպեսզի ուսուցիչներն ու աշակերտները ճիշտ պատկերացնեն նախատեսվող նպատակներն ու առաջնահերթությունները և ապահովվի դպրոցի ուսումնադաստիարակչական գործունեության թափանցիկությունն ու արդյունավետությունը:

Որոշեցին՝ Հավանություն տալ 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական պլանին և սահմանված կարգով հրապարակել:

Լսեցին 8. 2025-2026 ուսումնական տարվա առարկայական ծրագրերի, օրացուցային-թեմատիկ պլանների, արտադասարանական խմբակների օրացուցային-թեմատիկ պլանների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025-2026 ուսումնական տարվա աշխատանքային պլանը՝ ընդգծելով դրանով նախատեսված հիմնական ուղղությունները և իրականացվելիք աշխատանքները: Նա նշեց, որ առարկայական օրացուցային-թեմատիկ պլանները կազմվել են հաստատված չափորոշիչներին և ծրագրերին համապատասխան՝ ապահովելով ուսումնական գործընթացի համակարգված ու նպատակային կազմակերպումը:

Նշվեց, որ առարկայական թեմատիկ պլանների կազմման համար հիմք են հանդիսացել ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2024 թվականի օգոստոսի 14-ի N 64-Ն հրամանի պահանջները, որտեղ սահմանված է, թեմատիկ պլաններում պետք է նշված լինի թեմաների նպատակները, վերջնարդյունքները, դասերի նպատակները, վերջնարդյունքները:

Արտահայտվեցին՝ ՄՄ նախագահները

Արտահայտվողները կարևորեցին, որ առարկայական օրացուցային-թեմատիկ պլանները մշակվել են՝ լիովին հիմնվելով ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված ծրագրերի վրա: Միաժամանակ պլանները ձևավորվել են դպրոցում կիրառվող և հաստատված դասագրքերի հիման վրա՝ ապահովելով դրանց համապատասխանությունը նոր չափորոշչային պահանջներին:

Արտահայտվողների գնահատմամբ՝ նման մոտեցումը նպաստում է ուսումնական գործընթացի օրինականության, համակարգվածության և միատեսակության ապահովմանը, ինչպես նաև ձևավորում է հստակ մեթոդական դաշտ ուսուցիչների գործունեության համար՝ բարձրացնելով ծրագրային աշխատանքի արդյունավետությունն ու որակը:

Որոշեցին՝ Հավանության արժանացնել 2025-2026 ուսումնական տարվա օրացուցային-թեմատիկ պլանները, արտադասարանական խմբակների օրացուցային-թեմատիկ պլանները:

Լսեցին 9. Առարկայական մասնախմբերի նախագահների, դասվար-դաստղեկների, լաբորանտների, արտադասարանական խմբակների ղեկավարների հավանություն տալու մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում դպրոցի մասնախմբերի նախագահներ են եղել Մերի Դանիելյանը՝ Հումանիտար առարկաների մեթոդմիավորում, Ռիտա Շալունցը՝ Տարրական դասարանների մեթոդմիավորում, Անուշ Դաջունցը՝ Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորում, Մարգարիտա Պետրոսյանը՝ Օտար լեզուների մեթոդմիավորում, Աննա Աբգարյանը՝ Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության մեթոդմիավորում: Հաշվի առնելով Տարրական դասարանների, Բնագիտամաթեմատիկական առարկաների, Օտար լեզուների, Հումանիտար առարկաների, Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության մեթոդմիավորումների առաջարկությունները՝ նախագահներին թողնել անփոփոխ:

Արտահայտվեցին՝ Մանկավարժական խորհրդի անդամները

Արտահայտվողները գնահատեցին նախորդ ուսումնական տարվա ընթացքում առարկայական մասնախմբերի նախագահների կատարած

աշխատանքը, նշելով, որ նրանք պատասխանատվությամբ և պատշաճ կերպով են իրականացրել իրենց պարտականությունները, ապահովելով առարկայական մեթոդմիավորումների արդյունավետ գործունեություն և համագործակցություն ուսուցիչների միջև։

Որոշեցին՝

1. Հաստատել մասնախմբերի նախագահներին՝
   1) Դանիելյան Մերի՝ Հումանիտար առարկաների
   2) Պետրոսյան Մարգարիտա՝ Օտար լեզուների
   3) Դաջունց Անուշ՝ Բնագիտամաթեմատիկական առարկաների
   4) Շալունց Ռիտա՝ Տարրական դասարանների
   5) Աբգարյան Աննա՝ Արվեստի, ֆիզիկական կրթություն և անվտանգ կենսագործունեության
2. Հաստատել I-IX դասարանների դասվար-դասղեկների կազմը.
   1) Ավագյան Գայանե 1ա
   2) Գրիգորյան Վարդ 1բ
   3) Հարությունյան Արմինե 1գ
   4) Ջավահիրյան Իրինա 2ա
   5) Աղաբեկյան Անահիտ 2բ
   6) Փարսադանյան Տաթևիկ 2գ
   7) Դոլունց Արուս 3ա
   8) Պողոսյան Կարինե 3բ
   9) Շալունց Ռիտա 3գ
   10) Գալստյան Նունե 4ա
   11) Աղաբեկյան Անուշ 4բ
   12) Մալխասյան Կարինե 4գ
   13) Աբգարյան Աննա 5ա
   14) Պետրոսյան Մարգարիտա 5բ
   15) Հայրապետյան Մարիամ 5գ
   16) Բաղդասարյան Լուսինե 6ա
   17) Բաղդասարյան Սիրուշ 6բ
   18) Խաչատրյան Ռուզաննա 6դ
   19) Մարտիրոսյան Արփինե 7ա
   20) Մկրտչյան Մերի 7բ
   21) Սարգսյան Լիլիթ 7գ
   22) Հովսեփյան Շահանե 8ա
   23) Հարությունյան Սոնա 8բ
   24) Դանիելյան Մերի 8գ
   25) Ջեյնալյան Ալլա 9ա
   26) Գրիգորյան Լիանա 9բ
   27) Սարգիսջանյան Անուշ 9գ
3. Հաստատել արտադասարանական խմբակների ցանկը, ղեկավարներին և ժամաքանակը (կցվում է)
4. Հաստատել լաբորանտների ցանկը.
   1) Դաջունց Անուշ՝ քիմիայի լաբորատորիա
   2) Բակունց Արմանուշ՝ ֆիզիկայի լաբորատորիա
   3) Ակլունց Կարինե՝ ֆիզիկայի լաբորատորիա

Լսեցին 10.

ՄԿԱ գծով համակարգողի, առարկայական մասնախմբերի նախագահների, դասվար-դասղեկների, լաբորանտների, հատուկ մանկավարժի, գրադարանավարների, ուսուցչի օգնականների աշխատանքային պլանների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցող Սերգեյ Ավանեսյանը ներկայացրեց աշխատանքային պլանների կազմման հիմնական սկզբունքները, ինչպես նաև ներկայացրեց դրա համար նախատեսված ձևանմուշը, որը կիրառվում է դպրոցում։ Նա շեշտեց, որ

ձևանմուշն ապահովում է պլանավորման գործընթացի միասնականություն, պարզություն և արդյունավետություն՝ հնարավորություն տալով ուսուցիչներին համակարգված կերպով կառուցել իրենց աշխատանքային պլանները՝ հաշվի առնելով ինչպես ուսումնական, այնպես էլ դաստիարակչական նպատակները:

Արտահայտվեցին՝ Մանկավարժական խորհրդի անդամները

Մանկավարժական խորհրդի անդամները ներկայացրին իրենց աշխատանքային պլանները և մանրամասն անդրադարձ կատարեցին դրանց հիմնական կետերին: Նրանք բացատրեցին պլանների նպատակներն ու առաջնահերթությունները, ընդգծեցին նախատեսված միջոցառումների արդյունավետությունը և դրանց կապը ուսումնական գործընթացի ու աշակերտների զարգացման հետ: Ներկայացվող պլանները նպաստեցին քննարկման շրջանակում փոխադարձ առաջարկությունների և բարելավման գաղափարների ձևավորմանը:

Որոշեցին՝ Հավանության արժանացնել ԴԱԿ-ի, ՄԿԱ գծով համակարգողի, առարկայական մասնախմբերի նախագահների, դասվար-դաստղեկների, լաբորանտների, հատուկ մանկավարժի, գրադարանավարների, ուսուցչի օգնականների աշխատանքային պլանները:

Լսեցին 11. Դպրոցի ներքին կարգապահական կանոնների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ դպրոցում 2024-2025 ուսումնական տարվանից սկսած սահմանվել է աշակերտական համազգեստ: Զեկուցողն անդրադարձ կատարեց նաև դասապրոցեսի ընթացքում աշակերտների կողմից ոչ ուսումնական նպատակով հեռախոսների, խելախոսների (սմարթֆոնների) կիրառմանը: Նշեց, որ դպրոցում արգելված է աշակերտների կողմից ոչ ուսումնական նպատակով հեռախոսների, խելախոսների (սմարթֆոնների) օգտագործումը: Շեշտեց, որ ուսումնական նպատակով թույլատրվում է օգտագործել միայն դասագրքերում համապատասխան հանձնարարություններ կատարելու ժամանակ (QR կոդերի կիրառում և այլն): Հեռախոսները, խելախոսները (սմարթֆոնները) դպրոցում պետք է լինեն անջատված վիճակում կամ «Ինքնաթիռի» ռեժիմում: Սույն կարգերի խախտման համար առաջարկվում է աշակերտին ենթարկել կարգապահական տույժի՝ բանավոր նախազգուշացում, նկատողություն, խիստ նկատողություն:

Զեկուցողն անդրադարձ կատարեց նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի 99, 106.1 հոդվածներին, ինչպես նաև ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 1-ի N201-Ն որոշմանը, որոնցով սահմանվում են համատեղությամբ աշխատանքի, հեռավար աշխատանքի մասին դրույթները, ինչպես նաև ուսումնական հաստատությունների աշխատողների աշխատանքի և հանգստի ռեժիմի առանձնահատկությունները:

Արտահայտվեցին՝ Ա. Սարգիսջանյանը, Մ. Հարությունյանը, Կ. Շեգունցը

Արտահայտվողներն առաջարկեցին փոփոխություն չկատարել դպրոցի ներքին կարգապահական կանոններում թողնել անփոփոխ հագուստի կրման և ոչ ուսումնական նպատակով հեռախոսների, խելախոսների (սմարթֆոնների) օգտագործման կետերը, իսկ դպրոցի աշխատանքային ռեժիմը թողնել անփոփոխ:

Որոշեցին՝ Թողնել անփոփոխ դպրոցի ներքին կարգապահական կանոնները:

Լսեցին 12. 2025-2026 ուսումնական տարվա ԱՈՒՊ-ների, ԿԱՊԿՈՒ աշակերտների՝ դասապրոցեսին ներկա լինելու դասաժամերի քանակի և ուսուցչի կողմից օրվա պլանում այդ աշակերտների կրթության կազմակերպման վերաբերյալ նշում կատարելու մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը նշեց, որ 2025-2026 ուսումնական տարվա մեկնարկին դպրոցում առկա է 18 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտ, որոնց հետ աշխատանքը անհրաժեշտ է իրականացնել առանձնացված և հատուկ սահմանված կարգով:

Նա մանրամասնորեն անդրադարձավ յուրաքանչյուր աշակերտի կարիքներին և ներկայացրեց նրանց հետ իրականացվող աշխատանքների գրաֆիկը, ընդգծելով գործընթացի համակարգված և հետևողական կազմակերպման կարևորությունը: Զեկուցողը նաև կարևորեց մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություն մատուցող մասնագիտական խմբի դերը՝ նշելով, որ այն ապահովում է աշակերտների ԱՈՒՊ-ով նախատեսված ուսումնառության արդյունքների հասնելու նպատակին համապատասխան աջակցություն և վերահսկողություն:

Արտահայտվեցին՝ Ս. Բաղդասարյանը, Ռ. Խաչատրյանը, Հ. Ալավերդյանը, Ս. Ավանեսյանը

Արտահայտվողները փաստեցին, որ դպրոցում ԿԱՊԿՈՒՀ աշակերտների հետ աշխատանքները միշտ իրականացվել են պատշաճ կերպով, և նախորդ ուսումնական տարին ևս բացառություն չէր: Նրանք առանձնահատուկ անդրադարձ կատարեցին ծանր խնդրով աշակերտներին, որոնց հետ աշխատելը պահանջում է լրացուցիչ հմտություններ և անհատական մոտեցում:

Ավանեսյանն առաջարկեց՝ սահմանված կարգով ԿԱՊԿՈՒՀ աշակերտների համար ձևավորել աշխատանքային ռեժիմ և որոշ աշակերտների համար՝ հիմնավոր դեպքերում, ազատել որոշ դասաժամերին մասնակցությունից՝ հիմք ընդունելով ծնողների դիմումները: Նա նշեց նաև, որ այս մոտեցումը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 71-րդ կետին, և առաջարկեց սահմանված ռեժիմը ընդգրկել ԿԱՊԿՈՒՀ աշակերտների ԱՈՒՊ-ների մեջ, ապահովելով անհատականացված և նպատակային ուսումնառություն:

Որոշեցին՝ Զեկուցումն ընդունել ի գիտություն: Սահմանել, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող որոշ աշակերտներ չեն մասնակցի լրիվ դասաժամերին և նրանց համար սահմանվում է հետևյալ ռեժիմը.

1) Մանուչարյան Լիկա Էրիկի - 2-րդ «Բ» դասարան, ամբողջությամբ մասնակցում է դասապրոցեսին, ինտելեկտուալ և լեզվի ու խոսքի առաջին աստիճանի խանգարում
2) Կասպարյան Դավիթ Կարոյի - 2-րդ «Գ» դասարան, 1-2 դասաժամմասնակցում է դասապրոցեսին, վարքի, ինտելեկտուալ, լեզվի ու խոսքի երրորդ աստիճանի խանգարում
3) Մուրադյան Արսեն Էրիկի - 3-րդ «Ա» դասարան, ամբողջությամբ մասնակցում է դասապրոցեսին, ինտելեկտուալ և լեզվի ու խոսքի երկրորդ աստիճանի խանգարում
4) Հովակիմյան Էրիկ Հմայակի - 3-րդ «Գ» դասարան, ամբողջությամբ մասնակցում է դասապրոցեսին, լեզվի և խոսքի առաջին աստիճանի խանգարում
5) Մինասյան Նարեկ Վանյայի – 3-րդ «Գ» դասարան, 1-2 դասաժամ, ինտելեկտուալ երկրորդ աստիճանի խանգարում
6) Աթասունց Լեո Սանասարի - 4-րդ «Ա» դասարան, ամբողջությամբ մասնակցում է դասապրոցեսին, ինտելեկտուալ առաջին աստիճանի խանգարում
7) Ստեփանյան Սուսաննա Արմենի - 4-րդ «Ա» դասարան, ամբողջությամբ մասնակցում է դասապրոցեսին, ինտելեկտուալ առաջին աստիճանի խանգարում

8) Սարգսյան Մայքլ Արայի - 4-րդ «Ա» դասարան, 1 դասաժամ, ինտելեկտուալ, հաղորդակցման, լեզվի ու խոսքի երրորդ աստիճանի խանգարում
9) Ավոյան Մերի Շիրազի - 5-րդ «Բ» դասարան, 3-4 դասաժամ, ինտելեկտուալ երկրորդ աստիճանի խանգարում
10) Խաչյան Լեո Սարգիսի - 6-րդ «Բ» դասարան, 1-2 դասաժամ, ինտելեկտուալ երրորդ աստիճանի խանգարում
11) Տատինցյան Արեն Ալեքսանդրի - 6-րդ «Ա» դասարան, 3-4 դասաժամ, տեսողական, ինտելեկտուալ երկրորդ աստիճանի խանգարում
12) Հարությունյան Տիգրան Արթուրի - 6-րդ «Գ» դասարան, 1 դասաժամ, ինտելեկտուալ լեզվի ու խոսքի երրորդ աստիճանի խանգարում
13) Ասրյան Լիլիա - 8-րդ «Ա» դասարան, ամբողջությամբ մասնակցում է դասապրոցեսին, հենաշարժողական առաջին աստիճանի խանգարում
14) Դադունց Ալեն Հենրիկի - 8-րդ «Բ» դասարան, 1 դասաժամ, ինտելեկտուալ, հաղորդակցման, երրորդ աստիճանի խանգարում
15) Առաքելյան Կարեն Դավիթի - 8-րդ «Գ» դասարան, 6 դասաժամ, ինտելեկտուալ ինտելեկտուալ առաջին աստիճանի խանգարում
16) Միրզոյան Գոռ Վլադիկի - 8-րդ «Գ» դասարան, ամբողջությամբ մասնակցում է դասապրոցեսին, ինտելեկտուալ և լսողական երկրորդ աստիճանի խանգարում
17) Սահակյան Ալեքս Լավրենտի - 9-րդ «Բ» դասարան, ամբողջությամբ մասնակցում է դասապրոցեսին, ինտելեկտուալ առաջին աստիճանի խանգարում
18) Ստեփանյան Էդիկ Գագիկի - 9-րդ «Գ» դասարան ամբողջությամբ մասնակցում է դասապրոցեսին, ինտելեկտուալ առաջին աստիճանի խանգարում
19) Ալումյան Արթուր Էրիկի - 9-րդ «Գ» դասարան, ամբողջությամբ մասնակցում է դասապրոցեսին, ինտելեկտուալ առաջին աստիճանի խանգարում

Լսեցին 13. Գրավոր աշխատանքների, լաբորատոր աշխատանքների, գործնական աշխատանքների և թեմաների ամփոփումների քանակի ու տեսակների քննարկում:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը նշեց, որ 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում, կապված հանրակրթական ուսումնական հաստատություններում 1-9-րդ դասարաններում նոր առարկայական ծրագրերի և չափորոշիչների ներդրման հետ՝ բոլոր մեթոդմիավորումներում կատարվել են ըստ առարկաների գրավոր աշխատանքների, գործնական աշխատանքների, ամփոփիչ միավորային աշխատանքների, լաբորատոր աշխատանքների քանակի, տեսակի և տարբերակների սահմանում: Գրավոր աշխատանքների և գործնական աշխատանքների և լաբորատոր աշխատանքների քանակը, տեսակը և տարբերակները քննարկվել և հավանության են արժանացել բոլոր առարկայական մեթոդմիավորումներում, որից հետո ներկայացվել են մանկավարժական խորհրդին՝ հաստատման նպատակով:

Արտահայտվեցին՝ Ռ. Շալունցը, Մ. Պետրոսյանը, Մ. Դանիելյանը, Ա. Դաջունցը

Արտահայտվողները նշեցին, որ գրավոր և գործնական աշխատանքների քանակը, տեսակները և տարբերակները առաջարկվել են տվյալ առարկաները դասավանդող ուսուցիչների կողմից, քննարկվել են առարկայական մասնախմբերի նիստերում և ստացվել են հավանություն՝ որպես նպաստող ուսումնական գործընթացի արդյունավետությանը և ուսուցիչների նախաձեռնողականությանը:

Որոշեցին՝ Սահմանել 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում գրավոր աշխատանքների, լաբորատոր աշխատանքների, գործնական

աշխատանքների և թեմաների ամփոփումների քանակը ու տեսակները (կցվում է ամփոփաթերթը) և դրանց տարբերակները (կցվում է էլեկտրոնային տարբերակով)։

Լսեցին 14. Ըստ նոր ՀՊՉ-ների 1-9-րդ դասարաններում գնահատման չափանիշների հաստատման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը նշեց, որ անհրաժեշտ է հիմք ընդունել Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշները և 2025-2026 ուսումնական տարում նոր ՀՊՉ-ներով դասավանդվող դասարաններում աշակերտների գնահատումն իրականացնել այդ չափանիշներին համապատասխան։ Ըստ այդ չափանիշների 2025-2026 ուսումնական տարում 1-9-րդ դասարաններում ըստ նպատակի՝ կիրառվում է սովորողների գնահատման երեք տեսակ.

1) հայտորոշիչ գնահատում,
2) ձևավորող գնահատում,
3) ամփոփիչ գնահատում (միավորային և բնութագրող)։

Հայտորոշիչ գնահատման ձևն ընտրում է ուսուցիչը։ Հայտորոշիչ գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը՝

1) թեստ կամ գրավոր այլ աշխատանք.
2) բանավոր հարցում.
3) բաց հարցերով քննարկում.
4) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև։

Ձևավորող գնահատումն իրականացվում է ուսուցչի և սովորողի (ինքնագնահատում, փոխադարձ գնահատում) կողմից։ Ձևավորող գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը.

1) գրավոր կարճ հարցում (թեստ).
2) բանավոր հարցում.
3) գրավոր աշխատանք.
4) գործնական (լաբորատոր) աշխատանք.
5) տնային աշխատանք.
6) նախագծային աշխատանք.
7) քննարկում, բանավեճ.
8) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև։

Ձևավորող գնահատում իրականացնելիս միավոր չի նշանակվում։

Ամփոփիչ (միավորային և բնութագրող) գնահատման ձևերը սահմանում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, իսկ մեթոդներն ընտրում է ուսուցիչը՝ հետևյալ առաջարկվող մեթոդներից.

1) թեստ կամ գրավոր այլ աշխատանք.
2) բանավոր հարցում.
3) բաց հարցերով քննարկում.
4) քննարկում, բանավեճ
5) գրավոր կարճ հարցում (թեստ).
6) գործնական (լաբորատոր) աշխատանք.
7) տնային աշխատանք.
8) նախագծային աշխատանք.
9) բնութագրող (այն դասարաններում, որտեղ ամփոփումն իրականացվում է բնութագրիչների միջոցով)
10) հնգյակի մեթոդ
11) ԳՈւՍ (Գիտեմ-Ուզում եմ սովորել-Սովորել եմ)
12) մտածիր-զույգ կազմիր-հաղորդիր
13) խճանկար
14) պրիզմա
15) Վենի դիագրամ

16) T-աձև աղյուսակ
17) ելքի քարտերի լրացում
18) ձնագնդի
19) մտածող գլխարկներ
20) մտագրոհ (մտքերի հոսք)
21) կենտրոններով աշխատանք
22) Ֆրայերի մեթոդ
23) գիտելիքի դոմինո
24) երկու բան
25) վարդ, փուշ, բողբոջ
26) տասը տարի անց
27) սկսել, դադարեցնել, պահել
28) մետաիմացության թերթիկ
29) ինձնից առաջ հարցրու երեք հոգու
30) դասի զեկուցող
31) Ես-Դու-Մենք
32) լուսակիր
33) կիսատ նախադասություն
34) «Խաթարված հերթականություն»
35) Միավորային գնահատման իրականացում Quizizz և առցանց այլն գործիքի միջոցով
36) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ուսուցման մեթոդներ ու հնարներ:
Ամփոփիչ (միավորային և բնութագրող) գնահատման մեթոդները կարող են լրացվել կամ փոփոխվել ուսումնական տարվա ընթացքում՝ ուսուցչի հայեցողությամբ:
Միավորային գնահատումը կարող է իրականացվել գնահատման հետևյալ ձևերով՝
1) թեստ.
2) բանավոր հարցում.
3) գրավոր աշխատանք.
4) գործնական (լաբորատոր) աշխատանք.
5) նախագծային աշխատանք.
6) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև:
Սովորողի կիսամյակային գնահատականը ձևավորվում է Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշների 40-րդ կետում սահմանված և ուսուցչի կողմից ընտրված գնահատման ձևերից ստացած գնահատականների միջին թվաբանականով, ինքնաշխատ եղանակով:

Արտահայտվեցին՝ Ռ. Շալունցը, Մ. Պետրոսյանը, Մ. Դանիելյանը, Ա. Դաջունցը, Ա. Աբգարյանը
Արտահայտվողները նշեցին, որ բոլոր մեթոդմիավորումների ուսուցիչները ծանոթացել են ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից կազմակերպված վերապատրաստումների ընթացքում՝ ՀՊՉ-ների և առարկայական ծրագրերի փոփոխությունների շրջանակում, գնահատման նոր համակարգին: Նրանք ընդգծեցին, որ պատրաստ են արդյունավետորեն իրականացնել նոր գնահատման ձևերը 1-9-րդ դասարաններում, ապահովելով ուսումնական գործընթացի ժամանակակից մոտեցումների ներդրումը և աշակերտների զարգացման օպտիմալ գնահատումը:

Որոշեցին՝ Հաստատել նոր ՀՊՉ-ների համաձայն 1-9-րդ դասարաններում գնահատման չափանիշները՝ հիմք ընդունելով Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշները, դպրոցում կիրառել հետևյալ գնահատման ձևերը, մեթոդները, հնարները.
2025-2026 ուսումնական տարում 5-9-րդ դասարաններում ըստ նպատակի՝ կիրառվում է սովորողների գնահատման երեք տեսակ.
1) հայտորոշիչ գնահատում,

2) ձևավորող գնահատում,
3) ամփոփիչ գնահատում (միավորային և բնութագրող):

Հայտորոշիչ գնահատման ձևն ընտրում է ուսուցիչը: Հայտորոշիչ գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը՝
1) թեստ կամ գրավոր այլ աշխատանք.
2) բանավոր հարցում.
3) բաց հարցերով քննարկում.
4) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև:

Ձևավորող գնահատումն իրականացվում է ուսուցչի և սովորողի (ինքնագնահատում, փոխադարձ գնահատում) կողմից: Ձևավորող գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը.
1) գրավոր կարճ հարցում (թեստ).
2) բանավոր հարցում.
3) գրավոր աշխատանք.
4) գործնական (լաբորատոր) աշխատանք.
5) տնային աշխատանք.
6) նախագծային աշխատանք.
7) քննարկում, բանավեճ.
8) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև:
Ձևավորող գնահատում իրականացնելիս միավոր չի նշանակվում:

Ամփոփիչ (միավորային և բնութագրող) գնահատման ձևերը սահմանում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, իսկ մեթոդներն ընտրում է ուսուցիչը՝ հետևյալ առաջարկվող մեթոդներից.
1) թեստ կամ գրավոր այլ աշխատանք.
2) բանավոր հարցում.
3) բաց հարցերով քննարկում.
4) քննարկում, բանավեճ
5) գրավոր կարճ հարցում (թեստ).
6) գործնական (լաբորատոր) աշխատանք.
7) տնային աշխատանք.
8) նախագծային աշխատանք.
9) բնութագրող (այն դասարաններում, որտեղ ամփոփումն իրականացվում է բնութագրիչների միջոցով)
10) հնգյակի մեթոդ
11) ԳՈւՍ (Գիտեմ-Ուզում եմ սովորել-Սովորել եմ)
12) մտածիր-զույգ կազմիր-հաղորդիր
13) խճանկար
14) պրիզմա
15) Վենի դիագրամ
16) T-աձև աղյուսակ
17) ելքի քարտերի լրացում
18) ձնագնդի
19) մտածող գլխարկներ
20) մտագրոհ (մտքերի հոսք)
21) կենտրոններով աշխատանք
22) Ֆրայերի մեթոդ
23) գիտելիքի դոմինո
24) երկու բան
25) վարդ, փուշ, բողբոջ
26) տասը տարի անց
27) սկսել, դադարեցնել, պահել

28) մետաիմացության թերթիկ
29) ինձնից առաջ հարցրու երեք հոգու
30) դասի զեկուցող
31) Ես-Դու-Մենք
32) լուսակիր
33) կիսատ նախադասություն
34) «Խաթարված հերթականություն»
35) Միավորային գնահատման իրականացում Quizizz և առցանց այլն գործիքի միջոցով
36) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ուսուցման մեթոդներ ու հնարներ:
Ամփոփիչ (միավորային և բնութագրող) գնահատման մեթոդները կարող են լրացվել կամ փոփոխվել ուսումնական տարվա ընթացքում՝ ուսուցչի հայեցողությամբ:

Միավորային գնահատումը կարող է իրականացվել գնահատման հետևյալ ձևերով՝
1) թեստ.
2) բանավոր հարցում.
3) գրավոր աշխատանք.
4) գործնական (լաբորատոր) աշխատանք.
5) նախագծային աշխատանք.
6) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև:

Սովորողի կիսամյակային գնահատականը ձևավորվում է Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշների 40-րդ կետում սահմանված և ուսուցչի կողմից ընտրված գնահատման ձևերից ստացած գնահատականների միջին թվաբանականով, ինքնաշխատ եղանակով:

Լսեցին 15. Դպրոցում երկարօրյա խմբերի կազմակերպման մասին հարցը:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
Զեկուցողը նշեց, որ երկարօրյա ուսուցումն իրականացվում է 2020 հոկտեմբերի 13-ի №38-Ն որոշման համաձայն, որով հաստատվել է Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգը: Համապատասխան այդ կարգի երկարօրյա ուսուցումը կազմակերպվում է երկարօրյա խմբերում, որոնք ստեղծվում են՝

- Երկարօրյա ուսուցումը կազմակերպվում է երկարօրյա խմբերում, որոնք ստեղծվում են՝
  1) սովորողի ծնողի դիմումի հիման վրա՝
  ա. ուսումնադաստիարակչական աշխատանքներում ընտանիքին համակողմանի օգնություն ցուցաբերելու.
  բ. դասապատրաստումներին աջակցելու.
  գ. ինքնուրույն սովորելու կարողությունները զարգացնելու նպատակներով:
- Երկարօրյա ուսուցումը կազմակերպվում է նաև հանրակրթության պետական չափորոշչի (այսուհետ՝ ՀՊՉ) ներդրման շրջանակներում ուսումնառության ցածր արդյունք արձանագրած սովորողների առաջադիմության բարելավման նպատակով:

Զեկուցողը բոլորի ուշադրությունը հրավիրեց ուսումնառության ցածր արդյունք արձանագրած սովորողների ներգրավվածության վրա, շեշտեց, որ համապատասխան կարգի ՀՊՉ-ի ներդրման ժամանակացույցով սահմանված դասարաններում ՀՊՉ-ի պահանջներին համապատասխան սովորողի ուսումնառության ցածր արդյունքների դեպքում առարկայական ծրագրի

յուրացումը ապահովելու նպատակով կրթության կառավարման տեղեկատվական համակարգի տվյալների հիման վրա տվյալ առարկան դասավանդող ուսուցիչը կամ սովորողի դասղեկը երկարօրյա ուսուցում կազմակերպելու համար հիմնավորված գրավոր առաջարկով դիմում է տնօրենին՝

1) այն դասարաններում, որտեղ սովորողների որևէ առարկայի առաջադիմության գնահատումն իրականացվում է բնութագրող գնահատման արդյունքում՝ յուրաքանչյուր ամսվա ավարտին ձևավորող գնահատման հիման վրա արձանագրված ուսումնառության ցածր արդյունքներ ունենալու դեպքում.

2) այն դասարաններում, որտեղ իրականացվում է միավորային գնահատում, սովորողների կողմից որևէ առարկայից ուսումնառության փուլի (թեմա, ենթաթեմա, թեմաներ) ավարտին ձևավորող գնահատման արդյունքում արձանագրված ուսումնառության ցածր արդյունքներ ունենալու, ինչպես նաև ամփոփիչ գնահատման արդյունքում 1-3 միավոր գնահատվելու դեպքում:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամներ

Արտահայտվողները նշեցին, որ անհրաժեշտ է հետ մնացող աշակերտների խնդիրն առանձնակի դիտարկել՝ ընդգրկելով այն աշակերտներին, ովքեր ուսումնառության ընթացքում ցուցաբերել են ցածր արդյունքներ ձևավորող գնահատումներից և բանավոր հարցումներից: Նրանք առաջարկեցին նման աշակերտներին ընդգրկել երկարօրյա խմբերում, ինչը հնարավորություն կտա ապահովել լրացուցիչ աջակցություն, վերականգնել բաց թողած գիտելիքները և բարձրացնել ուսումնառության արդյունքները:

Որոշեցին՝ Դպրոցում երկարօրյա ուսուցումն իրականացնել Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգի համաձայն:

Լսեցին 16. Նախագծային աշխատանքների թեմաների, պլանների, թեմատիկ պլանների, ղեկավարների, մատյանների և հանձնաժողովների կազմի հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Առստամյան)

Զեկուցողը կարևորեց նախորդ տարիների ընթացքում ձեռք բերված նախագծային աշխատանքի կազմակերպման փորձը և ներկայացրեց 2025-2026 ուսումնական տարում նախագծային աշխատանքների իրականացման կարգն ու կատարված փոփոխությունները: Նա նշեց, որ առարկայական մասնախմբերի անդամների կողմից 7-9-րդ դասարանների համար արդեն ներկայացվել են համապատասխան թեմաներ՝ համաձայն հաստատված կարգի:

Զեկուցողի խոսքով՝ նախագծային աշխատանքներին այս ուսումնական տարում կարող են մասնակցել նվազագույնը 3 և առավելագույնը 7 աշակերտ, ինչը հնարավորություն է տալիս ապահովել խմբային համագործակցություն և արդյունավետ մասնակցություն: Աշակերտական խմբերը ձևավորվել են՝ առաջնորդվելով նախապես հրապարակված թեմաներով. ուսուցիչները դրանք ուղարկել են աշակերտական չաթերի միջոցով, և արդեն իսկ կատարվել է խմբերի ձևավորում, թեմաների և ղեկավարների ընտրություն:

Զեկուցողը մանրամասն ներկայացրեց նաև Հանրակրթական հիմնական, ընդհանուր և այլընտրանքային ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնական խմբակների ձևավորման և նախագծային աշխատանքների իրականացման կարգը: Նա առաջարկեց նախագծային աշխատանքների պաշտպանությունները կազմակերպել առարկայական հանձնաժողովների ձևաչափով, որոնց կազմում ընդգրկվեն տվյալ առարկայի կամ հարակից առարկաների ուսուցիչները, մեթոդական միավորման նախագահը, ինչպես նաև տնօրենի տեղակալը:

Վերջում զեկուցողը ներկայացրեց նաև նախագծային աշխատանքների գնահատման կարգը, որը սահմանված է ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից հաստատված նախագծային ուսուցման հայեցակարգում և ուսուցիչների վերապատրաստման մոդուլի հաստատման մասին հրամանով՝ ընդգծելով գնահատման չափորոշիչների հստակությունը և հավասարության ապահովման կարևորությունը

Արտահայտվեցին՝ ՄՄ նախագահները

Արտահայտվողները կարևորեցին այն պահանջները, որոնք սահմանված են հանրակրթական հիմնական, ընդհանուր և այլընտրանքային ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնական խմբակների ձևավորման, գործունեության և ուսումնական նախագծերի իրականացման կարգի վերաբերյալ: Նրանք ընդգծեցին, որ այս պահանջների պատշաճ կատարումը հնարավորություն է տալիս ապահովել կրթական գործընթացի բազմազանությունը և սովորողների ակտիվ մասնակցությունը:

Միաժամանակ ընդգծվեց նախագծային աշխատանքների կարգում կատարված փոփոխությունների կարևորությունը: Նշվեց, որ փոփոխությունները նպատակ ունեն առավել արդյունավետ կազմակերպելու սովորողների հետազոտական և ստեղծագործական գործունեությունը, խթանելու նրանց ինքնուրույնությունը և թիմային աշխատանքի հմտությունների զարգացումը, ինչն ապահովում է ուսումնական գործընթացի որակի և արդյունավետության բարձրացում:

Որոշեցին՝ Հավանության արժանացնել նախագծային աշխատանքների թեմաները, պլանները, թեմատիկ պլանները, ղեկավարներին, մատյանները և հանձնաժողովների կազմը (կցվում է էլեկտրոնային տարբերակով):

Լսեցին 17. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում դասալսումների, փոխադարձ դասալսումների իրականացման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը նշեց, որ 2021-2022 ուսումնական տարուց սկսած դպրոցում դասալսումները, այդ թվում նաև փոխադարձ դասալսումները, արձանագրվում են հատուկ արձանագրությունների թղթերում, որտեղ սահմանված են համապատասխան չափանիշներ, որոնց հիման վրա գնահատվում են դասալսվողները:

Արաքսյա Առստամյանը հավելեց, որ արձանագրության ձևանմուշը լիովին համապատասխանում է կարգի պահանջներին: Նա նաև առաջարկեց, որ 1 կիսամյակի ընթացքում յուրաքանչյուր ուսուցչի մոտ իրականացվեն նվազագույնը 3 դասալսում, այդ թվում՝ փոխադարձ դասալսումներ՝ դպրոցի ձևանմուշի պահանջներին համապատասխան: Զեկուցողը ընդգծեց, որ իրականացված դասալսումները պետք է ապահովված արձանագրվեն համապատասխան ձևանմուշներում, իսկ կիսամյակի ավարտին դրանք անհրաժեշտ է սահմանված կարգով արխիվացնել:

Արտահայտվեցին՝ ՄՄ նախագահները

Արտահայտվողները նշեցին, որ նախորդ երկու ուսումնական տարիների ընթացքում ձեռք բերված փորձը ցուցաբերել է դրական արդյունքներ և արդյունավետ է եղել: Հաշվի առնելով այդ փորձը, նրանք նպատակահարմար համարեցին, որ 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում նույնպես պահպանվի նույն սկզբունքը, ինչը կնպաստի ուսուցման որակի ու գործընթացի շարունակական բարելավմանը:

Որոշեցին՝ 2024-2025 ուսումնական տարվա ընթաքցում դասալսումները, այդ թվում՝ փոխադարձ դասալսումներն արձանագրել հատուկ արձանագրությունների թղթում, որտեղ սահմանված են չափանիշներ, որոնց համապատասխան գնահատվում են դասալսվողները, 1 կիսամյակի ընթացքում յուրաքանչյուր ուսուցչի մոտ իրականացնել նվազագույնը 3 դասալսում, այդ թվում՝ փոխադարձ դասալսում, դրանք արձանագրել արձանագրությունների

համապատասխան ձևանմուշի մեջ: Կիսամյակների և ուսումնական տարվա ավարտին ամփոփել դասալսումները (կցել արձանագրությունների ձևաթուղթ):

Լսեցին 18. Դպրոցի 2024-2025 ուսումնական տարվա ներքին գնահատման հաշվետվության ներկայացման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Մկրտչյան)

Զեկուցողը նշեց, որ հաստատության գործունեության ներքին գնահատման հիմնական նպատակն է բարելավել դպրոցում մատուցվող կրթական ծառայությունների որակը և բարձրացնել դրանց արդյունավետությունը: Այլ կերպ ասած՝ նպատակն է նպաստել ուսումնական հաստատության գործունեության շարունակական բարելավմանը՝ ներառելով ուսումնական գործընթացի կազմակերպության, ուսուցիչների աշխատանքի կազմակերպման և արդյունավետության, ինչպես նաև աշակերտների ուսումնական առաջընթացի մանրակրկիտ ուսումնասիրությունը:

Արտահայտվեցին՝ Անդամները

Արտահայտվողները նշեցին, որ դպրոցի ներքին գնահատումը մանրամասնորեն գրի է առնվել ու ներկայացվել, ընդգծելով, որ հանձնաժողովը ծավալուն աշխատանք է կատարել՝ նպատակ ունենալով ապահովել գնահատման ամբողջականություն, թափանցիկություն և դրա արդյունքների կիրառելիություն դպրոցի ուսումնական գործընթացի բարելավման համար:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2024-2025 ուսումնական տարվա ներքին գնահատման հաշվետվությունը (կցվում է էլեկտրոնային տարբերակով):

Լսեցին 19. Դպրոցի հիմնանորոգման աշխատանքների հետ կապված՝ մինչև հիմնանորոգման ավարտը դասերի՝ երկհերթ կազմակերպման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ հաշվի առնելով 2025 թվականին դպրոցում իրականացվող հիմնանորոգման աշխատանքները, ուսումնական գործընթացը կկազմակերպվի երկհերթ դասացուցակով: Դասացուցակը կազմվել է՝ ելնելով դպրոցի նյութատեխնիկական հնարավորություններից և դասասենյակների զբաղվածությունից, ինչը ապահովում է հավասար պայմաններ բոլոր դասարանների համար և հնարավորություն է տալիս պահպանել ուսումնական գործընթացի շարունակականությունը և արդյունավետությունը:

Զեկուցողը նշեց, որ 2025-2026 ուսումնական տարում կապված դպրոցում ժամանակավորապես կազմակերպվող երկհերթ ուսուցման հետ.

- 1-4-րդ դասարաններում դասավանդող ուսուցիչները մինչև ուսուցման միահերթ սկզբունքին անցնելն աշխատանքի են ներկայանում 08:30-ին: 1-4-րդ դասարանների դասվարներն աշխատանքի են ներկայանում 08:15-ին:
- 5-9-րդ դասարաններում դասավանդող ուսուցիչները մինչև ուսուցման միահերթ սկզբունքին անցնելն աշխատանքի են ներկայանում 11:40-ին: 5-9-րդ դասարանների դասղեկներն աշխատանքի են ներկայանում 11:30-ին:
- Վարչատնտեսական աշխատողներն աշխատանքի ներկայանում են իրենց հաստիքային պարտականություններին համապատասխան սահմանված ժամերին՝ ապահովելով աշխատանքային ժամերի տևողության պահպանումը: Վարչական անձնակազմի գերծանրաբեռնվածությունը կանխելու նպատակով կազմակերպվել է հերթափոխային ներկայություն. որոշ աշխատողներ աշխատանքի են ներկայանում առաջին հերթի հետ, իսկ մյուսները՝ երկրորդ հերթի, ըստ վերադաս օղակից ստացված հանձնարարականի:

Արտահայտվեցին՝ Ա. Գևորգյանը, Ա. Առստամյանը

Արտահայտվողները նշեցին, որ չնայած առկա դժվարություններին, դասերը կանցկացվեն պլանավորված և կազմակերպված ձևով: Նրանց կարծիքով՝ կրթական գործընթացի շարունակականությունը, կարգապահության պահպանությունը և դասերի արդյունավետությունը պետք է ապահովված լինեն: Ուսուցիչները պետք է ցուցաբերեն բարձր պատասխանատվություն և մասնագիտական ճկունություն, հարմարվելով ժամանակավոր պայմաններին և պահպանելով կրթության որակի կայուն մակարդակը:

Որոշեցին՝ 1. Հավանության արժանացնել դպրոցի հիմնանորոգման աշխատանքների հետ կապված՝ մինչև հիմնանորոգման ավարտը դասերի՝ երկհերթ կազմակերպման ռեժիմը:

2. Սահմանել 2025-2026 ուսումնական տարում կապված դպրոցում ժամանակավորապես կազմակերպվող երկհերթ ուսուցման հետ հետևյալ ռեժիմը.

- 1-4-րդ դասարաններում դասավանդող ուսուցիչները մինչև ուսուցման միահերթ սկզբունքին անցնելն աշխատանքի են ներկայանում 08:30-ին: 1-4-րդ դասարանների դասվարներն աշխատանքի են ներկայանում 08:15-ին:
- 5-9-րդ դասարաններում դասավանդող ուսուցիչները մինչև ուսուցման միահերթ սկզբունքին անցնելն աշխատանքի են ներկայանում 11:40-ին: 5-9-րդ դասարանների դասղեկներն աշխատանքի են ներկայանում 11:30-ին:
- Վարչատնտեսական աշխատողներն աշխատանքի ներկայանում են իրենց հաստիքային պարտականություններին համապատասխան սահմանված ժամերին՝ ապահովելով աշխատանքային ժամերի տևողության պահպանումը: Վարչական անձնակազմի գերծանրաբեռնվածությունը կանխելու նպատակով կազմակերպվել է հերթափոխային ներկայություն. որոշ աշխատողներ աշխատանքի են ներկայանում առաջին հերթի հետ, իսկ մյուսները՝ երկրորդ հերթի, ըստ վերադաս օղակից ստացված հանձնարարականի:

Լսեցին 20. Դպրոցի վարչատնտեսական մասի աշխատողներ՝ Նարեկ Առստամյանին, Սիմոն Մաթունցին, Սամվել Գիգորյանին, Վարուժան Հարությունյանին աշխատավարձի 100%-ի չափով պարգևատրելու մասին հարցի քննարկում:

(զեկուցող՝ Դ. Կոստանդյան)

Զեկուցողը նշեց, որ դպրոցի հիմնանորոգման աշխատանքներն իրականացնելու նպատակով վարչատնտեսական մասի աշխատակիցները կատարել են գույքի դուրսբերման և տեղափոխման ահռելի աշխատանք՝ ապահովելով շենքային տարածքների ազատումն ու վերանորոգման բնականոն ընթացքը: Նրանց արդյունավետ ու պատասխանատու գործունեությունը հնարավորություն է տվել պահպանել դպրոցի գույքը, կազմակերպել աշխատանքները համակարգված ձևով և չխաթարել ուսումնական գործընթացի շարունակականությունը:

Արտահայտվեցին՝ Ա. Գևորգյանը, Ա. Առստամյանը

Արտահայտվողները նշեցին, որ մանկավարժական կոլեկտիվը բարձր է գնահատում կատարված աշխատանքը և առաջարկեցին Նարեկ Առստամյանին, Սիմոն Մաթունցին, Սամվել Գիգորյանին, Վարուժան Հարությունյանին պարգևատրել 1 ամսվա աշխատավարձի 100%-ի չափով:

Որոշեցին՝ Դպրոցի վարչատնտեսական մասի աշխատողներ՝ Նարեկ Առստամյանին, Սիմոն Մաթունցին, Սամվել Գիգորյանին, Վարուժան Հարությունյանին պարգևատրել 1 ամսվա աշխատավարձի 100%-ի չափով:

Խորհրդի նախագահ՝ Ս. Ավանեսյան

Քարտուղար՝ _____ Ա. Զեյնալյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

«31» հոկտեմբերի 2025թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին խորհրդի բոլոր անդամները:

Ο Ր Ա Կ Ա Ր Գ

1. Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
2. Ծնողազուրկ և անապահով ընտանիքների երեխաներին անվճար դասագրքեր հատկացնելու մասին:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
3. 2026թ. բյուջեի նախագծի նախնական տարբերակի քննարկում:
(զեկուցող՝ Մ. Թոխունց)
4. ՄԿԱ գծով համակարգողի և ԴԱԿ հաստիքների փոփոխություն:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
5. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի օգոստոս-հոկտեմբեր ամիսների աշխատանքների քննարկման մասին հարցը:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)
6. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանում լրացումներ կատարելու մասին:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Նիստին ներկա էր գլխավոր հաշվապահ Մայրանուշ Թոխունցը:

Լսեցին 1. Օրակարգի հաստատման մասին հարցը
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝ ***Որոշեցին՝*** Հաստատել մանկավարժական խորհրդի նիստի օրակարգը:

Լսեցին 2. Ծնողազուրկ և անապահով, ընտանիքների, ԿԱՊԿՈՒ երեխաներին անվճար դասագրքեր հատկացնելու մասին հարցը:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
Զեկուցողի խոսքով՝ սովորողների համար դասագրքերի անվճար տրամադրումը իրականացվել է մի շարք սոցիալական չափանիշների հիման վրա: Մասնավորապես՝ հաշվի են առնվել ընտանիքների անապահովության միավորը, երեխայի միակողմանի կամ երկկողմանի ծնողազուրկ լինելը, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղից տեղահանված լինելու փաստը: Այս մոտեցումը հնարավորություն է տվել աջակցությունն ուղղել այն ընտանիքներին, որոնք առավել խոցելի են և կարիք ունեն պետական աջակցության:

Արտահայտվեցին՝ Կ. Շեգունցը
Կարինե Շեգունցի խոսքով՝ դասվարների և դասղեկների ակտիվ համագործակցությամբ կատարվել է դպրոցում կրթվող ծնողազուրկ, սոցիալապես անապահով, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղից տեղահանված ընտանիքների երեխաների տվյալների հավաքագրում: Ստացված տեղեկատվությունը մանրամասն ուսումնասիրվել և քննարկվել է, իսկ մշակված հատուկ սանդղակի համաձայն կազմվել և հաստատվել է աջակցության շահառուների վերջնական ցուցակը: Այս գործընթացը հնարավորություն է տվել ապահովել առավել օբյեկտիվ և հասցեական ընտրություն:

Որոշեցին՝ Ծնողազուրկ, սոցիալապես անապահով ընտանիքիների երեխաներին, Արցախից տեղահանված ընտանիքների երեխաներին, դպրոցում ընտանիքից 2 և ավելի սովորող ունեցող ընտանիքի երեխաներից մեկին, այդ թվում՝ զույգ աշակերտներին անվճար տրամադրել դասագրքեր (կցվում է)։

Լսեցին 3. 2026թ. բյուջեի նախագծի նախնական տարբերակի քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Մ. Թոխունց)

Զեկուցողը նշեց, որ բյուջեի նախագծի նախնական տարբերակով նախատեսված է դպրոցին հատկացնել.

- աշխատավարձ-156000,0 (մեկ հարյուր հիսունվեց միլիոն) դրամ
- շարունակական ծախսեր- 30000,0 (քսանհինգ միլիոն) դրամ
- հիմնական միջոցների ձեռքբերում.- 990,0 (ինը հարյուր իննսուն հազար) դրամ

Ընդամենը՝ 186990,0 (մեկ հարյուր ութսունվեց միլիոն ինը հարյուր իննսուն հազար) դրամ:

Արտահայտվեցին՝ Խորհրդի անդամներ

Մանկավարժական խորհրդի անդամները միաձայն հավանություն տվեցին բյուջեի նախագծի նախնական տարբերակին՝ ընդգծելով դրա իրականացման կարևորությունը դպրոցի առաջիկա ծրագրերի համար։

Որոշեցին՝ Հավանություն տալ զեկուցողի կողմից ներկայացված 2026 թվականի բյուջեի նախագծի նախնական տարբերակին։

Լսեցին 4. ՄԿԱ գծով համակարգողի և ԴԱԿ հաստիքների փոփոխության մասին հարցը։

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողի խոսքով՝ դպրոցների կառավարման նոր համակարգի ներդրման շրջանակում 2025 թվականին իրականացվել է հաստիքների վերանայում։ Արդյունքում ՄԿԱ գծով համակարգողի և ԴԱԿ-ի պաշտոնները միավորվել են՝ ձևավորելով մեկ միասնական վարչական միավոր՝ կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների համակարգող (այսուհետ՝ ԿԱԴԱՀ)։ Նոր հաստիքը նախատեսված է բարձրացնելու կառավարման արդյունավետությունը, ամրապնդելու ներքին համագործակցությունը և նպաստելու դպրոցական գործընթացների առավել համակարգված ու նպատակային կազմակերպմանը։

Արտահայտվեցին՝ ՄՄ նախագահներ, խորհրդի անդամներ

Արտահայտվողների գնահատմամբ՝ նոր կառավարման համակարգը դպրոցում դառնում է ավելի ճկուն և արդյունավետ։ Միասնական վարչական հաստիքի ներդրումը հնարավորություն է տալիս կազմակերպել աշխատանքը առավել համակարգված, հատկապես ՄԿԱ-ի, գնահատման և մեթոդական աջակցության ուղղություններով։ Նրանց խոսքով՝ գործառույթների միավորումը վերացրել է նախկինում առկա կրկնումները, ինչն էլ նպաստում է գործընթացների հստակեցմանը և աշխատանքի որակի բարձրացմանը։

Որոշեցին՝ Հավանություն տալ ՄԿԱ գծով համակարգողի և ԴԱԿ հաստիքների փոփոխության և դպրոցում կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների համակարգողի հաստիքի ներդրման մասին զեկուցումը։

Լսեցին 5. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի օգոստոս-հոկտեմբեր ամիսների աշխատանքների քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) շրջանակում օգոստոս-հոկտեմբեր ամիսների ընթացքում իրականացված և ընթացիկ աշխատանքների համապարփակ ամփոփումը՝ առանձնացնելով

հիմնական ձեռքբերումները, առկա մարտահրավերներն ու առաջիկա անելիքները: Նա նշեց, որ հաշվետու ժամանակահատվածում պլանով նախատեսված բոլոր միջոցառումները և նախաձեռնությունները կատարվել են սահմանված կարգով՝ ըստ հաստատված ժամանակացույցի, դրանով իսկ ապահովելով աշխատանքների շարունակականությունն ու ծրագրային նպատակների իրագործումը:

Զեկուցողը նաև անդրադարձավ «Մեղու 2025» մրցույթի նախապատրաստական գործընթացին՝ պարզաբանելով, որ մրցույթի կազմկոմիտեի կողմից դեռևս չի հրապարակվել իրականացման ժամանակացույցը, ինչի հետևանքով նախապատրաստական փուլը ժամանակավորապես չի մեկնարկել: Այնուամենայնիվ, արդեն ձևավորվել է աշխատանքային խումբ, որը կստանձնի կազմակերպչական գործընթացների համակարգումը մրցույթի մեկնարկից անմիջապես հետո:

Նա ընդգծեց, որ հաշվետու ամիսներին իրականացված բոլոր միջոցառումները կրել են նպատակային, կրթական և արժեքային ուղղվածություն՝ միտված լինելով սովորողների գիտելիքների, հմտությունների և սոցիալական պատասխանատվության զարգացմանը: Միջոցառումները կազմակերպվել են համակարգված և համագործակցային ձևով՝ ընդգրկելով ուսուցիչների, սովորողների և ծնողների լայն շրջանակ: Նման բազմակողմ ներգրավվածությունը նպաստել է դպրոցի համայնքային կյանքի ակտիվացմանը, կրթական միջավայրի բարելավմանը և միասնական թիմային մշակույթի ձևավորմանը:

Զեկուցողը նաև առանձնացրեց, որ դպրոցում իրականացվող ծրագրերն ու նախաձեռնությունները համահունչ են ՀՀ կրթական չափորոշիչների տրամաբանությանը և ժամանակակից մանկավարժական մոտեցումներին: Հատուկ ուշադրություն է դարձվել մեթոդական աշխատանքի կատարելագործմանը, ուսումնական գործընթացի շարունակական մոնիթորինգին և սովորողների մասնակցայնության բարձրացմանը:

Ամփոփելով՝ զեկուցողը նշեց, որ օգոստոս-հոկտեմբեր ամիսների ընթացքում իրականացված աշխատանքները եղել են բովանդակալից և արդյունավետ. դրանց արդյունքում ստեղծվել են նախադրյալներ ուսումնական տարվա հաջող ընթացքի, կրթական ծրագրերի լիարժեք իրականացման և դպրոցի զարգացման նոր փուլ անցնելու համար:

Արտահայտվեցին՝ Մանկավարժական խորհրդի անդամները

Արտահայտվողները շեշտեցին, որ ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանով (ՈՒԴԱՏՊ) նախատեսված բոլոր միջոցառումները և գործառույթները կատարվել են պատշաճ, ժամանակին և արդյունավետ ձևով: Նրանց խոսքով՝ աշխատանքների իրականացման ընթացքում բացթողումներ կամ թերակատարումներ չեն արձանագրվել, ինչը վկայում է ուսուցիչների բարձր պատասխանատվության, նախաձեռնողականության և մասնագիտական նվիրվածության մասին:

Ավելին, ընդգծվեց, որ հարցը քննարկվել է դպրոցի բոլոր մեթոդմիավորումներում, որոնց աշխատանքները կազմակերպվել են համագործակցային և ստեղծարար միջավայրում՝ նպաստելով փորձի արդյունավետ փոխանակմանը, նոր ուսուցողական մեթոդների ներդրմանը և կրթական գործընթացի շարունակական կատարելագործմանը: Նման կառուցողական և ակտիվ մոտեցումը ապահովել է տարեկան պլանի հետևողական և արդյունավետ իրականացումը, ինչպես նաև դպրոցի մանկավարժական համայնքի միասնական աշխատանքը ընդհանուր նպատակների շուրջ, նպաստելով ուսումնական գործընթացի բարձր որակին և կրթության համընդհանուր արդյունավետությանը:

Որոշեցին՝

- Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի

օգոստոս-հոկտեմբեր ամիսների ընթացքում իրականացված աշխատանքները։

- «Մեղու 2025» մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացնել մրցույթի կազմկոմիտեի կողմից ժամանակացույցը հրապարակելուց հետո։

Լսեցին 6. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանում լրացումներ կատարելու մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Նկատի ունենալով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության առաջարկությունը՝ նպատակահարմար է 2025–2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանում կատարել համապատասխան լրացումներ։ Մասնավորապես առաջարկվում է պլանում ներառել անվտանգ և ապահով կրթական միջավայրի ձևավորմանն ուղղված աշխատանքներ, որոնք պետք է իրականացվեն ամբողջ ուսումնական տարվա ընթացքում։

Որպես հիմք անհրաժեշտ է ընդունել նախարարության կողմից ներկայացված ամսական միջոցառումների ժամանակացույցը՝ այն ներառելով ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանի ամսական բաժնում։ Միաժամանակ առաջարկվում է պլանավորել և իրականացնել պատմության և մշակույթի հուշարձանների տարածքներում դպրոցականների մասնակցությամբ մաքրման, խնամքի և պահպանությանն ուղղված միջոցառումներ՝ նպաստելով սովորողների քաղաքացիական պատասխանատվության և ազգային արժեքների պահպանման գիտակցության ձևավորմանը։

Արտահայտվեցին՝ Մանկավարժական խորհրդի անդամները

Նիստի ընթացքում խոսք առած մասնակիցները ընդհանուր առմամբ դրական գնահատեցին ներկայացված առաջարկները։ Նրանք ընդգծեցին, որ անվտանգ կրթական միջավայրի ապահովմանն ուղղված աշխատանքների ընդգրկումը պլանում ժամանակին և անհրաժեշտ քայլ է՝ պայմանավորված կրթական միջավայրում առաջացող ժամանակակից մարտահրավերներով։ Մասնակիցները կարծիք հայտնեցին, որ նախարարության առաջարկած ամսական միջոցառումների ժամանակացույցի կիրառումը կնպաստի աշխատանքների համակարգված իրականացմանը և վերահսկելիությանը։

Առանձին ելույթներում մասնակիցները կարևորեցին նաև պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործում դպրոցականների ակտիվ ներգրավումը՝ նշելով, որ նման աշխատանքները մեծ դեր ունեն սովորողների քաղաքացիական պատասխանատվության, համայնքային մտածողության և ազգային արժեքների նկատմամբ հարգանքի ձևավորման գործում։ Մասնակիցները առաջարկեցին այդ միջոցառումները իրականացնել պարբերաբար և համադրել դասընթացների ու արտադասարանային գործունեության հետ։

Որոշեցին՝ 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանում իրականացնել լրացումներ և ներառել անվտանգ և ապահով կրթական միջավայրի ձևավորմանն ուղղված աշխատանքները (կցվում է) և պլանավորել և իրականացնել պատմության և մշակույթի հուշարձանների տարածքներում դպրոցականների մասնակցությամբ մաքրման, խնամքի և պահպանությանն ուղղված միջոցառումները՝ ըստ հետևյալ ժամանակացույցի.

- հոկտեմբեր – 9-րդ «Ա»
- նոյեմբեր – 9-րդ «Բ»
- դեկտեմբեր – 9-րդ «Գ»
- հունվար – 8-րդ «Ա»
- փետրվար – 8-րդ «Բ»

- մարտ – 8-րդ «Գ»
- ապրիլ – 7-րդ «Ա»
- մայիս – 7-րդ «Բ»
- հունիս – 7-րդ «Գ»

Խորհրդի նախագահ՝ _____ Ս. Ավանեսյան

Քարտուղար՝ _____ Ա. Ջեյնալյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

«26» դեկտեմբերի 2025թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին խորհրդի բոլոր անդամները, բացի Անուշ Աղաբեկյանից

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Օրակարգի հաստատում։
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
2. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) դոկտեմբեր ամսվա և առաջին կիսամյակում իրականացված աշխատանքներ։
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)
3. 2025-2026 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ուսումնական պլանի, տարիֆիկացիոն ցուցակի, դասաբաշխման քննարկում։
(զեկուցողներ՝ Ա. Առստամյան, Ս. Ավանեսյան)
4. 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում իրականացված նախագծային աշխատանքների հաշվետվությունների քննարկում։
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
5. 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում իրականացված երկարօրյա ուսուցման խմբակների հաշվետվությունների քննարկում։
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)
6. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների հետ կապված աշխատանքի մասին։
(զեկուցող՝ Ա. Ծատրյան)
7. 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում կատարած դասալսումների քննարկում, վերլուծություն և ամփոփում։
(զեկուցողներ՝ ՄՄ նախագահներ)
8. 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի էլեկտրոնային մատենավարության ստուգում։
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
9. Ուսուցիչների հերթական և կամավոր ատեստավորում, տարակարգ, ԿԶՆԱԿ-ի կողմից կազմակերպված վերապատրաստումներ։
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
10. 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում իրականացված խմբակների ամսական և կիսամյակային հաշվետվություններ։
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)
11. Դպրոցում երեխաների պաշտպանության խմբի ձևավորում։
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
12. 1-9-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողություն։
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
13. 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի նախագծային աշխատանքների թեմաների, պլանների, թեմատիկ պլանների, ղեկավարների, մատյանների և հանձնաժողովների կազմի քննարկում։
(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Լսեցին 1. Օրակարգի հաստատման մասին հարցը
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը։

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել մանկավարժական խորհրդի նիստի օրակարգը։

Լսեցին 2. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) դեկտեմբեր ամսվա և առաջին կիսամյակում իրականացված աշխատանքների կատարման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա.Գևորգյան)

Զեկուցման ընթացքում ամփոփ ներկայացվեց 2025–2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական գործունեության տարեկան ծրագրի շրջանակում դեկտեմբեր ամսին և առաջին կիսամյակի ընթացքում իրականացված աշխատանքների ամբողջական պատկերը: Նշվեց, որ բոլոր մեթոդմիավորումների կողմից ծրագրով սահմանված միջոցառումները կյանքի են կոչվել ըստ նախատեսված ժամանակացույցի՝ պահպանելով նպատակային ուղղվածությունն ու բովանդակային պահանջները:

Տվյալ ժամանակահատվածում կազմակերպվել և իրականացվել են բազմաբնույթ կրթադաստիարակչական նախաձեռնություններ՝ ուղղված հայրենասիրական գիտակցության ամրապնդմանը, իրավական ու քաղաքացիական մշակույթի ձևավորմանը, ազգային և համամարդկային արժեքների փոխանցմանը, լեզվամտածողության զարգացմանը և սովորողների ճանաչողական ակտիվության խթանմանը: Այդ շրջանակում անցկացվել են բաց դասեր, թեմատիկ դաս-միջոցառումներ, քննարկումներ, ուսումնական այցեր, գործնական աշխատանքներ, իրականացվել են դասալսումներ, ինչպես նաև ուսումնասիրվել ու ստուգվել են աշխատանքային տետրերն ու դասագրքերը:

Զեկուցման ընթացքում ընդգծվեց, որ առաջին կիսամյակում ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան ծրագրով նախատեսված գործողություններն իրականացվել են լիարժեք և կազմակերպված ձևով: Միաժամանակ նշվեց, որ կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվական նյութերը տեղադրվել են դպրոցի պաշտոնական կայքում՝ ապահովելով գործընթացների բացահայտությունն ու հանրային մատչելիությունը:

Անդրադարձ կատարվեց նաև ուսումնական գործընթացում ժամանակակից մանկավարժական մեթոդների կիրառմանը, նորարարական մոտեցումների ներմուծմանը և աշակերտների ուսման արդյունավետության բարձրացմանն ուղղված քայլերին: Զեկուցողը մատնանշեց նաև առկա որոշ գործընթացների կատարելագործման հնարավորությունները և հետագա զարգացման առաջնահերթ ուղղությունները:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Քննարկմանը մասնակցածները միաձայն արձանագրեցին, որ իրականացված միջոցառումները զգալի ազդեցություն են ունեցել սովորողների ներգրավվածության բարձրացման, ինչպես նաև նրանց հաղորդակցման և վերլուծական կարողությունների զարգացման վրա: Զրույցի ընթացքում գնահատվեց կատարված աշխատանքի ընդհանուր արդյունքը, բարձրաձայնվեցին գործընթացում ի հայտ եկած որոշ դժվարություններն ու ներկայացվեցին դրանց հաղթահարման հնարավոր լուծումները՝ նախատեսված երկրորդ կիսամյակի աշխատանքներում կիրառելու համար:

Միևնույն ժամանակ շեշտվեց, որ ծրագրի իրականացման ընթացքում որևէ թերություն կամ չկատարում չի արձանագրվել. ուսուցիչները դրսևորել են հետևողականություն, մասնագիտական պատասխանատվություն և նախաձեռնող վարքագիծ՝ արդյունավետ համագործակցության պայմաններում ապահովելով սահմանված նպատակների իրագործումը: Նշվեց նաև, որ ուսումնադաստիարակչական գործունեությունն իրականացվել է հստակ պլանավորված, կազմակերպված և արդյունավետ մեթոդներով, ինչը դրականորեն անդրադարձել է միջոցառումների որակի և ակնկալվող արդյունքների վրա:

Արտահայտվողների գնահատմամբ՝ նման կառուցակարգված և նպատակաուղղված աշխատանքի շարունակականությունը կարևոր է նաև առաջիկա ամիսներին՝ ձեռքբերված դրական միտումները պահպանելու և ձևավորված առողջ աշխատանքային միջավայրը զարգացնելու համար։ Առանձնակի կարևորվեց նաև այն հանգամանքը, որ առաջին կիսամյակում իրականացված գործողությունները լիովին համապատասխանել են տարեկան ծրագրին և ունեցել են ընդհանուր բարձր արդյունավետություն։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի դեկտեմբեր ամսվա և առաջին կիսամյակում իրականացված աշխատանքների կատարման մասին տեղեկատվությունը (կցվում է էլեկտրոնային տարբերակով)։

Լսեցին 3. 2025-2026 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ուսումնական պլանի, տարիֆիկացիոն ցուցակի, դասաբաշխման քննարկման մասին հարցը։

(զեկուցողներ Ա. Առստամյան, Ս. Ավանեսյան)

Դպրոցի տնօրենի պաշտոնակատար Սերգեյ Ավանեսյանը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի տարիֆիկացիոն ցուցակը՝ ընդգծելով, որ այն պահպանել է իր հիմնական կառուցվածքը և էական փոփոխություններ չի կրել։ Նրա խոսքով՝ միակ ճշգրտումները վերաբերում են երկրորդ կիսամյակի դասաժամերի վերաբաշխմանը։

Իր հերթին տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը նշեց, որ երկրորդ կիսամյակի ուսումնական պլանի մշակման հիմքում ընկած է տվյալ ուսումնական տարվա և առաջին կիսամյակի հաստատված ուսումնական պլանը, որը հաստատվել է ուսումնական տարվա սկզբին։ Նա հավելեց, որ ուսումնական պլանում փոփոխությունները սահմանափակ բնույթ են կրում և հիմնականում առնչվում են «Երաժշտություն» և «Կերպարվեստ» առարկաների ժամաքանակների վերանայմանը, այդ թվում՝ դպրոցական բաղադրիչով նախատեսված ժամերի ճշգրտմանը։

Ընդգծվեց նաև, որ Մարիամ Հայրապետյանի կողմից դասավանդվող 7-րդ «Բ» դասարանի 3 դասաժամն առաջարկվում է փոխանցել Մարգարիտա Պետրոսյանին՝ հաշվի առնելով, որ ինքը ծանրաբեռնված է և չի կարող լիարժեք իրականացնել դասավանդումը երկու հերթերի ընթացքում։

Արտահայտվեցին՝ ՄՄ նախագահները

Մեթոդմիավորումների ղեկավարները ընդգծեցին, որ դասաժամերի նախնական բաշխման փուլում, ինչպես նաև 2025–2026 ուսումնական տարվա մեկնարկին, մանրամասն քննարկվել է ժամաբաժանման կազմակերպման գործընթացը։ Այդ քննարկումների ընթացքում հաշվի են առնվել 1–9-րդ դասարանների առարկայական ցանկում հնարավոր փոփոխությունները, ինչպես նաև նոր պետական կրթական չափորոշչի (ՀՊՉ) պահանջները։ Արդյունքում՝ տվյալ պահանջներին համապատասխան ձևավորվել է 2025–2026 ուսումնական տարվա ուսումնական պլանը, որը սահմանված կարգով հաստատվել է և ընդունվել որպես դասաժամերի բաշխման հիմք։

Մարգարիտա Պետրոսյանը նաև նշեց, որ դեմ չէ Մարիամ Հայրապետյանի 7-րդ «Բ» դասարանի երեք դասաժամի փոխանցմանը, հաշվի առնելով, որ տվյալ խնդրանքով դիմում է ներկայացրել Մարիամ Հայրապետյանը։

Որոշեցին՝ Հավանության արժանացնել 2025-2026 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ուսումնական պլանը, դասաբաշխումը, հավանություն տալ տարիֆիկացիոն ցուցակին (կցվում է ամփոփագիրը, փոփոխությունների տեղեկանքը)։

Լսեցին 4. 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում իրականացված նախագծային աշխատանքների հաշվետվությունների քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկույցում ներկայացվեց 2025–2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակում իրականացված նախագծային գործունեության հաշվետվությունների քննարկման ամփոփ պատկերը՝ դասարանների և առարկաների բաժանմամբ: Նշվեց, որ իրականացված նախագծերը միտված են եղել սովորողների ստեղծարար և հետազոտական մտածողության խթանմանը, հաղորդակցական հմտությունների զարգացմանը, միջառարկայական փոխկապակցվածության ամրապնդմանը և գործող կրթական չափորոշիչների պահանջների ապահովմանը:

Զեկուցողը տեղեկացրեց, որ հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է ընդհանուր առմամբ 26 նախագծային աշխատանք. դրանցից 9-ը՝ 7-րդ դասարաններում, 9-ը՝ 8-րդ դասարաններում և 8-ը՝ 9-րդ դասարաններում: Նախագծերը մշակվել և իրականացվել են մի շարք առարկաների շրջանակում, այդ թվում՝ «Ֆրանսերեն», «ԹԳՀԳ», «Հայաստանի պատմություն», «Համաշխարհային պատմություն», «Աշխարհագրություն», «Գրականություն», «Կերպարվեստ», «Հայոց լեզու», «Արվեստ», «Տեխնոլոգիա», «Երաժշտություն», «Հանրահաշիվ», «Երկրաչափություն», «Անգլերեն», «Կենսաբանություն», «Ռուսաց լեզու», «Քիմիա» և «Ֆիզիկա»:

Նախագծային աշխատանքների կազմակերպումն ու ղեկավարումն իրականացրել են համապատասխան առարկաների ուսուցիչները, իսկ դրանց իրականացման մեջ ներգրավված են եղել 7–9-րդ դասարանների այն սովորողները, ովքեր ընդգրկված են եղել տվյալ նախագծային խմբերում: Նշվեց, որ նախագծերի պաշտպանության գործընթացը կազմակերպվել է գործող կարգի համաձայն՝ հիմք ընդունելով մեթոդմիավորման և մանկավարժական խորհրդի որոշումները: Պաշտպանություններն անցկացվել են առարկայական հանձնաժողովների կողմից, որոնց կազմում ընդգրկված են եղել տվյալ կամ հարակից առարկաների ուսուցիչները, մեթոդմիավորման նախագահը և տնօրենի տեղակալը:

Զեկուցման ավարտին ընդգծվեց, որ սահմանված կարգի համաձայն՝ իրականացված բոլոր նախագծերը և դրանց արդյունքները տեղադրվել են դպրոցի պաշտոնական կայքում՝ առանձնացված էջում, ապահովելով դրանց բաց հասանելիությունն ու հանրային ներկայացվածությունը:

Արտահայտվեցին՝ ՄԽ անդամները և նախագծային աշխատանքների ղեկավարները

Նախագծային գործունեության պատասխանատուները մանրամասն ներկայացրին իրականացված աշխատանքների հաշվետվությունները՝ անդրադառնալով վերջնական արդյունքներին, ստացված պրոդուկտներին, իրականացման ընթացքում հանդիպած դժվարություններին և արձանագրված հաջողություններին:

Քննարկմանը մասնակցած մեթոդական միավորման անդամները վերլուծեցին ներկայացված նյութերը՝ ուշադրություն դարձնելով թեմաների համապատասխանությանը ուսումնառության նպատակներին, ծրագրային պահանջների իրագործմանը, սովորողների ներգրավվածության մակարդակին, կիրառված մանկավարժական մոտեցումներին և արձանագրված արդյունքներին: Առանձնակի ընդգծվեց նախագծերի հստակ նպատակադրումը, թիմային աշխատանքի արդյունավետ կազմակերպումը և ներկայացման ձևերի բազմազանությունը, որոնք նպաստել են սովորողների ստեղծագործական մտածողության, նախաձեռնողականության և գործնական հմտությունների զարգացմանը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում իրականացված նախագծային աշխատանքների հաշվետվությունները և ներկայացնել տնօրենին՝ հաստատման:

Լսեցին 5. 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում իրականացված երկարօրյա ուսուցման խմբակների հաշվետվությունների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը նշեց, որ 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում՝ հոկտեմբերից դեկտեմբեր ամիսներին, կազմակերպվել է երկարօրյա ուսուցման խմբակ 3-4-րդ և 5-7-րդ դասարանների աշակերտների համար։ Աշակերտների ընդգրկումը երկարօրյա խմբերում իրականացվել է 2020 հոկտեմբերի 13-ի №38-Ն որոշման համաձայն, որով հաստատվել է Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգը։ Համապատասխան այդ կարգի երկարօրյա ուսուցումը կազմակերպվում է երկարօրյա խմբերում, որոնք ստեղծվում են՝

- Երկարօրյա ուսուցումը կազմակերպվում է երկարօրյա խմբերում, որոնք ստեղծվում են՝
  1) սովորողի ծնողի դիմումի հիման վրա՝
  ա. ուսումնադաստիարակչական աշխատանքներում ընտանիքին համակողմանի օգնություն ցուցաբերելու.
  բ. դասապատրաստումներին աջակցելու.
  գ. ինքնուրույն սովորելու կարողությունները զարգացնելու նպատակներով։
- Երկարօրյա ուսուցումը կազմակերպվում է նաև հանրակրթության պետական չափորոշչի (այսուհետ՝ ՀՊՉ) ներդրման շրջանակներում ուսումնառության ցածր արդյունք արձանագրած սովորողների առաջադիմության բարելավման նպատակով։

Զեկուցողը բոլորի ուշադրությունը հրավիրեց ուսումնառության ցածր արդյունք արձանագրած սովորողների ներգրավվածության վրա, շեշտեց, որ համապատասխան կարգի ՀՊՉ-ի ներդրման ժամանակացույցով սահմանված դասարաններում ՀՊՉ-ի պահանջներին համապատասխան սովորողի ուսումնառության ցածր արդյունքների դեպքում առարկայական ծրագրի յուրացումը ապահովելու նպատակով կրթության կառավարման տեղեկատվական համակարգի տվյալների հիման վրա տվյալ առարկան դասավանդող ուսուցիչը կամ սովորողի դասղեկը երկարօրյա ուսուցում կազմակերպելու համար հիմնավորված գրավոր առաջարկով դիմում է տնօրենին՝

1) այն դասարաններում, որտեղ սովորողների որևէ առարկայի առաջադիմության գնահատումն իրականացվում է բնութագրող գնահատման արդյունքում՝ յուրաքանչյուր ամսվա ավարտին ձևավորող գնահատման հիման վրա արձանագրված ուսումնառության ցածր արդյունքներ ունենալու դեպքում.
2) այն դասարաններում, որտեղ իրականացվում է միավորային գնահատում, սովորողների կողմից որևէ առարկայից ուսումնառության փուլի (թեմա, ենթաթեմա, թեմաներ) ավարտին ձևավորող գնահատման արդյունքում արձանագրված ուսումնառության ցածր արդյունքներ ունենալու, ինչպես նաև ամփոփիչ գնահատման արդյունքում 1-3 միավոր գնահատվելու դեպքում։

Զեկուցման ընթացքում տեղեկացվեց, որ 2025–2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակում՝ հոկտեմբեր–դեկտեմբեր ամիսներին, դպրոցում կազմակերպվել են երկարօրյա ուսուցման խմբակներ՝ նախատեսված 2–4-րդ դասարանների 7 սովորողների և 7-րդ դասարանի 3 սովորողների համար։ Նշվեց, որ աշակերտների ընտրությունն իրականացվել է գործող կարգավորմամբ սահմանված չափորոշիչների հիման վրա։

Մասնավորապես, հիմք է ընդունվել հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգի 16-րդ կետի համապատասխան ենթակետերը, որոնց համաձայն՝ 2–3-րդ դասարաններից ընդգրկվել են այն սովորողները, որոնց մոտ առաջադիմության բնութագրող գնահատման արդյունքում արձանագրվել են ցածր ցուցանիշներ, իսկ 5–9-րդ դասարաններից՝ ցածր առաջադիմություն ունեցող աշակերտները։

Զեկուցողը նաև նշեց, որ երկարօրյա ուսուցման գործընթացի ընթացքում իր և տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանի կողմից պարբերաբար իրականացվել են դիտարկումներ, որոնց արդյունքներով կազմակերպված աշխատանքները գնահատվել են որպես բավարար և արդյունավետ։

Արտահայտվեցին՝ Երկարօրյա ուսուցման խմբակների ուսուցիչները

Արտահայտվողներն ընդգծեցին, որ երկարօրյա խմբակներում ընդգրկված աշակերտների մոտ նկատվել է փաստացի առաջընթաց, իսկ ուսուցիչները արդյունավետ կերպով իրականացրել են նախատեսված նպատակներն ու առաջադրանքները։

Երկարօրյա խմբակների պատասխանատուները ներկայացրին իրենց հաշվետվությունները՝ մանրամասն անդրադառնալով կատարված աշխատանքներին, ձեռքբերումներին և գործընթացում արձանագրված արդյունքներին, ընդգծելով գործունեության արդյունավետությունն ու կրթական արդյունքների ստացումն ըստ ծրագրի։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում իրականացված երկարօրյա ուսուցման խմբակների ուսուցիչների հաշվետվությունները և ներկայացնել տնօրենին՝ հաստատման։

Լսեցին 6. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների հետ կապված աշխատանքի մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակում ԿԱՊԿՈՒ աշակերտների ԱՈՒՊ-ների և դիտարկման թերթիկների լրացման ընթացքը՝ շեշտադրելով, որ աշխատանքներն իրականացվել են լիովին համաձայն հաստատված պահանջների։ Նա հավելեց, որ ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ իրականացվող աշխատանքների ընթացքում պահպանվում է ակտիվ համագործակցություն ԳՏՄԱԿ-ի հետ՝ ապահովելով գործընթացի համակարգվածությունը և արդյունավետությունը։

Զեկուցողը նշեց նաև, որ սահմանված կարգի համաձայն՝ երկու ամիսը մեկ անգամ կազմակերպվում են համակարգված քննարկումներ, որոնց մասնակցում են ԳՏՄԱԿ-ի ներկայացուցիչները, ուսուցիչները, ուսուցչի օգնականները, հատուկ մանկավարժը և ԿԱՊԿՈՒ աշակերտների ծնողները։ Այդ հանդիպումներին մշտապես ներկա է լինում նաև տնօրենի պաշտոնակատար Սերգեյ Ավանեսյանը։ Քննարկումների ընթացքում մանրամասն ուսումնասիրվում են փաստաթղթերը, գնահատվում իրականացված աշխատանքները և առանձնակի ուշադրություն է դարձվում աշակերտների ձեռքբերումներին ու առաջընթացին։

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը։

Սերգեյ Ավանեսյանը կարեւորեց աշխատանքի համակարգված կազմակերպումը և ծնող-ուսուցիչ-աջակցության թիմի արդյունավետ փոխգործակցությունը՝ ընդգծելով, որ ԱՈՒՊ-ի շրջանակում նախատեսված նպատակների իրականացման ու դիտարկման թերթիկների մանրամասն, ճիշտ լրացման գործընթացը նշանակալի դեր ունի աշակերտների կրթական զարգացման և ուսուցման որակի ապահովման մեջ։ Նա հավելեց, որ այս մոտեցումը թույլ է տալիս ոչ միայն հետևել ուսուցման արդյունավետությանը, այլև ժամանակին արձանագրել առաջընթացն ու թերությունները, ձևավորել անհատականացված աջակցություն, բարձրացնել աշակերտների մասնակցությունը և ներառվածությունը, ինչպես նաև զարգացնել նրանց սոցիալական, ճանաչողական և հաղորդակցական հմտությունները։ Սերգեյ Ավանեսյանը նաև շեշտեց, որ նման համակարգված ու համագործակցային աշխատանքային մոդելը նպաստում է դպրոցի ընդհանուր կրթական միջավայրի կատարելագործմանը և նպաստավոր պայմաններ ստեղծում աշակերտների տաղանդների և ներուժի լիարժեք իրականացման համար։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների լրացման մասին ինֆորմացիան:

Լսեցին 7. 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում կատարած դասալսումների քննարկման, վերլուծության և ամփոփման մասին հարցը:

(զեկուցողներ՝ ՄՄ նախագահներ)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակում բոլոր մեթոդմիավորումների կողմից անցկացված դասալսումների համապարփակ վերլուծությունը՝ ընդգծելով դրանց ընթացքը, նպատակներն ու արձանագրված արդյունքները: Ներկայացվեցին դասալսումների ընթացքում նկատված դրական փորձը, ժամանակակից և արդյունավետ ուսուցողական մեթոդների կիրառությունը, ինչպես նաև ուսումնառության կազմակերպման ընթացքում ի հայտ եկած դժվարություններն ու բարելավման ենթակա ուղղությունները:

Զեկուցողը ընդգծեց փոխադարձ դասալսումների հաճախակի կազմակերպման, մասնագիտական քննարկումների ու դիտարկումների կարևորությունը՝ նպատակ ունենալով հայտնաբերել թերությունները և ձեռնարկել համապատասխան ուղղիչ քայլեր, ինչն արդյունավետորեն կնպաստի ուսուցիչների մասնագիտական աճին և ուսուցման որակի բարձրացմանը: Նա ներկայացրեց նաև առաջին կիսամյակի ընթացքում իրականացված դասալսումների արդյունքների ամփոփ համադրությունը:

Բացի այդ, զեկուցողն անդրադարձ կատարեց բաց դասերի և դաս-միջոցառումների ընթացքում ուսուցիչների մասնակցության մակարդակին, դրանց արդյունքների վերլուծության կարևորությանը և գնահատման գործընթացին՝ շեշտելով, որ այս մոտեցումը կարևոր է հետագա ուսումնական գործունեության արդյունավետությունն ապահովելու և կրթական գործընթացը զարգացնելու համար:

Արտահայտվեցին՝ ՄԽ անդամները:

Արտահայտվողներն իրենց դիտարկումներում ընդգծեցին դասերի բարձր որակով կազմակերպումն ու դասավանդման մեթոդների բազմազանությունը, ինչպես նաև սովորողների ակտիվ մասնակցության և ներգրավվածության բարձր մակարդակը: Նրանք ներկայացրին առաջարկություններ՝ ուսումնական գործընթացի որակի բարելավման և մեթոդական աշխատանքի արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Ավելին, շեշտադրվեց դասավանդման ընթացքում նպատակային ու տեղին մեթոդների, հնարների կիրառումը, որոնք հնարավորություն են տալիս ներգրավել բոլոր աշակերտներին և նպաստել ուսուցման արդյունավետության մեծացմանը:

Բացի այդ, արտահայտվողները շեշտեցին համագործակցային մոտեցումների կիրառման անհրաժեշտությունը դասալսումների ընթացքում՝ ընդգծելով թիմային աշխատանքը և փոխադարձ աջակցությունը: Արդյունքների ամփոփման փուլում առանձնակի կարևորվեցին ուսուցիչների ցուցաբերած ստեղծարար մոտեցումները, հնչեցված առաջարկությունները և հայտնաբերված խնդիրների քննարկման կառուցվածքային ձևերը, որոնք նպաստում են հետագա դասապրոցեսների արդյունավետությանը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում կատարված դասալսումների արդյունքները (կցվում է ամփոփագիրը):

Լսեցին 8. 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակում էլեկտրոնային մատենավարության վարման ստուգման

արդյունքները՝ մանրամասն անդրադառնալով մատյանում արձանագրված թերություններին: Նա ընդգծեց, որ գնահատման գործընթացում ցանկացած փոփոխություն պետք է հետևողականորեն արձանագրվի, գնահատականները լրացվեն սահմանված ժամկետներում, և այդ գործընթացը իրականացվի բացառապես ամփոփիչ աշխատանքների ժամանակ՝ ապահովելով տեղեկատվության ճշգրտությունն ու վերահսկելիությունը:

Առստամյանը հավելեց, որ արդյունավետ կլինի ուսուցիչներին պարբերաբար, բանավոր ձևով նախազգուշացնել մատենավարության ընթացքում նկատված բացթողումների մասին: Այս մոտեցումը, նրա խոսքով, ոչ միայն կնպաստի գրանցումների ճշգրտության պահպանմանը, այլև կբարձրացնի գնահատման ընթացքի թափանցիկությունը, կխթանի ուսուցիչների պատասխանատվության զգացումը և կստեղծի ուսումնական գործընթացի նկատմամբ ավելի հստակ վերահսկողություն: Նա նաև ընդգծեց, որ նման շարունակական դիտարկումները հնարավորություն են տալիս ժամանակին հայտնաբերել թերությունները, արդյունավետ շտկումներ կատարել և ապահովել էլեկտրոնային մատենավարության ամբողջական և հուսալի գործարկումը, ինչը անմիջական ազդեցություն է ունենում ուսուցման որակի և աշակերտների գնահատման արդարության վրա:

Արտահայտվեցին՝ ՄԽ անդամները:

Արտահայտվողներն ընդգծեցին, որ անհրաժեշտ է մշտական վերահսկողություն պահպանել ուսուցիչների էլեկտրոնային մատենավարության շրջանակներում կատարած ամենօրյա աշխատանքների նկատմամբ: Նրանք խորհուրդ տվեցին լինել առավել զգոն, խստորեն հետևել ՕԹՊ-ներին, ավարտելուց հետո կրկին ստուգել մատյանների լրացվածությունը և խնդիրների դեպքում անմիջապես համագործակցել մեթոդմիավորման նախագահների, տնօրենի տեղակալի, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում ԷԿԴԱՄ-ների հետ:

Սերգեյ Ավանեսյանը ևս շեշտեց գնահատականների ժամանակին մուտքագրման, թեմաների օրացուցային-թեմատիկ պլաններին համապատասխանեցման և գրանցումների ճշգրիտ ու ժամանակին կատարելու կարևորությունը: Նա ընդգծեց, որ այս բոլոր գործողությունները ապահովում են գնահատման ճշգրտությունը, տվյալների ամբողջականությունը և ուսումնական գործընթացի հաշվետվողականությունը, ինչպես նաև նպաստում են կրթության որակի և ուսուցիչների մասնագիտական պատասխանատվության բարձրացմանը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի էլեկտրոնային մատենավարության ստուգման ամփոփման մասին ինֆորմացիան, առաջարկել ուսուցիչներին ապահովել էլեկտրոնային մատենավարության վարման կարգի խիստ պահպանումը:

Լսեցին 9. Ուսուցիչների հերթական և կամավոր ատեստավորման, տարակարգի, ԿԶՆԱԿ-ի կողմից կազմակերպված վերապատրաստումների մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը կարևորեց ուսուցիչների հերթական վերապատրաստման գործընթացին ակտիվ մասնակցությունը, ընդգծելով, որ ինչպես 2024–2025, այնպես էլ 2025–2026 ուսումնական տարում կատարվել է ուսուցիչների կարիքի գնահատում, որի արդյունքում 2024–2025 ուսումնական տարում հերթական ատեստավորման է մասնակցել 15 ուսուցիչ, ովքեր հաջողությամբ ավարտել են 1-ին շրջափուլը և 2025–2026 ուսումնական տարվա ընթացքում մասնակցել 2-րդ շրջափուլին: 2025–2026 ուսումնական տարում հերթական ատեստավորմանը մասնակցել է 11 ուսուցիչ, որոնք նույնպես հաջողությամբ ավարտել են 1-ին շրջափուլը:

Զեկուցողը նաև նշեց, որ 2025 թվականին դպրոցի մանկավարժական անձնակազմը ակտիվ մասնակցություն է ունեցել ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից

կազմակերպվող դասընթացներին՝ ընդհանուր առմամբ իրականացվել է 12 դասընթաց, որոնց մասնակցել է 33 մանկավարժ: Նա անդրադարձավ նաև «Էսսեագրություն» թեմայով վերապատրաստման դասընթացին, որի նպատակն էր մեթոդմիավորման ուսուցիչներին նախապատրաստել 9-րդ դասարաններում «Գրականություն» և «Հայաստանի պատմություն» առարկաներից միասնական ավարտական քննությանը:

Կամավոր ատեստավորման արդյունքների վերաբերյալ զեկուցողը նշեց, որ 2025 թվականին դպրոցի ուսուցիչները արձանագրել են բարձր արդյունքներ: Առաջին անգամ մասնակցած Կարինե Մալխասյանը, Տաթևիկ Փարսադանյանը, Ռիտա Շալունցը, Կարինե Արզումանյանը, Ռուզաննա Խաչատրյանը և Հայկ Օհանյանը ցուցաբերել են բարձր արդյունքներ, ինչը հաստատեց դպրոցի ուսուցչական կազմի բարձր մասնագիտական ներուժը:

Զեկուցողը ներկայացրեց նաև 2023–2025 թվականներին կամավոր ատեստավորմանը մասնակցած դպրոցի 18 ուսուցիչներին՝ մանրամասն ընդգծելով նրանց մասնագիտական ուղղվածությունը. Մալխասյան Կարինե – դասվար, Փարսադանյան Տաթևիկ – դասվար, Շալունց Ռիտա – դասվար, Արզումանյան Կարինե – «Տեխնոլոգիա», Խաչատրյան Ռուզաննա – «Հասարակագիտություն», Օհանյան Հայկ – «Ֆիզիկա», Ղուլյան Օլյա – «ԹԳՀԳ», Գրիգորյան Թագուհի – «Անգլերեն», Հայրապետյան Մարիամ – «Ռուսաց լեզու», Գյուրջյան Շահանե – «Ռուսաց լեզու», Առստամյան Ալլա – «Մաթեմատիկա», Սարգսյան Լիլիթ – «Հայոց լեզու», Սարգիսջանյան Անուշ – «Հայոց լեզու», Պողոսյան Կարինե – դասվար, Ջավահիրյան Իրինա – դասվար, Պետրոսյան Մարգարիտա – «Ռուսաց լեզու», Հարությունյան Սոնա – «Հայոց լեզու», Աբգարյան Աննա – «Ֆիզկուլտուրա»:

Նշվեց, որ Գորիսի Յուրի Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի ուսուցիչները 2023-2025 թվականներին ցուցաբերել են բարձր ակտիվություն և բարձր արդյունքներ կամավոր ատեստավորման գործընթացում: Ընդհանուր առմամբ, դպրոցի ուսուցչական անձնակազմի 41 տոկոսը մասնակցել է կամավոր ատեստավորմանը, ստանալով բարձր գնահատականներ: Արդյունքների հիման վրա ուսուցիչների համար սահմանվել է 200 000 դրամ դրույքաչափ, ինչպես նաև 30–50 տոկոս հավելավճար:

Զեկուցողն անդրադարձ կատարեց նաև ուսուցիչների տարակարգի շնորհմանը՝ նշելով, որ 2025 թվականի ընթացքում դպրոցի մանկավարժներից 3-րդ աստիճանի տարակարգ են ստացել «ԹԳՀԳ» առարկայի ուսուցչուհի Օլյա Ղուլյանը և «Մաթեմատիկա» առարկայի ուսուցչուհի Ալլա Ջեյնալյանը, իսկ ավելի վաղ 1-ին աստիճանի տարակարգ էր ստացել «Հայոց լեզու» առարկայի ուսուցչուհի Սոնա Հարությունյանը:

Զեկուցողն ընդգծեց, որ ուսուցիչների կամավոր ատեստավորումը ծառայում է նրանց մասնագիտական գիտելիքների բացահայտմանը, մինչդեռ տարակարգը չափանիշ է, որը ցույց է տալիս այդ գիտելիքների կիրառումը դասարանում՝ նկատի ունենալով մանկավարժական մոտեցումների և համապատասխան հմտությունների առկայությունը:

Զեկուցողն ընդգծեց, որ 2025 թվականի կամավոր ատեստավորմանը մասնակցել են նաև «Պատմություն» առարկայի ուսուցչուհի Մերի Դանիելյանն ու դասվար Արուս Դոլունցը, որոնք չեն հաղթահարել 60 տոկոսի շեմը, ուստի 2026 թվականին նրանց համար նախատեսվում է իրականացնել կարիքի գնահատում, որից հետո նրանք պետք է մասնակցեն հերթական ատեստավորմանը՝ 1-ին մակարդակով:

Արտահայտվեցին՝ ՄԽ անդամները:

Արտահայտվողները ընդգծեցին, որ ժամանակակից մեթոդների և դասավանդման նոր հնարների իմացությունը անհրաժեշտ է դասապրոցեսի արդյունավետությունը բարձրացնելու համար: Նրանք շեշտեցին պարտադիր վերապատրաստումների կարևորությունը, քանի որ դրանք հնարավորություն են տալիս ծանոթանալ նորամուծություններին, հետևել կատարվող

փոփոխություններին և կազմակերպել փորձի արդյունավետ փոխանակում ուսուցիչների միջև։
Միաժամանակ կարևորվեց ուսուցիչների ակտիվ մասնակցությունը կամավոր ատեստավորման գործընթացին, քանի որ այն առաջին հերթին օգնում է ուսուցչին զարգացնել սեփական մասնագիտական կարողությունները, խթանել ինքնակրթությունը և բարելավել դասավանդման որակը։ Արտահայտվողները շեշտեցին, որ այս միջոցառումները ոչ միայն բարձրացնում են անհատական հմտությունների մակարդակը, այլև նպաստում դպրոցի ընդհանուր ուսումնական միջավայրի որակի և արդյունավետության բարելավմանը։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն ուսուցիչների հերթական և կամավոր ատեստավորման, տարակարգի, ԿԶՆԱԿ-ի կողմից կազմակերպված վերապատրաստումների մասին զեկուցումը (կցվում է)։

Լսեցին 10. 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում իրականացված խմբակների ամսական և կիսամյակային հաշվետվությունների մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը տեղեկացրեց, որ ըստ ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 16-ի №216-Ն որոշման՝ դպրոցի բոլոր խմբավարները ներկայացրել են ամսական և կիսամյակային հաշվետվություններ՝ 2025–2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակում իրականացված աշխատանքների մասին մանրամասն տեղեկություններ տրամադրելով։
Նա ընդգծեց, որ յուրաքանչյուր խմբավար ներկայացրել է հինգ հաշվետվություն՝ դրանցից չորսը ամսական՝ սեպտեմբեր–դեկտեմբեր ամիսների համար, և մեկ կիսամյակային հաշվետվություն, որտեղ ամփոփված են եղել նշված ամիսների ընթացքում իրականացված գործունեությունը, նկատված ձեռքբերումներն ու արձանագրված առաջընթացը։

Արտահայտվեցին՝ ՄԽ անդամները

Արտահայտվողները կարևորեցին խմբավարների ներկայացրած հաշվետվությունների դերը՝ շեշտելով, որ դրանք ոչ միայն ծառայում են ուսումնական գործընթացի արդյունավետությունը գնահատելու համար, այլև թույլ են տալիս համակարգված կերպով պլանավորել հետագա աշխատանքները՝ նպատակադրված և հիմնավորված մոտեցմամբ։ Նրանք ընդգծեցին, որ հաշվետվությունները հնարավորություն են տալիս տեսնել ինչպես ձեռքբերումներն ու հաջողությունները, այնպես էլ այն ոլորտները, որոնք պահանջում են բարելավում կամ հավելյալ ուշադրություն։
Նրանց խոսքով՝ խմբավարների գործունեության ընթացիկ մոնիտորինգն անհրաժեշտ է ապահովելու ուսուցողական գործընթացի վերահսկելիությունը, գնահատել աշխատողի արդյունավետությունն ու մասնագիտական մոտեցումները, ինչպես նաև ժամանակին հայտնաբերել խնդիրներն ու առաջարկել ուղղիչ քայլեր։ Արտահայտվողները շեշտեցին, որ հաշվետվությունների միջոցով արձանագրված արդյունքները նպաստում են ոչ միայն ուսուցման որակի բարձրացմանը, այլև կրթական ծրագրերի զարգացմանը, ուսուցիչների մասնագիտական հմտությունների կատարելագործմանը և դպրոցի ընդհանուր ուսումնական միջավայրի կայուն բարելավմանը։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում իրականացված խմբակների ամսական և կիսամյակային հաշվետվությունների մասին զեկուցումը և հաստատել հաշվետվությունները։

Լսեցին 11. Դպրոցում երեխաների պաշտպանության խմբի ձևավորման մասին հարցը։

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը տեղեկացրեց, որ 2025–2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակից դպրոցում կձևավորվի երեխաների պաշտպանության հատուկ խումբ։ Խմբի կազմում ընդգրկվելու են դպրոցի տնօրինության և մանկավարժական

անձնակազմի ներկայացուցիչներ, ներառական կրթության բաժնի աշխատակիցներ, ԳՏՄԱԿ-ի ներկայացուցիչներ, ծնողներ և այլ շահագրգիռ կառույցների ներկայացուցիչներ: Խմբի հիմնական նպատակը երեխաների իրավունքների պաշտպանությունն ապահովելն է, ստեղծել անվտանգ և աջակցող ուսումնական միջավայր, արձագանքել ցանկացած ռիսկային կամ խնդիր առաջացնող իրավիճակի և իրականացնել կանխարգելիչ միջոցառումներ՝ միաժամանակ բարձրացնելով ուսուցիչների ու ծնողների իրազեկվածությունը երեխաների իրավունքների վերաբերյալ:

Զեկուցողը շեշտեց, որ խմբի գործունեությունը հիմնված է երեխաների պաշտպանությունը առաջնահերթություն դարձնելու սկզբունքի վրա՝ ապահովելով նրանց ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական անվտանգությունը: Նման մոտեցումը արդեն հաջողությամբ փորձարկվում է հանրապետության մի շարք դպրոցներում, որտեղ փորձարկվում են երեխաների իրավունքների պաշտպանության նոր մեթոդներ և գնահատվում դրանց արդյունավետությունը: Զեկուցողը հավելեց, որ պիլոտային փորձարկումների հաջող ավարտից հետո նախատեսվում է այս սկզբունքը ընդլայնել և ներդնել բոլոր դպրոցներում, որպեսզի ապահովվի անվտանգ, ներառական և պաշտպանված ուսումնական միջավայր բոլոր աշակերտների համար:

Արտահայտվեցին՝ ՄԽ անդամները

Արտահայտվողներն ընդգծեցին, որ երեխաների պաշտպանության խմբի ստեղծումը կարևոր նախաձեռնություն է, որն ուղղված է երեխաների իրավունքների պաշտպանությանը և անվտանգ, աջակցող ուսումնական միջավայրի ապահովմանը: Նրանք նշել են, որ այս խումբը կխթանի երեխաների ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական անվտանգության ամրապնդումը, կուժեղացնի ուսուցիչների, ծնողների և այլ շահագրգիռ կողմերի համագործակցությունը և կնպաստի կրթական գործընթացում ներառական և աջակցող մոտեցումների ընդլայնմանը: Արտահայտվողները նաև ընդգծեցին, որ նման համակարգված և համատեղ մոտեցումը հնարավորություն կտա ժամանակին արձագանքել ռիսկային իրավիճակներին և արդյունավետորեն իրականացնել կանխարգելիչ միջոցառումներ՝ նպաստելով աշակերտների բազմակողմանի զարգացմանը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն դպրոցում երեխաների պաշտպանության խմբի ձևավորման մասին զեկուցումը:

Լսեցին 12. 1-9-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը ներկայացրեց, որ տնօրենի, մեթոդմիավորման նախագահի և անդամների կողմից 1–9-րդ դասարաններում իրականացված դասալսումների արդյունքում պարզվել է, որ ուսուցիչները հիմնականում ապահովում են նոր ՀՊՉ-ների պահանջները: Դասալսվող ուսուցիչների մոտ առկա էին օրացուցային-թեմատիկ պլանները և օրվա դասի պլանները էլեկտրոնային ձևաչափով, իսկ մատենավարությունը կազմակերպված էր այդ պլաններին համապատասխան: Զեկուցողը շեշտեց, որ օրացուցային-թեմատիկ պլաններում հստակ սահմանված էին տվյալ թեմայի նպատակները և վերջնարդյունքները, ինչը ուսուցիչներին հնարավորություն է տալիս հստակ պատկերացնել, թե դասի ավարտին ինչ արդյունքներ պետք է ապահովել:

Միաժամանակ նշվեց, որ որոշակի դժվարություններ շարունակում են հանդիպել առարկայի ծրագրով նախատեսված կարողությունների զարգացման հարցում, հատկապես այն դասարաններում, որտեղ աշակերտների խտությունը մեծ է: Մեծ խմբերում դժվար է հավասարաչափ ներգրավել բոլոր աշակերտներին դասապրոցեսին և բավարար ուշադրություն դարձնել նրանց ինքնուրույն աշխատանքի իրականացմանը: Այնուհանդերձ,

փոքր խմբերի դեպքում ուսուցիչները հաջողությամբ ապահովում են դասի վերջնարդյունքները՝ հետևելով ՕԹՊ-ների պահանջներին։
Զեկուցողը նաև կրկին ընդգծեց գնահատման հետ կապված հարցերի կարևորությունը։ Նախորդ քննարկումներից հետո նկատելի է, որ ուսուցիչները հիմնականում տիրապետում են գնահատման նոր համակարգին, հետևում են սահմանված պահանջներին, իսկ աշակերտների գնահատումը կատարվում է բացառապես ամփոփիչ աշխատանքների ժամանակ։
Վերջում զեկուցողն առաջարկեց շարունակել կենտրոնանալ առարկայի ծրագրով նախատեսված կարողությունների զարգացման վրա, տվյալ թեմայի վերջնարդյունքների ապահովման վրա, աշակերտների ակտիվ ներգրավվածության բարձրացման և նոր գնահատման համակարգի կիրառման վրա, որպեսզի դասերի արդյունավետությունը և սովորողների ձեռքբերումները շարունակեն բարելավվել։

Արտահայտվեցին՝ ՄԽ անդամները

Արտահայտվողներն ընդգծեցին, որ դասալսումների արդյունքներից պարզ է դարձել՝ ուսուցիչները հիմնականում բավարարում են նոր ՀՊՉ-ների պահանջները, իսկ օրացուցային-թեմատիկ պլանների և մատենավարության ճիշտ կազմակերպումն անմիջականորեն նպաստում է դասի արդյունավետությանը։ Նրանք նկատեցին, որ մեծ խմբերում դժվարություններ կան աշակերտների հավասար ներգրավվածությունն ապահովելու և կարողությունների զարգացման հարցում, ուստի անհրաժեշտ է կիրառել լրացուցիչ մեթոդներ՝ բոլոր աշակերտների ակտիվ մասնակցությունը խթանելու համար։
Արտահայտվողները կարևորեցին նաև գնահատման նոր համակարգին լիարժեք տիրապետելու անհրաժեշտությունը և ընդգծեցին, որ շարունակական ուշադրությունը պետք է մնա ծրագրով նախատեսված կարողությունների զարգացման, դասի վերջնարդյունքների ապահովման և ուսուցման արդյունավետության բարձրացման վրա՝ ապահովելով աշակերտների բազմակողմանի առաջընթացը և ուսուցողական գործընթացի որակի կայուն բարձր մակարդակը։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 1-9-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության մասին ինֆորմացիան։

Լսեցին 13. 2025-2026 ուսումնական տարվա նախագծային աշխատանքների թեմաների, պլանների, թեմատիկ պլանների, ղեկավարների, մատյանների և հանձնաժողովների կազմի քննարկում։

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը կարևորեց 2025–2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակում նախագծային աշխատանքի կազմակերպման ընթացքում ձեռք բերված փորձը՝ շեշտելով դրա նշանակությունը ուսումնական գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու և աշակերտների ստեղծագործական ու հետազոտական հմտությունները զարգացնելու տեսանկյունից։ Նա ներկայացրեց նաև ընթացիկ ուսումնական տարում նախագծային աշխատանքների իրականացման կարգը, իրականացված փոփոխությունները և դրանց նպատակահարմարությունը։
Զեկուցողի տեղեկացմամբ՝ 7–9-րդ դասարանների համար մասնախմբի անդամների կողմից արդեն մշակվել և հրապարակվել են համապատասխան նախագծային թեմաներ՝ համաձայն հաստատված կարգի պահանջների։ Թեմաների նախապես հրապարակումը ապահովել է թափանցիկությունը և աշակերտների ակտիվ ներգրավվածությունը։ Նախագծային աշխատանքներին կարող են մասնակցել նվազագույնը երեք և առավելագույնը յոթ աշակերտ, ինչը խթանում է խմբային աշխատանքը, փոխգործակցությունը և յուրաքանչյուր աշակերտի արդյունավետ մասնակցությունը։ Աշակերտական խմբերը ձևավորվել են հրապարակված թեմաների հիման վրա՝ ուսուցիչների կողմից

աշակերտների հետ հաղորդակցման հարթակների միջոցով իրականացվող ընտրությամբ, ինչի արդյունքում կատարվել է խմբերի ձևավորում, նախագծային թեմաների և ղեկավարների ընտրություն։

Զեկուցողը մանրամասն ներկայացրեց նաև հանրակրթական հիմնական, ընդհանուր և այլընտրանքային ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնական խմբակների ձևավորման և նախագծային աշխատանքների իրականացման կարգը։ Նա առաջարկեց նախագծերի պաշտպանությունը կազմակերպել առարկայական հանձնաժողովների ձևաչափով՝ ապահովելով մասնագիտական և օբյեկտիվ գնահատում։ Հանձնաժողովի կազմում պետք է ընդգրկվեն տվյալ կամ հարակից առարկաների ուսուցիչները, մեթոդական միավորման նախագահը և տնօրենի տեղակալը։

Զեկուցողը ներկայացրեց նաև նախագծային աշխատանքների գնահատման կարգը՝ հիմնված ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից հաստատված նախագծային ուսուցման հայեցակարգի և ուսուցիչների վերապատրաստման մոդուլի հրամանների վրա։ Նա շեշտեց գնահատման չափորոշիչների հստակությունը, միասնական կիրառումը և գործընթացում հավասարության ու արդարության ապահովման կարևորությունը՝ որպես նախագծային ուսուցման արդյունավետության և ուսուցիչների մասնագիտական կարողությունների զարգացման հիմնական տարրեր։

Արտահայտվեցին՝ ՄԽ անդամները։

Արտահայտվողները կարևորեցին հանրակրթական հիմնական, ընդհանուր և այլընտրանքային ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնական խմբակների ձևավորման, գործունեության և ուսումնական նախագծերի իրականացման կարգով սահմանված պահանջների խստապահանջ պահպանման կարևորությունը՝ ընդգծելով դրանց առանցքային դերը ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման գործում։ Նրանց կարծիքով՝ այս պահանջների պատշաճ իրագործումը ապահովում է կրթական գործընթացի բազմազանությունը, սովորողների ակտիվ, գիտակցված և ներգրավված մասնակցությունը, ինչպես նաև նպաստում է ուսուցողական միջավայրի բարձր մակարդակին։

Միաժամանակ արտահայտվողները անդրադարձ կատարեցին նախագծային աշխատանքների իրականացման կարգում կատարված փոփոխություններին՝ շեշտելով դրանց արդիականությունն ու կարևորությունը։ Նրանց կարծիքով՝ փոփոխությունները միտված են սովորողների հետազոտական և ստեղծագործական գործունեության արդյունավետ կազմակերպմանը, ինքնուրույն մտածողության զարգացմանը, ինչպես նաև թիմային աշխատանքի և համագործակցության հմտությունների ձևավորմանը։ Արդյունքում, այս փոփոխությունների ներդրումը նպաստում է ուսումնական գործընթացի ընդհանուր որակի բարձրացմանը և դրա արդյունավետության շարունակական բարելավմանը։

Որոշեցին՝ Հավանության արժանացնել 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի նախագծային աշխատանքների թեմաները, պլանները, թեմատիկ պլանները, ղեկավարներին, մատյանները և հանձնաժողովների կազմը (կցվում է)։

Խորհրդի նախագահ՝ _____ Ս. Ավանեսյան

Քարտուղար՝ _____ Ա. Զեյնալյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4

«23» փետրվարի 2026թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին խորհրդի բոլոր անդամները, բացի Անուշ Աղաբեկյանից

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Օրակարգի հաստատում։
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
2. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) հունվար, փետրվար ամիսների իրականացված աշխատանքներ։
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)
3. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների հետ կապված աշխատանքի մասին։
(զեկուցող՝ Ա. Ծատրյան)
4. 1-9-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողություն։
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
5. «Հասարակագիտություն», «Արվեստ», «Ռուսաց լեզու», «Մայրենի» (1-4-րդ դասարաններ), «Տեխնոլոգիա» (5-6-րդ դասարաններ) առարկաների դասավանդման դրվածքի ուսումնասիրության ընթացիկ ամփոփում։
(զեկուցողներ՝ ՄՄ նախագահներ, Ա. Առստամյան)
6. Շվեյցարիայի Համադաշնության Միջուկային հետազոտությունների եվրոպական կենտրոնում Արմանուշ Բակունցի վերապատրաստման մասին։
(զեկուցող՝ Ա. Բակունց)
7. «Ակտիվ ուսումնառություն, շրջված դասարան» մեթոդական զեկուցում։
(զեկուցող՝ Հ. Ալավերդյան)
8. 2-րդ «Ա», «Բ» և «Գ» դասարանների սովորողների գիտելիքների ստուգման գործընթացը
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
9. Մարզային և հանրապետական առարկայական օլիմպիադաների ամփոփում։
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
10. 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի անցած թեմաների սահմաններում 3-4-րդ դասարաններում «Մաթեմատիկա», «Մայրենի», 5-9-րդ դասարաններում «Մաթեմատիկա», «Հանրահաշիվ», «Մայրենի», «Հայոց լեզու» առարկաներից տնօրենության կողմից տրված գրավոր աշխատանքների արդյունքների ամփոփում։
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
11. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի սեպտեմբերի-դեկտեմբեր ամիսների հաշվետվությունների քննարկում։
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)
12. «Ֆիզկուլտուրա» առարկայի ուսուցչուհի Աննա Աբգարյանի կատարած աշխատանքի նկատմամբ անհատական վերահսկողություն իրականացնելու մասին։
(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Լսեցին 1. Օրակարգի հաստատման մասին հարցը
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը։

Արտահայտվեցին՝
Որոշեցին՝ Հաստատել մանկավարժական խորհրդի նիստի օրակարգը։

Լսեցին 2. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) հունվար, փետրվար ամիսների իրականացված աշխատանքների մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը ներկայացրեց հունվար և փետրվար ամիսների ընթացքում իրականացված ուսումնադաստիարակչական և կրթական աշխատանքների ամփոփ հաշվետվությունը, ընդգծելով դրանց համակարգված, նպատակաուղղված և հետևողական բնույթը: Նշվեց, որ դպրոցում կատարվել է ուսումնական գործընթացի շարունակական վերահսկողություն, կազմակերպվել են անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներ՝ աշակերտների արդյունավետ մասնակցությունը մարզային օլիմպիադաներին ապահովելու համար, ինչպես նաև կրթական ծրագրերի ու դաստիարակչական միջոցառումների պատշաճ իրականացում:

Նշվեց, որ հունվար ամսվա ընթացքում իրականացվել են «Ճանաչենք մեր դպրոցը. անվտանգ մուտք և ելք» թեմայով բաց դաս, Հայոց բանակի օրվան նվիրված դաս-միջոցառում և այլ նախաձեռնություններ, որոնք նպաստել են աշակերտների անվտանգության, պատասխանատվության և հայրենասիրական գիտելիքների ամրապնդմանը: Փետրվար ամսվա ընթացքում արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների ուսուցիչները իրականացրել են բազմաբնույթ ուսուցողական, կազմակերպչական և դաստիարակչական աշխատանքներ՝ ուշադրություն դարձնելով սովորողների ստեղծագործական կարողությունների, ֆիզիկական պատրաստվածության, գեղագիտական ճաշակի և արժեքային համակարգի զարգացմանը:

Նախանշված բոլոր աշխատանքները կատարվել են պլանավորված ծավալով և համակարգված ձևով, ինչը նպաստել է ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը, աշակերտների համակողմանի զարգացմանը, ուսուցման նկատմամբ հետաքրքրության և մոտիվացիայի բարձրացմանը, ինչպես նաև դպրոցի կրթական միջավայրի շարունակական զարգացմանը:

Զեկուցողը նշեց, որ ՆԴՎ-ի շրջանակում դպրոցի ղեկավար կազմի՝ տնօրենի, տնօրենի տեղակալի, մեթոդմիավորման նախագահի և զեկուցողի կողմից իրականացվել են վերահսկողական աշխատանքներ: Նշվեց, որ այդ գործընթացը նպաստել է ուսումնական և դաստիարակչական աշխատանքների առավել համակարգված կազմակերպմանը, առկա խնդիրների ժամանակին բացահայտմանը և դրանց արդյունավետ լուծմանը՝ ընդհանուր առմամբ բարելավելով դպրոցում իրականացվող աշխատանքների որակը:

Արտահայտվեցին՝ ՄԽ անդամները:

Արտահայտվողները գնահատեցին հունվար–փետրվար ամիսներին իրականացված ուսումնադաստիարակչական աշխատանքները՝ շեշտելով դրանց համակարգվածությունը, նպատակաուղղվածությունը և հետևողական բնույթը: Նրանք ընդգծեցին, որ անցկացված միջոցառումները և բաց դասերը նպաստել են աշակերտների համակողմանի զարգացմանը, ստեղծագործական և ֆիզիկական կարողությունների ամրապնդմանը, արժեքային և հայրենասիրական գիտելիքների ձևավորմանը, ինչպես նաև ուսումնական գործընթացի նկատմամբ հետաքրքրության և մոտիվացիայի բարձրացմանը:

Արտահայտվողները նաև կոչ արեցին շարունակել աջակցել ակտիվ սովորողներին, խրախուսել նրանց մասնակցությունը մրցույթներին և օլիմպիադաներին, ինչը միտված է ոչ միայն գիտելիքների զարգացմանը, այլև դպրոցի կրթական միջավայրի շարունակական բարելավմանը և ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի հունվար, փետրվար ամիսների ընթացքում իրականացված աշխատանքները:

Լսեցին 3. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների հետ կապված աշխատանքի մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը ներկայացրեց նախորդ ժամանակահատվածում ԿԱՊԿՈՒՀ աշակերտների անհատական ուսուցման պլանների (ԱՈՒՊ) մշակման, իրականացման և դիտարկման թերթիկների լրացման վերաբերյալ իրականացված աշխատանքների արդյունքները՝ ընդգծելով, որ բոլոր գործընթացներն իրականացվել են գործող կարգավորումների և սահմանված պահանջների լիարժեք պահպանմամբ։

Նա նաև ընդգծեց, որ իրականացված աշխատանքները մեծապես նպաստել են կրթական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը, աշակերտների անհատական կարիքների պարզմանը և նրանց առաջընթացի հետևողական գնահատմանը, ինչը նպաստում է ոչ միայն գիտելիքների ամրապնդմանը, այլև ուսուցման անհատականացված և նպատակային մոտեցման արդյունավետության բարձրացմանը։

Արտահայտվեցին՝ ՄԽ անդամները։

Արտահայտվողները կարևորեցին ԿԱՊԿՈՒՀ աշակերտների անհատական ուսուցման պլանների (ԱՈՒՊ) մշակման և իրականացման գործընթացի կարևորությունը՝ շեշտելով, որ դա հնարավորություն է տալիս ավելի լավ ճանաչել յուրաքանչյուր աշակերտի անհատական կարիքներն ու հմտությունները։ Նրանք ընդգծեցին, որ տվյալ աշխատանքները նպաստում են կրթական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը, սովորողների առաջընթացի հետևողական գնահատմանը և ուսուցման անհատականացված մոտեցման արդյունավետության բարձրացմանը։

Արտահայտվողները նաև առաջարկեցին շարունակել հետևողական օգտագործել ԱՈՒՊ-ները և դիտարկման թերթիկները՝ առավել արդյունավետ աջակցություն ցուցաբերելու նպատակով, ինչպես նաև խթանելու աշակերտների հաջողությունների կայուն աճը և հետաքրքրությունը ուսուցման նկատմամբ։

Սերգեյ Ավանեսյանը կարևորեց աշխատանքի ճիշտ և համակարգված կազմակերպումը, ինչպես նաև ծնող–ուսուցիչ–աջակցության թիմի արդյունավետ համագործակցությունը՝ որպես ԿԱՊԿՈՒՀ աշակերտների կրթական գործընթացի հաջող իրականացման կարևոր նախապայման։ Նա ընդգծեց ՕԹՊ-ում սահմանված նպատակների հետևողական իրագործման անհրաժեշտությունը ԱՈՒՊ-ի շրջանակներում՝ ապահովելով յուրաքանչյուր սովորողի անհատական կարիքներին համապատասխան կրթական աջակցություն։

Միաժամանակ նա կարևորեց դիտարկման թերթիկների պատշաճ, ժամանակին և ճշգրիտ լրացումը, ինչը հնարավորություն է տալիս գնահատել սովորողների առաջընթացը, բացահայտել առկա դժվարությունները և համապատասխան քայլեր ձեռնարկել կրթական գործընթացի շարունակական բարելավման համար։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն նախորդող ժամանակահատվածում ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների մասին տեղեկատվությունը։

Լսեցին 4. 1-9-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողություն։

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը ներկայացրեց 1–9-րդ դասարաններում նոր չափորոշիչների ներդրման ընթացքը՝ ընդգծելով, որ գործընթացը ընթանում է գործող իրավական և մեթոդական փաստաթղթերի պահանջներին լիակատար համապատասխանությամբ։ Ներկայացվեցին դասավանդման ժամանակ կիրառվող ժամանակակից ուսուցման մեթոդները, ուսումնառության չափորոշչային պահանջներին համապատասխան արդյունքների ապահովման գործիքները, ինչպես նաև ուսուցիչների կողմից կիրառվող ձևավորող գնահատման մեխանիզմները։

Զեկուցողը շեշտեց, որ ուսումնական գործընթացում առաջնահերթ կիրառվում է սովորողակենտրոն մոտեցումը, իրականացվում են ինտեգրված դասեր, ինչպես նաև նախագծային և հետազոտական աշխատանքներ, որոնք կազմում են նոր չափորոշչի առանցքային բաղադրիչները: Նա կարևորեց առարկայական ծրագրերի և ուսուցչի կողմնորոշիչ ծրագրերի (ՕԹՊ) համապատասխանությունը ազգային ՀՊՉ պահանջներին, ինչպես նաև ուսումնառության ակնկալվող արդյունքների հստակ ձևակերպումն ու դրանց իրականացման մակարդակի հետևողական վերահսկումն ու գնահատումը:

Արտահայտվեցին՝ ՄԽ անդամները:

Սերգեյ Ավանեսյանը կարևորեց ուսուցիչների մասնագիտական կարողությունների մշտական զարգացումը՝ շեշտելով շարունակական վերապատրաստումների, մեթոդական խորհրդատվությունների և փորձի փոխանակման արդյունավետությունը: Նա ընդգծեց, որ ընթացիկ վերահսկողության շրջանակում իրականացվում են դասալսումներ, որոնք հնարավորություն են տալիս գնահատել ուսուցման գործընթացը և ապահովել նոր մոտեցումների որակյալ իրականացման վերահսկողություն:

Նոր ՀՊՉ ներդրման գործընթացում նկատելի են ինչպես դրական առաջընթացներ, այնպես էլ որոշակի մարտահրավերներ: Դրանք հիմնականում առնչվում են նոր ուսուցողական մոտեցումների լիարժեք յուրացման, ուսումնական ժամանակի արդյունավետ բաշխման և ուսումնառության բովանդակության ճիշտ պլանավորման հետ:

Արտահայտվողները գնահատեցին նոր չափորոշչային մոտեցումների ներդրումը՝ նշելով, որ դրանք նպաստում են աշակերտների ակտիվ մասնակցությանը, քննադատական և վերլուծական մտածողության զարգացմանը, ինչպես նաև ինքնուրույն ուսուցման հմտությունների ամրապնդմանը:

Նրանք ընդգծեցին ինտեգրված դասերի, նախագծային և հետազոտական աշխատանքների կարևորությունը՝ նշելով, որ դրանք բարելավում են ուսուցման արդյունավետությունը և աջակցում ուսուցիչների մասնագիտական կարողությունների զարգացմանը: Միաժամանակ արտահայտվեց կարծիք, որ ուսումնառության ակնկալվող արդյունքների հստակ ձևակերպումը և դրանց հետևողական գնահատումը ապահովում է ուսումնական գործընթացի որակի բարձրացում և համապատասխանություն նոր չափորոշչին:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն նախորդող ժամանակահատվածում 1-9-րդ դասարաններում նոր ՀՊՉ ներդրման գործընթացի ընթացիկ վերահսկողության մասին ինֆորմացիան:

Լսեցին 5. «Հասարակագիտություն», «Արվեստ», «Ռուսաց լեզու», «Մայրենի» (1-4-րդ դասարաններ), «Տեխնոլոգիա» (5-6-րդ դասարաններ) առարկաների դասավանդման դրվածքի ուսումնասիրության ընթացիկ ամփոփման մասին հարցը:

(զեկուցողներ՝ ՄՄ նախագահներ, Ա. Առստամյան)

Զեկուցողը ներկայացրեց «Հասարակագիտություն», «Արվեստ», «Ռուսաց լեզու», «Մայրենի» (1–4-րդ դասարաններ) և «Տեխնոլոգիա» (5–6-րդ դասարաններ) առարկաների դասավանդման ուսումնասիրման ընթացիկ արդյունքները: Նշվեց, որ դասերը կազմակերպվում են ուսումնական ծրագրերին համապատասխան, պահպանվում է ուսումնական թեմատիկ պլանների համահունչությունը, կիրառվում են նոր չափորոշչային պահանջներին համապատասխան մեթոդներ և հնարներ:

Դասապրոցեսի ընթացքում կիրառվում են խմբային աշխատանքներ, քննարկումներ, բանավեճեր, ինչպես նաև տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) գործիքներ: Զեկուցողը անդրադարձավ սովորողների մասնակցության մակարդակին, նրանց հետաքրքրվածությանը և արժեքային դիրքորոշումների ձևավորման

գործընթացին: Միաժամանակ ընդգծվեց, որ անհրաժեշտ է շարունակական ուշադրություն դարձնել սովորողների վերլուծական և քննադատական մտածողության զարգացմանը:

Զեկուցողը կարևորեց դասերի ընթացքում քննարկումների պարբերականությունը, շեշտադրելով դրանց նշանակությունը՝ առաջացող դժվարությունների և բացթողումների ժամանակին հայտնաբերման և վերացման համար: Ուսումնասիրության շրջանակում կազմակերպված քննարկումներին և դասալսումներին մասնակցել են տնօրենի պաշտոնակատար Սերգեյ Ավանեսյանը, մեթոդմիավորման նախագահը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը և հումանիտար առարկաների մեթոդմիավորման անդամ ուսուցիչները:

Դասալսումների հիմնական նպատակներն էին ծանոթանալ սովորողների գիտելիքների մակարդակին և աջակցել ուսուցիչներին՝ առկա խնդիրների լուծման և դասերի արդյունավետության բարձրացման գործընթացում: Անդրադարձ կատարվեց նաև ուսուցիչների կողմից նոր չափորոշչային պահանջների կիրառմանը և սահմանված վերջնարդյունքների ապահովմանը: Վերջնական ամփոփումը նախատեսվում է հաջորդ նիստի ընթացքում, երբ մեթոդմիավորումներն ամբողջական կերպով ներկայացնեն կատարված աշխատանքների արդյունքները:

Արտահայտվեցին՝ ՄԽ անդամները:

Արտահայտվողները գնահատեցին դասալսումների և քննարկումների կարևորությունը՝ նշելով, որ դրանք հնարավորություն են տալիս հետևողականորեն դիտարկել սովորողների գիտելիքների մակարդակը և բացահայտել առկա դժվարությունները: Նրանք շեշտեցին խմբային աշխատանքների, բանավեճերի և ՏՀՏ գործիքների արդյունավետությունը՝ որպես սովորողների ակտիվ ներգրավվածության և քննադատական մտածողության զարգացման կարևոր մեխանիզմ:

Նրանք նաև ընդգծեցին դասերի ընթացքում խնդիրների և բացթողումների ժամանակին հայտնաբերման անհրաժեշտությունը, որը նպաստում է դասավանդման որակի բարձրացմանը և ուսուցիչների մասնագիտական կարողությունների ամրապնդմանը: Արտահայտվեց կարծիք, որ նոր չափորոշչային պահանջների հետևողական կիրառում ուսուցիչների կողմից ապահովում է վերջնարդյունքների իրականացման հստակությունը և ուսումնական գործընթացի համահունչ կազմակերպումը:

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ ուսուցման արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է առավել հաճախ կիրառել լրացուցիչ մեթոդական նյութեր և բազմազան ուսուցման մեթոդներ: Նա նաև ընդգծեց, որ դպրոցում ընթացող հիմնանորոգման աշխատանքների և երկհերթ ուսուցման պայմաններում երբեմն առաջանում են ընթացիկ դժվարություններ՝ կապված պաստառների և ՏՀՏ գործիքների կիրառման հետ: Այնուամենայնիվ, նրա խոսքով՝ ուսուցիչները նույնիսկ նման պայմաններում կարողանում են պատշաճ կերպով կազմակերպել դասապրոցեսը և ապահովել ուսուցման արդյունավետությունը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն «Հասարակագիտություն», «Արվեստ», «Ռուսաց լեզու», «Մայրենի» (1–4-րդ դասարաններ) և «Տեխնոլոգիա» (5–6-րդ դասարաններ) առարկաների դասավանդման ուսումնասիրման ընթացիկ արդյունքների մասին տեղեկատվությունը:

Լսեցին 6. Շվեյցարիայի Համադաշնության Միջուկային հետազոտությունների եվրոպական կենտրոնում Արմանուշ Բակունցի վերապատրաստման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Բակունց)

Զեկուցողը ներկայացրեց ընթացիկ տարվա վերապատրաստման ծրագրի արդյունքները՝ ընդգծելով, որ Շվեյցարիայի Համադաշնության Միջուկային

հետազոտությունների եվրոպական կենտրոնի (CERN) և Տեսական ֆիզիկայի և մոդելավորման ինստիտուտի (ԻՏՖՄ) միջև ձեռք բերված պայմանավորվածության շրջանակում այս տարի վերապատրաստման դասընթացներին մասնակցել է «Ֆիզիկա» առարկա դասավանդող 24 ուսուցիչ: Մասնակիցների թվում ընդգրկվել է նաև Գորիսի Յուրի Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի ֆիզիկայի ուսուցչուհի Արմանուշ Բակունցը:

Նշվեց, որ 1998 թվականից CERN-ն իրականացնում է ուսուցիչների համար նախատեսված միջազգային վերապատրաստման ծրագիր, որի հիմնական նպատակն է բարձրացնել ֆիզիկայի և հարակից բնագիտական առարկաների դասավանդման որակը՝ ժամանակակից գիտական ձեռքբերումների և նորարարական մեթոդների կիրառմամբ: Ծրագրին մինչ օրս մասնակցել են հազարավոր ուսուցիչներ աշխարհի տարբեր երկրներից:

Զեկուցողը անդրադարձավ նաև հայ ուսուցիչների համար մշակված հատուկ ծրագրին, նշելով, որ 2024 թվականին առաջին անգամ հայաստանյան ուսուցիչների խումբը մասնակցել է վերապատրաստման դասընթացներին CERN-ում՝ ծանոթանալով ժամանակակից ֆիզիկայի առաջատար հետազոտություններին և միջազգային կրթական փորձին: Նախաձեռնության շրջանակում ՀՀ հանրակրթական դպրոցների ուսուցիչների մասնակցությունը հնարավոր է դարձել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ֆինանսական աջակցությամբ:

Ծրագրի նպատակն է խթանել ֆիզիկայի ուսուցիչների մասնագիտական զարգացումը, ինչպես նաև աջակցել Հայաստանում CERN-ի հետ համատեղ ֆիզիկային առնչվող կրթական և հանրային միջոցառումների կազմակերպմանը:

Արտահայտվեցին՝ ՄԽ անդամները:

Արտահայտվողները կարևորեցին այս նախաձեռնության նշանակությունը ուսուցիչների մասնագիտական հմտությունների զարգացման և դասավանդման որակի բարձրացման համար: Նրանք ընդգծեցին, որ միջազգային փորձի ուսումնասիրությունն ու ժամանակակից մեթոդների անմիջական ծանոթությունը թույլ են տալիս ներդնել նորարարական մոտեցումներ դասարաններում, ինչպես նաև խթանել աշակերտների հետաքրքրությունը և ակտիվ մասնակցությունը ֆիզիկայի ուսումնառության ընթացքում:

Նրանք շեշտեցին նաև ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ֆինանսական աջակցությամբ իրականացվող ծրագրերի կարևորությունը, որը հնարավորություն է տալիս հայկական ուսուցիչներին մասնակցել միջազգային բարձրակարգ վերապատրաստումներին և շարունակել փորձի փոխանակումը՝ համահունչ համաշխարհային կրթական և գիտական ստանդարտներին:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Շվեցարիայի Համադաշնության Միջուկային հետազոտությունների եվրոպական կենտրոնում ֆիզիկայի ուսուցչուհի Արմանուշ Բակունցի վերապատրաստման մասին տեղեկատվությունը:

Լսեցին 7. «Ակտիվ ուսումնառություն, շրջված դասարան» մեթոդական զեկուցման մասին հարցը:

(զեկուցող՝ Հ. Ալավերդյան)

Զեկուցողը ներկայացրեց «Ակտիվ ուսումնառություն, շրջված դասարան» մեթոդական զեկուցումը՝ ընդգծելով, որ տվյալ մոտեցումը նպաստում է աշակերտակենտրոն ուսուցման իրականացմանը, սովորողների ինքնուրույնության, քննադատական մտածողության և համագործակցային հմտությունների զարգացմանը: Նա նշեց, որ «շրջված դասարան» մոդելը հնարավորություն է տալիս դասաժամը առավել արդյունավետ օգտագործել՝ այն դարձնելով քննարկումների, վերլուծությունների և գործնական աշխատանքի հարթակ:

Զեկուցողը կարևորեց նաև ուսուցչի դերի փոփոխությունը տվյալ մեթոդում՝ որպես ուսումնական գործընթացը համակարգող և ուղղորդող, ինչպես նաև ընդգծեց, որ մեթոդի կիրառումը պահանջում է նախնական պլանավորում, հստակ նպատակադրում և թվային գործիքների նպատակային օգտագործում: Նրա համոզմամբ՝ մեթոդի փուլային և նպատակային կիրառումը կարող է զգալիորեն բարձրացնել ուսումնական գործընթացի արդյունավետությունն ու սովորողների ներգրավվածությունը:

Արտահայտվեցին՝ ՄԽ անդամները:

Մանկավարժական խորհրդի անդամները բարձր գնահատեցին «Ակտիվ ուսումնառություն, շրջված դասարան» մեթոդը՝ նշելով, որ այն ժամանակակից և արդյունավետ մոտեցում է ուսումնական գործընթացի կազմակերպման համար: Նրանք ընդգծեցին, որ մեթոդի կիրառումը նպաստում է աշակերտների ակտիվ ներգրավվածությանը, ինքնուրույն աշխատանքի հմտությունների զարգացմանը և դասաժամի արդյունավետ օգտագործմանը:

Արտահայտվողները կարևորեցին մեթոդի փուլային և նպատակային ներդրումը՝ հաշվի առնելով առարկաների առանձնահատկություններն ու աշակերտների տարիքային մակարդակը, և շեշտեցին ուսուցիչների միջև փորձի փոխանակման, մեթոդական աջակցման և թվային գործիքների օգտագործման անհրաժեշտությունը՝ մեթոդի առավել արդյունավետ կիրառում ապահովելու համար:

Որոշեցին՝ Ընդունելի գիտություն «Ակտիվ ուսումնառություն, շրջված դասարան» մեթոդական զեկուցումը:

Լսեցին 8. 2-րդ «Ա», «Բ» և «Գ» դասարանների սովորողների գիտելիքների ստուգման գործընթացը

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը նշեց, որ Գորիսի Յուրի Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի 2-րդ «Ա», «Բ» և «Գ» դասարանների սովորողները մասնակցել են գիտելիքների ստուգման գործընթացին, որը անցկացվել է 2-րդ դասարանցիների համար: Ստուգման հիմնական նպատակն էր գնահատել 1-ին դասարանի ուսումնական ծրագրի բովանդակության յուրացման մակարդակը և պարզել սովորողների պատրաստվածությունը հետագա ուսումնական փուլերի համար:

Գրավոր աշխատանքները կրում էին ոչ պարտադիր բնույթ՝ ապահովելով հանգիստ և աջակցող միջավայր, որտեղ երեխաները կարող էին առավել ազատ դրսևորել իրենց գիտելիքները:

Ստուգումները իրականացվեցին հետևյալ առարկաներից՝ «Մայրենի» և «Մաթեմատիկա», վերահսկողությամբ՝ դասվարներ Իրինա Ջավահիրյան, Անահիտ Աղաբեկյան, Տաթևիկ Փարսադանյան և Տարրական կրթության մեթոդմիավորման նախագահ Ռիտա Շալունց:

Գիտելիքների ստուգման արդյունքներով արձանագրվել է հետևյալ պատկերը.

- 2-րդ «Ա» դասարան – մասնակցել է 21 սովորող, որից՝ 1 սովորող ստացել է 5, 3 սովորող ստացել է 8, 10 սովորող ստացել է 9, 7 սովորող ստացել է 10,
- 2-րդ «Բ» դասարան – մասնակցել է 20 սովորող, որից՝ 1 սովորող ստացել է 6, 1 սովորող ստացել է 7, 6 սովորող ստացել է 8, 4 սովորող ստացել է 9, 7 սովորող ստացել է 10: Դասարանում կա 1 ԿԱՊԿ ունեցող սովորող, որը ստացել է 6,
- 2-րդ «Գ» դասարան – մասնակցել է 21 սովորող, որից՝ 1 սովորող ստացել է 7, 3 սովորող ստացել է 8, 5 սովորող ստացել է 9, 10 սովորող ստացել է 10:

Ամփոփ արդյունքները, արձանագրված համապատասխան ձևաթղթերում, վկայում են սովորողների բարձր առաջադիմության և ուսումնական նյութի հաջող յուրացման մասին: Ստացված տվյալները հնարավորություն են տալիս

ուսուցիչներին առավել նպատակային պլանավորել հետագա աշխատանքը՝ պահպանելով կրթության որակը և ապահովելով շարունակական զարգացում։

Արտահայտվեցին՝ ՄԽ անդամները։

Արտահայտվողները կարևորեցին գիտելիքների ստուգման գործընթացը՝ նշելով, որ այն հնարավորություն է տալիս հստակ գնահատել սովորողների ուսումնառության մակարդակը և ուղղորդել հետագա դասավանդման ծրագրերը։

Նրանք շեշտեցին, որ ոչ պարտադիր բնույթը նպաստել է երեխաների հանգստությանը, ինքնավստահությանը և ակտիվ մասնակցությանը, ինչը բարձրացրել է ստուգման արդյունավետությունը։

Միաժամանակ արտահայտվեց կարծիք, որ ստուգման արդյունքները պետք է ծառայեն ոչ միայն հաջորդ դասընթացների պլանավորման համար, այլև լրացուցիչ աջակցության և նպատակային ուսուցման իրականացման համար, որպեսզի բոլոր սովորողները լիարժեք յուրացնեն նախորդ տարի անցած նյութը և ապահովվի ուսումնական գործընթացի հետևողական զարգացումը։

Որոշեցին՝ 2-րդ «Ա», «Բ» և «Գ» դասարանների սովորողների գիտելիքների ստուգման գործընթացի մասին տեղեկատվությունն ընդունել ի գիտություն։

Լսեցին 9. Մարզային և հանրապետական առարկայական օլիմպիադաների ամփոփման մասին հարցը։

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ 2025–2026 ուսումնական տարվա ընթացքում Գորիսի Յուրի Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի սովորողները ցուցաբերել են բարձր ակտիվություն և նպատակասլացություն՝ մասնակցելով առարկայական օլիմպիադաներին։

Դպրոցական փուլի արդյունքներով 26 սովորող հաջողությամբ հաղթահարել են մրցույթը և իրավունք ստացել մասնակցելու մարզային փուլին։ Այդ սովորողներն են.

«Ֆրանսերեն» առարկայից մարզային փուլ են անցել.

1. Արզումանյան Արման, 9-րդ «Ա» դասարան
2. Ղասումյան Մանուշակ, 9-րդ «Ա» դասարան
3. Մալինցյան Ավետ, 9-րդ «Ա» դասարան
4. Միխայելյան Լիլիա, 9-րդ «Գ» դասարան

«Հայ գրականություն» առարկայից մարզային փուլ են անցել.

1. Ավագյան Մանե, 9-րդ «Ա» դասարան
2. Միխայելյան Լիլիա, 9-րդ «Ա» դասարան

«Մաթեմատիկա» առարկայից մարզային փուլ են անցել.

1. Տատինցյան Ալետա, 6-րդ «Ա» դասարան
2. Քոչարյան Հենրի, 6-րդ «Բ» դասարան
3. Բաբայան Եվա, 7-րդ «Ա» դասարան
4. Հովհաննիսյան Նարե, 7-րդ «Ա» դասարան
5. Ջհանգիրյան Մարի, 7-րդ «Ա» դասարան
6. Դաջունց Մայիս, 8-րդ «Գ» դասարան
7. Ղասումյան Հրաչիկ, 8-րդ «Գ» դասարան
8. Մելքումյան Միլենա, 8-րդ «Գ» դասարան
9. Պողոսյան Գագիկ, 8-րդ «Գ» դասարան
10. Ջավադյան Ալբերտ, 8-րդ «Գ» դասարան
11. Ջհանգիրյան Հայկ, 8-րդ «Բ» դասարան

«Մայրենի» առարկայից մարզային փուլ է անցել.

1. Քոչարյան Հենրի, 6-րդ «Բ» դասարան

«Հայոց լեզու» առարկայից մարզային փուլ են անցել.

1. Մինասյան Անի, 9-րդ «Գ» դասարան
2. Բաղդագյուլյան Ինեսա, 9-րդ «Ա» դասարան
3. Բակունց Լիա, 9-րդ «Ա» դասարան

4. Մալինցյան Լիլի, 9-րդ «Գ» դասարան
5. Ավագյան Մանե, 9-րդ «Ա» դասարան
6. Մարտիրոսյան Մարի, 9-րդ «Ա» դասարան

«Քիմիա» առարկայից մարզային փուլ է անցել.

1. Բաղդագյուլյան Ինեսա, 9-րդ «Ա» դասարան

«Ինֆորմատիկա» առարկայից մարզային փուլ է անցել.

1. Դաջունց Մայիս, 8-րդ «Գ» դասարան։

Սովորողներից 6-ը մարզային փուլի արդյունքներով, դրսևորելով բարձր գիտելիքներ և մրցունակ պատրաստվածություն, անցել են նաև օլիմպիադայի հանրապետական փուլ։ Այդ սովորողներն են.

«Մաթեմատիկա» առարկայից մարզային փուլ են անցել.

1. Բաբայան Եվա, 7-րդ «Ա» դասարան
2. Ջհանգիրյան Մարի, 7-րդ «Ա» դասարան
3. Դաջունց Մայիս, 8-րդ «Գ» դասարան

«Հայոց լեզու» առարկայից մարզային փուլ են անցել.

1. Մալինցյան Լիլի, 9-րդ «Գ» դասարան
2. Ավագյան Մանե, 9-րդ «Ա» դասարան

«Ինֆորմատիկա» առարկայից մարզային փուլ է անցել.

1. Դաջունց Մայիս, 8-րդ «Գ» դասարան։

Գորիսի Յուրի Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի այն սովորողները, որոնք մարզային փուլի ընթացքում դրսևորել են բարձր գիտելիքներ և մրցունակ պատրաստվածություն, Սյունիքի մարզպետի կողմից արժանացել են գովասանագրերի։ Այդ սովորողներն են.

«Մայրենի» առարկայից.

1. Քոչարյան Հենրի, 6-րդ «Բ» դասարան

«Մաթեմատիկա» առարկայից.

1. Տատինցյան Ալետա, 6-րդ «Ա» դասարան
2. Բաբայան Եվա, 7-րդ «Ա» դասարան
3. Ջհանգիրյան Մարի, 7-րդ «Ա» դասարան
4. Քոչարյան Հենրի, 6-րդ «Բ» դասարան

Այս ցուցանիշները վկայում են դպրոցի կրթական գործընթացի արդյունավետ կազմակերպման, ուսուցիչների հետևողական աշխատանքի և սովորողների պատասխանատու մոտեցման մասին։ Օլիմպիադաներին մասնակցությունը նպաստում է սովորողների գիտելիքների խորացմանը, ինքնուրույն մտածողության զարգացմանը և առողջ մրցակցային միջավայրի ձևավորմանը։

Արտահայտվեցին՝ ՄԽ անդամները։

Արտահայտվողները կարևորեցին սովորողների բարձր ակտիվությունն ու պատասխանատու մոտեցումը օլիմպիադաների ընթացքում, նշելով, որ մասնակցությունը նպաստում է գիտելիքների խորացմանը, ինքնուրույն մտածողության զարգացմանը և առողջ մրցակցային միջավայրի ձևավորմանը։ Նրանք շեշտեցին, որ ուսուցիչների հետևողական աշխատանքը, ճիշտ նախապատրաստումը և աջակցությունը եղել են հիմնական գործոնները, որոնք նպաստել են հաջողությանը։ Միաժամանակ գնահատվեց այն հանգամանքը, որ օլիմպիադաները ոգեշնչում են աշակերտներին զարգացնել հետաքրքրությունը առարկաների նկատմամբ, խթանում գիտելիքների ամրապնդումը և ստեղծում առավել դինամիկ ու արդյունավետ ուսումնական միջավայր։

Որոշեցին՝ Մարզային և հանրապետական առարկայական օլիմպիադաների արդյունքների ամփոփման մասին տեղեկատվությունն ընդունել ի գիտություն։

Լսեցին 10. 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի անցած թեմաների սահմաններում 3-4-րդ դասարաններում «Մաթեմատիկա», «Մայրենի», 5-9-րդ դասարաններում «Մաթեմատիկա», «Հանրահաշիվ», «Մայրենի», «Հայոց լեզու»

առարկաներից տնօրենության կողմից տրված գրավոր աշխատանքների արդյունքների ամփոփման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը ներկայացրեց գրավոր աշխատանքների արդյունքների վերլուծությունը՝ ընդգծելով սովորողների առաջադիմության, գիտելիքների մակարդակի, ինչպես նաև առավել հաճախ հանդիպող սխալների և դրանց պատճառների վերաբերյալ դիտարկումները։ Նշվեց, որ ընդհանուր առմամբ արդյունքները բավարար են, սակայն որոշ թեմաներ պահանջում են լրացուցիչ ուշադրություն և կրկնություն՝ ուսումնական գործընթացի որակի ապահովման նպատակով։

Զեկուցողը կարևորեց լրացուցիչ աշխատանքի կազմակերպման անհրաժեշտությունը, որը հնարավորություն կտա վերացնել արձանագրված բացթողումները և բարձրացնել սովորողների գիտելիքների, հմտությունների և ուսուցողական առաջընթացի մակարդակը։ Նա շեշտեց, որ այս մոտեցումը նպաստում է ուսուցման արդյունավետության ընդհանուր բարելավմանը և ապահովում է ուսումնական նպատակների ավելի համապարփակ իրականացումը։

Արտահայտվեցին՝ ՄԽ անդամները։

Արտահայտվողները ընդգծեցին, որ գրավոր աշխատանքների վերլուծությունը կարևոր գործիք է սովորողների զարգացման հետևողական գնահատման համար։ Նրանց կարծիքով՝ արդյունքների մանրամասն ուսումնասիրությունը թույլ է տալիս հայտնաբերել ինչպես ընդհանուր հաջողությունները, այնպես էլ առկա դժվարությունները՝ նպատակային աջակցություն ցուցաբերելու համար։

Նրանք նշեցին, որ լրացուցիչ դասընթացների և կրկնությունների միջոցով հնարավոր է ոչ միայն վերացնել բացթողումները, այլև ամրապնդել ուսուցողական հմտությունները, խթանել գիտելիքների խորացումը և բարձրացնել ուսումնական գործընթացի արդյունավետությունը։

Միաժամանակ արտահայտվեց կարծիք, որ այսպիսի մոտեցումը նպաստում է ուսուցիչների մասնագիտական կարողությունների զարգացմանը՝ թույլ տալով ավելի նպատակային պլանավորել ուսուցումը և հետևողականորեն գնահատել արդյունքները։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի տնօրենության կողմից տրված գրավոր աշխատանքների արդյունքները (կցվում է ամփոփագիրը)։

Լսեցին 11. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի սեպտեմբերի-դեկտեմբեր ամիսների հաշվետվությունների քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի սեպտեմբեր–դեկտեմբեր ամիսների ընթացքում իրականացված աշխատանքների հաշվետվությունները։ Ներկայացվեց աշխատանքների ընթացքը, իրականացված դասալսումները, տրամադրված մեթոդական աջակցությունները, ինչպես նաև տարբեր նախաձեռնություններ՝ ընդգծելով դրանց նպատակաուղղվածությունն ու արդյունավետությունը։

Անդրադարձ կատարվեց նոր հանրակրթական պետական չափորոշչի (ՀՊՉ) ներդրման արդյունքներին՝ ըստ կրթական աստիճանների, ուսումնառության էսսեագրության ոլորտում իրականացված աշխատանքներին և ուսումնական նախագծերի իրականացման ընթացքին։

Բացի այդ, առանձնակի ուշադրություն դարձվեց դպրոցի կառավարման արդյունավետությանը՝ ընդգծելով դրա կարևոր դերը ուսումնադաստիարակչական գործընթացների կազմակերպման և կրթական ծրագրերի որակի ապահովման գործում։

Արտահայտվեցին՝ ՄԽ անդամները։

Արտահայտվողները գնահատեցին իրականացված աշխատանքների համակարգվածությունը և արդյունավետությունը, նշելով, որ պլանավորված դասալսումները, մեթոդական աջակցությունները և նախաձեռնությունները նպաստում են կրթական գործընթացի հետևողական կազմակերպմանը և սովորողների ուսումնական առաջադիմության բարձրացմանը։

Նրանք ընդգծեցին նոր ՀՊՉ ներդրման նպատակահարմարությունը՝ նկատի ունենալով, որ համակարգված մոտեցումն ուսուցիչներին հնարավորություն է տալիս հստակ պլանավորել ուսուցման գործընթացը, հետևողականորեն կիրառել չափորոշչային պահանջները և ապահովել ակնկալվող արդյունքների իրականացման մակարդակի բարձրացում։

Միաժամանակ արտահայտվեց կարծիք, որ դպրոցի կառավարման արդյունավետությունը՝ ինչպես մանկավարժական, այնպես էլ կազմակերպչական ոլորտում, հիմնական գործոններից մեկն է կրթության որակի ապահովման և ուսումնական գործընթացի նպատակային իրականացման համար։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն ԿԳՄՍ նախարարությանն ուղարկված ուսումնադաստիարակչական աշխատանքների սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների հաշվետվությունը (կցված է էլեկտրոնային տարբերակով)։

Լսեցին 12. «Ֆիզկուլտուրա» առարկայի ուսուցչուհի Աննա Աբգարյանի կատարած աշխատանքի նկատմամբ անհատական վերահսկողություն իրականացնելու մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը նշեց, որ «Ֆիզկուլտուրա» առարկայի ուսուցչուհի Աննա Աբգարյանը նախատեսում է դիմել ուսուցչի տարակարգ ստանալու համար։ Այդ կապակցությամբ անհրաժեշտ է նրա կատարած աշխատանքի նկատմամբ իրականացնել անհատական վերահսկողություն և մասնագիտական գործունեության մշտադիտարկում։

Զեկուցողն առաջարկեց տնօրենին առաջարկել հաջորդող ժամանակահատվածում Աննա Աբգարյանի մոտ իրականացնել կատարած աշխատանքի արդյունավետության գնահատման մշտադիտարկումներ։ Մասնավորապես նախատեսվում է ուշադրություն դարձնել էլեկտրոնային մատյանի պատշաճ լրացմանը, ուսումնական նախագծերի համապատասխանությանը տվյալ թեմաներին, ինչպես նաև սովորողների բնութագրերի կազմման գործընթացին։

Զեկուցողը նաև առաջարկեց ձևավորել կատարած աշխատանքի արդյունավետության գնահատման մշտադիտարկման հանձնաժողով՝ հետևյալ կազմով՝

- տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյան,
- ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյան,
- հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախագահ Մերի Դանիելյան (որը ժամանակավորապես փոխարինում է արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նախագահ Աննա Աբգարյանին՝ որպես տարակարգի դիմող ուսուցիչ),
- տարրական դասարանների մեթոդմիավորման նախագահ Ռիտա Շալունց,
- «Ֆիզկուլտուրա» առարկայի ուսուցիչ Ռոբերտ Արզումանյան,
- «ՆԶՊ» առարկայի ուսուցիչ Արտուր Հովսեփյան։

Զեկուցողը նաև առաջարկեց իրականացված մշտադիտարկումների արդյունքների մասին զեկուցել արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման հաջորդ նիստում, իսկ

մշտադիտարկումների արձանագրությունների և փաստարկների ամբողջական փաթեթը ներկայացնել դպրոցի տնօրենին։

Արտահայտվեցին՝ ՄԽ անդամները։

Արտահայտվողները ողջունեցին Աննա Աբգարյանի նախաձեռնությունը՝ ուսուցչի տարակարգ ստանալու նպատակով դիմելու վերաբերյալ, ընդգծելով, որ դա վկայում է նրա մասնագիտական զարգացման ձգտման և պատասխանատու մոտեցման մասին։ Նրանք նաև կարևորեցին իրականացվող մշտադիտարկումները աշխատանքների արդյունավետությունը գնահատելու նպատակով, նշելով, որ նման պրակտիկան նպաստում է ոչ միայն ուսուցչի գործունեության առավել համակարգված գնահատմանը, այլև փորձի փոխանակմանը և դպրոցի կրթական գործընթացի զարգացմանն ընդհանրապես։

Արտահայտվողները կարևորեցին ուսուցիչների կատարած աշխատանքի հետևողական գնահատման և մշտադիտարկումների անհրաժեշտությունը՝ նշելով, որ դա հնարավորություն է տալիս բարձրացնել կրթական գործընթացի արդյունավետությունը և ապահովել չափորոշչային պահանջների հետևողական իրականացումը։

Նրանք շեշտեցին հանձնաժողովի ստեղծման կարևորությունը՝ ընդգծելով, որ բազմակողմանի մասնագիտական դիտարկումը թույլ կտա իրականացնել օբյեկտիվ գնահատում, շտկել հնարավոր բացթողումները և աջակցել ուսուցչին մասնագիտական աճի գործում։

Միաժամանակ արտահայտվեց կարծիք, որ մշտադիտարկումների ամփոփված փաստաթղթերը և արձանագրությունները պետք է ծառայեն հետագա պլանավորման և դասավանդման արդյունավետության բարելավման համար՝ ապահովելով հետևողական վերահսկողություն և ուսուցչի աշխատանքների թափանցիկ գնահատում։

Արմիդա Գևորգյանը նշեց, որ գործընկերային աջակցությունն ու փորձի փոխանակումը կարևոր նշանակություն ունեն ուսուցչի մասնագիտական աճի համար և համոզմունք հայտնեց, որ իրականացվող մշտադիտարկումները կնպաստեն նաև դասավանդման որակի բարձրացմանը։

Որոշեցին՝ 1. Ձևավորել հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

- տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյան,
- ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյան,
- հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախագահ Մերի Դանիելյան (որը ժամանակավորապես փոխարինում է արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նախագահ Աննա Աբգարյանին՝ որպես տարակարգի դիմող ուսուցիչ),
- տարրական դասարանների մեթոդմիավորման նախագահ Ռիտա Շալունց,
- «Ֆիզկուլտուրա» առարկայի ուսուցիչ Ռոբերտ Արզումանյան,
- «ՆՁՊ» առարկայի ուսուցիչ Արտուր Հովսեփյան։

2. Իրականացված մշտադիտարկումների արդյունքների մասին զեկուցել մանկավարժական խորհրդի, արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման հաջորդող նիստում, իսկ մշտադիտարկումների արձանագրությունների և փաստարկների ամբողջական փաթեթը ներկայացնել դպրոցի տնօրենին։

Խորհրդի նախագահ՝ _____ Ս. Ավանեսյան

Քարտուղար՝ _____ Ա. Ձեյնալյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 5

«27» մարտի 2026թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին խորհրդի բոլոր անդամները:

Ո Ր Ա Կ Ա Ր Գ

1. Օրակարգի հաստատում:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

2. «Ֆիզկուլտուրա» առարկայի ուսուցչուհի Աննա Աբգարյանի կատարած աշխատանքի նկատմամբ անհատական վերահսկողություն իրականացնելու մասին:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Լսեցին 1. Օրակարգի հաստատման մասին հարցը

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝ Չկան:

Որոշեցին՝ Հաստատել մանկավարժական խորհրդի նիստի օրակարգը:

Լսեցին 2. «Ֆիզկուլտուրա» առարկայի ուսուցչուհի Աննա Աբգարյանի կատարած աշխատանքի նկատմամբ անհատական վերահսկողություն իրականացնելու ամփոփման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը նշեց, որ «Ֆիզկուլտուրա» առարկայի ուսուցչուհի Աննա Աբգարյանը նախատեսում է դիմել ուսուցչի տարակարգ ստանալու համար: Այդ կապակցությամբ նախորդող ժամանակահատվածում իրականացվել է նրա կատարած աշխատանքի նկատմամբ անհատական վերահսկողություն և մասնագիտական գործունեության մշտադիտարկում:

Զեկուցողն առաջարկեց հիմք ընդունելով մանկավարժական խորհրդի 2026 թվականի փետրվարի 23-ի նիստի արձանագրության 12-րդ որոշմամբ սահմանված աշխատանքների կատարողական հաշվետվությունը՝ ներկայացված տնօրենի տեղակալ՝ Արաքսյա Առստամյանի կողմից, առաջարկել տնօրենին՝ տալ տեղեկանք «Ֆիզկուլտուրա» առարկայի ուսուցչուհի Աննա Աբգարյանին դասավանդած դասարաններում գնահատման համապատասխանության մասին՝ հաստատության կողմից իրականացված մշտադիտարկման (էլեկտրոնային մատյանի լրացման, ուսումնական նախագծերի՝ տվյալ թեմային համապատասխանության, սովորողի բնութագրերի մասին) արդյունքների վերաբերյալ (ներառյալ կից մշտադիտարկման արձանագրությունները): Զեկուցողն առաջարկեց ուսուցչի կատարած աշխատանքի արդյունավետությունը գնահատել «գերազանց»:

Արտահայտվեցին՝ Հանձնաժողովի անդամները:

Արտահայտվողները բարձր գնահատեցին «Ֆիզկուլտուրա» առարկայի ուսուցչուհի Աննա Աբգարյանի՝ ուսուցչի տարակարգ ստանալու նպատակով դիմելու նախաձեռնությունը՝ այն դիտարկելով որպես մասնագիտական աճի և ինքնազարգացման կարևոր քայլ: Նրանք ընդգծեցին, որ նախորդող ժամանակահատվածում իրականացված անհատական վերահսկողությունն ու մշտադիտարկումը հնարավորություն են տվել բազմակողմանիորեն գնահատել ուսուցչի գործունեությունը:

Արտահայտվողները կարևորեցին տնօրենի տեղակալի կողմից ներկայացված կատարողական հաշվետվության դերը՝ որպես հիմնավորված և ամբողջական փաստաթուղթ, որի հիման վրա հնարավոր է օբյեկտիվ գնահատական տալ ուսուցչի աշխատանքին: Նրանք համակարծիք էին, որ մշտադիտարկման

արդյունքները (էլեկտրոնային մատյանի պատշաճ լրացում, ուսումնական նախագծերի նպատակահարմարություն, ինչպես նաև սովորողների բնութագրերի ներկայացում) վկայում են ուսուցչի բարեխիղճ և հետևողական աշխատանքի մասին։

Միաժամանակ ընդգծվեց, որ գնահատման գործընթացում ապահովվել է թափանցիկություն և անաչառություն, ինչը կարևոր նախապայման է նմանատիպ որոշումների կայացման համար։ Ելնելով վերոգրյալից՝ արտահայտվողները նպատակահարմար համարեցին տնօրենին առաջարկել տրամադրել համապատասխան տեղեկանք՝ ներկայացված հիմնավորումներով և կից մշտադիտարկման արձանագրություններով։

Ամփոփելով՝ արտահայտվողները լիովին աջակցեցին զեկուցողի առաջարկին՝ Աննա Աբգարյանի կատարած աշխատանքը գնահատելով «գերազանց»։

Որոշեցին՝

- «Ֆիզկուլտուրա» առարկայի ուսուցչուհի Աննա Աբգարյանի կատարած աշխատանքը գնահատելով «գերազանց»։
- Առաջարկել տնօրենին՝ տալ տեղեկանք «Ֆիզկուլտուրա» առարկայի ուսուցչուհի Աննա Աբգարյանին դասավանդած դասարաններում գնահատման համապատասխանության մասին (կցվում է հաշվետվությունը)։

Խորհրդի նախագահ՝ _____ Ս. Ավանեսյան

Քարտուղար՝ _____ Ա. Զեյնալյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 6

«03» ապրիլի 2026թ. ք. Գորիս

Նիստին ներկա էր Մանկավարժական խորհրդի 57 անդամից 50-ը: Նիստին ներկա չէին Մարգարիտա Պետրոսյանը, Թագուհի Գրիգորյանը, Հեղինե Հովսեփյանը, Գոհար Յուզբաշյանը, Կարինե Շեգունցը, Կարինե Արզումանյանը, Մանե Հովհաննիսյանը:

Ο Ր Ա Կ Ա Ր Գ

1. Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
2. Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի տնօրենի ընտրության մասին հարցը:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Լսեցին 1. Օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել մանկավարժական խորհրդի արտահերթ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի տնօրենի ընտրության մասին հարցը:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
Զեկուցողը տեղեկացրեց, որ 2024 թվականի օգոստոսի 19-ին լրացել է դպրոցի նախկին տնօրենի պաշտոնավարման ժամկետը, ինչից հետո Սյունիքի մարզպետի համապատասխան հրամանով դպրոցի տնօրենի պաշտոնակատար է նշանակվել ինքը՝ նախկինում զբաղեցնելով ուսումնական գծով տնօրենի տեղակալի պաշտոնը:
Զեկուցողը նշեց, որ 2021 թվականից իր պաշտոնավարման ընթացքում՝ որպես ուսումնական գծով տնօրենի տեղակալ, նախաձեռնել և իրականացրել է մի շարք համակարգային և նպատակային աշխատանքներ՝ ուղղված կրթության որակի բարձրացմանը, փաստաթղթաշրջանառության կատարելագործմանը, ինչպես նաև աշխատակիցների և սովորողների միջև առողջ բարոյահոգեբանական միջավայրի ձևավորմանը: Ըստ զեկուցողի՝ իրականացված քայլերը եղել են հետևողական և արդյունքահեն, ինչի շնորհիվ դպրոցը ձեռք է բերել դրական առաջընթաց և տարածաշրջանում ձևավորել մրցունակ կրթական միջավայր:
Նա ընդգծեց, որ տնօրենի պաշտոնակատար նշանակվելուց հետո նույնպես շարունակվել են կրթության որակի բարելավմանն ուղղված նախաձեռնությունները՝ պահպանելով արդեն ձևավորված դրական միտումները և ընդլայնելով զարգացման ուղղությունները: Կարծիք հայտնեց, որ 2025–2026 ուսումնական տարվա ավարտին իրականացված համալիր միջոցառումները նույնպես լինելու են արդյունավետ և նպաստելու են ուսումնական գործընթացի որակական առաջընթացին:
Զեկուցողը նշեց, որ 2024 թվականին դպրոցում իրականացվել են տեսչական ստուգումներ, իսկ 2025 թվականին՝ ֆինանսական և կազմակերպչական աուդիտ: Վերջիններիս արդյունքներով արձանագրվել է, որ ուսումնական գործընթացի կազմակերպումը և փաստաթղթաշրջանառության իրականացումը համապատասխանում են սահմանված պահանջներին և գտնվում են պատշաճ մակարդակի վրա: Միաժամանակ ընդգծվեց, որ

իրականացվող աշխատանքներն ունեն համակարգված բնույթ և ուղղված են կրթական գործընթացի շարունակական բարելավմանը։

Զեկուցողը նաև տեղեկացրեց, որ 2024 թվականի օգոստոսից ի վեր տնօրենի թափուր պաշտոնի համար պարբերաբար հայտարարվել են մրցույթներ, սակայն դրանք չեն հանգեցրել պաշտոնի համալրմանը։ Նշելով իր կողմից իրականացված և շարունակական բնույթ կրող աշխատանքների կարևորությունը՝ զեկուցողը հայտնեց, որ կայացրել է որոշում մասնակցել հերթական հայտարարված մրցույթին՝ նպատակ ունենալով ապահովել սկսված գործընթացների շարունակականությունն ու զարգացումը։

Միաժամանակ, զեկուցողը կարևորեց մանկավարժական խորհրդի անդամների ակտիվ մասնակցությունը դպրոցի զարգացման գործընթացներին՝ առաջարկելով ներկայացնել կրթության որակի հետագա բարելավմանն ուղղված առաջարկություններ։ Նա ընդգծեց, որ դպրոցն ընդգրկված է ՀՀ կառավարության «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրում, որի շրջանակում ներկայումս իրականացվում են հիմնանորոգման աշխատանքներ։ Նշեց, որ ակնկալվում է, որ ծրագրի ավարտին դպրոցը կունենա արդիականացված ուսումնական միջավայր՝ նոր գույքով, վերազինված լաբորատորիաներով և կաբինետներով, ինչը լրացուցիչ հնարավորություն կստեղծի կրթական գործընթացի արդյունավետ կազմակերպման և զարգացման համար։

Արտահայտվեցին՝ Մանկավարժական խորհրդի անդամներ

Գայանե Գրիգորյանը նշեց, որ կարող է վստահորեն ասել՝ ամեն ինչ ընթանում է բարձր մակարդակով։ Նրա խոսքով՝ Գորիսի Յուրի Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցը իր գործունեությամբ առանձնանում է մյուս կրթօջախների շարքում՝ դառնալով օրինակելի միջավայր կրթության կազմակերպման և զարգացման տեսանկյունից։

Կարելի է վստահաբար արձանագրել, որ այս հաջողությունների հիմքում ընկած է դպրոցի մանկավարժական անձնակազմի միասնական, նպատակաուղղված և նվիրված աշխատանքը, որը նպաստում է կրթության որակի շարունակական բարձրացմանն ու սովորողների համակողմանի զարգացմանը։

Միաժամանակ, արտահայտվողները ներկայացրին իրենց մտահոգություններն ու առաջարկությունները՝ հիմնականում անդրադառնալով դպրոցի նյութատեխնիկական բազայի հարստացման անհրաժեշտությանը։ Մասնավորապես ընդգծվեց լաբորատորիաների և առարկայական կաբինետների արդիականացման, ուսումնական սարքավորումների և տեխնիկական միջոցների համալրման կարևորությունը՝ որպես կրթության որակի շարունակական բարձրացման կարևոր նախապայման։

Անդամները վստահություն հայտնեցին, որ նախատեսվող հիմնանորոգման աշխատանքներն ու ծրագրային բարելավումները կնպաստեն դպրոցի զարգացմանը և կապահովեն ուսուցման կազմակերպումը ժամանակակից պահանջներին համապատասխան։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի տնօրենի պաշտոնակատար Սերգեյ Ավանեսյանի կողմից ներկայացված զեկույցը։

Խորհրդի նախագահ՝ _____ Ս. Ավանեսյան

Քարտուղար՝ _____ Ա. Զեյնալյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 7

«09» ապրիլի 2026թ. ք. Գորիս

Նիստին ներկա էր Մանկավարժական խորհրդի 57 անդամից 50-ը: Նիստին ներկա չէին Մարգարիտա Պետրոսյանը, Թագուհի Գրիգորյանը, Հեղինե Հովսեփյանը, Գոհար Յուզբաշյանը, Կարինե Շեգունցը, Կարինե Արզումանյանը, Մանե Հովհաննիսյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
2. «Հայոց լեզու», «Գրականություն» առարկաների ուսուցչուհի Սոնա Հարությունյանի կատարած աշխատանքի նկատմամբ անհատական վերահսկողություն իրականացնելու մասին:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
3. «Պատմություն», «Հասարակագիտություն» առարկաների ուսուցչուհի Ռուզաննա Խաչատրյանի կատարած աշխատանքի նկատմամբ անհատական վերահսկողություն իրականացնելու մասին:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
4. Դասվար Տաթևիկ Փարսադանյանի կատարած աշխատանքի նկատմամբ անհատական վերահսկողություն իրականացնելու մասին:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Լսեցին 1. Օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել մանկավարժական խորհրդի արտահերթ նիստի օրակարգը:

Լսեցին 2. «Հայոց լեզու», «Գրականություն» առարկաների ուսուցչուհի Սոնա Հարությունյանի կատարած աշխատանքի նկատմամբ անհատական վերահսկողություն իրականացնելու մասին հարցը:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
Զեկուցողը տեղեկացրեց, որ «Հայոց լեզու» և «Գրականություն» առարկաների ուսուցչուհի Սոնա Հարությունյանը մտադիր է դիմել ուսուցչի տարակարգ ստանալու համար: Այդ գործընթացի արդյունավետ կազմակերպման նպատակով կարևորվեց նրա մասնագիտական գործունեության նկատմամբ նպատակային և համակարգված վերահսկողության իրականացումը:
Այդ համատեքստում առաջարկվեց առաջիկա ժամանակահատվածում իրականացնել Սոնա Հարությունյանի աշխատանքային գործունեության անհատական մշտադիտարկում՝ գնահատելով նրա աշխատանքի արդյունավետությունը: Մասնավորապես շեշտադրվեց ուշադրություն դարձնել՝
- էլեկտրոնային մատյանի պատշաճ և ժամանակին լրացմանը,
- ուսումնական նախագծերի համապատասխանությանը ուսումնասիրվող թեմաներին,
- հայտորոշիչ, ձևավորող և ամփոփիչ աշխատանքների կազմմանը,
- սովորողների բնութագրերի կազմման որակին և ամբողջականությանը:

Միաժամանակ առաջարկվեց ձևավորել աշխատանքի արդյունավետության գնահատման մշտադիտարկման հանձնաժողով՝ համապատասխան մասնագիտական կազմով.
- տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյան,
- ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյան,

- հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախագահ Մերի Դանիելյան,
- արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նախագահ Աննա Աբգարյան,
- «Հայոց լեզու» առարկայի ուսուցչուհի Լիլիթ Սարգսյան,
- «Հայոց լեզու» առարկայի ուսուցչուհի Անուշ Սարգիսջանյան։

Զեկուցողը նաև ընդգծեց, որ իրականացված մշտադիտարկումների արդյունքները պետք է ներկայացվեն հումանիտար առարկաների մեթոդմիավորման հաջորդ նիստում։ Բացի այդ, մշտադիտարկման արձանագրությունների և հիմնավորող փաստաթղթերի ամբողջական փաթեթը պետք է տրամադրվի դպրոցի տնօրենին՝ համապատասխան եզրակացության կայացման նպատակով։

Արտահայտվեցին՝ ՄԽ անդամները։

Արտահայտվողները ողջունեցին Սոնա Հարությունյանի նախաձեռնությունը՝ ուսուցչի տարակարգ ստանալու նպատակով դիմելու կապակցությամբ՝ ընդգծելով, որ այն վկայում է նրա մասնագիտական զարգացման ձգտման, ինքնակատարելագործման պատրաստակամության և պատասխանատու վերաբերմունքի մասին։

Նրանք կարևորեցին նախատեսվող մշտադիտարկումների իրականացումը՝ որպես աշխատանքի արդյունավետության գնահատման կարևոր գործիք՝ նշելով, որ նման մոտեցումը նպաստում է ոչ միայն տվյալ ուսուցչի գործունեության առավել համակարգված և օբյեկտիվ գնահատմանը, այլև փորձի փոխանակմանը, համագործակցության ամրապնդմանը և կրթական գործընթացի ընդհանուր զարգացմանը։

Միաժամանակ ընդգծվեց ուսուցիչների աշխատանքի հետևողական գնահատման և մշտադիտարկումների անհրաժեշտությունը՝ որպես կրթության որակի բարձրացման կարևոր նախապայման։ Նշվեց, որ այդ գործընթացը հնարավորություն է տալիս ապահովել չափորոշչային պահանջների լիարժեք իրականացում և նպաստում է ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը։

Արտահայտվողները կարևորեցին նաև մշտադիտարկման հանձնաժողովի ձևավորումը՝ ընդգծելով, որ բազմակողմանի մասնագիտական դիտարկումը կերաշխավորի առավել օբյեկտիվ և համակողմանի գնահատում, թույլ կտա ժամանակին բացահայտել և շտկել հնարավոր թերությունները, ինչպես նաև արդյունավետ աջակցություն ցուցաբերել ուսուցչի մասնագիտական աճին։

Միաժամանակ նշվեց, որ մշտադիտարկումների արդյունքում ձևավորված արձանագրություններն ու փաստաթղթերը պետք է ծառայեն հետագա պլանավորման, դասավանդման գործընթացի բարելավման և վերահսկողության արդյունավետ կազմակերպման համար՝ ապահովելով աշխատանքի թափանցիկ և հիմնավորված գնահատում։

Որոշեցին՝ 1. Ձևավորել հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

- տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյան,
- ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյան,
- հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախագահ Մերի Դանիելյան,
- արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նախագահ Աննա Աբգարյան,
- «Հայոց լեզու» առարկայի ուսուցչուհի Լիլիթ Սարգսյան,
- «Հայոց լեզու» առարկայի ուսուցչուհի Անուշ Սարգիսջանյան։

2. Իրականացված մշտադիտարկումների արդյունքների մասին զեկուցել մանկավարժական խորհրդի, հումանիտար առարկաների մեթոդմիավորման հաջորդող նիստում, իսկ մշտադիտարկումների արձանագրությունների և փաստարկների ամբողջական փաթեթը ներկայացնել դպրոցի տնօրենին։

Լսեցին 3. «Պատմություն», «Հասարակագիտություն» առարկաների ուսուցչուհի Ռուզաննա Խաչատրյանի կատարած աշխատանքի նկատմամբ անհատական վերահսկողություն իրականացնելու մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը տեղեկացրեց, որ «Պատմություն» և «Հասարակագիտություն» առարկաների ուսուցչուհի Ռուզաննա Խաչատրյանը նախաձեռնել է ուսուցչի տարակարգ ստանալու գործընթացին մասնակցելու քայլը՝ այն դիտարկելով որպես իր մասնագիտական առաջընթացի կարևոր հանգրվան: Նշվեց, որ տվյալ գործընթացի պատշաճ կազմակերպման համար անհրաժեշտ է ապահովել նրա մանկավարժական գործունեության շարունակական և նպատակային վերահսկողություն:

Այդ նպատակով առաջարկվեց սահմանել Ռուզաննա Խաչատրյանի աշխատանքային գործունեության անհատական մշտադիտարկման գործընթաց՝ ուղղված աշխատանքի արդյունավետության գնահատմանը և մասնագիտական գործունեության վերլուծությանը: Ընդգծվեց, որ մշտադիտարկումների ընթացքում նպատակահարմար է կենտրոնանալ հետևյալ հիմնական ուղղությունների վրա՝

- էլեկտրոնային մատյանի ճշգրիտ և ժամանակին վարում,
- ուսումնական նախագծերի համապատասխանեցում դասավանդվող թեմատիկային,
- հայտորոշիչ, ձևավորող և ամփոփիչ գնահատման գործիքների արդյունավետ կիրառում,
- սովորողների բնութագրերի կազմման բովանդակային ամբողջականություն և որակ:

Միաժամանակ առաջարկվեց ձևավորել համապատասխան մասնագիտական կազմ ունեցող մշտադիտարկման հանձնաժողով, որը կապահովի գործընթացի համակարգված իրականացում և արդյունքների օբյեկտիվ գնահատում: Հանձնաժողովի կազմը.

- տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյան,
- ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյան,
- հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախագահ Մերի Դանիելյան,
- բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախագահ Անուշ Դաջունց,
- «Գրականություն» առարկայի ուսուցչուհի Լիլիթ Սարգսյան,
- «Գրականություն» առարկայի ուսուցչուհի Անուշ Սարգիսջանյան:

Զեկուցողը կարևորեց նաև, որ իրականացվող մշտադիտարկումների արդյունքները ամփոփ կերպով ներկայացվեն հումանիտար առարկաների մեթոդմիավորման առաջիկա նիստում՝ ապահովելով քննարկման և մասնագիտական կարծիքների փոխանակման հնարավորություն: Միաժամանակ ընդգծվեց, որ մշտադիտարկման ընթացքում կազմված արձանագրությունները և հիմնավորող փաստաթղթերի ամբողջական փաթեթը պետք է ներկայացվի դպրոցի տնօրենին՝ համապատասխան գնահատականների ձևակերպման և հետագա կազմակերպչական որոշումների ընդունման նպատակով:

Արտահայտվեցին՝ ՄԽ անդամները:

Արտահայտվողները դրական արձագանքեցին Ռուզաննա Խաչատրյանի նախաձեռնությանը՝ ուսուցչի տարակարգ ստանալու գործընթացին մասնակցելու վերաբերյալ՝ այն գնահատելով որպես մասնագիտական պատասխանատվության և առաջընթացին միտված կարևոր քայլ: Ընդգծվեց, որ նման մոտեցումը նպաստում է ուսուցչի ինքնազարգացմանը և կրթական գործունեության որակի բարձրացմանը:

Նրանք կարևորեցին մշտադիտարկումների իրականացումը՝ դիտարկելով այն որպես արդյունավետ գործիք ուսուցչի աշխատանքի գնահատման և

կատարելագործման համար: Նշվեց, որ այս գործընթացը հնարավորություն է տալիս ապահովել գործունեության առավել կառուցակարգված վերլուծություն, ինչպես նաև խթանել մասնագիտական համագործակցությունն ու փորձի փոխանակումը:

Քննարկման ընթացքում շեշտադրվեց նաև ուսուցիչների աշխատանքի պարբերական գնահատման անհրաժեշտությունը՝ որպես կրթական գործընթացի արդյունավետության բարձրացման կարևոր նախապայման: Նշվեց, որ հետևողական մշտադիտարկումները նպաստում են չափորոշիչների պահանջների պահպանմանը և ուսուցման որակի կայուն բարելավմանը:

Արտահայտվողները կարևորեցին մշտադիտարկման հանձնաժողովի ձևավորումը՝ ընդգծելով, որ այն ապահովում է գնահատման բազմակողմանիություն և օբյեկտիվություն: Միաժամանակ նշվեց, որ նման ձևաչափը հնարավորություն է տալիս ժամանակին բացահայտել խնդիրները, առաջարկել լուծումներ և նպաստել ուսուցչի մասնագիտական զարգացմանը:

Վերջում ընդգծվեց, որ մշտադիտարկումների արդյունքում ձևավորված փաստաթղթերն ու արձանագրությունները պետք է կիրառվեն որպես գործնական հիմք՝ հետագա պլանավորման, դասավանդման արդյունավետության բարձրացման և վերահսկողական մեխանիզմների կատարելագործման համար՝ ապահովելով գործընթացի թափանցիկությունն ու հիմնավորվածությունը:

Որոշեցին՝ 1. Ձևավորել հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

- տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյան,
- ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյան,
- հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախագահ Մերի Դանիելյան,
- բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախագահ Անուշ Դաջունց,
- «Գրականություն» առարկայի ուսուցչուհի Լիլիթ Սարգսյան,
- «Գրականություն» առարկայի ուսուցչուհի Անուշ Սարգիսջանյան:

2. Իրականացված մշտադիտարկումների արդյունքների մասին զեկուցել մանկավարժական խորհրդի, հումանիտար առարկաների մեթոդմիավորման հաջորդող նիստում, իսկ մշտադիտարկումների արձանագրությունների և փաստարկների ամբողջական փաթեթը ներկայացնել դպրոցի տնօրենին:

Լսեցին 4. Դասվար Տաթևիկ Փարսադանյանի կատարած աշխատանքի նկատմամբ անհատական վերահսկողություն իրականացնելու մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը նշեց, որ դասվար Տաթևիկ Փարսադանյանը հանդես է եկել ուսուցչի տարակարգ ստանալու նախաձեռնությամբ՝ այն դիտարկելով որպես մասնագիտական զարգացման կարևոր քայլ: Ընդգծվեց, որ գործընթացի պատշաճ կազմակերպման համար անհրաժեշտ է ապահովել նրա մանկավարժական գործունեության համակարգված և նպատակաուղղված վերահսկողություն:

Այս համատեքստում առաջարկվեց իրականացնել Տաթևիկ Փարսադանյանի աշխատանքային գործունեության անհատական մշտադիտարկում՝ նպատակ ունենալով գնահատել նրա աշխատանքի արդյունավետությունը և կատարել մասնագիտական գործունեության խորքային վերլուծություն: Նշվեց, որ մշտադիտարկման ընթացքում կարևոր է կենտրոնանալ հետևյալ առաջնային ուղղությունների վրա՝ էլեկտրոնային մատյանի ճշգրիտ և ժամանակին վարում, հայտորոշիչ, ձևավորող և ամփոփիչ գնահատման գործիքների արդյունավետ կիրառում, սովորողների բնութագրերի կազմման բովանդակային ամբողջականություն և որակ:

Միաժամանակ առաջարկվեց ձևավորել համապատասխան մասնագիտական կազմ ունեցող մշտադիտարկման հանձնաժողով, որը կապահովի գործընթացի

համակարգված իրականացում և արդյունքների օբյեկտիվ գնահատում: Հանձնաժողովի կազմը.

- տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյան,
- ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյան,
- տարրական դասարանների մեթոդմիավորման նախագահ Ռիտա Շալունց,
- հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախագահ Մերի Դանիելյան
- դասվար Կարինե Մալխասյան,
- դասվար Կարինե Պողոսյան:

Զեկուցողը շեշտեց, որ իրականացվող մշտադիտարկումների արդյունքները անհրաժեշտ է համակարգված կերպով ներկայացնել տարրական առարկաների մեթոդմիավորման առաջիկա նիստում՝ ապահովելով մասնագիտական քննարկումների և փորձի փոխանակման արդյունավետ հարթակ: Միաժամանակ ընդգծվեց, որ մշտադիտարկման ընթացքում ձևավորված արձանագրություններն ու հիմնավորող փաստաթղթերի ամբողջական փաթեթը պետք է տրամադրվեն դպրոցի տնօրենին՝ համապատասխան գնահատականների ձևակերպման, ինչպես նաև հետագա կազմակերպչական և մասնագիտական որոշումների կայացման նպատակով:

Արտահայտվեցին՝ ՄԽ անդամները:

Արտահայտվողները բարձր գնահատեցին Տաթևիկ Փարսադանյանի նախաձեռնությունը՝ ուսուցչի տարակարգ ստանալու գործընթացին մասնակցելու առումով՝ այն դիտարկելով որպես մասնագիտական աճի և պատասխանատու մոտեցման կարևոր դրսևորում: Ընդգծվեց, որ նման նախաձեռնությունները նպաստում են ուսուցչի շարունակական ինքնակատարելագործմանը և կրթության որակի բարձրացմանը:

Նրանք առանձնահատուկ կարևորեցին մշտադիտարկումների իրականացումը՝ ընդգծելով դրանց դերը որպես արդյունավետ գործիք ուսուցչի գործունեության գնահատման և կատարելագործման գործընթացում: Նշվեց, որ մշտադիտարկումները հնարավորություն են տալիս իրականացնել գործունեության համակարգված վերլուծություն, ինչպես նաև խթանել համագործակցային միջավայրը և փորձի փոխանակումը:

Քննարկման ընթացքում ընդգծվեց նաև ուսուցիչների աշխատանքի պարբերական գնահատման կարևորությունը՝ որպես կրթական գործընթացի որակի ապահովման հիմնարար բաղադրիչ: Նշվեց, որ հետևողական վերահսկողությունը նպաստում է չափորոշիչների պահանջների լիարժեք կիրառմանը և ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

Արտահայտվողները կարևորեցին նաև մշտադիտարկման հանձնաժողովի ձևավորումը՝ նշելով, որ այն ապահովում է գնահատման բազմակողմանի և հավասարակշռված մոտեցում: Միաժամանակ ընդգծվեց, որ նման ձևաչափը հնարավորություն է տալիս ժամանակին բացահայտել առկա խնդիրները, առաջարկել համապատասխան լուծումներ և աջակցել ուսուցչի մասնագիտական զարգացմանը:

Վերջում շեշտվեց, որ մշտադիտարկումների արդյունքում ձևավորված փաստաթղթերն ու արձանագրությունները պետք է ծառայեն որպես հիմք հետագա պլանավորման, դասավանդման գործընթացի կատարելագործման և վերահսկողական մեխանիզմների բարելավման համար՝ ապահովելով աշխատանքի թափանցիկությունն ու հիմնավորվածությունը:

Որոշեցին՝ 1. Ձևավորել հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

- տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյան,
- ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյան,
- տարրական դասարանների մեթոդմիավորման նախագահ Ռիտա Շալունց,

- հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախագահ Մերի Դանիելյան
- դասվար Կարինե Մալխասյան,
- դասվար Կարինե Պողոսյան։

2. Իրականացված մշտադիտարկումների արդյունքների մասին զեկուցել մանկավարժական խորհրդի, տարրական դասարանների մեթոդմիավորման հաջորդող նիստում, իսկ մշտադիտարկումների արձանագրությունների և փաստարկների ամբողջական փաթեթը ներկայացնել դպրոցի տնօրենին։

Խորհրդի նախագահ՝ _____ Ս. Ավանեսյան

Քարտուղար՝ _____ Ա. Ջեյնալյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 8

«23» ապրիլի 2026թ. ք. Գորիս

Նիստին ներկա էր Մանկավարժական խորհրդի 57 անդամից 55-ը: Նիստին ներկա չէին Թագուհի Գրիգորյանը, Գոհար Յուզբաշյանը:

Ο Ր Ա Կ Ա Ր Գ

1. Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
2. Մանկավարժական խորհրդի քարտուղարի ընտրություն:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
3. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) մարտ-ապրիլ ամիսների իրականացված աշխատանքներ:
(զեկուցողներ՝ Ա. Գևորգյան)
4. 2025-2026 ուսումնական տարվա սեպտեմբեր-ապրիլ ամիսների ընթացքում ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների հետ կապված աշխատանքի մասին:
(զեկուցող՝ Ա. Ծատրյան)
5. 1-9-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողություն:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
6. «Հայոց լեզու», «Գրականություն» առարկաների ուսուցչուհի Սոնա Հարությունյանի կատարած աշխատանքի նկատմամբ անհատական վերահսկողություն իրականացնելու մասին:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
7. «Պատմություն», «Հասարակագիտություն» առարկաների ուսուցչուհի Ռուզաննա Խաչատրյանի կատարած աշխատանքի նկատմամբ անհատական վերահսկողություն իրականացնելու մասին:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
8. Դասվար Տաթևիկ Փարսադանյանի կատարած աշխատանքի նկատմամբ անհատական վերահսկողություն իրականացնելու մասին:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
9. «Արհեստական բանականությունը կրթության մեջ. ուսուցչին չփոխարինող, այլ նրա դերը վերափոխող գործիք» թեմայով զեկուցում:
(զեկուցող՝ Ա. Մարտիրոսյան)
10. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
11. Գնահատման արդյունավետության ստուգում:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
12. Մեթոդական միավորումների աշխատանքների ստուգում:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
13. «Ծրագրերի կատարողականի ստուգում ըստ թեմատիկ պլանի» ՆԴՎ արդյունքների ամփոփում:
(զեկուցողներ՝ Մ.Դանիելյան, Ա. Դաջունց)

Լսեցին 1. Օրակարգի հաստատման մասին հարցը
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
Զեկուցողը ներկայացրեց նիստի օրակարգի կետերը և նշեց, որ օրակարգի հրապարակումից հետո խորհրդի քարտուղար Ալլա Զեյնալյանը ներկայացրել է դիմում, որով հրաժարվում է իրականացնել քարտուղարի պարտականությունները: Նա ընդգծեց, որ գործող կարգի համաձայն տվյալ հարցը ենթակա է ներառման օրակարգում և պետք է քննարկվի սահմանված ընթացակարգով:

Արտահայտվեցին՝ ՄԽ անդամները, Ա. Մարտիրոսյանը
Խորհրդի անդամներն առարկություններ չունեին:

Արփինե Մարտիրոսյանը հանդես եկավ առաջարկությամբ՝ մանկավարժական խորհրդի նիստում ներկայացնել զեկուցում «Արհեստական բանականությունը կրթության մեջ. ուսուցչին չփոխարինող, այլ նրա դերը վերափոխող գործիք» թեմայով: Նա հայտնեց իր պատրաստակամությունը՝ ներկայացնելու թեմայի արդիականությունը, կիրառման հնարավորությունները և դրա ազդեցությունը ուսուցման գործընթացի վրա:

Որոշեցին՝

- Օրակարգային հարցերում ավելացնել մանկավարժական խորհրդի քարտուղարի ընտրության մասին հարցը (զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
- «Արհեստական բանականությունը կրթության մեջ. ուսուցչին չփոխարինող, այլ նրա դերը վերափոխող գործիք» թեմայով զեկուցում (զեկուցող՝ Ա. Մարտիրոսյան)
- Հաստատել մանկավարժական խորհրդի նիստի օրակարգը:

Լսեցին 2. Մանկավարժական խորհրդի քարտուղարի ընտրության մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը տեղեկացրեց, որ ուսումնական տարվա ընթացքում մանկավարժական խորհրդի քարտուղարի պարտականությունները կատարել է բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման ուսուցչուհի Ալլա Զեյնալյանը, ով 2026 թվականի ապրիլի 22-ին ներկայացրած դիմումով հրաժարվել է շարունակել քարտուղարի պարտականությունների իրականացումը: Զեկուցողը առաջարկեց քարտուղարի պաշտոնում առաջադրել նոր թեկնածու:

Արտահայտվեցին՝ Լ. Բաղդասարյանը, Ա. Գևորգյանը, Լ. Գրիգորյանը:

Արմիդա Գևորգյանը և Լիանա Գրիգորյանն առաջադրեցին Լուսինե Բաղդասարյանի թեկնածությունը՝ նշելով, որ վերջինս կարող է պատշաճ և պատասխանատու կերպով իրականացնել քարտուղարի պարտականությունները: Արտահայտվողները միաձայն հավանություն տվեցին առաջադրված թեկնածությանը՝ առանձնապես ընդգծելով նրա պատասխանատվության բարձր զգացումը և կազմակերպվածությունը: Առաջարկվեց նրան հնարավորություն ընձեռել ստանձնելու մանկավարժական խորհրդի քարտուղարի պարտականությունները:

Լուսինե Բաղդասարյանը տվել է իր համաձայնությունը և հանդես է եկել ինքնաառաջադրմամբ:

Որոշեցին՝ 55 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայներով մանկավարժական խորհրդի քարտուղար է ընտրվել «Ֆրանսերեն» առարկայի ուսուցչուհի Լուսինե Բաղդասարյանը:

Լսեցին 3. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) մարտ-ապրիլ ամիսների իրականացված աշխատանքների կատարման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա.Գևորգյան)

Զեկուցման ընթացքում համապարփակ ներկայացվեց ՈՒԴԱՊՏ-ի՝ մարտ-ապրիլ ամիսներին իրականացված աշխատանքների ընթացքն ու արդյունքները: Նշվեց, որ բոլոր մեթոդմիավորումների կողմից ծրագրով նախատեսված միջոցառումները իրականացվել են սահմանված ժամանակացույցին համապատասխան՝ պահպանելով դրանց նպատակային ուղղվածությունն ու բովանդակային ամբողջականությունը:

Տվյալ ժամանակահատվածում կազմակերպվել և իրականացվել են բազմաբնույթ կրթադաստիարակչական նախաձեռնություններ՝ ուղղված սովորողների հայրենասիրական գիտակցության ամրապնդմանը, իրավական և քաղաքացիական մշակույթի ձևավորմանը, ազգային և համամարդկային արժեքների փոխանցմանը, լեզվամտածողության զարգացմանը և ճանաչողական ակտիվության խթանմանը: Այդ շրջանակում անցկացվել են բաց դասեր, թեմատիկ դաս-միջոցառումներ, քննարկումներ, ուսումնական այցեր և

գործնական աշխատանքներ: Կատարվել են դասալսումներ, ինչպես նաև ուսումնասիրվել և ստուգվել են աշխատանքային տետրերն ու դասագրքերը:
Աշակերտական խորհրդի նախաձեռնությամբ իրականացվել է երեխաների իրավունքների պաշտպանությանն ու իրազեկմանը նվիրված ակցիա, ինչպես նաև կազմակերպվել է միջոցառում՝ նվիրված մայրության և գեղեցկության տոնին: Բացի այդ, անցկացվել են «Հրդեհներ, սողանքներ» և «Բնապահպանական անվտանգություն» թեմաներով բաց դաս-քննարկումներ՝ համապատասխանաբար 8-րդ և 4-րդ դասարաններում, որին մասնակցել են նաև աշակերտական խորհրդի ներկայացուցիչները:
Ջեկուցման ընթացքում ընդգծվեց, որ ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան ծրագրով նախատեսված գործողությունները մարտ-ապրիլ ամիսներին իրականացվել են լիարժեք և կազմակերպված ձևով: Միաժամանակ նշվեց, որ կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվական նյութերը տեղադրվել են դպրոցի պաշտոնական կայքում՝ ապահովելով գործընթացների թափանցիկությունն ու հանրային մատչելիությունը:
Անդրադարձ կատարվեց նաև ուսումնական գործընթացում ժամանակակից մանկավարժական մեթոդների կիրառմանը, նորարարական մոտեցումների ներդրմանը և սովորողների ուսման արդյունավետության բարձրացմանն ուղղված քայլերին: Ջեկուցողը նաև մատնանշեց առկա որոշ գործընթացների կատարելագործման հնարավորությունները և սահմանեց հետագա զարգացման առաջնահերթ ուղղությունները:

Արտահայտվեցին՝ ՄԽ անդամները

Քննարկմանը մասնակցածները միաձայն արձանագրեցին, որ իրականացված միջոցառումները զգալիորեն նպաստել են սովորողների ներգրավվածության բարձրացմանը, ինչպես նաև նրանց հաղորդակցական և վերլուծական կարողությունների զարգացմանը: Քննարկման ընթացքում տրվեց կատարված աշխատանքի համապարփակ գնահատական, ներկայացվեցին գործընթացում ի հայտ եկած որոշ դժվարություններն ու առաջարկվեցին դրանց հաղթահարման գործնական լուծումներ:
Միաժամանակ ընդգծվեց, որ ծրագրի իրականացման ընթացքում որևէ թերություն կամ չկատարում չի արձանագրվել. ուսուցիչները դրսևորել են հետևողականություն, մասնագիտական բարձր պատասխանատվություն և նախաձեռնողականություն՝ արդյունավետ համագործակցության պայմաններում ապահովելով սահմանված նպատակների լիարժեք իրականացումը: Նշվեց նաև, որ ուսումնադաստիարակչական գործունեությունն իրականացվել է հստակ պլանավորմամբ, կազմակերպված և արդյունավետ մեթոդների կիրառմամբ, ինչը դրական ազդեցություն է ունեցել միջոցառումների որակի և ակնկալվող արդյունքների վրա:
Արտահայտվողների գնահատմամբ՝ նման կառուցակարգված և նպատակաուղղված աշխատանքի շարունակականությունն անհրաժեշտ է պահպանել նաև առաջիկա ամիսներին՝ ամրապնդելու ձեռքբերված դրական միտումները և զարգացնելու ձևավորված արդյունավետ աշխատանքային միջավայրը: Առանձնակի ընդգծվեց նաև, որ մարտ-ապրիլ ամիսներին իրականացված բոլոր գործողությունները լիովին համապատասխանել են տարեկան ծրագրին և ապահովել բարձր արդյունավետություն:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի մարտ-ապրիլ ամիսներին իրականացված աշխատանքների կատարման մասին տեղեկատվությունը:

Լսեցին 4. 2025-2026 ուսումնական տարվա սեպտեմբեր-ապրիլ ամիսների ընթացքում ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների հետ կապված աշխատանքի մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա սեպտեմբեր–ապրիլ ամիսներին ԿԱՊԿՈՒ աշակերտների ԱՈՒՊ-ների և դիտարկման թերթիկների լրացման ընթացքը: Նա նշեց, որ պարբերաբար քննարկվել են ԱՈՒՊ-ներում սահմանված երկարաժամկետ և կարճաժամկետ նպատակները, ինչպես նաև իրականացվել է արդյունքների գնահատում, որի հիման վրա ակնկալվում է տարեվերջին արձանագրել սովորողների առաջընթաց:

Զեկուցողը անդրադարձավ նաև դիտարկման թերթիկներում կատարված աշխատանքներին՝ մասնավորապես այն աշակերտների հետ, ովքեր առարկայական չափորոշչով սահմանված ծրագրերից ունեն որոշակի հետ մնացություն: Ներկայացվեցին առաջին կիսամյակում արդեն գնահատված և երկրորդ կիսամյակում գնահատման ենթակա աշակերտների ցանկերը՝ ըստ կրթական կարիքների, ինչպես նաև ԿԱՊԿՈՒ աշակերտների քանակական փոփոխությունները տարեսկզբի և ընթացիկ շրջանի կտրվածքով:

Ըստ օրենքով սահմանված կարգի /հր. N88, 30.12.2022, 2-րդ կետի 13-րդ ենթակետ/, սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի հերթական գնահատումն իրականացվում է կրթական յուրաքանչյուր աստիճանի անցմանը նախորդ ուսումնական տարվա ավարտին կամ տվյալ ուսումնական տարվա սկզբին: Նախընտրելի է 2025-2026 ուսումնական տարվա ավարտին գնահատման ներկայացնել ԳՏՄԱԿ 4-րդ դասարանի ներքոնշյալ աշակերտներին՝

- Մայքլ Արայի Սարգսյան
- Լեո Սանասարի Աթասունց
- Սուսաննա Արմենի Ստեփանյան

Կարիքի փոփոխմամբ պայմանավորված գնահատման ներկայացնել 3-րդ դասարանի ներքոնշյալ աշակերտներին՝

- Էրիկ Հմայակի Հովակիմյան
- Արսեն Էրիկի Մուրադյան

Զեկուցման շրջանակում ներկայացվեցին նաև նոր ընդունված ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ իրականացվող աշխատանքները: Ընդգծվեց, որ այդ գործընթացներում ակտիվորեն ներգրավված է նաև տնօրենի պաշտոնակատար Սերգեյ Ավանեսյանը. հանդիպումների ընթացքում մանրամասն ուսումնասիրվում են համապատասխան փաստաթղթերը, գնահատվում իրականացված աշխատանքների արդյունավետությունը և առանձնահատուկ ուշադրություն է դարձվում աշակերտների ձեռքբերումներին ու անհատական առաջընթացին:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը:

Սերգեյ Ավանեսյանը կարեւորեց աշխատանքի համակարգված կազմակերպումը և ծնող-ուսուցիչ-աջակցության թիմի արդյունավետ փոխգործակցությունը՝ ընդգծելով, որ ԱՈՒՊ-ի շրջանակում նախատեսված նպատակների իրականացման ու դիտարկման թերթիկների մանրամասն, ճիշտ լրացման գործընթացը նշանակալի դեր ունի աշակերտների կրթական զարգացման և ուսուցման որակի ապահովման մեջ: Նա հավելեց, որ այս մոտեցումը թույլ է տալիս ոչ միայն հետևել ուսուցման արդյունավետությանը, այլև ժամանակին արձանագրել առաջընթացն ու թերությունները, ձևավորել անհատականացված աջակցություն, բարձրացնել աշակերտների մասնակցությունը և ներառվածությունը, ինչպես նաև զարգացնել նրանց սոցիալական, ճանաչողական և հաղորդակցական հմտությունները: Սերգեյ Ավանեսյանը նաև շեշտեց, որ նման համակարգված ու համագործակցային աշխատանքային մոդելը նպաստում է դպրոցի ընդհանուր կրթական միջավայրի կատարելագործմանը և նպաստավոր պայմաններ ստեղծում աշակերտների տաղանդների և ներուժի լիարժեք իրականացման համար:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա սեպտեմբեր-ապրիլ ամիսների ընթացքում ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների լրացման մասին ինֆորմացիան:

Լսեցին 5. 1-9-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը ներկայացրեց, որ տնօրենի, մեթոդմիավորման նախագահների և անդամների կողմից 1–9-րդ դասարաններում իրականացված դասալսումների արդյունքում պարզվել է, որ ուսուցիչները հիմնականում ապահովում են նոր ՀՊՉ-ների պահանջները: Դասալսվող ուսուցիչների մոտ առկա էին օրացուցային-թեմատիկ պլանները և օրվա դասի պլանները էլեկտրոնային ձևաչափով, իսկ մատենավարությունը կազմակերպված էր այդ պլաններին համապատասխան: Զեկուցողը շեշտեց, որ օրացուցային-թեմատիկ պլաններում հստակ սահմանված էին տվյալ թեմայի նպատակները և վերջնարդյունքները, ինչը ուսուցիչներին հնարավորություն է տալիս հստակ պատկերացնել, թե դասի ավարտին ինչ արդյունքներ պետք է ապահովել:

Միաժամանակ նշվեց, որ որոշակի դժվարություններ շարունակում են հանդիպել առարկայի ծրագրով նախատեսված կարողությունների զարգացման հարցում, հատկապես այն դասարաններում, որտեղ աշակերտների խտությունը մեծ է: Մեծ խմբերում դժվար է հավասարաչափ ներգրավել բոլոր աշակերտներին դասապրոցեսին և բավարար ուշադրություն դարձնել նրանց ինքնուրույն աշխատանքի իրականացմանը: Այնուհանդերձ, փոքր խմբերի դեպքում ուսուցիչները հաջողությամբ ապահովում են դասի վերջնարդյունքները՝ հետևելով ՕԹՊ-ների պահանջներին:

Զեկուցողը նաև կրկին ընդգծեց գնահատման հետ կապված հարցերի կարևորությունը: Նախորդ քննարկումներից հետո նկատելի է, որ ուսուցիչները հիմնականում տիրապետում են գնահատման նոր համակարգին, հետևում են սահմանված պահանջներին, իսկ աշակերտների գնահատումը կատարվում է բացառապես ամփոփիչ աշխատանքների ժամանակ:

Վերջում զեկուցողն առաջարկեց շարունակել կենտրոնանալ առարկայի ծրագրով նախատեսված կարողությունների զարգացման վրա, տվյալ թեմայի վերջնարդյունքների ապահովման վրա, աշակերտների ակտիվ ներգրավվածության բարձրացման և նոր գնահատման համակարգի կիրառման վրա, որպեսզի դասերի արդյունավետությունը և սովորողների ձեռքբերումները շարունակեն բարելավվել:

Արտահայտվեցին՝ ՄԽ անդամները

Արտահայտվողներն ընդգծեցին, որ դասալսումների արդյունքներից պարզ է դարձել՝ ուսուցիչները հիմնականում բավարարում են նոր ՀՊՉ-ների պահանջները, իսկ օրացուցային-թեմատիկ պլանների և մատենավարության ճիշտ կազմակերպումն անմիջականորեն նպաստում է դասի արդյունավետությանը: Նրանք նկատեցին, որ մեծ խմբերում դժվարություններ կան աշակերտների հավասար ներգրավվածությունն ապահովելու և կարողությունների զարգացման հարցում, ուստի անհրաժեշտ է կիրառել լրացուցիչ մեթոդներ՝ բոլոր աշակերտների ակտիվ մասնակցությունը խթանելու համար:

Արտահայտվողները կարևորեցին նաև գնահատման նոր համակարգին լիարժեք տիրապետելու անհրաժեշտությունը և ընդգծեցին, որ շարունակական ուշադրությունը պետք է մնա ծրագրով նախատեսված կարողությունների զարգացման, դասի վերջնարդյունքների ապահովման և ուսուցման արդյունավետության բարձրացման վրա՝ ապահովելով աշակերտների բազմակողմանի առաջընթացը և ուսուցողական գործընթացի որակի կայուն բարձր մակարդակը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 1-9-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության մասին ինֆորմացիան։

Լսեցին 6. «Հայոց լեզու» և «Գրականություն» առարկաների ուսուցչուհի Սոնա Հարությունյամի կատարած աշխատանքի նկատմամբ անհատական վերահսկողություն իրականացնելու ամփոփման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը տեղեկացրեց, որ «Հայոց լեզու» և «Գրականություն» առարկաների ուսուցչուհի Սոնա Հարությունյանը պատրաստվում է դիմել ուսուցչի տարակարգ ստանալու գործընթացին։ Այդ նպատակով նախորդ ժամանակահատվածում իրականացվել է նրա մանկավարժական գործունեության նպատակային վերահսկողություն և շարունակական մշտադիտարկում՝ ուղղված դասավանդման որակի, մեթոդական մոտեցումների և ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետության գնահատմանը։

Միաժամանակ զեկուցողը, հիմք ընդունելով մանկավարժական խորհրդի 2026 թվականի ապրիլի 9-ի նիստի արձանագրության 2-րդ որոշմամբ սահմանված աշխատանքների կատարողական հաշվետվությունը, որը ներկայացվել է տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանի կողմից, առաջարկեց տնօրենին տրամադրել համապատասխան տեղեկանք ուսուցչուհի Սոնա Հարությունյանին։ Տեղեկանքը պետք է արտացոլի նրա կողմից դասավանդվող դասարաններում գնահատման համապատասխանությունը՝ հաստատության կողմից իրականացված մշտադիտարկման արդյունքների հիման վրա, ներառյալ էլեկտրոնային մատյանի պատշաճ լրացման, ուսումնական նախագծերի թեմատիկ համապատասխանության, ինչպես նաև սովորողների բնութագրերի վերաբերյալ տվյալները՝ կից մշտադիտարկման արձանագրություններով։

Զեկուցողը նաև առաջարկեց ուսուցչուհու մասնագիտական գործունեության արդյունավետությունը գնահատել «գերազանց»։

Արտահայտվեցին՝ Հանձնաժողովի անդամները։

Արտահայտվողները բարձր գնահատեցին «Հայոց լեզու» և «Գրականություն» առարկաների ուսուցչուհի Սոնա Հարությունյանի՝ ուսուցչի տարակարգ ստանալու նպատակով դիմելու նախաձեռնությունը՝ այն դիտարկելով որպես մասնագիտական զարգացման և ինքնակատարելագործման կարևոր դրսևորում։ Նրանք ընդգծեցին, որ նախորդող ժամանակահատվածում իրականացված անհատական վերահսկողությունն ու պարբերական մշտադիտարկումները հնարավորություն են տվել բազմակողմանիորեն վերլուծել և գնահատել ուսուցչի մանկավարժական գործունեությունը։

Միաժամանակ կարևորվեց տնօրենի տեղակալի կողմից ներկայացված կատարողական հաշվետվությունը՝ որպես հիմնավորված, համակարգված և ամբողջական փաստաթուղթ, որի հիման վրա հնարավոր է ապահովել ուսուցչի աշխատանքի օբյեկտիվ գնահատում։ Արտահայտվողները համակարծիք էին, որ մշտադիտարկման արդյունքները՝ ներառյալ էլեկտրոնային մատյանի պատշաճ վարումը, ուսումնական նախագծերի նպատակային համապատասխանությունը և սովորողների վերաբերյալ բնութագրերի որակյալ ներկայացումը, վկայում են ուսուցչի պատասխանատու, հետևողական և բարեխիղճ աշխատանքի մասին։

Նշվեց նաև, որ գնահատման գործընթացն իրականացվել է թափանցիկության և անաչառության սկզբունքների պահպանմամբ, ինչը հանդիսանում է նմանատիպ որոշումների կայացման կարևոր նախապայման։ Ելնելով վերոգրյալից՝ արտահայտվողները նպատակահարմար համարեցին տնօրենին առաջարկել տրամադրել համապատասխան տեղեկանք՝ հիմնավորող փաստաթղթերով և կից մշտադիտարկման արձանագրություններով։

Ամփոփելով՝ արտահայտվողները լիարժեք աջակցություն հայտնեցին զեկուցողի առաջարկին՝ ուսուցչուհու կատարած աշխատանքը գնահատելով «գերազանց»:

Որոշեցին՝

- «Հայոց լեզու», «Գրականություն» առարկաների ուսուցչուհի Սոնա Հարությունյանի կատարած աշխատանքը գնահատելով «գերազանց»:
- Առաջարկել տնօրենին՝ տալ տեղեկանք «Հայոց լեզու», «Գրականություն» առարկաների ուսուցչուհի Սոնա Հարությունյանին դասավանդած դասարաններում գնահատման համապատասխանության մասին (կցվում է հաշվետվությունը):

Լսեցին 7. «Պատմություն», «Հասարակագիտություն» առարկաների ուսուցչուհի Ռուզաննա Խաչատրյանի կատարած աշխատանքի նկատմամբ անհատական վերահսկողություն իրականացնելու ամփոփման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը տեղեկացրեց, որ «Պատմություն» և «Հասարակագիտություն» առարկաների ուսուցչուհի Ռուզաննա Խաչատրյանը նախաձեռնել է ուսուցչի տարակարգ ստանալու գործընթացին դիմելու քայլերը: Այդ համատեքստում նշվեց, որ նախորդ ժամանակահատվածում իրականացվել է նրա մանկավարժական գործունեության նպատակային և շարունակական դիտարկում՝ ուղղված դասավանդման որակի, կիրառվող մեթոդների արդյունավետության և ուսումնական գործընթացի կազմակերպման ամբողջական գնահատմանը:

Միաժամանակ զեկուցողը, հիմք ընդունելով մանկավարժական խորհրդի 2026 թվականի ապրիլի 9-ի նիստի արձանագրության 2-րդ որոշմամբ նախատեսված աշխատանքների կատարողական հաշվետվությունը, որը ներկայացվել է տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանի կողմից, առաջարկեց տնօրենին տրամադրել համապատասխան տեղեկանք Ռուզաննա Խաչատրյանին: Տեղեկանքը պետք է արտացոլի նրա կողմից դասավանդվող դասարաններում գնահատման համապատասխանությունը՝ հիմնված հաստատության կողմից իրականացված մշտադիտարկման արդյունքների վրա, ներառյալ էլեկտրոնային մատյանի պատշաճ լրացումը, ուսումնական նախագծերի թեմատիկ համահունչությունը, ինչպես նաև սովորողների վերաբերյալ կազմված բնութագրերը՝ կից մշտադիտարկման արձանագրություններով:

Զեկուցողը նաև առաջարկեց ուսուցչուհու մասնագիտական գործունեության արդյունավետությունը գնահատել «գերազանց»:

Արտահայտվեցին՝ Հանձնաժողովի անդամները:

Արտահայտվողները բարձր գնահատեցին «Պատմություն» և «Հասարակագիտություն» առարկաների ուսուցչուհի Ռուզաննա Խաչատրյանի՝ ուսուցչի տարակարգ ստանալու նպատակով դիմելու նախաձեռնությունը՝ այն դիտարկելով որպես մասնագիտական զարգացման և ինքնակատարելագործման կարևոր դրսևորում: Նշվեց, որ նախորդող ժամանակահատվածում իրականացված նպատակային անհատական վերահսկողությունն ու պարբերական մշտադիտարկումները հնարավորություն են տվել համակողմանիորեն ուսումնասիրել և գնահատել ուսուցչի մանկավարժական գործունեությունը:

Միաժամանակ կարևորվեց տնօրենի տեղակալի կողմից ներկայացված կատարողական հաշվետվությունը՝ որպես հիմնավորված, համակարգված և ամբողջական փաստաթուղթ, որի հիման վրա հնարավոր է ապահովել ուսուցչի աշխատանքի օբյեկտիվ գնահատում: Արտահայտվողները ընդգծեցին, որ մշտադիտարկման արդյունքները՝ ներառյալ էլեկտրոնային մատյանի պատշաճ վարումը, ուսումնական նախագծերի նպատակային համապատասխանությունը և սովորողների վերաբերյալ բնութագրերի որակյալ ներկայացումը, վկայում են ուսուցչի պատասխանատու, հետևողական և բարեխիղճ աշխատանքի մասին:

Նշվեց նաև, որ գնահատման գործընթացն իրականացվել է թափանցիկության և անաչառության սկզբունքների պահպանմամբ, ինչը հանդիսանում է նման որոշումների կայացման կարևոր նախապայման։ Ելնելով վերոգրյալից՝ արտահայտվողները նպատակահարմար համարեցին տնօրենին առաջարկել տրամադրել համապատասխան տեղեկանք՝ անհրաժեշտ հիմնավորումներով և կից մշտադիտարկման արձանագրություններով։

Ամփոփելով՝ արտահայտվողները լիարժեք աջակցություն հայտնեցին զեկուցողի առաջարկին՝ ուսուցչուհու գործունեությունը գնահատելով «գերազանց»։

Որոշեցին՝

- «Պատմություն», «Հասարակագիտություն» առարկաների ուսուցչուհի Ռուզաննա Խաչատրյանի կատարած աշխատանքը գնահատելով «գերազանց»։
- Առաջարկել տնօրենին՝ տալ տեղեկանք «Պատմություն», «Հասարակագիտություն» առարկաների ուսուցչուհի Ռուզաննա Խաչատրյանին դասավանդած դասարաններում գնահատման համապատասխանության մասին (կցվում է հաշվետվությունը)։

Լսեցին 8. Դասվար Տաթևիկ Փարսադանյանի կատարած աշխատանքի նկատմամբ անհատական վերահսկողություն իրականացնելու ամփոփման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը տեղեկացրեց, որ դասվար Տաթևիկ Փարսադանյանը պատրաստվում է դիմել ուսուցչի տարակարգ ստանալու համար։ Նշվեց, որ այդ գործընթացին նախորդել է նրա մասնագիտական գործունեության նպատակային և շարունակական դիտարկում, որի շրջանակում իրականացվել է անհատական վերահսկողություն՝ գնահատելու դասավանդման արդյունավետությունն ու կրթական գործընթացի կազմակերպման որակը։

Այնուհետև զեկուցողը, հիմք ընդունելով մանկավարժական խորհրդի 2026 թվականի ապրիլի 9-ի նիստի արձանագրության 4-րդ որոշմամբ նախատեսված աշխատանքների կատարողական հաշվետվությունը, որը ներկայացվել է տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանի կողմից, առաջարկեց տնօրենին տրամադրել համապատասխան տեղեկանք Տաթևիկ Փարսադանյանին։ Տեղեկանքը պետք է արտացոլի նրա կողմից դասավանդվող դասարաններում գնահատման համապատասխանությունը՝ հիմնվելով հաստատության կողմից իրականացված մշտադիտարկման արդյունքների վրա, ներառյալ էլեկտրոնային մատյանի պատշաճ վարումը, ուսումնական նախագծերի թեմատիկ համապատասխանությունը և սովորողների վերաբերյալ կազմված բնութագրերը, ինչպես նաև կից ներկայացվող մշտադիտարկման արձանագրությունները։

Զեկուցողը նաև առաջարկեց ուսուցչուհու մասնագիտական գործունեության արդյունավետությունը գնահատել «գերազանց»։

Արտահայտվեցին՝ Հանձնաժողովի անդամները։

Արտահայտվողները բարձր գնահատեցին դասվար Տաթևիկ Փարսադանյանի՝ ուսուցչի տարակարգ ստանալու նպատակով դիմելու նախաձեռնությունը՝ այն դիտարկելով որպես մասնագիտական զարգացման և ինքնակատարելագործման կարևոր դրսևորում։ Նշվեց, որ նախորդող փուլում իրականացված նպատակային անհատական վերահսկողությունն ու պարբերական մշտադիտարկումները հնարավորություն են տվել համակողմանիորեն ուսումնասիրել և գնահատել ուսուցչի մանկավարժական գործունեությունը։

Միաժամանակ ընդգծվեց տնօրենի տեղակալի՝ կողմից ներկայացված կատարողական հաշվետվության նշանակությունը՝ որպես համակարգված, փաստարկված և ամբողջական փաստաթուղթ, որի հիման վրա հնարավոր է ապահովել օբյեկտիվ գնահատական ուսուցչի աշխատանքի վերաբերյալ։

Արտահայտվողները շեշտեցին, որ մշտադիտարկման արդյունքները՝ ներառյալ

էլեկտրոնային մատյանի պատշաճ վարման ապահովումը, ուսումնական նախագծերի թեմատիկ համապատասխանությունը և սովորողների վերաբերյալ բնութագրերի որակյալ ներկայացումը, վկայում են ուսուցչի հետևողական, պատասխանատու և բարեխիղճ աշխատանքի մասին։
Նշվեց նաև, որ գնահատման գործընթացն իրականացվել է թափանցիկության և անաչառության սկզբունքների պահպանմամբ, ինչը կարևոր նախապայման է նման որոշումների կայացման համար։ Ելնելով վերոգրյալից՝ արտահայտվողները նպատակահարմար համարեցին տնօրենին առաջարկել տրամադրել համապատասխան տեղեկանք՝ հիմնավորող նյութերով և կից մշտադիտարկման արձանագրություններով։
Ամփոփելով՝ արտահայտվողները լիարժեք աջակցություն հայտնեցին զեկուցողի առաջարկին՝ ուսուցչուհու կատարած աշխատանքը գնահատելով «գերազանց»։

Որոշեցին՝

- Դասվար Տաթևիկ Փարսադանյանի կատարած աշխատանքը գնահատելով «գերազանց»։
- Առաջարկել տնօրենին՝ տալ տեղեկանք դասվար Տաթևիկ Փարսադանյանին՝ դասավանդած դասարաններում գնահատման համապատասխանության մասին (կցվում է հաշվետվությունը)։

Լսեցին 9.

«Արհեստական բանականությունը կրթության մեջ. ուսուցչին չփոխարինող, այլ նրա դերը վերափոխող գործիք» թեմայով զեկուցում։

(զեկուցող՝ Ա. Մարտիրոսյան)

Զեկուցողը մանրամասն ներկայացրել է մարդկության պատմության մեջ մի երևույթ, որը ներթափանցում է կրթություն, մշակույթ և առօրյա կյանք՝ձևավորելով ապագայի մարդու կերպարը։ Դա արհեստական բանականությունն է, որը չի փոխարինում ուսուցչին. այն վերափոխում է նրա դերը, դարձնելով նրան կենտրոնացած սովորողի անհատական աճի վրա և թույլ տալով օգտագործել ժամանակակից տեխնոլոգիաները ապահովելու առավել արդյունավետ ու հետաքրքրական ուսուցում։
«Արհեստական բանականությունը կարող է տալ պատասխաններ, բայց չի կարող ստիպել մտածել» սոկրատեսյան մոտեցում։

Արտահայտվեցին՝ Ա. Երիցյան

Արտահայտվողը նշեց, որ այսօրվա նոր տեխնոլոգիաներով հագեցած ժամանակաշրջանում, անհրաժեշտ է կարևորել ԱԲ-ի կիրառման արդյունավետությունը՝միաժամանակ պահպանելով և ընդգծելով ուսուցչի դերի առաջնային նշանակությունը։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն «Արհեստական բանականությունը կրթության մեջ. ուսուցչին չփոխարինող, այլ նրա դերը վերափոխող գործիք» թեմայով զեկուցումը։

Լսեցին 10.

Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը ներկայացրեց էլեկտրոնային մատյանի վարման ընթացքը՝ ընդգծելով, որ այն հանդիսանում է ուսումնական գործընթացի կազմակերպման, վերահսկման և գնահատման հիմնական փաստաթղթային հարթակներից մեկը։
Նա նշեց, որ էլեկտրոնային մատյանի պատշաճ վարումը ապահովում է սովորողների առաջադիմության, գնահատականների, բացակայությունների և ուսումնական գործընթացի այլ բաղադրիչների ճշգրիտ և ժամանակին գրանցումը։
Զեկուցողը ընդգծեց, որ անհրաժեշտ է ապահովել բոլոր ուսուցիչների կողմից մատյանի կանոնավոր և լիարժեք լրացումը՝ ըստ սահմանված կարգի և ժամկետների, բացառելով ուշացումները և բացթողումները։ Միաժամանակ կարևորեց մեթոդմիավորման նախագահների և տնօրինության կողմից

շարունակական վերահսկողության իրականացումը՝ մատյանի վարման որակը բարձր մակարդակի վրա պահելու նպատակով։

Զեկուցողը ներկայացրեց, որ վերջին շրջանում էապես բարելավվել է էլեկտրոնային մատյաններում իրականացվող աշխատանքների կազմակերպվածությունն ու համակարգվածությունը։ Նշվեց, որ գործընթացները դարձել են առավել հստակ և վերահսկելի, ինչի շնորհիվ ապահովվում է տվյալների ժամանակին մուտքագրումն ու ճշգրտությունը։

Ընդգծվեց նաև, որ ուսուցիչները մատենավարության հետ կապված իրենց պարտականություններին մոտենում են առավել պատասխանատվությամբ և հետևողականությամբ՝ պահպանելով սահմանված պահանջներն ու ժամկետները։ Արդյունքում բարձրացել է ոչ միայն աշխատանքի արդյունավետությունը, այլև կրթական գործընթացի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը։

Արտահայտվեցին՝ ՄԽ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ էլեկտրոնային մատյանի ճիշտ և ժամանակին վարումը կարևոր նախապայման է ուսումնական գործընթացի թափանցիկության և գնահատման օբյեկտիվության ապահովման համար։ Նրանք ընդգծեցին, որ մատյանի լրացման կարգապահությունը անմիջականորեն ազդում է ինչպես սովորողների առաջադիմության վերլուծության, այնպես էլ դպրոցի ներքին վերահսկողության արդյունավետության վրա։

Միաժամանակ առաջարկվեց շարունակել ուսուցիչների իրազեկման աշխատանքները՝ հատկապես նոր ներգրավված կամ դժվարություններ ունեցող աշխատակիցների համար, ինչպես նաև ուժեղացնել մեթոդական աջակցությունը և պարբերական վերահսկողությունը։

Որոշեցին՝

1. Ապահովել էլեկտրոնային մատյանի պարտադիր, ամբողջական և ժամանակին վարումը՝ ըստ սահմանված կարգի և ուսումնական պլանների պահանջների։
2. Դասավանդող ուսուցիչներին պարտավորեցնել գնահատականները, բացակայությունները և թեմատիկ առաջադրանքները գրանցել մատյանում սահմանված ժամկետներում՝ բացառելով ուշացումները և թերի լրացումները։
3. Մեթոդմիավորման նախագահներին հանձնարարել իրականացնել էլեկտրոնային մատյանի պարբերական ստուգումներ և արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնել տնօրինությանը։
4. Տնօրինությանը շարունակել վերահսկողական աշխատանքները և անհրաժեշտության դեպքում կազմակերպել խորհրդատվական և մեթոդական աջակցություն ուսուցիչների համար։

Լսեցին 11. Գնահատման արդյունավետության ստուգման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը ներկայացրեց գնահատման համակարգի արդյունավետության ստուգման ընթացքը՝ ընդգծելով, որ այն ներառում է հայտորոշիչ, ձևավորող և ամփոփիչ (բնութագրող և միավորային) գնահատման բաղադրիչները։ Նա նշեց, որ գնահատման այս ձևերի նպատակն է ապահովել սովորողների ուսումնական առաջընթացի ամբողջական և բազմակողմանի վերլուծություն՝ ինչպես ուսումնական գործընթացի սկզբնական փուլում, այնպես էլ դրա ընթացքում և ավարտին։

Զեկուցողը ընդգծեց, որ հայտորոշիչ գնահատումը հնարավորություն է տալիս բացահայտել սովորողների նախնական գիտելիքների մակարդակը, ձևավորող գնահատումը՝ հետևել ընթացիկ առաջընթացին և ժամանակին արձանագրել դժվարությունները, իսկ ամփոփիչ գնահատումը ապահովում է վերջնական արդյունքների օբյեկտիվ ամրագրումը։ Նա կարևորեց նաև գնահատման

չափանիշների միասնական կիրառումը բոլոր դասարաններում և ուսուցիչների կողմից գնահատման գործընթացի պատշաճ փաստաթղթավորումը։
Զեկուցողը նշեց, որ ուսուցիչների կողմից հիմնականում պահպանվում են գնահատման նոր սկզբունքները՝ ապահովելով գնահատման գործընթացի ավելի մեծ օբյեկտիվություն, թափանցիկություն և ուսումնական արդյունքների արժանահավատ վերլուծություն։

Արտահայտվեցին՝ ՄԽ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ գնահատման բազմաբաղադրիչ համակարգի կիրառումը նպաստում է սովորողների կարողությունների ավելի ամբողջական և արդար գնահատմանը։ Նրանք ընդգծեցին, որ հատկապես ձևավորող գնահատումը կարևոր դեր ունի ուսուցման գործընթացի ընթացքում սովորողների առաջընթացի ապահովման և ուսուցչի կողմից ժամանակին միջամտության կազմակերպման համար։
Միաժամանակ արտահայտվողները կարևորեցին գնահատման միասնական չափանիշների պահպանումը՝ նշելով, որ այն ապահովում է օբյեկտիվություն և համադրելիություն տարբեր դասարանների և առարկաների միջև։ Առաջարկվեց նաև շարունակել ուսուցիչների մեթոդական աջակցությունը՝ գնահատման գործիքների ճիշտ կիրառման նպատակով։

Որոշեցին՝

1. Ապահովել գնահատման բոլոր ձևերի՝ հայտորոշիչ, ձևավորող և ամփոփիչ (բնութագրող և միավորային)՝ միասնական և համակարգված կիրառումը ուսումնական գործընթացում։
2. Դասավանդող ուսուցիչներին պարտավորեցնել գնահատումը իրականացնել ըստ սահմանված չափանիշների և ապահովել դրա պատշաճ փաստաթղթավորումը։
3. Մեթոդմիավորման նախագահներին հանձնարարել իրականացնել գնահատման գործընթացի պարբերական դիտարկում և արդյունքների վերլուծություն՝ ներկայացնելով հաշվետվություններ տնօրինությանը։
4. Տնօրինությանը շարունակել վերահսկել գնահատման արդյունավետությունը և կազմակերպել անհրաժեշտ մեթոդական աջակցություն ուսուցիչների համար՝ գնահատման միասնականության և որակի բարձրացման նպատակով։

Լսեցին 12. Մեթոդական միավորումների աշխատանքների ստուգման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը ներկայացրեց մեթոդական միավորումների աշխատանքի ստուգման արդյունքները՝ ընդգծելով, որ դպրոցում գործող բոլոր մեթոդական միավորումները իրականացնում են իրենց աշխատանքները ըստ հաստատված տարեկան պլանների և ժամանակացույցի։ Նա նշեց, որ մեթոդմիավորումների գործունեությունը ուղղված է ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը, դասավանդման որակի բարձրացմանը, ինչպես նաև ուսուցիչների մասնագիտական զարգացման ապահովմանը։
Զեկուցողը առանձին ներկայացրեց մեթոդական միավորումների նախագահների կողմից իրականացվող աշխատանքները՝ ընդգծելով համագործակցային քննարկումների, դասալսումների, ուսումնական նյութերի մշակման և գնահատման գործընթացների միասնականացման կարևորությունը։
Մասնավորապես՝

- Տարրական կրթության մեթոդմիավորում՝ նախագահ Ռիտա Շալունց
- Օտար լեզուների մեթոդմիավորում՝ նախագահ Մարգարիտա Պետրոսյան
- Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորում՝ նախագահ Անուշ Դաջունց
- Հումանիտար առարկաների մեթոդմիավորում՝ նախագահ Մերի Դանիելյան
- Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության մեթոդմիավորում՝ նախագահ Աննա Աբգարյան

Զեկուցողը նշեց, որ նշված մեթոդմիավորումները հիմնականում ապահովում են իրենց աշխատանքների կանոնավոր իրականացումը, սակայն շարունակական ուշադրություն է անհրաժեշտ փորձի փոխանակման, միասնական պահանջների պահպանման և ուսուցման որակի բարձրացման ուղղություններով։

Արտահայտվեցին՝ ՄՄ նախագահները

Արտահայտվողները նշեցին, որ մեթոդական միավորումների համակարգված գործունեությունը կարևոր դեր ունի դպրոցում ուսուցման որակի բարձրացման և ուսուցիչների մասնագիտական զարգացման ապահովման գործում։ Նրանք ընդգծեցին, որ նախագահների կողմից իրականացվող աշխատանքները նպաստում են փորձի փոխանակմանը, դասավանդման մեթոդների կատարելագործմանը և գնահատման միասնական մոտեցումների ձևավորմանը։

Միաժամանակ առաջարկվեց ակտիվացնել միջմեթոդական համագործակցությունը, կազմակերպել համատեղ բաց դասեր և փորձի փոխանակման հանդիպումներ՝ հատկապես նոր մեթոդների և գնահատման ձևերի կիրառման ուղղությամբ։

Որոշեցին՝

- Շարունակել մեթոդական միավորումների աշխատանքների իրականացումը հաստատված տարեկան պլաններին և ժամանակացույցին համապատասխան։
- Ապահովել մեթոդական միավորումների միջև համագործակցության ակտիվացումը՝ կազմակերպելով համատեղ քննարկումներ, բաց դասեր և փորձի փոխանակման միջոցառումներ։
- Մեթոդմիավորումների նախագահներին հանձնարարել պարբերաբար ներկայացնել կատարված աշխատանքների ամփոփ հաշվետվություններ տնօրինությանը։
- Տնօրինությանը շարունակել վերահսկել մեթոդական միավորումների գործունեությունը և աջակցել ուսումնական գործընթացի որակի շարունակական բարձրացմանը։

Լսեցին 13. «Ծրագրերի կատարողականի ստուգում ըստ թեմատիկ պլանի» ՆԴՎ արդյունքների ամփոփման մասին հարցը։

(զեկուցողներ՝ Մ.Դանիելյան, Ա. Դաջունց)

Մեթոդմիավորման նախագահներ Մերի Դանիելյանը, Անուշ Դաջունցը ներկայացրին իրականացված ներդպրոցական վերահսկողության արդյունքները։ Նշվեց, որ ուսումնասիրության շրջանակում ստուգվել են 5–9-րդ դասարանների թեմատիկ պլանները, էլեկտրոնային մատյանների գրանցումները, ծրագրային նյութի կատարողականը, ինչպես նաև գործնական և գրավոր աշխատանքների իրականացումը։

Արտահայտվեցին՝ ՄԽ անդամները

Քննարկման ընթացքում արձանագրվեց, որ ուսուցիչների մեծ մասը ուսումնական գործընթացը կազմակերպել է հաստատված թեմատիկ պլաններին համապատասխան։ Դասամատյաններում հիմնականում պահպանվել են թեմաների հերթականությունը, նախատեսված ժամաքանակները և գնահատման ձևերը։

Արաքսյա Առստամյանը նշեց, որ առանձին դեպքերում արձանագրվել են թեմաների անցկացման ժամկետների շեղումներ, որոնք պայմանավորված են եղել դասաժամերի կորստով, սովորողների կողմից որոշ թեմաների դժվար յուրացմամբ։ Նա ընդգծեց, որ այդ փոփոխությունները ոչ բոլոր դեպքերում են ժամանակին արտացոլվել թեմատիկ պլաններում և էլեկտրոնային մատյաններում։

«Քիմիա» առարկայի ուսուցիչ Անուշ Դաջունցը ներկայացրեց, որ լաբորատոր-գործնական աշխատանքների կազմակերպման ընթացքում առաջացել են նյութատեխնիկական դժվարություններ, ինչի պատճառով որոշ աշխատանքներ

իրականացվել են ուշացումով, սակայն ուսումնական ծրագրի ընդհանուր կատարողականը պահպանվել է։

Քննարկման ընթացքում անդրադարձ կատարվեց նաև գնահատման գործընթացին։ Նշվեց, որ մի շարք ուսուցիչներ գրավոր և գործնական աշխատանքների արդյունքները ժամանակին մուտքագրել են էլեկտրոնային մատյան, սակայն առանձին դեպքերում բացակայել են թեմատիկ պլաններում կատարված փոփոխությունների մասին նշումները։

Մեթոդմիավորման անդամները կարևորեցին թեմատիկ պլանների, դասամատյանների և փաստացի դասավանդման միջև ամբողջական համապատասխանության ապահովումը՝ որպես ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման կարևոր պայման։

Որոշեցին՝

1. Արձանագրել, որ «Ծրագրերի կատարողականի ստուգում ըստ թեմատիկ պլանի» ներդպրոցական վերահսկողության արդյունքներով ուսուցիչների մեծ մասը ուսումնական գործընթացը կազմակերպել է հաստատված թեմատիկ պլաններին համապատասխան։
2. Հանձնարարել ուսուցիչներին թեմատիկ պլաններում կատարված ցանկացած փոփոխություն և շեղում ժամանակին արձանագրել էլեկտրոնային մատյաններում և համապատասխան փաստաթղթերում։
3. Հանձնարարել մասնախմբերի ղեկավարներին յուրաքանչյուր ամսվա ավարտին իրականացնել թեմատիկ պլանների և դասամատյանների համապատասխանության ընթացիկ վերահսկողություն։
4. Առաջարկել քիմիայի և բնագիտական առարկաների ուսուցիչներին լաբորատոր-գործնական աշխատանքների կազմակերպման հարցում նախապես պլանավորել անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցները՝ ուշացումները բացառելու նպատակով։
5. Ուսումնասիրության արդյունքները համարել բավարար և ներկայացնել դպրոցի տնօրենի հաստատմանը։

Խորհրդի նախագահ՝ _____ Ս. Ավանեսյան

Քարտուղար՝ _____ Լ. Բաղդասարյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №9

«14» մայիսի 2026թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին մանկավարժական խորհրդի 57 անդամները:

Ո Ր Ա Կ Ա Ր Գ

1. Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
2. 4-րդ դասարաններում արտաքին գնահատման իրականացում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
3. 9-րդ դասարանների ավարտական քննությունների ժամանակացույցի քննարկում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
4. 9-րդ դասարանների ավարտական քննությունների հանձնաժողովների կազմերի քննարկում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
5. 9-րդ դասարանների ավարտական քննությունների հարցատոմսերի քննարկում:
(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)
6. 9-րդ դասարանների ավարտական քննություններից ԿԱՊԿ սովորողների ազատում:
(զեկուցող՝ Ա. Ծատրյան)
7. Օրացուցային-թեմատիկ պլանների կատարման ստուգման ամփոփում:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
8. Ամփոփիչ աշխատանքների կատարման ստուգման ամփոփում:
(զեկուցողներ՝ Ա. Առստամյան, Ռ. Շալունց, Մ. Պետրոսյան, Ա. Դաջունց, Մ. Դանիելյան, Ա. Աբգարյան)
9. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված նախազծային աշխատանքների ընթացիկ ամփոփում:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
10. Արտադասարանական խմբակների իրականացում:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)
11. Դասվարների, դասղեկների կատարած աշխատանքի ամփոփում:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)
12. Ուսուցիչների հերթական ատեստավորում և կարիքի գնահատում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
13. ԿԱՊԿ ունեցող սովորողների հետ իրականացվող աշխատանքներ:
(զեկուցող՝ Ա. Ծատրյան)
14. Ընթացիկ հարցեր:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Լսեցին 1. Օրակարգի հաստատման մասին հարցը
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝
Որոշեցին՝ Հաստատել մանկավարժական խորհրդի նիստի օրակարգը:

Լսեցին 2. 4-րդ դասարաններում արտաքին գնահատման իրականցման մասին հարցը:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
Զեկուցողը տեղեկացրեց, որ 2025-2026 ուսումնական տարում 4-րդ դասարանների արտաքին գնահատումն իրականացվելու է այլ եղանակով: Սովորողների գիտելիքների ստուգման գործընթացն իրականացվելու է միասնական թեստի միջոցով՝«Մայրենի», «Մաթեմատիկա», «Ես և շրջակա աշխարհը» առարկաներից: Առաջադրանքները կազմված են հետևյալ կերպ՝
1. Մայրենի – 8 առաջադրանք

2. Մաթեմատիկա – 8 առաջադրանք
3. Ես և շրջակա աշխարհը – 4 առաջադրանք

Զեկուցողը նշեց, որ երկրորդ կիսամյակում տնօրենության կողմից տրված գրավորները կազմվել են այս ձևաչափով և սովորողների գիտելիքների ստուգումն իրականացվել է նույն սկզբունքով: Նա նաև ավելացրեց, որ այս տարբերակով աշխատելու դեպքում նյութը բավականին ծավալուն է, իսկ ժամանակը՝ քիչ:

Զեկուցողը նշեց, որ տնօրենի հրամանով արտաքին գնահատման համար ձևավորվել է հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

- 4-րդ դասարանների դասվարներ.
  - 4-րդ «Ա» դասարանի դասվար Նունե Գալստյան
  - 4-րդ «Բ» դասարանի դասվար Անուշ Աղաբեկյան
  - 4-րդ «Գ» դասարանի դասվար Կարինե Մալխասյան
- Ընթերականեր՝
  - Արաքսյա Առստամյան, տնօրենի տեղակալ, 4-րդ «Ա» դասարան
  - Արմիդա Գևորգյան, ԿԱԴԱՀ, 4-րդ «Բ» դասարան
  - Մերի Դանիելյան, հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախագահ, 4-րդ «Գ» դասարան

Արտահայտվեցին՝ Կ. Մալխասյան, Արուս Դոլունց, Ս. Ավանեսյան:

Կարինե Մալխասյանը և Արուս Դոլունցը ընդգծեցին, որ գիտելիքի ստուգման համար նախատեսված տեքստը սովորողների համար լինելու է անծանոթ, իսկ առաջադրանքների հարցադրումները՝ անմիջականորեն բխելու են տեքստի բովանդակությունից: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ ժամանակի արդյունավետ կազմակերպման նպատակով առաջարկվեց, որ յուրաքանչյուր դասարանի դասվար անհրաժեշտության դեպքում մեկ կամ երկու անգամ բարձրաձայն ընթերցի տեքստը, ինչից հետո սովորողները կանցնեն առաջադրանքների ինքնուրույն կատարմանը:

Սերգեյ Ավանեսյանն իր հերթին նշեց, որ գրավոր աշխատանքների փաթեթները դպրոցը կստանա գիտելիքի ստուգման օրը: Փաթեթների բացումից հետո սովորողները դասարանում կսկսեն աշխատանքների կատարումը՝ ապահովելով գործընթացի թափանցիկությունն ու օբյեկտիվությունը: Նա ընդգծեց, որ աշխատանքների կատարման ընթացքում որևէ միջամտություն չի թույլատրվելու, և յուրաքանչյուր սովորող առաջադրանքները կկատարի ինքնուրույն:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարում 4-րդ դասարաններում արտաքին գնահատման իրականացման մասին տեղեկատվությունը (կցվում է):

Լսեցին 3. 9-րդ դասարանների ավարտական քննությունների ժամանակացույցի քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը ներկայացրեց, որ քննությունների կազմակերպման և անցկացման ժամանակացույցը կազմվել է՝ հիմք ընդունելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2026 թվականի ապրիլի 22-ի N 675-Ա/2 հրամանի պահանջները: Նա նշեց, որ ժամանակացույցի մշակման ընթացքում հաշվի են առնվել հրամանով սահմանված ժամկետները, ընթացակարգային դրույթները և կազմակերպչական պահանջները՝ ապահովելու քննությունների պատշաճ, համակարգված և անխափան իրականացումը:

Արտահայտվեցին՝ Մ. Դանիելյանը, Մ. Պետրոսյանը, Ա. Դաջունցը

Արտահայտվողները նշեցին, որ 9-րդ դասարանի ավարտական քննությունների ժամանակացույցը կազմվել է հիմք ընդունելով ԳԹԿ-ի կողմից սահմանված ժամկետները, մասնավորապես, 9-րդ դասարանի «Հայոց լեզու», «Մաթեմատիկա», «Բնագիտություն» («Աշխարհագրություն», «Կենսաբանություն», «Քիմիա», «Ֆիզիկա»), «Հայաստանի պատմություն», «Գրականություն» (էսսեագրություն) առարկաների քննությունների

ժամկետները սահմանվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանին համաձայն: Իսկ «Օտար լեզու» («Ռուսաց լեզու», «Անգելերեն», «Ֆրանսերեն») առարկայի քննությունների օրերը որոշվել են համապատասխան մեթոդմիավորումների նիստերի ընթացքում՝ հիմք ընդունելով տվյալ առարկաների ուսուցիչների առաջարկությունները:

Որոշեցին՝ Հավանության արժանացնել 2025-2026 ուսումնական տարվա 9-րդ դասարանների ավարտական քննությունների հանձման ժամանակացույցը (կցվում է):

Լսեցին 4. 9-րդ դասարանների ավարտական քննությունների հանձնաժողովների կազմերի քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը ներկայացրեց 9-րդ դասարանների ավարտական քննությունների հանձնաժողովների կազմերը, նշեց, որ կազմի անդամներն ընտրվել են՝ հիմք ընդունելով հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգը:

Արտահայտվեցին՝ Մ. Դանիելյանը, Մ. Պետրոսյանը, Ա. Դաջունցը, Ա. Աբգարյանը

Արտահայտվողները նշեցին, որ 9-րդ դասարանների ավարտական քննությունների հանձնաժողովների կազմերը քննարկվել և հավանության են արժանացել ՄՄ նիստերի ընթացքում:

Որոշեցին՝ Հավանության արժանացնել 9-րդ դասարանների ավարտական քննությունների հանձնաժողովների կազմերը (կցվում է):

Լսեցին 5. 9-րդ դասարանների ավարտական քննությունների հարցատոմսերի քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Պետրոսյան)

Զեկուցողը նշեց, որ առարկայական ուսուցիչների կողմից, սահմանված կարգի պահանջներին համապատասխան, կազմվել են «Օտար լեզու» («Ռուսաց լեզու», «Անգլերեն», «Ֆրանսերեն») առարկաների բանավոր քննությունների հարցատոմսերը: Հարցատոմսերը նախապես մանրամասն քննարկվել են մեթոդական միավորման նիստում, գնահատվել դրանց բովանդակային համապատասխանությունը, չափորոշչային պահանջների ապահովվածությունն ու տարիքային առանձնահատկություններին համապատասխանությունը, ինչից հետո արժանացել են մեթոդական միավորման հավանությանը:

Արտահայտվեցին՝ Սերգեյ Ավանեսյանը, ՄՄ նախագահները

Սերգեյ Ավանեսյանը տեղեկացրեց, որ եթե նախկինում «Հայաստանի պատմություն» և «Գրականություն» առարկաներից նույնպես կազմվում էին հարցատոմսեր, ապա այս ուսումնական տարում նշված առարկաներից սովորողները գրելու են միասնական էսսե, այսինքն լինելու է մեկ միասնական քննություն:

ՄՄ նախագահները նշեցին, որ հարցատոմսերը համապատասխանում են սահմանված բոլոր պահանջներին:

Որոշեցին՝ Հավանության արժանացնել 9-րդ դասարանների ավարտական քննությունների հարցատոմսերը:

Լսեցին 6. 9-րդ դասարանների ավարտական քննություններից ԿԱՊԿ սովորողների ազատման հարցը:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 13.10.2025թ.-ի N 73 հրամանի 24 կետի քննական դասարանում սովորող ԿԱՊԿ ունեցող սովորողները համաձայն ծնողի դիմումի,

ազատվում են քննություններից կամ քննություն են հանձնում իրենց համար կազմված անհատական թեստերով՝ըստ ԱՈւՊ-ի:
Զեկուցողն առաջարկեց 9-րդ դասարանում սովորող ԿԱՊԿ ունեցող 3 սովորողներին, ծնողների դիմումի համաձայն, ազատել 9-րդ դասարանի ավարտական քննություններից.

1. Ալեքս Լավրենտի Սահակյան
2. Էդիկ Գագիկի Ստեփանյան
3. Արթուր Էրիկի Ալումյան

Զեկուցողը նշեց նաև, որ 4-րդ դասարանում սովորող ԿԱՊԿ ունեցող 3 սովորողներ, ծնողների դիմումի համաձայն, ազատվել են արտաքին գնահատումից.

1. Լեո Սանասարի Աթասունց
2. Սուսաննա Արմենի Ստեփանյան
3. Մայքլ Արայի Սարգսյան

Արտահայտվեցին՝ ՄԽ անդամներ:
Արտահայտվողները նշեցին, որ անհրաժեշտ է ցուցաբերել անհատական մոտեցում ԿԱՊԿ ունեցող աշակերտների նկատմամբ՝ապահովելով նրանց կրթական իրավունքների լիարժեք իրականացումը, միևնույն ժամանակ, հիմք ընդունելով ներկայացված փաստաթղթերը՝ ազատել ավարտական քննություններից:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 9-րդ դասարանների ավարտական քննություններից ԿԱՊԿ սովորողների ազատման մասին ինֆորմացիան:

Լսեցին 7. Օրացուցային-թեմատիկ պլանների կատարման ստուգման ամփոփման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը նշեց, որ ուսուցիչների կողմից մատյանների լրացումն ըստ օրացուցային-թեմատիկ պլանների: Նա իր խոսքում նշեց, որ տոնական և ոչ աշխատանքային օրերի հետ համընկնող թեմաները, սահմանված կարգով, ծրագրի կատարողականն ապահովելու նպատակով հավելվել են հաջորդող թեմաներին:
Զեկուցողը նշեց, որ 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում տոնական և ոչ աշխատանքային օրեր չեն եղել, իսկ երկրորդ կիսամյակի ընթացքում եղել է հինգ ոչ աշխատանքային օր՝ հունվարի 5-ը, 6-ը, 27-ը, 28-ը, ապրիլի 24-ը և մայիսի 1-ը, օրացուցային-թեմատիկ պլանով նախատեսված թեմաները ուսուցիչների կողմից խտացվել և լրացվել են:
Զեկուցողի խոսքով կարելի է արձանագրել, որ օրացուցային-թեմատիկ պլանների ամփոփումը իրականացվել է սահմանված կարգով՝ ամբողջությամբ ապահովելով թեմաների ու ծրագրի իրականացումը: Արձանագրվել է նաև, որ մատենավարման աշխատանքներում էական թերություններ չեն հայտնաբերվել, իսկ անհրաժեշտ ճշգրտումները կատարվել են ժամանակին և սահմանված կարգի պահպանմամբ:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը:
Սերգեյ Ավանեսյանը կարեւորեց դասերի լրացումը էլեկտրոնային մատյանում՝կապված հինգ ազատ օրերի հետ, ինչպես նաև շեշտեց, որ այդ թեմաների ուսուցումը պետք է իրականացվի և իրականացվել է պատշաճ կարգով: Նա նշեց, որ ինչպես նախորդ ուսումնական տարվա ընթացքում, այս ուսումնական տարվա ընթացքում նույնպես նախապես քննարկված սկզբունքի համաձայն անհրաժեշտ է բաց թողած դասերը լրացնել ըստ հերթականության «Տնային աշխատանք» բաժնում, որպեսզի հստակ տեսանելի լինի, թե որ դասը երբ է փոխարինվել:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն օրացուցային-թեմատիկ պլանների կատարման ստուգման ամփոփման մասին ինֆորմացիան:

Լսեցին 8. Ամփոփիչ աշխատանքների կատարման ստուգման ամփոփման մասին հարցը:
(զեկուցողներ՝ Ա. Առստամյան, Ռ. Շալունց, Մ. Պետրոսյան, Ա. Դաջունց, Մ. Դանիելյան, Ա. Աբգարյան)

Զեկուցողները ներկայացրեցին ամփոփիչ աշխատանքների իրականացումը, որը կատարվել է օրացուցային-թեմատիկ պլաններով սահմանված օրերին, իսկ ամփոփիչ աշխատանքները կազմվել են հստակ կառուցվածքի համաձայն, ինչը ապահովել է դրանց ամբողջական իրականացումը: Իրականացվել է հետևողական վերահսկողություն՝ պահպանելով հաստատված ընթացակարգերը: Կատարված բոլոր ամփոփիչներն իրականացվել են նախապես հաստատված պլանով և գնահատման չափանիշներով, ինչը երաշխավորել է դրանց արդյունավետ և կազմակերպված ընթացքը: Ամփոփիչ աշխատանքների ստուգման արդյունքները ցույց են տալիս, որ սովորողների մեծ մասը յուրացրել է ծրագրային հիմնական նյութը և կարողանում է կիրառել ստացած գիտելիքները գործնական առաջադրանքներում: Ստուգման ընթացքում արձանագրվել է, որ առանձին սովորողների մոտ առկա են թեմատիկ բացթողումներ, որոնց վերացման նպատակով պետք է իրականացնել լրացուցիչ աշխատանքներ և անհատական աջակցություն: Ուսուցիչների կողմից իրականացվել է գնահատման միասնական և թափանցիկ գործընթաց՝ պահպանելով առարկայական չափորոշիչների պահանջները: Աշխատանքների վերլուծությունը ցույց է տվել, որ անհրաժեշտ է շարունակական ուշադրություն դարձնել սովորողների գրավոր խոսքի, տրամաբանական մտածողության և ինքնուրույն աշխատանքի հմտությունների զարգացմանը: Զեկուցողն առաջարկեց ուժեղացնել համագործակցությունը դասղեկների և ծնողների հետ՝ սովորողների առաջադիմության բարձրացման նպատակով: Զեկուցողնը նշեց նաև, որ ամփոփիչ աշխատանքների արդյունքները քննարկվել են մեթոդական միավորման նիստերում: Ընդհանուր առմամբ, ամփոփիչ աշխատանքների կազմակերպման և ստուգման գործընթացը իրականացվել է սահմանված կարգի համապատասխան:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը:

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ անհրաժեշտ է սահմանված ժամկետներում ավարտին հասցնել բոլոր ամփոփիչ աշխատանքները՝ ապահովելով ուսումնական գործընթացի պատշաճ կազմակերպումը և գնահատման արդյունքների ամբողջական ամփոփումը: Նա հանձնարարեց մեթոդական միավորումների նախագահներին, օրացուցային-թեմատիկ պլաններին համապատասխան, էլեկտրոնային մատյաններում իրականացնել ամփոփիչ աշխատանքների քանակի, դրանց կատարման ընթացքի և սովորողների գնահատականների գրանցման ստուգում: Ընդգծվեց, որ վերահսկողության արդյունքում հայտնաբերված բացթողումները պետք է անհապաղ շտկվեն՝ մինչև ուսումնական տարվա ավարտը ապահովելով գնահատման գործընթացի լիարժեք և ճշգրիտ իրականացումը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն ամփոփիչ աշխատանքների կատարման ստուգման մասին ինֆորմացիան:

Լսեցին 9. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված նախագծային աշխատանքների ընթացիկ ամփոփման մասին հարցը:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)

2025–2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացվել են նախագծային աշխատանքներ՝ ուղղված սովորողների ստեղծագործական, հետազոտական և համագործակցային կարողությունների զարգացմանը: Իրականացվել է վաթսունմեկ նախագծային աշխատանք, որից քսանութը առաջին կիսամյակի ընթացքում, երեսուներեքը՝ երկրորդ կիսամյակի ընթացքում: Նախագծային աշխատանքներին ներգրավվել են յոթերորդ, ութերորդ և իններորդ դասարանների սովորողները՝ ըստ առարկայական ուղղվածությունների և հետաքրքրությունների շրջանակի: Իրականացված նախագծերը նպաստել են

սովորողների ինքնուրույն աշխատանքի, տեղեկատվության որոնման և վերլուծության, ինչպես նաև ներկայացման հմտությունների ձևավորմանը: Աշխատանքների ընթացքում կիրառվել են ժամանակակից մեթոդներ և տեղեկատվական տեխնոլոգիաներ: Նախագծային աշխատանքների արդյունքները ներկայացվել են նախագծային աղխատանքների պաշտպանության ընթացքում: Սովորողների մեծ մասը ցուցաբերել է ակտիվ մասնակցություն և պատասխանատու մոտեցում: Ամփոփելով՝ կարելի է նշել, որ նախագծային ուսուցման գործընթացը արդյունավետ է եղել և նպաստել է կրթության որակի բարձրացմանը, սովորողների նախաձեռնողականության և թիմային աշխատանքի զարգացմանը:

Արտահայտվեցին՝ ՄԽ անդամներ

Արտահայտվողները նշեցին, որ նախորդ տարիների համեմատ այս ուսումնական տարում նկատվում է սովորողների մասնակցության և հետաքրքրվածության զգալի աճ: Եթե նախկինում նախագծային աշխատանքների հիմնական մասն իրականացվում էր նախագծի ղեկավարի անմիջական ներգրավմամբ, ապա այս տարի ակնհայտորեն երևում է սովորողների ինքնուրույն աշխատանքի ծավալի մեծացումը: Նրանց խոսքով՝ սովորողները ավելի նախաձեռնող են, ակտիվորեն մասնակցում են նախագծերի պլանավորմանն ու իրականացմանը, ցուցաբերում են ստեղծագործական մոտեցում և բարձր պատասխանատվություն՝ սեփական աշխատանքի արդյունքների նկատմամբ: Այս դրական փոփոխությունները վկայում են նախագծային ուսուցման արդյունավետության բարձրացման և սովորողների ինքնուրույնության զարգացման մասին:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված նախագծային աշխատանքների ընթացիկ ամփոփման մասին տեղեկատվությունը:

Լսեցին 10. Արտադասարանական խմբակների իրականացման հարցը:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա ընթացքում արտադասարանական խմբակների ընթաքցում կատարված աշխատանքները: Նրա խոսքով իրականացվել են արտադասարանական խմբակների տարբեր աշխատանքներ, որոնք նպաստել են սովորողների հետաքրքրությունների զարգացմանը: Խմբավարների կողմից աշխատանքներն իրականացվել են ծրագրերին և ժամանակացույցին համապատասխան: Կազմակերպվել են թեմատիկ միջոցառումներ, ցուցահանդեսներ, մրցույթներ: Մարզական խմբակի մասնակից աշակերտները մասնակցել են սպորտային միջոցառումների և ստացել մրցանակներ: Պարապմունքներն անց են կացվել կանոնավոր, ապահովվել է սովորողների ակտիվ մասնակցությունը:

Խմբակների գործունեության արդյունքում նկատվել է սովորողների ակտիվության աճ, կարգապահության նկատմամբ պատասխանատվության ձևավորում, ինքնքդրսևորման հնարավորության ընդլայնում:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը:

Սերգեյ Ավանեսյանն իր խոսքում կարևորեց արտադասարանական խմբակների նշանակությունը սովորողների բազմակողմանի զարգացման գործում՝ ընդգծելով, որ դրանք նպաստում են երեխաների գեղագիտական ճաշակի ձևավորմանը, ստեղծագործական կարողությունների զարգացմանը և մշակույթի նկատմամբ հետաքրքրության ու սիրո ամրապնդմանը:

Նա առանձնահատուկ գնահատանքի արժանացրեց «Կերպարվեստ» և «Երաժշտություն» խմբակների ղեկավարների աշխատանքը՝ նշելով, որ նրանց կողմից կազմակերպված ամփոփիչ միջոցառումները հնարավորություն են տվել ներկայացնելու տարվա ընթացքում կատարված աշխատանքների արդյունքները: Ամփոփման ընթացքում ներկաները ոչ միայն ծանոթացել են

սովորողների ձեռքբերումներին, այլև ստացել են գեղագիտական մեծ հաճույք՝ վայելելով նրանց ստեղծագործական աշխատանքներն ու կատարումները։

Սերգեյ Ավանեսյանը նաև ընդգծեց, որ 2025–2026 ուսումնական տարվա ընթացքում արտադասարանական խմբակների ղեկավարները գործունեությունն իրականացրել են հաստատված ծրագրերին և ժամանակացույցին համապատասխան՝ ապահովելով խմբակային աշխատանքների արդյունավետ և նպատակային կազմակերպումը։ Նրա խոսքով՝ իրականացված աշխատանքները նպաստել են սովորողների հետաքրքրությունների բացահայտմանը, կարողությունների զարգացմանը և դպրոցական կյանքի հարստացմանը։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն արտադասարանական խմբակների իրականացման մասին ինֆորմացիան։

Լսեցին 11. Դասվարների, դասղեկների կատարած աշխատանքի ամփոփման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա ընթացքում դասվարների և դասղեկների կատարած աշխատանքը, որն իրականացվել է դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանին համապատասխան։ Իրականացվել են սովորողի կրթության, դաստիարակության զարգացմանն ուղղված աշխատանքներ՝ ապահովել դասարանի կարգապահությունը, հետևել սովորողների հաճախումներին և առաջադիմությանը։ Դասղեկի ժամերին անց են կացվել քննարկումներ հայրենասիրություն, անվտանգ միջավայր, առողջ ապրելակերպ, երեխայի իրավունքների պաշտպանություն թեմաներով։

Ապահովվել է դասղեկ-ծնող կապը, հրավիրվել են ծնողական ժողովներ։

Սովորողները մասնակցել են դպրոցում կազմակերպված տարբեր միջոցառումների։

Զեկուցողի խոսքով կատարված աշխատանքները կարելի է գնահատել բավարար և արդյունավետ։

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը։

Սերգեյ Ավանեսյանն իր խոսքում կարևորեց աշխատանքի համակարգված կազմակերպման և ծնող–ուսուցիչ արդյունավետ համագործակցության դերը՝ ընդգծելով, որ կրթական գործընթացի հաջողության կարևոր նախապայմաններից մեկը բոլոր շահագրգիռ կողմերի համատեղ և նպատակային աշխատանքն է։

Նա նշեց, որ նման համագործակցային մոտեցումը հնարավորություն է տալիս ոչ միայն հետևողականորեն վերահսկել ուսուցման արդյունավետությունը, այլև ժամանակին արձանագրել սովորողների առաջընթացն ու առկա դժվարությունները, վերլուծել դրանց պատճառները և մշակել համապատասխան աջակցության մեխանիզմներ։ Այդ կերպ ձևավորվում են յուրաքանչյուր սովորողի կրթական կարիքներին համապատասխան անհատականացված աջակցության պայմաններ, որոնք նպաստում են նրանց առավել արդյունավետ զարգացմանը։

Սերգեյ Ավանեսյանը նաև շեշտեց, որ համակարգված, հետևողական և համագործակցային աշխատանքային մոդելը դրական ազդեցություն է ունենում դպրոցի ընդհանուր կրթական միջավայրի վրա՝ նպաստելով դրա շարունակական կատարելագործմանը։ Նրա խոսքով՝ նման մթնոլորտը ստեղծում է բարենպաստ պայմաններ սովորողների կարողությունների բացահայտման, տաղանդների զարգացման և ներուժի լիարժեք իրացման համար՝ ապահովելով կրթության որակի բարձրացմանն ուղղված կայուն արդյունքներ։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն դասվարների, դասղեկների կատարած աշխատանքի ամփոփման մասին ինֆորմացիան։

Լսեցին 12. Ուսուցիչների հերթական ատեստավորման և կարիքի գնահատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը ներկայացրեց ուսուցիչների հերթական ատեստավորման գործընթացի կազմակերպման առանձնահատկությունները՝ նշելով, որ այն իրականացվում է երեք շրջափուլով և նպատակ ունի նպաստելու ուսուցիչների մասնագիտական շարունակական զարգացմանն ու կարողությունների կատարելագործմանը:

Նա տեղեկացրեց, որ դպրոցի ուսուցչական անձնակազմի զգալի մասն արդեն ընդգրկված է հերթական ատեստավորման գործընթացում: Մասնավորապես, առաջին տարում գործընթացին միացած ուսուցիչներն այս ուսումնական տարում գտնվում են երրորդ շրջափուլում և անցնելու են մոդուլների երրորդ փունջը, իսկ նախորդ ուսումնական տարում հերթական ատեստավորմանը միացած ուսուցիչները մասնակցելու են երկրորդ շրջափուլին և ուսումնասիրելու են մոդուլների երկրորդ փունջը: Զեկուցողը նաև նշեց, որ ընթացիկ տարում գործընթացին կմիանա ուսուցիչների նոր խումբ, որը կսկսի իր մասնագիտական զարգացման ուղին հերթական ատեստավորման շրջանակում:

Անդրադառնալով գործընթացի կազմակերպմանը՝ զեկուցողը նշեց, որ ուսուցիչների ընդգրկման համար իրականացվելու է կարիքի գնահատում: Գնահատման հիմքում դրվելու են տնօրինության կողմից իրականացված դասալսումների, դիտարկումների, ինչպես նաև ծնողների և սովորողների հետ անցկացված քննարկումների արդյունքները: Նշվեց, որ եթե տվյալների ամփոփման արդյունքում արձանագրվի մասնագիտական զարգացման անհրաժեշտություն, ապա ուսուցիչը կընդգրկվի հերթական ատեստավորման գործընթացում: Ընդգծվեց նաև, որ ներկայումս այլևս չի գործում նախկինում կիրառվող հինգ տարվա պարտադիր միջակայքը, և ատեստավորման գործընթացում ընդգրկումը պայմանավորված է մասնագիտական կարիքների գնահատման արդյունքներով:

Զեկուցողը տեղեկացրեց նաև, որ 2026 թվականին հերթական ատեստավորման առաջին մակարդակին կմասնակցեն ուսուցիչներ Մերի Դանիելյանը և Արուս Դոլունցը: Նրանք նախորդ տարի մասնակցել են կամավոր ատեստավորմանը, սակայն չեն հաղթահարել սահմանված 60 տոկոսի շեմը: Նրանց մասնակցությունը հերթական ատեստավորմանը նպատակ ունի նպաստելու առարկայական գիտելիքների և մասնագիտական կարողությունների զարգացմանը՝ ապահովելով հետագա մասնագիտական առաջընթացի համար անհրաժեշտ պայմաններ:

Արտահայտվեցին՝ ՄԽ անդամները, Մ. Պետրոսյանը:

Մարգարիտա Պետրոսյանը նշեց, որ հերթական ատեստավորումը կարևոր գործընթաց է մասնագիտական գիտելիքների, կարողությունների և մանկավարժական հմտությունների զարգացման համար: Նշվեց, որ կարիքի գնահատումը հնարավորություն է տալիս բացահայտելու ուսուցիչների մասնագիտական զարգացման ուղղությունները և կազմակերպելու նպատակային վերապատրաստումներ:

Ուսուցիչները կարևորեցին շարունակական ինքնակրթությունը, ժամանակակից մեթոդների կիրառումը՝ կրթության որակի բարձրացման համար: Նշվեց, որ ատեստավորման գործընթացը պետք է նպաստի ուսուցչի մասնագիտական առաջընթացին:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն ուսուցիչների հերթական ատեստավորման և կարիքի գնահատման մասին ինֆորմացիան:

Լսեցին 13. ԿԱՊԿ ունեցող սովորողների հետ իրականացվող աշխատանքների մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը ներկայացրեց կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿ) սովորողների հետ իրականացվող աշխատանքների ընթացքը՝ նշելով, որ դրանք գտնվում են ավարտական փուլում: Նա կարևորեց այն վերջնական նպատակների գնահատումը, որոնք սահմանվել էին ուսումնական տարվա սկզբում և որոնց արդյունավետության ամփոփումը նախատեսվում է իրականացնել առաջիկայում: Ընդգծվեց, որ նպատակների գնահատումը հնարավորություն կտա վերլուծելու սովորողների առաջընթացը, արձանագրելու ձեռքբերումները և նախանշելու հետագա զարգացման ուղղությունները:

Նշվեց, որ 2025–2026 ուսումնական տարվա ընթացքում կազմակերպվել են Անհատական ուսուցման պլանների (ԱՈւՊ) չորս քննարկումներ: Քննարկումների արդյունքում էական փոփոխություններ չեն կատարվել, քանի որ ուսումնական տարվա սկզբում սահմանված նպատակները եղել են հիմնավորված և համապատասխանել են սովորողների կրթական կարիքներին: Բացառություն են կազմել միայն այն սովորողները, որոնք ուսումնական տարվա ընթացքում տեղափոխվել են դպրոց և որոնց համար իրականացվել են անհրաժեշտ ճշգրտումներ՝ պայմանավորված նոր կրթական միջավայրին և անհատական կարիքներին համապատասխանեցման անհրաժեշտությամբ:

Արփինե Ծատրյանն իր հերթին տեղեկացրեց, որ ավարտական փուլում են գտնվում նաև ԿԱՊԿ սովորողների առաջընթացի գնահատման նպատակով վարվող դիտարկման թերթիկների լրացման և ամփոփման աշխատանքները: Նրա խոսքով՝ դրանց արդյունքները կօգնեն առավել ամբողջական պատկերացում կազմել սովորողների զարգացման դինամիկայի վերաբերյալ և հիմք կհանդիսանան հետագա կրթական պլանավորման համար:

Արտահայտվեցին՝ Ի. Ջավահիրյանը, Ա. Հարությունյանը

Արտահայտվողները կարևորեցին աշխատանքի համակարգված կազմակերպումը՝ընդգծելով, որ ԱՈՒՊ-ի շրջանակում նախատեսված նպատակների իրականացման ու դիտարկման թերթիկների մանրամասն, ճիշտ լրացման գործընթացը նշանակալի դեր ունի աշակերտների կրթական զարգացման և ուսուցման որակի ապահովման մեջ: Նրանք հավելեցին, որ այս մոտեցումը թույլ է տալիս ոչ միայն հետևել ուսուցման արդյունավետությանը, այլև ժամանակին արձանագրել առաջընթացն ու թերությունները:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում ԿԱՊԿ ունեցող սովորողների հետ իրականացվող աշխատանքների, ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների լրացման մասին ինֆորմացիան:

Լսեցին 14. Ընթացիկ հարցեր:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը տեղեկացրեց, որ Սյունիքի մարզպետի աշխատակազմի, ինչպես նաև ՀՀ կրթության տեսչական մարմնի կողմից վարչական վարույթի շրջանակում Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցում իրականացվել են վերահսկողական աշխատանքներ: Վերահսկողության ընթացքում կազմակերպվել են հանդիպումներ դպրոցի աշխատակազմի ներկայացուցիչների հետ, ուսումնասիրվել են դպրոցի գործունեության տարբեր ուղղություններն ու փաստաթղթային հիմքերը:

Նա նշեց, որ իրականացված ուսումնասիրությունների արդյունքներն ամփոփվել են համապատասխան արձանագրություններով, որոնցում արձանագրվել են մի շարք թերություններ և բացթողումներ: Դրանց վերացման նպատակով լիազոր մարմինների կողմից տրվել են համապատասխան հանձնարարականներ և ցուցումներ: Մասնավորապես, Սյունիքի մարզպետի աշխատակազմի կողմից ուղարկված հանձնարարականով առաջարկվել է արձանագրված հարցերը քննարկել մանկավարժական խորհրդի նիստում և ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ՝ առկա խնդիրների կարգավորման ուղղությամբ:

Զեկուցողը նաև տեղեկացրեց, որ դպրոցի կողմից անհրաժեշտ է 2026 թվականի մայիս ամսից մինչև 2026 թվականի սեպտեմբերի 18-ը ՀՀ կրթության տեսչական մարմին ներկայացնել իրականացված աշխատանքների վերաբերյալ ամփոփ հաշվետվություններ և հիմնավորող փաստաթղթեր: Միաժամանակ, մինչև յուրաքանչյուր ամսվա 15-ը Սյունիքի մարզպետի աշխատակազմ պետք է ներկայացվի կատարված աշխատանքների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն՝ հանձնարարականների կատարման ընթացքի մասին:

Անդրադառնալով վերահսկողական մարմինների արձանագրած խախտումներին՝ զեկուցողը նշեց, որ դպրոցի երեք աշխատակիցների, ինչպես նաև նախկին վարչատնտեսական մասի համակարգողի գործունեության ընթացքում արձանագրվել են աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված թերացումներ: Նրա խոսքով՝ տեսչական մարմնի կողմից արձանագրվել է, որ դրանք բացասաբար են անդրադարձել դպրոցի աշխատանքային և բարոյահոգեբանական մթնոլորտի վրա՝ նպաստելով որոշ կազմակերպչական խնդիրների առաջացմանը:

Զեկուցողը նշեց, որ ՀՀ կրթության տեսչական մարմնի արձանագրմամբ տվյալ աշխատակիցների գործունեության ընթացքում արձանագրվել են աշխատանքային օրենսդրության, դպրոցի կանոնադրության, ներքին կարգապահական կանոնների և աշխատանքային էթիկայի պահանջների խախտումներ, որոնք հանգեցրել են աշխատանքային հարաբերությունների լարվածության և դպրոցի բնականոն գործունեության խաթարման ռիսկերի առաջացմանը:

Նա տեղեկացրեց, որ նշված աշխատակիցներին կառաջարկվի ներկայացնել գրավոր բացատրություններ՝ 2026 թվականի մարտի 20-ից հետո տեղի ունեցած իրադարձությունների և իրենց գործունեության ընթացքում թույլ տրված բացթողումների վերաբերյալ: Ներկայացված պարզաբանումների ուսումնասիրությունից հետո օրենքով սահմանված կարգով կիրականացվեն համապատասխան վարչարարական ընթացակարգեր, որոնց արդյունքներով, անհրաժեշտության դեպքում, կընդունվեն անհատական իրավական ակտեր:

Զեկուցողը նաև ներկայացրեց իր կողմից մշակված աշխատանքային պլանը, որը նախապես քննարկվել է նաև Գորիսի տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնի մասնագետների հետ: Նա նշեց, որ պլանի նպատակն է ապահովել արձանագրված խնդիրների համակարգված լուծումը, բարելավել աշխատանքային և հոգեբանական մթնոլորտը դպրոցում, բարձրացնել կառավարման արդյունավետությունը և կանխել նմանատիպ խնդիրների կրկնությունը: Նիստի ընթացքում ներկայացվեցին աշխատանքային պլանով նախատեսված մի շարք միջոցառումներ և գործողություններ, որոնք ենթակա են իրականացման առաջիկա ժամանակահատվածում:

Արտահայտվեցին՝ ՄԽ անդամները

Արտահայտվողները կարևորեցին վերահսկողական մարմինների կողմից իրականացված աշխատանքների նշանակությունը՝ ընդգծելով, որ նման գործընթացները նպաստում են դպրոցի գործունեության թափանցիկության բարձրացմանը և առկա խնդիրների համակարգված բացահայտմանը:

Նրանք նշեցին, որ արձանագրված թերությունների և բացթողումների վերլուծությունը պետք է դիտարկվի որպես զարգացման հնարավորություն՝ ուղղված դպրոցի կառավարման և կազմակերպչական գործընթացների բարելավմանը:

Միաժամանակ արտահայտվողները կարևորեցին աշխատանքային կարգապահության և ներքին կանոնների պահպանման անհրաժեշտությունը՝ ընդգծելով, որ յուրաքանչյուր աշխատակցի պատասխանատվությունը անմիջական ազդեցություն ունի դպրոցի ընդհանուր մթնոլորտի վրա:

Նշվեց նաև, որ ստեղծված իրավիճակում կարևոր է պահպանել կառուցողական մոտեցում, ապահովել փոխադարձ հարգանքի մթնոլորտ և բոլոր

գործընթացները իրականացնել բացառապես օրենսդրությամբ սահմանված կարգով։

Արտահայտվողները նաև ընդգծեցին, որ ներկայացված աշխատանքային պլանը կարող է հիմք հանդիսանալ իրավիճակի կայունացման, թիմային համագործակցության ամրապնդման և կրթական գործընթացի արդյունավետության բարձրացման համար։

Որոշեցին՝

1. Ընդունել ի գիտություն Սյունիքի մարզպետի աշխատակազմի, ՀՀ կրթության տեսչական մարմնի կողմից վարչական վարույթի շրջանակում Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցում իրականացված վերահսկողական աշխատանքների արդյունքները։
2. Հավանության արժանացնել դպրոցում բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտի վերականգնման, բարեվարքության կանոնների պահպանման և համագործակցային միջավայրի ձևավորման նպատակով մշակված գործողությունների ընդլայնված պլանը (կցվում է էլեկտրոնային տարբերակով)։

Խորհրդի նախագահ՝ _____ Ս. Ավանեսյան

Քարտուղար՝ _____ Լ. Բաղդասարյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 10

«27» մայիսի 2026թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին Մանկավարժական խորհրդի 57 անդամները:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
2. 1-8-րդ դասարանների սովորողներին հաջորդ դասարան փոխադրելու, ամառային արձակուրդների ընթերցանության համար նախատեսված առաջադրանքներ տալու, գովասանագրով պարգևատրելու մասին:
(զեկուցողներ՝ Ս. Ավանեսյան, դասվարներ, դասղեկներ)
3. 9-րդ դասարանի սովորողներին թույլատրել մասնակցել ավարտական քննություններին:
(զեկուցողներ՝ ՄՄ նախագահներ, դասղեկներ)
4. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈւԴԱՏՊ) մայիս ամսվա ընթացքում իրականացված աշխատանքներ:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)
5. «Անվտանգ և ապահով կրթություն» տարվա ամփոփում:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Լսեցին 1. Օրակարգի հաստատման մասին հարցը
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել մանկավարժական խորհրդի նիստի օրակարգը:

Լսեցին 2. 1-8-րդ դասարանների սովորողներին հաջորդ դասարան փոխադրելու, ամառային արձակուրդների ընթերցանության համար նախատեսված առաջադրանքներ տալու, գովասանագրով պարգևատրելու մասին հարցը:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան, դասվարներ, դասղեկներ)
Զեկուցողները ներկայացրին 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում ուսումնական հաստատության սովորողների՝ 1-8-րդ դասարանների սովորողներին հաջորդ դասարան փոխադրելու կարգը՝ համապատասխան կրթական չափորոշիչների և հաստատության ներքին կարգապահական դրույթների համաձայն:
Ներկայացվեց նաև 1-8-րդ դասարանների այն սովորողների անունների ցանկը, ովքեր իրենց ուսումնառության ընթացքում ցուցաբերած առաջադիմության, բարեխիղճ վարքի և ակտիվ մասնակցության համար կպարգևատրվեն գովասանագրով:
Հատուկ ընդգծվեց, որ այս քայլը ոչ միայն խրախուսում է սովորողների գիտելիքահենք և գիտակցված մոտեցումը ուսմանը, այլև ձևավորում է դպրոցում առողջ մրցակցային և համախմբված մթնոլորտ: Նշվեց նաև, որ նման մոտեցումը կարևոր դեր ունի սովորողների պատասխանատվության զգացումը խորացնելու և նրանց ուսումնական ձեռքբերումները շարունակաբար բարելավելու գործում:
Սերգեյ Ավանեսյանը նշեց այն հիմքերը, որոնց համապատասխան բարձր առաջադիմություն ունեցող սովորողները պարգևատրվում են գովասանագրերով և հատուկ նմուշի վկայականով: Կոնկրետ առանձնացրեց հիմքերը՝ հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան

[կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգի 13](#)-րդ կետը, որտեղ նշվում է.

13. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գովասանագրով սովորողները պարգևատրվում են տվյալ ուսումնական տարվա՝

1) այն դասարաններում, որտեղ տարեկան գնահատումն իրականացվում է բնութագրման միջոցով, «Կրթության կառավարման տեղեկատվական համակարգ»-ում իրականացվող բնութագրման «Ա» մակարդակում նվազագույնը 70% և «Բ» մակարդակում առավելագույնը 30% բնութագրված լինելու դեպքում,

2) մյուս դասարաններում բոլոր ուսումնական առարկաներից տարեկան 9-10 միավոր գնահատված լինելու դեպքում, իսկ 9-րդ և 12-րդ դասարաններում նաև ավարտական, պետական ավարտական քննություններից 18-20 միավոր գնահատված լինելու դեպքում։

Արտահայտվեցին՝ ՄՄ նախագահներ

Արտահայտվողները ընդգծեցին, որ յուրաքանչյուր նոր ուսումնական տարում դպրոցում ուսումնական գործընթացի որակի հետևողական բարելավման շնորհիվ արձանագրվում է ակնառու առաջընթաց, ինչի վառ ապացույցն է գերազանց առաջադիմությամբ սովորողների թվի կայուն աճը։

2025-2026 ուսումնական տարին ևս չխախտեց ձևավորված դրական միտումը։ Ընթացիկ տարում դպրոցն ունի 257 գերազանց առաջադիմությամբ սովորող, որի մեջ ներառված չեն 9-րդ դասարանների սովորողները։ Նշվեց, որ եթե 9-րդ դասարանների սովորողները քննությունների արդյունքում պահպանեն իրենց առաջադիմությունը և որակը, ապա գերազանց սովորողների թիվը կլինի 274, հավելելով, որ ամփոփաթղթում նշված է նաև տարեկան գնահատականների հիման վրա 9-րդ դասարանների գերազանցիկների անվանացանկը։

Միաժամանակ, հիշեցվեց, որ հանրակրթական պետական նոր չափորոշիչներով 1-4-րդ դասարաններում միավորային գնահատում չի իրականացվում։ Այդ դասարաններում սովորողների առաջադիմությունը գնահատվում է բնութագրիչների միջոցով, որոնք ձևավորվում են կիսամյակի ընթացքում իրականացված հայտորոշիչ, ձևավորող և ամփոփիչ գնահատման արդյունքներով։

Բնութագրիչները բաժանվում են հետևյալ խմբերին՝ Ա, Բ, Գ, Դ, Ե, որոնցից «Ա»-ն արտահայտում է լավագույն առաջադիմությունը։ Նշվեց, որ այս դասարանների լավագույն ցուցանիշ «Ա» (նվազագույնը 70%) և «Բ» (առավելագույնը 30%) ունեցող սովորողները ևս ներառվել են գերազանց առաջադիմությամբ սովորողների ցուցակում։

Այս մոտեցումն ունի կարևոր դեր ոչ միայն սովորողների գիտելիքների մակարդակի օբյեկտիվ գնահատման, այլև նրանց մոտիվացիայի բարձրացման, պատասխանատու վերաբերմունքի ձևավորման և շարունակական ինքնազարգացման խթանման գործընթացում։

Որոշեցին՝

1. 1-8-րդ դասարանների սովորողներին փոխադրել հաջորդ դասարաններ.
    - 1-ին դասարաններում սովորողների գիտելիքների անհրաժեշտ նվազագույնը ձեռք բերած 84 (ութսունչորս) սովորողներին փոխադրել երկրորդ դասարան (առաջին դասարանների սովորողների թիվը՝ 84)։
    - 2-րդ դասարանների 63 (վաթսուներեք) սովորողներին փոխադրել 3-րդ դասարան։
    - 3-րդ դասարանների 80 (ութսուն) սովորողներից 80 (ութսուն) սովորողներին փոխադրել 4-րդ դասարան,
    - 4-րդ դասարանների 81 (ութսունմեկ) սովորողներից 81 (ութսունմեկ) սովորողներին փոխադրել 5-րդ դասարան,
    - 5-րդ դասարանների 84 (ութսունչորս) սովորողներից 84 (ութսունչորս) սովորողներին փոխադրել 6-րդ դասարան,

- 6-րդ դասարանների 71 (յոթանասունմեկ) սովորողներից 71 (յոթանասունմեկ) սովորողներին փոխադրել 7-րդ դասարան,
- 7-րդ դասարանների 63 (վաթսուներեք) սովորողներից 63 (վաթսուներեք) սովորողներին փոխադրել 8-րդ դասարան,
- 8-րդ դասարանների 83 (ութսուներեք) սովորողներից 83 (ութսուներեք) սովորողներին փոխադրել 9-րդ դասարան։

2. 1-4-րդ դասարանների սովորողների բնութագրման «Ա» մակարդակում նվազագույնը 70% և «Բ» մակարդակում առավելագույնը 30% բնութագրված սովորողներին, 5-8-րդ դասարանների ուսումնական բոլոր առարկաներից ունեն 9-10 միավոր գնահատված սովորողներին պարգևատրել ՀՀ ԿԳՄՍ նախարարության գովասանագրով (կցվում է գերազանցիկների ցանկը)։

Լսեցին 3. 9-րդ դասարանի սովորողներին ավարտական քննություններին մասնակցելու թույլտվության մասին հարցը :

(զեկուցողներ՝ ՄՄ նախագահներ, դասղեկներ)

Զեկուցողները նշեցին, որ 9-րդ դասարանների սովորողները, բացառությամբ 9-րդ «Բ» դասարանի սովորող Ալեքս Սահակյանի և 9-րդ «Գ» դասարանի սովորողներ Էդիկ Ստեփանյանի և Արթուր Ալումյանի, որոնք ծնողների դիմումի համաձայն ազատվել են ավարտական քննություններից, հիմք ընդունելով հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգի 18-րդ կետը, պատրաստ են մասնակցել ավարտական քննություններին։ 9-րդ «Ա», 9-րդ «Բ» և 9-րդ «Գ» դասարանների 64 (վաթսունչորս) սովորողները, հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգի պահանջներին համաձայն, ուսումնական առարկաներից ունեն 4-10 միավոր գնահատականներ։

Արտահայտվեցին՝ Ա. Դաջունց, Մ. Պետրոսյան, Մ. Դանիելյան, Ա. Աբգարյան

Արտահայտվողները նշեցին, որ վերջին մեկ ամսվա ընթացքում իրականացված դասալսումների և դիտարկումների արդյունքներով կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ 9-րդ դասարաններում կազմակերպված քննական առարկաների կրկնության ժամերը նպատակային և արդյունավետ են եղել։ Կրկնության գործընթացը հնարավորություն է տվել սովորողներին ամբողջությամբ վերանայել և ամրապնդել քննական առարկաների նյութը, ինչն էապես նպաստել է նրանց պատրաստվածության մակարդակի բարձրացմանը։

Որոշեցին՝ Հիմք ընդունելով հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգը՝ 9-րդ դասարանների բոլոր ուսումնական առարկաներից տարեկան 4-10 միավոր գնահատված 64 (վաթսունչորս) սովորողներից 61 (վաթսունմեկ) սովորողներին թույլատրել մասնակցել ավարտական քննություններին (բացառությամբ՝ 9-րդ «Բ» դասարանի սովորող Ալեքս Սահակյանի և 9-րդ «Գ» դասարանի սովորողներ Էդիկ Ստեփանյանի և Արթուր Ալումյանի)՝ հիմք ընդունելով ծնողների դիմումները, ինչպես նաև վերոնշյալ կարգի պահանջները։

Լսեցին 4. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) մայիս ամսվա ընթացքում իրականացված աշխատանքների մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցող՝ Արմիդա Գևորգյանը, ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանով (ՈՒԴԱՏՊ) մայիս ամսվա ընթացքում իրականացված աշխատանքների ընթացքն ու արդյունքները։

Զեկուցողը նշեց, որ հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են տարեկան պլանով նախատեսված ուսումնադաստիարակչական, կրթամշակութային, հայրենասիրական, ճանաչողական և դաստիարակչական բազմաբնույթ միջոցառումներ, որոնք կազմակերպվել են սահմանված ժամկետներում և ապահովել են սովորողների ակտիվ մասնակցությունը։

Արմիդա Գևորգյանը կարևորեց, որ իրականացված աշխատանքները նպաստել են սովորողների հետաքրքրությունների բացահայտմանը և զարգացմանը, ստեղծագործական ու քննադատական մտածողության ձևավորմանը, նախաձեռնողականության, համագործակցային կարողությունների, պատասխանատվության և քաղաքացիական արժեքների ամրապնդմանը։ Նա ընդգծեց, որ կազմակերպված միջոցառումներն ու նախագծային աշխատանքները նպաստել են նաև սովորողների ազատ ժամանակի արդյունավետ կազմակերպմանը, նրանց գեղագիտական, բարոյական և հայրենասիրական դաստիարակությանը։

Զեկուցողը ներկայացրեց նաև ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացման ընթացքում արձանագրված ձեռքբերումներն ու առկա խնդիրները՝ նշելով, որ դրանք հիմնականում կապված են առանձին միջոցառումների կազմակերպչական որոշ հարցերի, սովորողների համաչափ ներգրավվածության և աշխատանքների առավել համակարգված պլանավորման անհրաժեշտության հետ։ Միաժամանակ ընդգծվեց, որ ուսումնական տարվա ընթացքում մանկավարժական անձնակազմի հետևողական և պատասխանատու աշխատանքի շնորհիվ նախատեսված միջոցառումների գերակշիռ մասը իրականացվել է արդյունավետ և նպատակային։

Ամփոփելով՝ Արմիդա Գևորգյանը նշեց, որ ընդհանուր առմամբ մայիս ամսվա ընթացքում իրականացված ուսումնադաստիարակչական աշխատանքները կարելի է գնահատել գոհացուցիչ, քանի որ դրանք համապատասխանել են տարեկան պլանով սահմանված նպատակներին և խնդիրներին, նպաստել են դպրոցի կրթադաստիարակչական միջավայրի հարստացմանն ու սովորողների բազմակողմանի զարգացմանը։

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյան, Ա. Առստամյան, դասղեկներ, դասվարներ

Արտահայտվողները նշեցին, որ տարվա ընթացքում կազմակերպվել են տարաբնույթ միջոցառումներ, որոնց շնորհիվ ակտիվացել է դպրոցի մշակութային կյանքը, աշխուժացել ներդպրոցական առօրյան, սովորողների մոտ զարգացել է ստեղծագործ միտքը: Պատշաճ կերպով կատարվել են դասվարի, դասղեկի ժամերը, հերթապահությունը: Արտադասարանական խմբակների գործունեությունը եղել է նպատակային: 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում եղել են նաև բացթողումներ, որոնք կշտկվեն ուսուցիչների հետևողական և համառ աշխատանքի արդյունքում:

1-9-րդ դասարանների դասվարներն ու դասղեկները ներկայացրին իրենց դասարանների առաջադիմությունը, որակը, միջին որակական գնահատականները, առաջին կիսամյակի տվյալով հարվածային և գերազանցիկ սովորողների թիվը: Նշեցին, որ 5-9-րդ դասարանների սովորողների գնահատման խնդիրները մեծապես կապված են սովորողների՝ բացառապես միայն ամփոփումների ժամերին գնահատման հետ: Այս հանգամանքը առավել պարտավորեցնում է ուսուցիչներին՝ ձեռնարկել կրթության որակի

բարձրացմանն ուղղված քայլեր, որոնց արդյունքում սովորողների մոտ կմեծանա պատասխանատվության զգացումը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈւԴԱՏՊ) մայիս ամսվա ընթացքում իրականացված աշխատանքների մասին հարցի ինֆորմացիան:

Լսեցին 5. «Անվտանգ և ապահով կրթություն» տարվա ամփոփման հարցը:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Արմիդա Գևորգյանը ներկայացրեց «Անվտանգ և ապահով կրթություն» տարվա շրջանակում Գորիսի Յուրի Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցում իրականացված աշխատանքների ամփոփումը՝ նշելով, որ 2025–2026 ուսումնական տարվա ընթացքում դպրոցում հետևողական և նպատակային աշխատանքներ են տարվել անվտանգ, ներառական և բարենպաստ կրթական միջավայրի ձևավորման և պահպանման ուղղությամբ:

Զեկուցողը նշեց, որ ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանին համապատասխան տարվա ընթացքում իրականացվել են բազմաբնույթ կրթադաստիարակչական, իրազեկման և կանխարգելիչ միջոցառումներ: Կազմակերպվել են թեմատիկ դասղեկական ժամեր, բաց դասեր, քննարկումներ, հանդիպումներ, սեմինարներ, գործնական վարժանքներ և այլ նախաձեռնություններ, որոնք ուղղված են եղել սովորողների անվտանգության մշակույթի ձևավորմանը, արտակարգ իրավիճակներում ճիշտ վարքագծի հմտությունների զարգացմանը, բուլինգի և բռնության կանխարգելմանը, կիբեռանվտանգության կանոնների պահպանմանը, առողջ և անվտանգ ապրելակերպի խթանմանը, ինչպես նաև երեխաների իրավունքների պաշտպանության և փոխադարձ հարգանքի մթնոլորտի ամրապնդմանը:

Արմիդա Գևորգյանը կարևորեց, որ տարվա ընթացքում իրականացված աշխատանքներն իրականացվել են դպրոցի տնօրինության, մանկավարժական անձնակազմի, դասղեկների, աշակերտական խորհրդի, ծնողական խորհրդի, Երեխաների պաշտպանության խմբի, ինչպես նաև համագործակցող պետական և համայնքային կառույցների ակտիվ մասնակցությամբ: Արդյունքում ձևավորվել է առավել անվտանգ, վստահելի և համագործակցային կրթական միջավայր, որտեղ յուրաքանչյուր սովորող հնարավորություն է ունեցել դրսևորելու իր կարողությունները և մասնակցելու կրթադաստիարակչական գործընթացներին:

Զեկուցողն ընդգծեց, որ առանձնահատուկ նշանակություն է ունեցել սովորողների նախաձեռնողական մասնակցությունը: Նրանք ոչ միայն ներգրավվել են իրականացված միջոցառումներին, այլև հանդես են եկել սեփական գաղափարներով և նախաձեռնություններով՝ պատրաստելով տեղեկատվական նյութեր, ներկայացումներ, տեսանյութեր, կազմակերպելով քննարկումներ և մասնակցելով իրազեկման աշխատանքներին: Այդ ամենը նպաստել է սովորողների քաղաքացիական գիտակցության, պատասխանատվության, համագործակցային և առաջնորդական կարողությունների զարգացմանը:

Նշվեց, որ ուսումնական տարվա ավարտին կազմակերպվել է «Անվտանգ և ապահով կրթական միջավայր» տարվա ամփոփիչ միջոցառումը, որի ընթացքում ներկայացվել են տարվա ընթացքում իրականացված աշխատանքներն ու ձեռք բերված արդյունքները: Միջոցառման շրջանակում ներկայացվել է նաև Աշակերտական խորհրդի նախաձեռնությամբ մշակված «Իմ անվտանգ դպրոցի ուղեցույցը» տեղեկատվական գրքույկը, որը նպատակ ունի նպաստելու սովորողների իրազեկվածության բարձրացմանը և դպրոցում անվտանգության մշակույթի շարունակական ամրապնդմանը:

Ամփոփելով՝ Արմիդա Գևորգյանը նշեց, որ «Անվտանգ և ապահով կրթություն» տարվա շրջանակում իրականացված աշխատանքները եղել են համակարգված,

նպատակային և արդյունավետ: Դրանք նպաստել են սովորողների անվտանգության վերաբերյալ գիտելիքների և գործնական հմտությունների զարգացմանը, փոխադարձ հարգանքի և վստահության վրա հիմնված կրթական միջավայրի ձևավորմանը, ինչպես նաև դպրոց–ընտանիք–համայնք համագործակցության ամրապնդմանը:

Զեկուցողը եզրափակեց, որ տարվա ընթացքում իրականացված աշխատանքներն ընդհանուր առմամբ կարելի է գնահատել բավարար, քանի որ դրանք ծառայել են իրենց նպատակին և էական ներդրում են ունեցել դպրոցի անվտանգ և ապահով կրթական միջավայրի շարունակական զարգացման գործում: Միաժամանակ ընդգծվեց, որ անվտանգության մշակույթի ձևավորումը շարունակական գործընթաց է, ուստի անհրաժեշտ է հաջորդ ուսումնական տարում ևս պահպանել և զարգացնել ձեռք բերված դրական փորձը՝ ընդլայնելով կանխարգելիչ, իրազեկման և համագործակցային նախաձեռնությունները:

Արտահայտվեցին՝ Մ՛Խ անդամները

Մանկավարժական խորհրդի անդամներն իրենց ելույթներում բարձր գնահատեցին «Անվտանգ և ապահով կրթություն» տարվա շրջանակում դպրոցում իրականացված հետևողական և համակարգված աշխատանքները՝ ընդգծելով, որ դրանք նպաստել են սովորողների անվտանգության մշակույթի ձևավորմանը, պատասխանատու վարքագծի զարգացմանը և կրթական գործընթացի առավել անվտանգ ու բարենպաստ կազմակերպմանը:

Արտահայտվողները կարևորեցին թեմատիկ դասղեկական ժամերի, իրազեկման միջոցառումների, գործնական վարժանքների, հանդիպումների և համագործակցային ծրագրերի իրականացումը՝ նշելով, որ դրանք նպաստել են սովորողների գիտելիքների հարստացմանը, գործնական հմտությունների ձևավորմանը և արտակարգ իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու կարողությունների զարգացմանը:

Նշվեց նաև, որ արդյունավետ է եղել դպրոցի տնօրինության, մանկավարժական անձնակազմի, աշակերտական և ծնողական խորհուրդների, ինչպես նաև գործընկեր կառույցների համագործակցությունը, որի շնորհիվ հնարավոր է եղել ձևավորել փոխադարձ հարգանքի, վստահության և պատասխանատվության վրա հիմնված կրթական միջավայր:

Ելույթ ունեցողների կողմից հատկապես արժևորվեց սովորողների ակտիվ մասնակցությունն ու նախաձեռնողականությունը, այդ թվում՝ ամփոփիչ միջոցառման կազմակերպումը և «Իմ անվտանգ դպրոցի ուղեցույցը» գրքույկի մշակումը, որոնք վկայում են սովորողների բարձր ներգրավվածության և անվտանգության մշակույթի ձևավորման գործում նրանց պատասխանատու վերաբերմունքի մասին:

Արտահայտվողներն առաջարկեցին 2026–2027 ուսումնական տարում ևս շարունակել անվտանգ և ապահով կրթական միջավայրի ձևավորմանն ուղղված աշխատանքները, ընդլայնել կանխարգելիչ և իրազեկման միջոցառումները, ինչպես նաև ամրապնդել դպրոց–ընտանիք–համայնք համագործակցությունը՝ ապահովելով անվտանգության մշակույթի շարունակական զարգացումը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն «Անվտանգ և ապահով կրթություն» տարվա ամփոփման հարցի մասին ինֆորմացիան:

Խորհրդի նախագահ՝ _____ Ս. Ավանեսյան

Քարտուղար՝ _____ Լ. Բաղդասարյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 11

«29» հունիսի 2026թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին Մանկավարժական խորհրդի 56 անդամները: Ներկա չէր Սոնա Հարությունյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
2. 2025-2026 ուսումնական տարվա 9-րդ դասարանների ավարտական քննությունների արդյունքները, 9-րդ դասարանների շրջանավարտներին հասարակ և գերազանցության նշումով վկայականներ տալու մասին:
(զեկուցողներ՝ Ս. Ավանեսյան, դասվարներ, դասղեկներ)
3. Մանկավարժական խորհրդի անդամների հաշվետվությունների ներկայացում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան, ՄՄ նախագահներ)
4. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված արտադասարանական խմբակների կատարողականների քննարկում:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան, խմբավարներ)
5. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված դասալսումների ամփոփում:
(զեկուցող՝ Ա. Առստամյան, ՄՄ նախագահներ)
6. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված երկարօրյա ուսուցման խմբերի հաշվետվությունների քննարկում:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)
7. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված ԱՈւՊ-ներով և դիտարկման թերթիկներով իրականացվաշ աշխատանքների ամփոփում:
(զեկուցող՝ Ա. Ծատրյան)
8. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված նախագծային աշխատանքների հաշվետվությունների քննարկում:
(զեկուցողներ՝ Ա. Առստամյան, ՄՄ նախագահներ,
նախագծային աշխատանքների ղեկավարներ)
9. Գորիսի Յուրի Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի 2026-2031թթ զարգացման ծրագրի քննարկում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
10. 2025-2026 ուսումնական տարվա ՈւԴԱՏՊ իրականացման արդյունքները:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան, Ա. Առստամյան,
Ա. Գևորգյան, ՄՄ նախագահներ)
11. Մեթոդական միավորումների անվանումների փոփոխություն:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան, ՄՄ նախագահներ)
12. Օտար լեզուների, «ԹԳՀԳ» և «Հայոց լեզու» առարկաների դասաժամերի ընթացքում դասարանների խմբերի բաժանում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան, ՄՄ նախագահներ)
13. Ցածր խտությամբ դասարանների կազմավորում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
14. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված դիտարկումների ամփոփում:
(զեկուցողներ՝ Ա. Գևորգյան, Ա. Առստամյան)
15. 2026-2027 ուսումնական տարվա ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխման, դասաժամերի, դպրոցական բաղադրիչի ժամաքանակի մասին:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
16. 2026-2027 ուսումնական տարվանից սկսած 5-րդ դասարանի առաջին կիսամյակի ընթացքում և 5-9-րդ դասարաններում որոշ առարկաներից միավորային գնահատում չիրականացնելու մասին:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

17. 2025-2026 ուսումնական տարվանից սկսած «Առողջ ապրելակերպ» և «Անվտանգ կենսագործունեություն» առարկաների ուսումնասիրման մասին:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
18. Մի շարք կարգերում իրականացված փոփոխությունների մասին:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
19. «Տարվա սովորող» մրցույթի ամփոփում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Լսեցին 1. Օրակարգի հաստատման մասին հարցը
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝
Որոշեցին՝ Հաստատել մանկավարժական խորհրդի նիստի օրակարգը:

Լսեցին 2. 2025-2026 ուսումնական տարվա 9-րդ դասարանների ավարտական քննությունների արդյունքները, 9-րդ դասարանների շրջանավարտներին հասարակ և գերազանցության նշումով վկայականներ տալու մասին հարցը:
(զեկուցողներ՝ Ս. Ավանեսյան, դասվարներ, դասղեկներ)

Զեկուցողները ներկայացրին 2025–2026 ուսումնական տարվա 9-րդ դասարանների ավարտական քննությունների արդյունքների վերլուծությունը՝ անդրադառնալով յուրաքանչյուր առարկայի ցուցանիշներին, սովորողների առաջադիմության մակարդակին, բարձր և բավարար արդյունքներ արձանագրած սովորողների թվին, ինչպես նաև քննությունների ընթացքում արձանագրված դժվարություններին և հետագա անելիքներին:

Նշվեց, որ ավարտական քննություններն անցկացվել են Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից սահմանված կարգի, ընթացակարգերի և ժամանակացույցի համաձայն՝ ապահովելով թափանցիկ, կազմակերպված և արդար գործընթաց:

Զեկուցողները տեղեկացրին, որ 2025–2026 ուսումնական տարվա ընթացքում 9-րդ դասարանների բոլոր սովորողները բոլոր ուսումնական առարկաներից ունեցել են տարեկան դրական՝ 4-ից 10 միավոր գնահատականներ: Ավարտական քննությունների արդյունքներով 9-րդ դասարանների բոլոր սովորողները, բացառությամբ ԿԱՊԿՈՒՀ սովորողների, ստացել են 8-ից 20 միավոր գնահատականներ, ինչը վկայում է ուսումնական ծրագրերի հիմնական պահանջների բավարար յուրացման մասին:

Նշվեց, որ ընդհանուր առմամբ ավարտական քննությունների արդյունքները գնահատվում են գոհացուցիչ. սովորողների մեծամասնությունը ցուցաբերել է բավարար գիտելիքներ և կարողություններ, հաջողությամբ հաղթահարել է սահմանված շեմը, իսկ առանձին դեպքերում արձանագրվել են նաև բարձր արդյունքներ:

Զեկուցողները հատուկ ընդգծեցին, որ 9-րդ դասարանների 16 սովորողներ բոլոր ուսումնական առարկաներից ստացել են տարեկան 9–10 միավոր գնահատականներ, իսկ ավարտական քննությունների արդյունքներով՝ 18–20 միավոր, ինչը վկայում է նրանց բարձր առաջադիմության, կայուն գիտելիքների, աշխատասիրության և նպատակասլացության մասին:

Միաժամանակ անդրադարձ կատարվեց առկա խնդիրներին, մասնավորապես՝ էսսեագրության, վերլուծական և ստեղծագործական մտածողության զարգացման հետ կապված դժվարություններին: Զեկուցողները կարևորեցին նպատակային և հետևողական աշխատանքի իրականացումը ոչ միայն առարկայական գիտելիքների ամրապնդման, այլև սովորողների քննադատական մտածողության, ինքնուրույն դատողությունների ձևավորման, գրավոր խոսքի մշակույթի և ստեղծագործական կարողությունների զարգացման ուղղությամբ:

Արդյունքների հետագա բարելավման նպատակով առաջարկվեց առավել մեծ ուշադրություն դարձնել ավարտական քննությունների ձևաչափի առանձնահատկություններին, սովորողների գիտակցական մակարդակի բարձրացմանը, ինչպես նաև ձևավորող գնահատման և գործնական առաջադրանքների առավել արդյունավետ կիրառմանը ուսումնական գործընթացում:

Արտահայտվեցին՝ Մ. Պետրոսյան, Ա. Դաջունց, Մ. Դանիելյան, Ա. Առստամյան

Արտահայտվողները ընդգծեցին, որ 2025-2026 ուսումնական տարվա 9-րդ դասարանների ավարտական քննությունների արդյունքները կարելի է համարել գոհացուցիչ և խոսուն ցուցիչ այն հանգամանքի, որ ընթացիկ ուսումնական տարին 9-րդ դասարանների աշակերտների համար ընթացել է արդյունավետ և հաջողված: Նրանք շեշտեցին, որ քննությունների ընթացքում ստացված գնահատականները, ինչպես նաև աշակերտների ցուցաբերած գիտելիքների մակարդակը վկայում են ոչ միայն աշակերտների հետևողական աշխատանքի, այլ նաև ուսուցիչների նպատակասլաց, հետևողական և մասնագիտական մոտեցման մասին:

Բոլոր այս արդյունքները համոզիչ ապացույց են, որ դպրոցում իրականացվող կրթական գործընթացը կազմակերպվել է համապատասխան պետական չափորոշիչների պահանջներին, և աշակերտները կարողացել են հաջողությամբ հաղթահարել կարևոր փուլը:

Արաքսյա Առստամյանը նշեց, որ 9-րդ «Բ» դասարանի սովորող՝ Ալեքս Լավրենտի Սահակյանը և 9-րդ «Գ» դասարանի սովորողներ՝ Էդիկ Գագիկի Ստեփանյանը և Արթուր Էրիկի Ալումյանը ծնողների դիմումի համաձայն, ազատվել են 9-րդ դասարանների ավարտական քննություններից, ինչի համար հիմք է հանդիսացել հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգի 9-րդ կետը, որտեղ սահմանվում է, որ ինտելեկտուալ (մտավոր) զարգացման խանգարմամբ պայմանավորված՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները, ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) համաձայնությամբ, կարող են չմասնակցել գիտելիքների ստուգմանը (4-րդ դասարան), ավարտական (9-րդ դասարան) և պետական ավարտական (12րդ դասարան) քննություններին: Այդ դեպքում նրանց տրվում է պետական նմուշի ավարտական փաստաթուղթ (հիմնական կրթության վկայական և միջնակարգ կրթության ատեստատ)՝ առանց քննական գնահատականների:

Որոշեցին՝

1. 2025-2026 ուսումնական տարվա 9-րդ դասարանների 64 (վաթսունչորս) սովորողներին, որոնք ուսումնական բոլոր առարկաներից ունեն 4-10 և ավարտական բոլոր քննություններից 8-20 միավոր գնահատված գնահատականներ, տալ հիմնական կրթության սովորական վկայականներ (կցվում է):
2. 2025-2026 ուսումնական տարվա 9-րդ դասարանների ներքոնշյալ 16 (տասնվեց) սովորողներին, որոնք 7-9-րդ դասարանների ուսումնական պլանով նախատեսված բոլոր առարկաներից ունեն տարեկան 9-10 և քննական առարկաներից 18-20 միավոր գնահատված գնահատականներ, տալ գերազանցության նշումով հիմնական կրթության վկայականներ.

   9-րդ «Ա» դասարան

   1. Ավագյան Մանե Գարիկի
   2. Արզումանյան Արման Արայի
   3. Բակունց Լիա Նարեկի
   4. Բաղդագյուլյան Ինեսա Կարոյի
   5. Ջեյնալյան Նոյ Կարենի
   6. Հովսեփյան Եվա Մենուայի

7. Մարտիրոսյան Մարի Աշոտի
8. Միխայելյան Լիլիա Արթուրի
9. Մկրտչյան Գոռ Կարենի
10. Մուսախանյան Նարեկ Վաչեի

9-րդ «Բ» դասարան

1. Առստամյան Էլեն Գևորգի
2. Հակոբյան Հասմիկ Սպարտակի

9-րդ «Գ» դասարան

1. Ավանեսյան Ալեքս Միկա Սերգեյի
2. Կարապետյան Մարի Զոհրաբի
3. Մալինցյան Լիլի Հարութի
4. Մինասյան Անի Արտակի

Լսեցին 3. Մանկավարժական խորհրդի անդամների հաշվետվությունների ներկայացման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան, ՄՄ նախագահներ)

Զեկուցողները նշեցին, որ գործող կարգի համաձայն՝ մանկավարժական խորհրդի բոլոր անդամները պարտավոր են ներկայացնել 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացրած աշխատանքների վերաբերյալ ամփոփ հաշվետվություններ: Նրանք ընդգծեցին, որ ներկայացվող հաշվետվությունները պետք է լինեն հստակ կառուցվածքային, փաստարկված և արտացոլեն ուսումնական տարվա ընթացքում կատարված աշխատանքների ամբողջական պատկերը:

Մասնավորապես, հաշվետվություններում պետք է ներառվեն՝

- իրականացված ծրագրերն ու նախաձեռնությունները,
- արձանագրված դրական արդյունքները և ձեռքբերումները,
- առաջացած դժվարություններն ու խնդիրները,
- ինչպես նաև դրանց հնարավոր լուծման ուղիների և բարելավման առաջարկությունների մասին տեղեկատվությունը:

Զեկուցող Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ մանկավարժական խորհրդի բոլոր անդամները էլեկտրոնային տարբերակով ներկայացրել են իրենց 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում գործունեության և աշխատանքների իրականացման հաշվետվությունները, որոշներում առկա են եղել բացթողումներ, դրանք հետ են ուղարկվել տվյալ աշխատակիցներին, որից հետո ուղարկվել են խմբագրված տարբերակները, բացառությամբ Արաքսյա Առստամյանի, որը դեռ հաշվետվությունը չի ուղարկել: Զեկուցողը հավելեց, որ ըստ «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 20-րդ կետի, ինչպես նաև դպրոցի կանոնադրության դպրոցի տնօրենը մանկավարժական խորհրդի ներկայացմամբ՝ հաստատում է դպրոցի տնօրենի տեղակալների, դասղեկների, առարկայական մեթոդական միավորումների նախագահների ու մանկավարժների հաշվետվությունները, հավելելով, որ նման պահանջ է ամրագրված նաև դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանում:

Արտահայտվեցին՝ Մանկավարժական խորհրդի անդամներ

Արտահայտվողները նշեցին, որ հիմք ընդունելով 2025-2026 ուսումնական տարվա աշխատանքային պլաններն ու կատարված աշխատանքները՝ կազմել են համապատասխան տարեկան հաշվետվությունները:

Բոլոր ուսումնական ստորաբաժանումների ղեկավարները, ուսուցչի օգնականները և հատուկ մանկավարը համառոտ ներկայացրին իրենց հաշվետվությունները, որոնք քննարկման ընթացքում արժանացան հակիրճ, բայց առավելագույն հստակության և օգտակարության: Բոլոր ներկայացնողները նշեցին, որ իրենց հաշվետվությունները էլեկտրոնային տարբերակով ուղարկվել և հաստատվել են:

Հաշվետվությունների քննարկումը նպաստեց կատարված աշխատանքների լիարժեք գնահատմանը, ինչպես նաև հնարավորություն ստեղծեց արձանագրելու առաջիկա անելիքները և լուծելու բացթողումները։

Որոշեցին՝ Հավանության արժանացնել մանկավարժական խորհրդի անդամների՝ ԿԱԴԱՀ-ի, դասվարների, դասղեկների, ուսուցիչների, ուսուցչի օգնականների, հոգեբանի, հատուկ մանկավարժի, գրադարանավարի, ԷԿԴԱՄ-ների, մեթոդական միավորման նախագահների, լաբորանտների կողմից ներկայացված 2025-2026 ուսումնական տարվա հաշվետվությունները և ներկայացնել տնօրենին՝ հաստատման։

Լսեցին 4. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված արտադասարանական խմբակների կատարողականների քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Գևորգյան, խմբավարներ)

Արմիդա Գևորգյանը կարևորեց 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում դպրոցում իրականացված արտադասարանական խմբակների աշխատանքը՝ նշելով, որ նման նախաձեռնությունները էական նշանակություն ունեն սովորողների հետաքրքրությունների զարգացման, ստեղծագործական մտածողության խթանման և ազատ ժամանակի արդյունավետ կազմակերպման առումով։

Միաժամանակ, Գևորգյանը նշեց, որ ուսումնական տարվա ընթացքում արձանագրվել են նաև որոշակի թերություններ. եղել են դեպքեր, երբ խմբակները չեն անցկացվել սահմանված ժամանակացույցի համաձայն, ինչն ազդել է դրանց ամբողջական արդյունքի վրա։ Նա անդրադարձավ նաև խմբակների մատենավարությանը՝ կարևորելով խմբակների աշխատանքային փաստաթղթերի ժամանակին և ճիշտ վարումը։ Ինչպես ընթացքի, այնպես էլ տարվա ամփոփիչ ստուգումների ժամանակ արձանագրվել են բացթողումներ, որոնք անհրաժեշտ է վերացնել հաջորդ տարում։

Խմբավարները ներկայացրին 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրենց կողմից իրականացված աշխատանքները, խոսեցին նաև առաջացած դժվարությունների, ձեռքբերումների և առաջիկա ծրագրերի մասին։ Նշվեց, որ անհրաժեշտ է առավել հետևողական մոտեցում ցուցաբերել ինչպես խմբակների իրականացման, այնպես էլ փաստաթղթային կարգավորման գործընթացում՝ ապահովելու խմբակների նպատակային և արդյունավետ գործունեությունը։

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը

Սերգեյ Ավանեսյանը կարևորեց արտադասարանական խմբակների գործունեության դրական արդյունքները՝ ընդգծելով, որ դրանք էական ազդեցություն են ունենում աշակերտների բազմակողմանի զարգացման վրա։ Միաժամանակ նա շեշտեց, որ անհրաժեշտ է խորությամբ վերլուծել յուրաքանչյուր խմբակի գործունեությունը, արձանագրել առկա խնդիրները և ապահովել, որ դրանք հաջորդ ուսումնական տարում չկրկնվեն։

Նա նշեց, որ ընդհանուր առմամբ արդյունքները գոհացուցիչ են, սակայն առկա են նաև խմբակներ, որոնք սահմանված ժամկետներում չեն իրականացվել, ինչը կապված էր դպրոցում ուսումնական գործընթացի երկհերթ կազմակերպման հետ։ Նա նաև հավելեց, որ որոշ խմբակներում առանձնանում է սովորողների մասնակցության և հետաքրքրվածության բարձր մակարդակ, ինչը խոսում է առաջիկա ուսումնական տարում խթանելու և ընդլայնելու անհրաժեշտության մասին։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված արտադասարանական խմբակների կատարողականների մասին զեկուցումը։

Լսեցին 5. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված դասալսումների ամփոփման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Առստամյան, ՄՄ նախագահներ)

Զեկուցողները ներկայացրին 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված դասալսումների արդյունքները՝ ընդգծելով դրանց կարևորությունը որպես ուսումնական գործընթացի շարունակական բարելավման գործիք: Նրանք նշեցին, որ դասալսումների ընթացքում դիտարկված դասերը, նույնիսկ լավագույն պլանավորման պարագայում, անխուսափելիորեն առաջացնում են խնդիրներ և հարցեր, որոնք պահանջում են օպերատիվ վերլուծություն և համապատասխան լուծումներ:

Ամփոփելով դասալսումների արդյունքները՝ արձանագրվեց, որ ուսուցիչները կարողացել են առաջընթաց արձանագրել մի շարք կարևոր ուղղություններով.

- զարգացել է քննադատական մտածողությունը,
- բարձրացել են համագործակցային հմտությունները,
- ձևավորվել է սովորողների ինքնավստահությունը,
- ապահովվել է սովորողների ակտիվ ներգրավվածություն,
- սովորողների մոտ նկատվել է պատասխանատվության զգացման աճ:

Զեկուցողները կարևորեցին նաև հաջողված դասերը՝ որպես դրական օրինակներ, որոնք կարող են տարածվել և կիրառվել ավելի լայն շրջանակում: Նրանք շնորհակալություն հայտնեցին դասալսումներին ակտիվորեն մասնակցած անձանց՝ տնօրեն Սերգեյ Ավանեսյանին, ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյանին, մեթոդմիավորումների անդամներին: Նշվեց, որ նրանց ակտիվ մասնակցությունն ու դրա արդյունքում ծավալված կառուցողական քննարկումները զգալիորեն նպաստել են ուսուցիչների մասնագիտական աճին և ուսումնական գործընթացի որակի բարելավմանը:

Արտահայտվեցին՝ Մանկավարժական խորհրդի անդամները

Մանկավարժական խորհրդի անդամները կարևորեցին դասալսումների կազմակերպման և անցկացման անհրաժեշտությունը՝ նշելով, որ դրանք ոչ միայն վերահսկողական, այլ նաև զարգացնող և համագործակցային գործընթաց են: Արտահայտվողներն ընդգծեցին, որ դասալսումների ընթացքում ուսուցիչը հնարավորություն է ստանում դիտարկել, փորձարկել և ուսումնասիրել տարբեր մեթոդներ ու նորարարական մոտեցումներ, որոնք կարող է կիրառել իր դասավանդման պրակտիկայում: Այս գործընթացը նպաստում է ուսուցչի մասնագիտական ինքնազարգացմանը և շարունակական կատարելագործմանը: Նշվեց, որ դասալսումները պետք է դիտարկել որպես համագործակցության և փորձի փոխանակման արդյունավետ հարթակ, որտեղ ուսուցիչները սովորում են միմյանցից, համադրում փորձը և ձևավորում միասնական որակական չափանիշներ: Մանկավարժական խորհրդի անդամները շեշտեցին, որ անհրաժեշտ է դասալսումները կազմակերպել պարբերաբար, քանի որ յուրաքանչյուր նման գործընթաց օգնում է բացահայտել թե՛ դասավանդման ուժեղ կողմերը, թե՛ առկա բացթողումները: Սա հնարավորություն է տալիս ուղղորդել ուսուցչին՝ բարձրացնելով դասավանդման որակը և ուսուցման արդյունավետությունը: Հատուկ կարևորվեց փորձառու ուսուցիչների դասալսումը, որը, որպես ուղեցույց և լավ փորձի ներկայացում, կարող է օգտակար լինել երիտասարդ և սկսնակ ուսուցիչների համար՝ ապահովելով նրանց ճիշտ մասնագիտական կողմնորոշում և կառուցողական հետադարձ կապ: Արտահայտվողները կարևորեցին նաև դասալսումների արդյունքում կազմակերպվող համատեղ քննարկումները, որոնք նպաստում են դասերի արդյունավետության բարձրացմանը, թերությունների շտկմանը և կրթական գործընթացի շարունակական զարգացմանը: Նշվեց, որ դիտողություններն ու առաջարկությունները ներկայացվում են միայն կառուցողական նպատակով՝ ընդհանուր արդյունքների բարելավման համար:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված դասալսումների արդյունքների ամփոփման մասին զեկուցումը (կցվում է ամփոփագիրը):

Լսեցին 6. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված երկարօրյա ուսուցման խմբերի հաշվետվությունների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը նշեց, որ 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում՝ հոկտեմբերից դեկտեմբեր ամիսներին, կազմակերպվել է երկարօրյա ուսուցման խմբակ 2-4-րդ և 5-րդ, 7-րդ դասարանների սովորողների համար: Սովորողների ընդգրկումը երկարօրյա խմբերում իրականացվել է Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգի 16-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի հիման վրա: Ըստ սահմանված կարգի՝ 2-4-րդ, 5-րդ, 7-րդ դասարաններից ընդգրկվել են այն սովորողները, որոնք առաջադիմության բնութագրող գնահատման, ձևավորող և ամփոփիչ գնահատման հիման վրա, ինչպես նաև ուսուցիչների դիտարկման արդյունքում ցուցաբերել են ցածր արդյունքներ:

Զեկուցողը հավելեց, որ իր կողմից պարբերաբար իրականացվել են ընթացիկ դիտարկումներ, և արձանագրված աշխատանքների արդյունքները գնահատվում են գոհացուցիչ:

Բացի այդ, զեկուցողը ներկայացրեց նաև 2025-2026 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում՝ փետրվարից մայիս ամիսներին, իրականացված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն՝ ընդգծելով դասապրոցեսի պատշաճ կազմակերպման, արդյունավետ անցկացման և արդյունքների կարևորությունը: Կարևորվեց նաև երկարօրյա ուսուցման խմբերի ուսուցիչների կողմից ներկայացված հաշվետվությունների դերը, որոնց շնորհիվ ամփոփվեցին իրականացված աշխատանքներն ու արձանագրված արդյունքները ողջ ուսումնական տարվա ընթացքում:

Ներկայացվեց, որ ուսումնական տարվա ավարտին ԿԶՆԱԿ-ի կողմից իրականացվել է երկարօրյա խմբակի կազմակերպման և իրականացման գործընթացի վերահսկողություն, ուսումնասիրվել են կիրառվող փաստաթղթերը, հրամանները: Արդյունքները գոհացուցիչ էին, իրականացված աշխատանքները՝ ըստ չափորոշչային պահանջների (կցվում է 2025-2026 ուսումնական տարվա երկարօրյա ուսուցման կազմակերպման աշակերտների անվանացանկը (հոկտեմբեր-մայիս)):

Արտահայտվեցին՝ Երկարօրյա ուսուցման խմբերի ուսուցիչները

Երկարօրյա ուսուցման խմբերի ուսուցիչները մանրամասն ներկայացրին իրենց հաշվետվությունները՝ անդրադառնալով իրականացված աշխատանքներին, առաջացած խնդիրներին, արձանագրված ձեռքբերումներին և արդյունքներին: Նրանք խոսեցին կազմակերպչական, մեթոդական և բովանդակային մարտահրավերների մասին, որոնք առաջացել են գործընթացի ընթացքում, նշեցին դրանց հաղթահարման համար ձեռնարկված քայլերը: Միաժամանակ ուսուցիչները առանձնացրին նաև դրական կողմերը, ընդգծելով, որ երկարօրյա ուսուցման խմբակները նպաստել են հատկապես առաջադիմության խնդիրներ ունեցող աշակերտների անհատական մոտեցմամբ ուսումնառությանը, նրանց առաջադիմության բարելավմանը, ինքնավստահության ձևավորմանը և դպրոցական գործընթացում լիարժեք ինտեգրմանը: Ներկայացված հաշվետվությունները հնարավորություն տվեցին ամբողջական պատկերացում կազմել իրականացված աշխատանքի մասին, վերլուծել արդյունքները և նշել այն ուղղությունները, որոնցում անհրաժեշտ է կատարելագործել գործընթացը հաջորդ ուսումնական տարում:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված երկարօրյա ուսուցման խմբակների ուսուցիչների հաշվետվությունները և ներկայացնել տնօրենին՝ հաստատման (կցվում է էլեկտրոնային տարբերակով):

Լսեցին 7. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված ԱՈւՊ-ներով և դիտարկման թերթիկներով իրականացված աշխատանքների ամփոփման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում ԿԱՊԿՈՒՀ սովորողների անհատական ուսուցման պլանների (ԱՈՒՊ-ների) կազմման և համապատասխան դիտարկման թերթիկների լրացման գործընթացի կազմակերպման վերաբերյալ տեղեկատվությունը:

Նշվեց, որ ամբողջ աշխատանքն իրականացվել է հաստատված կարգի և պահանջների խիստ պահպանմամբ՝ ապահովելով անհրաժեշտ փաստաթղթերի ճշգրիտ, ամբողջական և ժամանակին լրացումը:

Զեկուցողը հատուկ ընդգծեց, որ ԱՈՒՊ-ների կազմման գործընթացում կարևոր դեր է խաղացել յուրաքանչյուր սովորողի անհատական կարիքների, ուսումնառության մակարդակի և զարգացման հնարավորությունների խորքային վերլուծությունը: Այս մոտեցումը թույլ է տվել ուսուցման կազմակերպումը առավելագույնս համադրել սովորողների կրթական կարիքներին և առանձնահատկություններին, ինչը նպաստել է ուսուցման արդյունավետության բարձրացմանը և ներառական կրթության որակի բարելավմանը:

Վերջում շեշտվեց, որ ԿԱՊԿՈՒՀ սովորողների ԱՈՒՊ-ների կազմման և դիտարկման գործընթացը շարունակվելու է նաև առաջիկա ուսումնական տարում՝ նպատակ ունենալով հետևողականորեն աջակցել յուրաքանչյուր աշակերտի անհատական զարգացմանը:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները կարևորեցին ԿԱՊԿՈՒՀ սովորողների անհատական ուսուցման պլանների (ԱՈՒՊ-ների) կազմման գործընթացը՝ նշելով, որ այն ստեղծում է իրական հնարավորություն յուրաքանչյուր սովորողի կարիքները ավելի խորությամբ ուսումնասիրելու և ուսուցման գործընթացը նրանց կարողություններին համապատասխանեցնելու համար: Նշվեց, որ ԱՈՒՊ-ների ճիշտ և նպատակային կազմումը կարող է էապես նպաստել սովորողների առաջադիմության բարելավմանը, նրանց ինքնավստահության ձևավորմանը և լիարժեք ներառմանը կրթական միջավայրում: Միաժամանակ շեշտվեց, որ այս գործընթացը չպետք է դիտարկվի որպես ձևականություն կամ պարտադիր ընթացակարգ, այլ պետք է ծառայի որպես իրական գործիք սովորողներին անհատական մոտեցում ցուցաբերելու, նրանց զարգացմանը և ուսուցման որակի բարձրացմանը նպաստելու համար:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում ԱՈՒՊ-ներով և դիտարկման թերթիկներով իրականացված աշխատանքների մասին տեղեկատվությունը:

Լսեցին 8. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված նախագծային աշխատանքների հաշվետվությունների քննարկման մասին հարցը:

(զեկուցողներ՝ Ա. Առստամյան, ՄՄ նախագահներ,
նախագծային աշխատանքների ղեկավարներ)

Մեթոդմիավորման նախագահները ներկայացրին մեթոդմիավորման անդամ ուսուցիչների կողմից 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված նախագծային աշխատանքների ամփոփ տեղեկությունը: Նշվեց, որ նախագծային ուսուցումը հնարավորություն է տալիս սովորողներին զարգացնել ստեղծագործական մտածողությունը, հետազոտական հմտությունները, համագործակցային կարողությունները, ներկայացման և ինքնուրույն աշխատանքի կարողությունները: 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացվել է 61 նախագծային աշխատանք: Ներկայացված նախագծերը եղել են բավականին հետաքրքիր, բազմաբովանդակ և

ուսուցողական՝ նպաստելով ինչպես տեսական գիտելիքների խորացմանը, այնպես էլ գործնական հմտությունների զարգացմանը:

Ջեկուցողն առանձնակի ուշադրություն հրավիրեց միջառարկայական նախագծերի վրա՝ ընդգծելով, որ այս ձևաչափով իրականացված աշխատանքները ոչ միայն առավել արդյունավետ էին, այլև բովանդակային առումով բազմակողմանի ու հետաքրքիր: Այս նախագծերը հնարավորություն են տվել աշակերտներին համադրել տարբեր առարկաների գիտելիքները, զարգացնել վերլուծական մտածողությունը և խթանել համագործակցային հմտությունները: Նշվեց, որ բավականին հետաքրքիր և կիրառելի են եղել նաև նախագծային աշխատանքների վերջնական պրոդուկտները, որոնք հաճախ արտահայտել են սովորողների ստեղծագործական մոտեցումն ու նորարարական մտածելակերպը:

2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում իրականացվել է 26 նախագծային աշխատանք, որից.

- 9 նախագծային աշխատանք իրականացվել է 7-րդ դասարաններում, որից 4-ը՝ ներառարկայական, 5-ը՝ միջառարկայական: 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում 7-րդ դասարաններում առաջին կիսամյակում նախագծային աշխատանքներ են իրականացվել «ԹԳՀԳ», «Քիմիա», «Տեխնոլոգիա», «Անգլերեն», «Գրականություն», «Մաթեմատիկա», «Կերպարվեստ», «Կենսաբանություն», «Հայաստանի պատմություն», «Աշխարհագրություն», «Ռուսաց լեզու» առարկաներից: Նախագծային աշխատանքները ղեկավարել են համապատասխան առարկաների ուսուցիչները:
- 9 նախագծային աշխատանք իրականացվել է 8-րդ դասարաններում, որից 3-ը՝ ներառարկայական, 6-ը՝ միջառարկայական: 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում 8-րդ դասարաններում առաջին կիսամյակում նախագծային աշխատանքներ են իրականացվել «ԹԳՀԳ», «Ռուսաց լեզու», «Անգլերեն», «Աշխարհագրություն», «Մաթեմատիկա», «Հայաստանի պատմություն», «Գրականություն», «Քիմիա», «Կենսաբանություն», «Ֆիզիկա» առարկաներից: Նախագծային աշխատանքները ղեկավարել են համապատասխան առարկաների ուսուցիչները:
- 8 նախագծային աշխատանք իրականացվել է 9-րդ դասարաններում, որից 2-ը՝ ներառարկայական, 6-ը՝ միջառարկայական: 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում 9-րդ դասարաններում առաջին կիսամյակում նախագծային աշխատանքներ են իրականացվել «Ֆրանսերեն», «ԹԳՀԳ», «Կենսաբանություն», «Անգլերեն», «Հայաստանի աշխարհագրություն», «Մաթեմատիկա», «Հայաստանի պատմություն», «Գրականություն», «Հայոց լեզու», առարկաներից: Նախագծային աշխատանքները ղեկավարել են համապատասխան առարկաների ուսուցիչները:

2025-2026 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ընթացքում իրականացվել է 35 նախագծային աշխատանք, որից.

- 9 նախագծային աշխատանք իրականացվել է 7-րդ դասարաններում, որից 4-ը՝ ներառարկայական, 5-ը՝ միջառարկայական: 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում 7-րդ դասարաններում երկրորդ կիսամյակում նախագծային աշխատանքներ են իրականացվել «ԹԳՀԳ», «Քիմիա», «Ֆրանսերեն», «Անգլերեն», «Գրականություն», «Մաթեմատիկա», «Երաժշտություն», «Կերպարվեստ», «Կենսաբանություն», «Հայաստանի պատմություն», «Աշխարհագրություն», «Ֆիզիկա», «Ռուսաց լեզու», «Ֆիզկուլտուրա» առարկաներից: Նախագծային աշխատանքները ղեկավարել են համապատասխան առարկաների ուսուցիչները:
- 15 նախագծային աշխատանք իրականացվել է 8-րդ դասարաններում, որից 2-ը՝ ներառարկայական, 13-ը՝ միջառարկայական: 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում 8-րդ դասարաններում երկրորդ կիսամյակում նախագծային աշխատանքներ են իրականացվել «Ֆրանսերեն», «ԹԳՀԳ»,

«Ֆիզկուլտուրա», «Կերպարվեստ», «Անգլերեն», «Աշխարհագրություն», «Մաթեմատիկա», «Հայաստանի պատմություն», «Գրականություն», «Արվեստ», «Կենսաբանություն», «Ֆիզիկա», «Տեխնոլոգիա», «Կենսաբանություն», «ՆՋՊ» առարկաներից: Նախագծային աշխատանքները ղեկավարել են համապատասխան առարկաների ուսուցիչները:

- 11 նախագծային աշխատանք իրականացվել է 9-րդ դասարաններում, որոնք բոլորն էլ եղել են միջառարկայական: 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում 9-րդ դասարաններում երկրորդ կիսամյակում նախագծային աշխատանքներ են իրականացվել «Ֆրանսերեն», «ԹԳՀԳ», «Կենսաբանություն», «Անգլերեն», «Հայաստանի աշխարհագրություն», «Համաշխարհային պատմություն», «Մաթեմատիկա», «Հայաստանի պատմություն», «Գրականություն», «Հայոց լեզու», «Քիմիա», «Ֆիզիկա», «Ֆիզկուլտուրա» առարկաներից: Նախագծային աշխատանքները ղեկավարել են համապատասխան առարկաների ուսուցիչները:

Նախագծային աշխատանքների ղեկավարները հանգամանալից ներկայացրին իրենց հաշվետվությունները, անդրադարձան իրականացված աշխատանքի մանրամասներին, առաջացած դժվարություններին և դրանց հաղթահարման եղանակներին: Քննարկումների արդյունքում վերհանվեցին մի շարք կարևոր հարցեր, որոնց լուծմանն անհրաժեշտ է մոտենալ համակարգված ձևով՝ առաջիկա ուսումնական տարում նախագծային աշխատանքի որակը շարունակաբար բարելավելու նպատակով:

Նախագծային աշխատանքների մասին ամփոփ ինֆորմացիան առկա է դպրոցի կայքում:

Արտահայտվեցին՝ Մանկավարժական խորհրդի անդամները

Մանկավարժական խորհրդի անդամները կարևորեցին նախագծային աշխատանքների կազմակերպման գործընթացը՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով դրա կազմակերպչական փուլերին: Նշվեց, որ հենց նախնական փուլում է ձևավորվում սովորողների հետաքրքրվածությունն ու ներգրավվածությունը, ինչպես նաև ի հայտ են գալիս նրանց կարողություններն ու համագործակցային հմտությունները:

Արտահայտվողները նաև ընդգծեցին ուսուցիչների դերի կարևորությունը նախագծային աշխատանքների հաջող իրականացման մեջ: Նշվեց, որ ուսուցիչները ոչ միայն ուղղորդում են սովորողներին, այլև ստեղծում են նպաստավոր միջավայր, որտեղ սովորողները կարող են ազատ արտահայտվել, համադրել իրենց գիտելիքներն ու ստեղծագործական հնարավորությունները:

Նախագծային աշխատանքների ղեկավարներն իրենց հաշվետվություններում առանձնակի կարևորեցին թեմաների ճիշտ ընտրության, ինչպես նաև սովորողների տարիքային առանձնահատկությունների և ֆիզիկական կարողությունների հաշվառման անհրաժեշտությունը: Նշվեց, որ ճիշտ ընտրված թեմաները հնարավորություն են տալիս սովորողներին ավելի խորությամբ ուսումնասիրել նյութը, քան ստանդարտ դասերի ընթացքում, և կապ ստեղծել տեսական գիտելիքների ու գործնական կիրառության միջև:

Արտահայտվողները շեշտեցին նաև խմբերի ձևավորման գործընթացի կարևորությունը՝ նշելով, որ անհրաժեշտ է խմբերում համախմբել տարբեր կարողություններ և նախասիրություններ ունեցող սովորողներին: Այս կերպ սովորողները ոչ միայն յուրացնում են թիմային աշխատանքի հմտություններ, այլև սովորում են փոխօգնության, պատասխանատվության և միասնական արդյունքի հասնելու եղանակներ:

Նախագծային ուսուցման կարևորությունը ընդգծվեց նաև այն տեսանկյունից, որ այն խթանում է սովորողների հետաքրքրությունը տարբեր գիտությունների նկատմամբ, զարգացնում է հետազոտական, վերլուծական և նորարարական մտածողություն, ինչպես նաև ինքնուրույն խնդիրների լուծման հմտություններ:

Արտահայտվողները կարևորեցին նախագծային աշխատանքի փուլային կառուցվածքը, որտեղ յուրաքանչյուր քայլ, սկսած թեմայի ընտրությունից մինչև վերջնական արդյունքների ներկայացում և ինքնավերլուծություն, ունի իր առանցքային դերը: Նշվեց, որ նախագծերի իրականացման ընթացքում միշտ չէ, որ ամեն ինչ ընթանում է նախապես պլանավորված սցենարով, և հենց այսպիսի իրավիճակներում ուսուցիչների աջակցությունն ու ուղղորդումը դառնում են անհրաժեշտ: Ուսուցիչները պետք է կարողանան ճիշտ պահին միջամտել, օգնել հաղթահարել առաջացած դժվարությունները և նպաստել, որ սովորողները կարողանան ինքնուրույն գտնել լուծումներ:

Վերջում նշվեց, որ իրականացված նախագծային աշխատանքները վկայում են, որ այս ձևաչափը նպաստում է ոչ միայն տեսական գիտելիքների ամրապնդմանը, այլև սովորողների ստեղծագործական և գործնական հմտությունների զարգացմանը, ինչը պետք է շարունակական դարձնել և կատարելագործել նաև առաջիկա ուսումնական տարում:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված նախագծային աշխատանքների հաշվետվությունները:

Լսեցին 9. Գորիսի Յուրի Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի 2026-2031թթ զարգացման ծրագրի քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը ներկայացրեց դպրոցի 2026-2031թթ զարգացման ծրագիրը՝անդրադառնալով ծրագրի նպատակներին, ակնկալվող արդյունքներին և դրանց իրականացման հիմնական միջոցառումներին:

Կարևորվեց զարգացման ծրագրի հետևողական և արդյունավետ իրականացումը՝ որպես դպրոցի կրթության որակի շարունակական բարելավման, ժամանակակից և անվտանգ կրթական միջավայրի ձևավորման, ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման, մանկավարժական անձնակազմի մասնագիտական զարգացման, սովորողների կարողությունների բացահայտման և համակողմանի զարգացման, ինչպես նաև դպրոցի և համայնքի համագործակցության ամրապնդման կարևոր նախապայման:

Նշվեց, որ ծրագրի հաջող իրականացումը կնպաստի դպրոցի գործունեության արդյունավետության բարձրացմանը, կրթական նորարարությունների ներդրմանը և հաստատության կայուն զարգացման ապահովմանը:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամներ

Մանկավարժական խորհրդի անդամներն ընդգծեցին, որ դպրոցի 2026-2031թթ զարգացման ծրագիրը համահունչ է հաստատության առջև դրված առաջնահերթություններին և կնպաստի կրթական գործընթացի շարունակական կատարելագործմանը: Անդամները կարևորեցին ծրագրով նախատեսված միջոցառումների նպատակային և փուլային իրականացումը, ինչպես նաև ծրագրի կատարման պարբերական վերլուծությունն ու արդյունքների գնահատումը: Արտահայտվեց համոզմունք, որ ծրագրի իրականացումը կնպաստի դպրոցի զարգացման, կրթության որակի բարձրացման և սովորողակենտրոն կրթական միջավայրի ձևավորմանը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Գորիսի Յուրի Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի 2026-2031թթ զարգացման ծրագրի քննարկման մասին ինֆորմացիան:

Լսեցին 10. 2025-2026 ուսումնական տարվա ՈՒԴԱՏՊ իրականացման արդյունքների մասին հարցը:

(զեկուցողներ՝ Ս. Ավանեսյան, Ա. Առստամյան, Ա. Գևորգյան, ՄՄ նախագահներ)

Զեկուցողները ներկայացրին 2025–2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանով (ՈՒԴԱՏՊ) տարվա ընթացքում իրականացված աշխատանքների ընթացքն ու արդյունքները:

Նրանք նշեցին, որ հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են տարեկան պլանով նախատեսված ուսումնադաստիարակչական, կրթամշակութային, հայրենասիրական, ճանաչողական և դաստիարակչական բազմաբնույթ միջոցառումներ, որոնք կազմակերպվել են սահմանված ժամկետներում և ապահովել են սովորողների ակտիվ մասնակցությունը:

Արմիդա Գևորգյանը կարևորեց, որ իրականացված աշխատանքները նպաստել են սովորողների հետաքրքրությունների բացահայտմանը և զարգացմանը, ստեղծագործական ու քննադատական մտածողության ձևավորմանը, նախաձեռնողականության, համագործակցային կարողությունների, պատասխանատվության և քաղաքացիական արժեքների ամրապնդմանը: Նա ընդգծեց, որ կազմակերպված միջոցառումներն ու նախագծային աշխատանքները նպաստել են նաև սովորողների ազատ ժամանակի արդյունավետ կազմակերպմանը, նրանց գեղագիտական, բարոյական և հայրենասիրական դաստիարակությանը:

Զեկուցողը ներկայացրեց նաև ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացման ընթացքում արձանագրված ձեռքբերումներն ու առկա խնդիրները՝ նշելով, որ դրանք հիմնականում կապված են առանձին միջոցառումների կազմակերպչական որոշ հարցերի, սովորողների համաչափ ներգրավվածության և աշխատանքների առավել համակարգված պլանավորման անհրաժեշտության հետ: Միաժամանակ ընդգծվեց, որ ուսումնական տարվա ընթացքում մանկավարժական անձնակազմի հետևողական և պատասխանատու աշխատանքի շնորհիվ նախատեսված միջոցառումների գերակշիռ մասը իրականացվել է արդյունավետ և նպատակային:

Ամփոփելով՝ Սերգեյ Ավանեսյանը արձանագրեց, որ 2025-5026 ուսումնական տարվա ՈւԴԱՏՊ-ով նախատեսված աշխատանքները հիմնականում իրականացվել են արդյունավետ, ապահովվել է ուսումնական գործընթացի բնականոն կազմակերպումը, ստեղծվել են սովորողների համակողմանի զարգացման և կրթության որակի բարձրացման համար անհրաժեշտ պայմաններ: Միաժամանակ առանձնացվել են բարելավման ենթակա ուղղությունները, որոնք կներառվեն 2026-2027 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանում՝ նպատակ ունենալով ապահովել կրթության շարունակական զարգացումն ու արդյունավետությունը:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամներ

Մանկավարժական խորհրդի անդամները բարձր գնահատեցին կատարված աշխատանքները և առաջարկեցին 2026-2027 ուսումնական տարում շարունակել աշխատանքները կրթության որակի բարձրացման, նորարարական մեթոդների կիրառման, ինչպես նաև սովորողների մասնակցության խթանման ուղղությամբ:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ՈւԴԱՏՊ իրականացման արդյունքների մասին ինֆորմացիան:

Լսեցին 11. Մեթոդական միավորումների անվանումների փոփոխության մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան, ՄՄ նախագահներ)

Զեկուցողները ներկայացրին, որ 2026–2027 ուսումնական տարում տեղի կունենա մեթոդական միավորումների անվանափոխություն, ինչպես նաև կստեղծվի նոր մեթոդական միավորում: Հանրակրթության ոլորտում իրականացվող փոփոխություններով պայմանավորված վերանայվել են «Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեություն» և «Հումանիտար առարկաների», «Բնագիտամաթեմատիկական առարկաների» մեթոդմիավորումները, ինչը համապատասխանում է գործող չափորոշիչների պահանջներին և նպատակ ունի ապահովելու մեթոդմիավորումների գործունեության առավել համակարգված և արդյունավետ կազմակերպումը:

Նշվեց, որ անվանափոխությունը պայմանավորված է ոլորտների կազմակերպման նոր մոտեցումներով և նպատակ ունի առավել հստակ արտացոլել մեթոդմիավորումների կազմում ընդգրկված առարկաների շրջանակն ու գործունեության ուղղությունները:

Ավանեսյանը նշեց, որ տվյալ հարցը քննարկվել է մեթոդական միավորումների նիստերում և առաջարկեց 2026-2027 ուսումնական տարվանից սկսած դպրոցում ունենալ հետևյալ մեթոդական միավորումները.

1. Տարրական կրթության մեթոդմիավորում (այսուհետ՝ ՏԿՄ)
2. Օտար լեզուների մեթոդմիավորում (այսուհետ՝ ՕԼՄ)
3. Հայոց լեզվի և գրականության, հայրենագիտության, հասարակության և հասարակական գիտությունների մեթոդմիավորում (այսուհետ՝ ՀԼԳՀՀՀԳՄ)
4. Բնագիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական, մաթեմատիկական մեթոդմիավորում (այսուհետ՝ ԲՏՃՄ)
5. Ֆիզիկական կրթության և առողջ, անվտանգ կենսագործունեության մեթոդմիավորում (այսուհետ՝ ՖԿԱԱԿՄ)
6. Արվեստի և արհեստի մեթոդմիավորում (այսուհետ՝ ԱԱՄ):

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամներ

Արտահայտվողները նշեցին, որ մեթոդական միավորների նոր անվանումները համապատասխանում են հանրակրթության պետական չափորոշչի ուսումնական բնագավառներին և նպատակահարմար են կիրառման համար 2026-2027 ուսումնական տարվանից:

Արտահայտվողները քննարկեցին ներկայացված առաջարկությունը և նշեցին, որ այն բխում է ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրության պահանջներից և համապատասխանում է գործող նորմատիվ կարգավորումներին:

Անդամները կարևորեցին առարկաների՝ ըստ բնագավառների մեթոդական միավորումներում ընդգրկման սկզբունքը՝ նշելով, որ այն կնպաստի նույն բնագավառի ուսուցիչների միջև մասնագիտական համագործակցության ակտիվացմանը, փորձի փոխանակմանը, միասնական մեթոդական մոտեցումների ձևավորմանը և ուսումնական գործընթացի առավել արդյունավետ կազմակերպմանը:

Քննարկման ընթացքում ընդգծվեց, որ «Կերպարվեստ», «Երաժշտություն» և «Արվեստ» առարկաները պատկանում են «Արվեստ և արհեստ» բնագավառին, ուստի նպատակահարմար է դրանք միավորել առանձին մեթոդական միավորման կազմում՝ ապահովելով տվյալ բնագավառի ուսուցիչների համակարգված և նպատակային գործունեությունը:

Ելույթ ունեցողները միաձայն աջակցեցին զեկուցողի առաջարկությանը և գտան, որ դպրոցում «Արվեստի և արհեստի» մեթոդական միավորման ստեղծումը կնպաստի մեթոդական աշխատանքի արդյունավետության բարձրացմանը և կրթական գործընթացի որակի շարունակական բարելավմանը:

Որոշեցին՝

1. Ընդունել ի գիտություն մեթոդական միավորումների անվանումների փոփոխության մասին ինֆորմացիան:
2. 2026-2027 ուսումնական տարվանից սկսած դպրոցում ունենալ հետևյալ մեթոդական միավորումները.
   - Տարրական կրթության մեթոդմիավորում (այսուհետ՝ ՏԿՄ)
   - Օտար լեզուների մեթոդմիավորում (այսուհետ՝ ՕԼՄ)
   - Հայոց լեզվի և գրականության, հայրենագիտության, հասարակության և հասարակական գիտությունների մեթոդմիավորում (այսուհետ՝ ՀԼԳՀՀՀԳՄ)
   - Բնագիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական, մաթեմատիկական մեթոդմիավորում (այսուհետ՝ ԲՏՃՄ)

- Ֆիզիկական կրթության և առողջ, անվտանգ կենսագործունեության մեթոդմիավորում (այսուհետ՝ ՖԿԱԱԿՄ)
- Արվեստի և արհեստի մեթոդմիավորում (այսուհետ՝ ԱԱՄ)։

Լսեցին 12. Օտար լեզուների, «ԹԳՀԳ» և «Հայոց լեզու» առարկաների դասաժամերի ընթացքում դասարանների խմբերի բաժանման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան, ՄՄ նախագահներ)

Սերգեյ Ավանեսյանը ներկայացրեց, որ 2026-2027 ուսումնական տարվա ընթացքում հանրակրթական հիմնական (ընդհանուր (այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների սովորողների համար ուսուցում կազմակերպող), մասնագիտացված և հատուկ) պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 1-11-րդ դասարաններում ուսումնական գործընթացի կազմակերպման ուղեցույցի 5-րդ կետի համաձայն հաստատության 2-9-րդ դասարաններում «Օտար լեզու»-1, «Օտար լեզու»-2, 2-11-րդ դասարաններում «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» (այսուհետ՝ ԹԳՀԳ) (համակարգչային դասարանի առկայության դեպքում), ինչպես նաև 7-11-րդ դասարաններում «Հայոց լեզու» առարկաների դասաժամերին դասարանը կարելի է բաժանել երկու խմբի, եթե սովորողների թիվը 20 և ավելի է:

6-րդ կետի համաձայն «Տեխնոլոգիա» առարկայի (5-6-րդ դասարաններ) պարապմունքներին դասարանը կարելի է բաժանել երկու խմբի, եթե սովորողների թիվը 20 և ավելի է:

Անուշ Դաջունցը ներկայացրեց 2026–2027 ուսումնական տարում «ԹԳՀԳ» առարկայի դասաժամերի ընթացքում դասարանների խմբային ուսուցմամբ կազմակերպելու անհրաժեշտությունն ու նպատակահարմարությունը՝ հիմնվելով ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման և սովորողների անհատական ներգրավվածության ապահովման պահանջի վրա։

Նշվեց, որ դասարանների խմբային բաժանումը հնարավորություն է տալիս առավել արդյունավետ կազմակերպել ուսումնական գործընթացը՝ ապահովելով յուրաքանչյուր սովորողի ակտիվ մասնակցությունը, ուսուցման անհատական մոտեցման կիրառումը և ուսումնառության որակի բարձրացումը։ Զեկուցողը ընդգծեց, որ փոքր խմբերով ուսուցման պայմաններում ուսուցիչը կարողանում է առավել նպատակային վերահսկել սովորողների աշխատանքը, անհատապես աջակցել նրանց և ապահովել ուսումնական նյութի առավել խորքային յուրացում։

Առանձնահատուկ կարևորվեց «ԹԳՀԳ» առարկայի գործնական բաղադրիչի արդյունավետ կազմակերպումը փոքր խմբերում, քանի որ առկա նյութատեխնիկական պայմանները՝ մասնավորապես համակարգչային դասասենյակում համակարգիչների սահմանափակ քանակը, դժվարություններ են ստեղծում բարձր խտությամբ դասարաններում լիարժեք ուսուցում իրականացնելու համար։ Նման պայմաններում խմբային ուսուցումը դիտարկվում է որպես առավել նպատակահարմար և արդյունավետ լուծում։

Զեկուցողը առաջարկեց 2–9-րդ դասարաններում, այն դեպքերում, երբ դասարանում սովորողների թիվը կազմում է 20 և ավելի, դասարանը բաժանել երկու հավասար խմբի՝ «ԹԳՀԳ» առարկայի դասաժամերի շրջանակում։ Այս մոտեցումը հնարավորություն կտա ապահովել առավել որակյալ ուսուցում, բարձրացնել սովորողների ակտիվ ներգրավվածությունը դասապրոցեսին, զարգացնել նրանց գործնական հմտությունները և խթանել հետաքրքրությունը առարկայի նկատմամբ։

Ամփոփելով՝ զեկուցողը նշեց, որ խմբային ուսուցման ներդրումը «ԹԳՀԳ» առարկայի շրջանակում կնպաստի ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը, սովորողների կարողունակությունների զարգացմանը և կրթական արդյունքների բարելավմանը՝ ներառյալ

առարկայական մրցույթներում և կրթական նախաձեռնություններում նրանց հաջող մասնակցությունը։

Մերի Դանիելյանը ներկայացրեց 2026-2027 ուսումնական տարում «Հայոց լեզու» առարկայի դասաժամերի ընթացքում դասարանները խմբերի բաժանելու անհրաժեշտության և նպատակահարմարության մասին։ Նշվեց, որ խմբային ուսուցման կազմակերպումը հնարավորություն է տալիս առավել արդյունավետ իրականացնել ուսումնական գործընթացը, ապահովելով յուրաքանչյուր սովորողի ակտիվ մասնակցությունը, անհատական մոտեցումը և կրթության որակի բարձրացումը։ Կարևորվեց հատկապես գրավոր և բանավոր խոսքի զարգացման, լեզվական կարողությունների ձևավորման և գործնական աշխատանքների կազմակերպման արդյունավետությունը փոքր խմբերում աշխատելու պայմաններում։ Զեկուցողն առաջարկեց 7-9-րդ դասարաններում «Հայոց լեզու» առարկայի դասաժամերը, այն դեպքում, երբ տվյալ դասարանում սովորողների թիվը 20 և ավելի է, դասարանը բաժանել երկու հավասար խմբի, այդպիսով հնարավորություն տալով առարկայի ուսուցումն իրականացնել ավելի փոքր խմբերով, որը միանշանակ արդյունավետ կլինի և հնարավորություն կտա սովորողներին պատշաճ կերպով նախապատրաստել ոչ միայն 9-րդ դասարանի ավարտական քննություններին, այլ նաև կօգնի, որպեսզի սովորողները բարձր ակտիվություն ցուցաբերեն և արդյունքներ գրանցեն առարկայական օլիմպիադաներում և այլ կրթական նախաձեռնություններում։

Մարգարիտա Պետրոսյանը ներկայացրեց 2026–2027 ուսումնական տարում «Օտար լեզու» առարկայի՝ («Ռուսաց լեզու», «Անգլերեն», «Ֆրանսերեն») դասաժամերի ընթացքում դասարանների խմբային ուսուցմամբ կազմակերպելու անհրաժեշտությունն ու նպատակահարմարությունը՝ հիմնվելով ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման, սովորողների անհատական ներգրավվածության ապահովման և լեզվական կարողությունների զարգացման պահանջների վրա։

Նշվեց, որ դասարանների խմբային բաժանումը հնարավորություն է տալիս առավել արդյունավետ կազմակերպել օտար լեզուների ուսուցումը՝ ապահովելով յուրաքանչյուր սովորողի ակտիվ մասնակցությունը խոսքային, լսողական, ընթերցողական և գրավոր հմտությունների զարգացման գործընթացում։ Ընդգծվեց, որ փոքր խմբերով ուսուցման պայմաններում ուսուցիչը կարողանում է առավել նպատակային վերահսկել սովորողների առաջընթացը, իրականացնել անհատական մոտեցում, ապահովել սխալների ժամանակին շտկում և նպաստել լեզվական կարողությունների ավելի խորքային ձևավորմանը։

Առանձնահատուկ կարևորվեց օտար լեզուների ուսուցման առանձնահատկությունը, քանի որ դրանք պահանջում են ինտենսիվ հաղորդակցություն, խոսքային ակտիվություն և մշտական փոխազդեցություն ուսուցչի ու սովորողների միջև։ Այդ համատեքստում խմբային ուսուցումը դիտարկվում է որպես առավել արդյունավետ կազմակերպչական ձև, որը նպաստում է սովորողների խոսքային ակտիվության բարձրացմանը և լեզվի գործնական կիրառման ընդլայնմանը։

Զեկուցողը առաջարկեց 2–9-րդ դասարաններում, այն դեպքերում, երբ դասարանում սովորողների թիվը կազմում է 20 և ավելի, «Օտար լեզու» առարկայի դասաժամերի շրջանակում դասարանը բաժանել երկու հավասար խմբի՝ ապահովելով ուսուցման առավել արդյունավետ կազմակերպում և բարձր արդյունքներ։

Ամփոփելով՝ զեկուցողը նշեց, որ խմբային ուսուցման կիրառումը օտար լեզուների դասաժամերին կնպաստի ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը, սովորողների լեզվական կարողունակությունների զարգացմանը և կրթական արդյունքների բարելավմանը։

Արտահայտվեցին՝ ՄՄ նախագահներ

Արտահայտվողներն իրենց ելույթներում ընդգծեցին, որ դասարանների խմբային բաժանումը «ԹԳՀԳ» առարկայի շրջանակում կնպաստի սովորողների գիտելիքների առավել խորքային և համակարգված յուրացմանը, ինչպես նաև ուսուցչի կողմից յուրաքանչյուր սովորողի առաջադիմության, կրթական կարիքների և անհատական առանձնահատկությունների նկատմամբ առավել նպատակային ուշադրության ապահովմանը։

Նշվեց, որ խմբային ուսուցման պայմաններում հնարավոր է դառնում դասապրոցեսի առավել արդյունավետ կազմակերպումը, սովորողների ակտիվ ներգրավվածության բարձրացումը, ուսումնական նյութի գործնական կիրառման ընդլայնումը և դասի ընդհանուր արդյունավետության զգալի բարելավումը։

Օլյա Ղուլյանը իր ելույթում ընդգծեց, որ խմբային ուսուցման կազմակերպումը հատկապես կարևոր է «ԹԳՀԳ» առարկայի գործնական աշխատանքների իրականացման տեսանկյունից՝ հաշվի առնելով նաև համակարգչային լաբորատորիայի տեխնիկական ապահովվածությունը և սարքավորումների սահմանափակ քանակը։ Նրա խոսքով՝ փոքր խմբերով աշխատանքը հնարավորություն է տալիս առավել արդյունավետ օգտագործել առկա տեխնիկական միջոցները և ապահովել յուրաքանչյուր սովորողի գործնական ներգրավվածությունը։

ՄԽ անդամները նշեցին, որ ներկայացված առաջարկությունը հիմնավորված է և արդիական, իսկ տարիների մանկավարժական փորձը վկայում է, որ նման կազմակերպման ձևը նպաստում է ուսուցման որակի բարձրացմանը, սովորողների հետաքրքրվածության աճին և առարկայի նկատմամբ կայուն մոտիվացիայի ձևավորմանը։

Արտահայտվողներն ընդգծեցին, որ դասարանների խմբերի բաժանումը կնպաստի սովորողների գիտելիքների առավել խորքային յուրացմանը, ուսուցչի կողմից յուրաքանչյուր սովորող առաջադիմության և կարիքների նկատմամբ առավել նպատակային ուշադրության դրսևորմանը, ինչպես նաև կբարձրացնի դասերի արդյունավետությունն ու սովորողների ներգրավվածությունը։

Լիլիթ Սարգսյանը նշեց, որ խմբային ուսուցումը հատկապես կարևոր է լեզվական հաղորդակցական կարողությունների, ընթերցանության, գրավոր աշխատանքների և ստեղծագործական առաջադրանքների իրականացման ժամանակ։

Արտահայտվողներն իրենց ելույթներում կարևորեցին օտար լեզուների («Ռուսաց լեզու», «Անգլերեն», «Ֆրանսերեն») դասաժամերին խմբային ուսուցման կազմակերպման նպատակահարմարությունը՝ ընդգծելով, որ այն պայմանավորված է առարկայի բովանդակային և մեթոդական առանձնահատկություններով։

Նշվեց, որ օտար լեզուների ուսուցման գործընթացում խմբային բաժանումը զգալիորեն բարձրացնում է սովորողների խոսքային ակտիվությունը, հաղորդակցական կարողությունների զարգացումը և ուսումնական նյութի գործնական կիրառման արդյունավետությունը։ Արտահայտվողները ընդգծեցին, որ փոքր խմբերում ուսուցչի կողմից իրականացվող անհատական մոտեցումը հնարավորություն է տալիս ավելի արագ արձագանքել սովորողների դժվարություններին, ապահովել սխալների ժամանակին ուղղում և բարձրացնել ուսուցման որակը։

Միաժամանակ նշվեց, որ նման կազմակերպման ձևը նպաստում է դասապրոցեսի առավել ինտերակտիվ անցկացմանը, սովորողների ներգրավվածության աճին և լեզվական հմտությունների՝ լսելու, խոսելու, կարդալու և գրելու համաչափ զարգացմանը։

Արտահայտվողները կարևորեցին նաև այն հանգամանքը, որ ներկայացված առաջարկությունը համապատասխանում է գործող ուղեցույցի պահանջներին և հիմնավորված է ինչպես իրավական, այնպես էլ մանկավարժական

տեսանկյունից: Նշվեց, որ դասարանների բաժանումը 20 և ավելի սովորողների դեպքում լիովին արդարացված է և տարիների փորձով արդեն իսկ ապացուցել է իր արդյունավետությունը:
Ամփոփելով՝ արտահայտվողները համոզմունք հայտնեցին, որ օտար լեզուների դասաժամերին խմբային ուսուցման կիրառումը կնպաստի ուսումնական գործընթացի որակի բարձրացմանը, սովորողների լեզվական կարողունակությունների զարգացմանը և ավելի արդյունավետ ուսուցման կազմակերպմանը:

Որոշեցին՝

1. Հիմք ընդունելով գործող կարգավորումներն ու ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման անհրաժեշտությունը՝ 2026-2027 ուսումնական տարում «ԹԳՀԳ» առարկայի դասաժամերի ընթացքում խմբերի բաժանել այն դասարանները, որոնցում սովորողների թիվը կազմում է 20 և ավելի:
2. Հիմք ընդունելով գործող կարգավորումներն ու ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման անհրաժեշտությունը՝ 2026-2027 ուսումնական տարում «Հայոց լեզու» առարկայի դասաժամերի ընթացքում խմբերի բաժանել այն դասարանները, որոնցում սովորողների թիվը կազմում է 20 և ավելի:
3. Հիմք ընդունելով գործող կարգավորումներն ու ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման անհրաժեշտությունը՝ 2026-2027 ուսումնական տարում «Օտար լեզու» («Ռուսաց լեզու», «Անգլերեն», «Ֆրանսերեն») առարկայի դասաժամերի ընթացքում խմբերի բաժանել այն դասարանները, որոնցում սովորողների թիվը կազմում է 20 և ավելի:
4. Դպրոցի տնօրեն Սերգեյ Ավանեսյանին ներկայացնել համապատասխան առաջարկություն:

Լսեցին 13. Ցածր խտությամբ դասարանների կազմավորման հարցը:

(Զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը ներկայացրեց 2026-2027 ուսումնական տարվա դասարանների նախնական համալրվածության վերաբերյալ տեղեկատվությունը՝ նշելով յուրաքանչյուր դասարանի սովորողների թվաքանակը և այն համադրելով գործող իրավական ակտերով սահմանված նվազագույն խտության պահանջների հետ: Ներկայացվեցին այն դասարանները, որոնցում սովորողների թիվը բավարար չէ առանձին դասարան կազմավորելու համար, ինչպես նաև պարզաբանվեցին դրանց չկազմավորման իրավական հիմքերը:
Նշվեց, որ նախնական տվյալներով դասարանների թիվը կպակասի, ինչը, բնականաբար, այնքան էլ գոհացուցիչ չէ, սակայն պայմանավորված է սովորողների թվաքանակով և գործող կարգավորումներով: Այդուհանդերձ, իրականացվող փոփոխությունները հնարավորություն կտան ձևավորել համալրված դասարաններ և արդյունավետ կազմակերպել ուսումնական գործընթացը՝ պահպանելով կրթության որակը: Միևնույն ժամանակ զեկուցողը շեշտեց, որ մեծ խտությամբ դասարաններում տուժում է կրթության, ինչպես նաև ուսուցիչների կողմից իրականացվող աշխատանքի որակը: Շեշտեց, որ 2027-2028 ուսումնական տարվանից սկսած, երբ ուժի մեջ կմտնի դասարանների կազմավորման նոր կարգը, դպրոցում հնարավորություն կունենան բեռնաթափել դասարանները և մեկ դասարանում ունենալ առավելագույնը 30 սովորող: Զեկուցողն անդրադարձ կատարեց նոր կարգավորումներին և Հայաստանի Հանրապետության հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատության դասարանների կազմավորման կարգին, որում փոփոխությունները կատարվել են 2026 թվականի հունիսի 11-ին, նշեց, որ հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ հաստատություն) դասարանների կազմավորման փոփոխությունը կիրականացվի փուլային եղանակով՝ յուրաքանչյուր հաջորդ ուսումնական

տարում նվազեցված կազմով ձևավորված դասարանների՝ հաջորդ դասարան փոխադրմամբ, և կներդրվի 2027 թվականի սեպտեմբերի 1-ից՝ առաջին դասարաններում՝ յուրաքանչյուր դասարանում սահմանելով առավելագույնը 26, անհնարինության դեպքում՝ մինչև 30 սովորող (1.1-ին կետը լրաց. 11.06.26 N 821-Ն):

Ելնելով դպրոցի կազմակերպական, կադրային և ֆիզիկական պայմանների անհնարինությունից՝ դպրոցը կարող է իր հայեցողությամբ նվազեցնել դասարանների կոմպլեկտավորումը՝ սահմանելով մինչև 26 սովորող մեկ դասարանում, անհրաժեշտության դեպքում ուսուցումը կազմակերպելով երկրորդ հերթով (1.2-րդ կետը լրաց. 11.06.26 N 821-Ն):

Սահմանել, որ հաստատությունում մինչև սույն որոշման 1.2-րդ կետով սահմանված՝ դասարանների կազմի նվազեցման փուլային եղանակով ներդրվելը, կրթության 1-ին և 2-րդ աստիճաններում (տարրական և հիմնական) յուրաքանչյուր դասարանում սովորողների առավելագույն թիվը 35 է, իսկ կրթության 3-րդ աստիճանում (ավագ դպրոց)՝ 30 (1.3-րդ կետը լրաց. 11.06.26 N 821-Ն):

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամներ

Մանկավարժական խորհրդի անդամները քննարկեցին ցածր խտությամբ դասարանների կազմավորման հարցը՝կարևորելով յուրաքանչյուր սովորողի որակյալ կրթության հասանելիությունը:

Արմիդա Գևորգյանը բոլորի ուշադրությունը հրավիրեց նախորդ տարիների փորձի վրա՝ շեշտելով, որ 2020-2021 ուսումնական տարվանից սկսած Գորիսի Յուրի Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցում գործում են պակաս խտությամբ դասարաններ: Նա ընդգծեց, որ դպրոցը կարող է ստեղծել նման դասարաններ՝ իր լրացուցիչ ֆինանսական միջոցների և խնայողությունների հաշվին: Նշվեց, որ 2026-2027 ուսումնական տարում հնարավորությունների սահմանում կարելի է պլանավորել ունենալ մեկ պակաս խտությամբ դասարան:

Սերգեյ Ավանեսյանը մանկավարժական խորհրդի անդամներին ներկայացրեց դպրոցի ֆինանսական հնարավորությունները, խնայողությունները, ինչպես նաև իր և վարչատնտեսական մասի համակարգող Սոնա Թամրազովայի կողմից իրականացված աշխատանքները, որոնք ուղղված են լրացուցիչ միջոցների ձեռքբերմանն ու ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը: Նա ընդգծեց, որ այդ հարցով դպրոցի տնօրինությանը դիմել են նաև ծնողներ, որոնք նկատել են, որ նպատակահարմար է պահպանել դասարանների նախորդ տարիների խտությունը և դասարանների քանակը չփոխել:

Նշվեց, որ ներկայում դպրոցը գտնվում է հիմնանորոգման փուլում, և մեծ թվով աշակերտներ տեղավորելը խոշոր դասարաններում դժվար է: Հետևաբար ավելի նպատակահարմար և իրատեսական է օգտագործել փոքր դասասենյակները՝ փոքր խտությամբ դասարաններ կազմավորելով:

Ջեկուցողը նաև ընդգծեց, որ 2027-2028 ուսումնական տարուց սկսած դասարանների առավելագույն խտությունը սահմանվելու է 26 աշակերտ: Այդ պատճառով, եթե 202-2027 ուսումնական տարում տվյալ դասարանները միավորվեն, ապա հաջորդ տարում ստիպված կլինեն կրկին կիսվել, ինչը կարող է երեխաների մոտ լրացուցիչ դժվարությունների և սթրեսի պատճառ հանդիսանալ:

Արտահայտվողները նշեցին, որ պակաս խտությամբ դասարանի ստեղծումը նպատակահարմար է՝ հաշվի առնելով դպրոցի հիմնանորոգման ընթացքը և դասասենյակների սահմանափակ հնարավորությունները: Նրանք ընդգծեցին, որ փոքր խտությամբ դասարաններն արդյունավետ են ուսումնական գործընթացի համար և կնվազեցնեն աշակերտների սթրեսի հավանականությունը:

Միաժամանակ շեշտվեց, որ անհրաժեշտ է պահպանել դասարանների նախորդ տարիների խտությունը՝ ապահովելու համար երեխաների բնականոն առաջընթացն ու ծնողների սպասումները: Արտահայտվողներն առաջարկեցին

հետևել դասարանների խտության փոփոխությունների ազդեցությանը ուսումնական գործընթացի վրա և անհրաժեշտության դեպքում կատարել համապատասխան լրացումներ հաջորդ ուսումնական տարում։

Նշվեց նաև, որ դպրոցի լրացուցիչ ֆինանսական միջոցների և խնայողությունների օգտագործումը պակաս խտությամբ դասարան ստեղծելու նպատակով հիմնավորված և նպատակահարմար է, և այն կնպաստի կրթական գործընթացի կայունության և արդյունավետության ապահովմանը։

Որոշեցին՝

1. Ընդունել ի գիտություն ցածր խտությամբ դասարանների կազմավորման մասին ինֆորմացիան։
2. Առաջարկել դպրոցի տնօրեն Սերգեյ Ավանեսյանին և վարչատնտեսական մասին համակարգող Սոնա Թամրազովային դպրոցի կառավարման խորհրդում ներկայացնել առաջարկություն՝ 2026-2027 ուսումնական տարում ունենալ պակաս խտությամբ մեկ դասարան

Լսեցին 14. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված դիտարկումների ամփոփման մասին հարցը։

(զեկուցողներ՝ Ա. Գևորգյան, Ա. Առստամյան)

Զեկուցողները նշեցին, որ 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացվել են դիտարկումներ, որոնց հիմնական նպատակն էր հետևել պետական չափորոշչի և առարկայական ծրագրերի պահանջների կատարմանը, դասավանդման արդյունավետությանը, ժամանակակից մեթոդների կիրառմանը, սովորողների ակտիվ մասնակցությանը, ինչպես նաև ուսուցիչներին մեթոդական աջակցություն ցուցաբերել և անհրաժեշտության դեպքում առաջարկություններ ներկայացնել։

Իրականացված դիտարկումների արդյունքում կարելի է արձանագրել, որ ուսուցիչները դասերը կազմակերպել են պատասխանատվությամբ և մասնագիտական բարձր մակարդակով։ Դասերի ընթացքում կիրառվել են սովորողակենտրոն և համագործակցային ուսուցման մեթոդներ, արդյունավետ օգտագործվել են ուսումնական նյութերն ու տեսադիդակտիկ միջոցները, պահպանվել են անվտանգության կանոնները, իսկ սովորողները ցուցաբերել են ակտիվություն, հետաքրքրվածություն և ներգրավվածություն ուսումնական գործընթացում։

Դիտարկումների ընթացքում իրականացվել են մասնագիտական քննարկումներ, տրվել են համապատասխան մեթոդական առաջարկություններ, արժևորվել են դրական փորձը և ձեռքբերումները։ Ընդհանուր առմամբ կարելի է նշել, որ մեթոդմիավորման ուսուցիչների աշխատանքը եղել է արդյունավետ, նպատակային և համապատասխանել է գործող չափորոշչի ու կրթական ծրագրերի պահանջներին։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամներ

Արտահայտվողները նշեցին, որ իրականացված դասալսումներն ու դիտարկումները հնարավորություն են տվել գնահատելու դասավանդման արդյունավետությունը, բացահայտելու հաջողված փորձը, ինչպես նաև անդրադառնալու առկա խնդիրներին։

Առաջարկվեցին քայլեր՝ուսումնական գործընթացի հետագա բարելավման և արդյունավետության բարձրացման ուղղությամբ։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված դիտարկումների ամփոփման մասին ինֆորմացիան։

Լսեցին 15. 2026-2027 ուսումնական տարվա ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխման, դասաժամերի, դպրոցական բաղադրիչի ժամաքանակի մասին հարցը։

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցող ներկայացրեց 2026–2027 ուսումնական տարվա դասաժամերի նախնական բաշխման նախագծերը, նշելով, որ դրանք մշակվել են

հաստատության ուսումնական պլանի, դասարանների համալրվածության, ուսումնական բեռնվածության, առարկայական ժամաքանակների, մանկավարժների մասնագիտական որակավորման և գործող իրավական ակտերի պահանջների հիման վրա, ինչպես նաև սահմանված կարգով քննարկվել են դպրոցի մեթոդական միավորումներում և հավանության են արժանացել:

Զեկուցողը նշեց, որ դասաժամերի նախնական բաշխման նախագիծը կազմվել է՝ հիմք ընդունելով դպրոցի կանոնադրության 87-րդ կետի 10-րդ ենթակետի և հանրակրթական ուսումնական հաստատության կանոնադրության օրինակելի ձևում կատարված փոփոխությունների 93-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները, որոնց համաձայն մանկավարժական խորհուրդը քննարկում է դասաբաշխման նախագիծը և ներկայացնում առաջարկություններ՝ մինչև դրա վերջնական հաստատումը:

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ ներկայացված նախագիծը նախնական բնույթ է կրում, քանի որ այն կարող է փոփոխության ենթարկվել՝ պայմանավորված 2026–2027 ուսումնական տարվա ուսումնական պլանների վերջնական հաստատմամբ, դասարանների կազմավորման գործընթացով, մանկավարժական կադրերի փոփոխություններով, ինչպես նաև հանրակրթության ոլորտում ընդունված նոր իրավական կարգավորումներով:

Զեկուցողը տեղեկացրեց, որ Հանրակրթության պետական նոր չափորոշչի ներդրման հաջորդ փուլի շրջանակում 2026–2027 ուսումնական տարում նախատեսվում են փոփոխություններ 2–9-րդ դասարանների ուսումնական պլաններում, որոնք կարող են վերաբերել ինչպես առանձին առարկաների ժամաքանակներին, այնպես էլ առարկայացանկին: Այդ հանգամանքով պայմանավորված՝ առաջարկվեց 2–9-րդ դասարանների դասաժամերի վերջնական բաշխումը քննարկել նաև մանկավարժական խորհրդի օգոստոսյան առաջին նիստում՝ բոլոր իրավական և կազմակերպչական հիմքերի վերջնական հստակեցումից հետո:

Զեկուցողը ներկայացրեց ուսումնական բեռնվածության տոկոսային բաշխումը (ըստ կրթական աստիճանների)

- Տարրական դպրոց — 3320 դասաժամ (տարեկան)
- Միջին դպրոց — 6220 դասաժամ (տարեկան)
- Ավագ դպրոց — 4080 դասաժամ (տարեկան)

➢ Ուսումնական բնագավառների բաշխումը

✓ Հայոց լեզու և գրականություն
- Տարրական՝ 24–28% (6.1–7.1 դասաժամ)
- Միջին՝ 13–16% (4.7–5.8 դասաժամ)
- Ավագ՝ 10–25% (4–10 դասաժամ)

✓ Հայրենագիտություն
- Տարրական՝ 2% (0.5 դասաժամ)
- Միջին՝ 7–8% (2.5–2.9 դասաժամ)
- Ավագ՝ 7–18% (2.8–7.2 դասաժամ)

✓ Օտար լեզուներ
- Տարրական՝ 10–15% (2.5–3.8 դասաժամ)
- Միջին՝ 12–20% (4.3–7.3 դասաժամ)
- Ավագ՝ 10–25% (4–10 դասաժամ)

✓ ԲՏՃՄ
- Տարրական՝ 25–29% (6.4–7.4 դասաժամ)
- Միջին՝ 33–38% (12–13.9 դասաժամ)
- Ավագ՝ 15–40% (6–16 դասաժամ)

✓ Արվեստ և արհեստ
- Տարրական՝ 8% (2 դասաժամ)
- Միջին՝ 4–6% (1.4–2.1 դասաժամ)
- Ավագ՝ 2–5% (0.8–2 դասաժամ)

- ✓ Հասարակություն, հասարակական գիտություններ
  - Տարրական՝ 2% (0.5 դասաժամ)
  - Միջին՝ 5–6% (1.8–2.1 դասաժամ)
  - Ավագ՝ 5–8% (2–3.2 դասաժամ)
- ✓ Ֆիզիկական կրթություն և առողջ, անվտանգ կենսագործունեություն
  - Տարրական՝ 8–10% (2–2.5 դասաժամ)
  - Միջին՝ 7–9% (2.5–3.2 դասաժամ)
  - Ավագ՝ 4–10% (1.6–4 դասաժամ)
- ✓ Ընտրովի բաղադրիչ
  - Տարրական՝ 6% (1.5 դասաժամ)
  - Միջին՝ 8.17% (3 դասաժամ)
  - Ավագ՝ 15% (6 դասաժամ):

Ամփոփելով՝ զեկուցողը նշեց, որ ներկայացված նախագծերը նպատակ ունեն նախապես կազմակերպել նոր ուսումնական տարվա աշխատանքները, ապահովել ուսուցիչների հավասարակշռված ծանրաբեռնվածությունը և ստեղծել անհրաժեշտ պայմաններ 2026–2027 ուսումնական տարվա կազմակերպված մեկնարկի համար։

Արտահայտվեցին՝ Ռ. Շալունցը, Մ. Պետրոսյանը, Ա. Դաջունցը, Մ. Դանիելյանը, Ա. Աբգարյան

ՄՄ նախագահները նշեցին, որ անհրաժեշտ է հիմք ընդունել դպրոցի առարկայական մասնախմբերի կողմից իրականացված նախնական և հիմնական ժամաբաժանումները։ Արտահայտվողները նշեցին, որ կրթության յուրաքանչյուր աստիճանում ուսումնական բնագավառների այս համամասնությունները միտված են սովորողների համակողմանի զարգացմանը, հիմնարար գիտելիքների ձևավորմանը, կարողությունների զարգացմանն ու ժամանակակից կրթական պահանջներին համապատասխան ուսումնառության ապահովմանը:

Ընդգծվեց, որ դասաժամերի բաշխման ընթացքում պահպանվել են արդարության, թափանցիկության, արդյունավետության և մանկավարժական նպատակահարմարության սկզբունքները։ Նախագիծը կազմելիս հաշվի են առնվել ուսուցիչների մասնագիտական պատրաստվածությունը, որակավորման համապատասխանությունը, նախորդ տարիների աշխատանքային փորձը, ուսումնական ծանրաբեռնվածության համաչափ բաշխումը, ինչպես նաև ուսումնական գործընթացի անխափան և արդյունավետ կազմակերպման անհրաժեշտությունը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2026-2027 ուսումնական տարվա ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխման, դասաժամերի, դպրոցական բաղադրիչի ժամաքանակի մասին զեկուցումը:

Լսեցին 16. 2026-2027 ուսումնական տարվանից սկսած 5-րդ դասարանի առաջին կիսամյակի ընթացքում և 5-9-րդ դասարաններում որոշ առարկաներից միավորային գնահատում չիրականացնելու մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը ներկայացրեց, որ համաձայն հանրակրթության պետական չափորոշչի՝ 2026-2027 ուսումնական տարվանից սկսած՝1-4-րդ դասարաններում և 5-րդ դասարանի առաջին կիսամյակում բոլոր առարկաներից, ինչպես նաև Ֆիզիկական կրթություն և առողջ, անվտանգ կենսագործունեություն, Արվեստ և արհեստ բնագավառների հետևյալ առարկաներից՝

- ➢ «Ֆիզկուլտուրա»
- ➢ «Անվտանգ կենսագործունեություն»
- ➢ «Առողջ ապրելակերպ»
- ➢ «Արվեստ»
- ➢ «Երաժշտություն»
- ➢ «Կերպարվեստ»

5-12-րդ դասարաններում միավորային գնահատում չի իրականացվելու: Սովորողի ամփոփիչ գնահատումն իրականացվելու է բնութագրման միջոցով: Նա նշեց, որ որպես կիսամյակային ամփոփիչ գնահատման արդյունք՝ յուրաքանչյուր առարկայից կկազմվի սովորողի առաջադիմության բնութագիրը:

Միավորային գնահատումը կիրառվում է՝ սկսած 5-րդ դասարանի երկրորդ կիսամյակից:

Արտահայտվեցին՝ Ա. Դաջունց, Մ. Պետրոսյան, Մ. Դանիելյան, Ա. Աբգարյան

Քննարկվող հարցի վերաբերյալ արտահայտվողները նշեցին, որ միավորային գնահատում չիրականացնելու դեպքում անհրաժեշտ է պահպանել գնահատման գործընթացի թափանցիկությունն ու ապահովել սովորողի առաջընթացի մշտադիտարկումը:

Որոշեցին՝

1. Ընդունել ի գիտություն 2026-2027 ուսումնական տարվանից սկսած 5-րդ դասարանի առաջին կիսամյակի ընթացքում միավորային գնահատում չիրականացնելու մասին ինֆորմացիան:
2. 5-9-րդ դասարաններում Ֆիզիկական կրթություն և առողջ, անվտանգ կենսագործունեություն, Արվեստ և արհեստ բնագավառների հետևյալ առարկաներից՝
   - «Ֆիզկուլտուրա»
   - «Անվտանգ կենսագործունեություն»
   - «Առողջ ապրելակերպ»
   - «Արվեստ»
   - «Երաժշտություն»
   - «Կերպարվեստ»

միավորային գնահատում չիրականացնելու մասին ինֆորմացիան:

Լսեցին 17. 2026-2027 ուսումնական տարվանից սկսած «Առողջ ապրելակերպ» և «Անվտանգ կենսագործունեություն» առարկաների ուսումնասիրման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցող Սերգեյ Ավանեսյանը ներկայացրեց, որ 2026 թվականի հանրակրթական պետական չափորոշչում կատարված փոփոխությունների արդյունքում իրականացվել են մի շարք կառուցվածքային և բովանդակային վերանայումներ առարկայական համակարգում: Մասնավորապես՝ «Նախնական զինվորական պատրաստություն» առարկան փոխարինվել է «Անվտանգ կենսագործունեություն» առարկայով, իսկ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակը ներառվել է պարտադիր դասավանդվող առարկաների ցանկում:

Նշվեց, որ կատարված փոփոխությունները պայմանավորված են կրթական համակարգի արդիականացման անհրաժեշտությամբ և միտված են սովորողների շրջանում կյանքի անվտանգության, առողջության պահպանման, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու կարողությունների զարգացմանը: «Անվտանգ կենսագործունեություն» առարկան նպատակ ունի ապահովել առավել լայն և գործնական մոտեցում՝ ներառելով անվտանգության կանոնների իմացություն, առաջին օգնության հիմունքներ, քաղաքացիական պաշտպանության տարրեր և պատասխանատու վարքագծի ձևավորում:

Զեկուցման ընթացքում ընդգծվեց, որ «Առողջ ապրելակերպ» առարկայի պարտադիր ներառումը կրթական ծրագրում կարևոր քայլ է սովորողների առողջական մշակույթի ձևավորման, առողջ սննդակարգի, վնասակար սովորությունների կանխարգելման և ֆիզիկական ակտիվության խթանման ուղղությամբ: Այս փոփոխությունները միասին դիտարկվում են որպես համալիր մոտեցում՝ ուղղված սովորողների կյանքի որակի բարձրացմանը և անձնային զարգացմանը:

Փոփոխությունների համաձայն՝ «Անվտանգ կենսագործունեություն» և «Առողջ ապրելակերպ» առարկաները ուսումնական հաստատություններում կներդրվեն փուլային եղանակով՝ 5-11-րդ դասարաններում: Նշված առարկաների ներդրումը նախատեսվում է սկսել 2026 թվականի սեպտեմբերից՝ առաջին փուլում ընդգրկելով 5-րդ և 10-րդ դասարանները: Հետագա փուլերում աստիճանաբար կներառվեն մյուս դասարանները՝ մինչև ամբողջական ներդրման ավարտը:

Նշվեց նաև, որ անցումային փուլում դպրոցներում կշարունակվի «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի դասավանդումը մնացած դասարաններում, մինչև նոր առարկայի ամբողջական ներդրումը: Միաժամանակ «Առողջ ապրելակերպ» ուղղվածությամբ խմբակը 6-9-րդ դասարաններում կշարունակի գործել որպես պարտադիր խմբակ՝ ապահովելով շարունակական աշխատանք սովորողների առողջ կենսակերպի ձևավորման ուղղությամբ

Արտահայտվեցին՝ ՄՄ նախագահներ

Արտահայտվողները կարևորեցին նշված առարկաների արդյունավետ դասավանդումը՝ ընդգծելով դրանց դերը սովորողների առողջության պահպանման, անվտանգության մշակույթի ձևավորման և գործնական կարողությունների զարգացման գործում:

Նշվեց, որ անհրաժեշտ է ուսուցման ընթացքում կիրառել գործնական աշխատանքներ:

Որոշեցին՝

- Ընդունել ի գիտություն «Առողջ ապրելակերպ» և «Անվտանգ կենսագործունեություն» առարկաների ներդրման վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:
- Ապահովել պատրաստակամություն փուլային ներդրման գործընթացին, հետևել պաշտոնական ուղեցույցների և կարգավորումների հրապարակմանը, ինչպես նաև կազմակերպել անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներ՝ ուսումնական գործընթացի սահուն անցումն ապահովելու նպատակով:

Լսեցին 18. Մի շարք կարգերում իրականացված փոփոխությունների մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը ներկայացրեց 2026–2027 ուսումնական տարվա նախապատրաստման ընթացքում հանրակրթության ոլորտում ընդունված իրավական նոր կարգավորումները՝ նշելով, որ բոլոր մանկավարժները պետք է ուսումնական գործընթացը կազմակերպեն գործող իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

1. Զեկուցողը ներկայացրեց Հանրակրթության պետական չափորոշչում կատարված փոփոխությունները՝ նշելով, որ դրանք վերաբերում են ուսումնական բնագավառների կառուցվածքին, կարողունակությունների ձևավորմանը, ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներին, ուսումնական պլանների կազմմանը և գնահատման գործընթացի կատարելագործմանը:
   Իրավական հիմք. ՀՀ կառավարության 2026 թվականի մայիսի 21-ի N 699-Ն որոշում՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 439-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին»:
   Հղում՝ https://www.arlis.am/hy/acts/225446/latest
2. Ներկայացվեցին հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեության կազմակերպման կարգում կատարված փոփոխությունները, որոնք ուղղված են ուսումնական գործընթացի առավել արդյունավետ կազմակերպմանը և գործող կարգերի հստակեցմանը:

Իրավական հիմք. ՀՀ կառավարության 2026 թվականի մայիսի 21-ի N 714-Ն որոշում՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»։
Հղում՝ https://www.arlis.am/hy/acts/225420/latest

3. Զեկուցողը ներկայացրեց ուսումնական գործընթացի կազմակերպման և կրթության բովանդակության իրականացման կարգերում կատարված փոփոխությունները՝ կարևորելով դրանց կիրառումը նոր ուսումնական տարում։
Իրավական հիմք. ՀՀ կառավարության 2026 թվականի հունիսի 4-ի N 782-Ն որոշում՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 16-ի N 216-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»։
Հղում՝ https://www.arlis.am/hy/acts/226106/latest
4. Ներկայացվեցին հանրակրթության ոլորտի առանձին կարգավորումներում կատարված փոփոխությունները, որոնք վերաբերում են ուսումնական հաստատությունների գործունեության կազմակերպման գործընթացին։
Իրավական հիմք. ՀՀ կառավարության 2026 թվականի հունիսի 4-ի N 778-Ն որոշում՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1667-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»։
Հղում՝ https://www.arlis.am/hy/acts/226149/latest
5. Զեկուցողը ներկայացրեց կրթական գործընթացի կազմակերպման առանձին կարգերի կատարելագործմանն ուղղված փոփոխությունները՝ ընդգծելով դրանց կիրառման կարևորությունը։
Իրավական հիմք. ՀՀ կառավարության 2026 թվականի հունիսի 4-ի N 804-Ն որոշում՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 167-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»։
Հղում՝ https://www.arlis.am/hy/acts/226218/latest
6. Ներկայացվեցին հանրակրթության ոլորտի ֆինանսավորման և կազմակերպչական գործընթացների կատարելագործմանն ուղղված լրացումները և փոփոխությունները։
Իրավական հիմք. ՀՀ կառավարության 2026 թվականի հունիսի 11-ի N 821-Ն որոշում՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 30-ի N 954-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին»։
Հղում՝ https://www.arlis.am/hy/acts/226392/latest
7. Զեկուցողը ներկայացրեց հանրակրթության կազմակերպման կարգավորումների կատարելագործման նպատակով ընդունված հերթական փոփոխությունները։
Իրավական հիմք. ՀՀ կառավարության 2026 թվականի հունիսի 11-ի N 831-Ն որոշում՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի N 259-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին»։
Հղում՝ https://www.arlis.am/hy/acts/226393/latest
8. Առանձնակի անդրադարձ կատարվեց հանրակրթական ուսումնական հաստատությունների անվտանգության ապահովման նոր չափանիշներին՝ նշելով, որ դրանց պահպանումը պարտադիր է բոլոր կրթական հաստատությունների համար և պետք է արտացոլվի դպրոցի ներքին գործընթացներում։
Իրավական հիմք. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2026 թվականի ապրիլի 8-ի N 07-Ն հրաման՝

«Հանրակրթական ուսումնական հաստատությունների անվտանգության ապահովման չափանիշները սահմանելու մասին»:
Հղում՝ https://www.arlis.am/hy/acts/223768/latest

9. Ներկայացվեցին մանկավարժական գործունեության կազմակերպման և համապատասխան կարգերում կատարված փոփոխություններն ու լրացումները:
Իրավական հիմք. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2026 թվականի մայիսի 19-ի N 15-Ն հրաման՝ «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի նոյեմբերի 24-ի N 1640-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»:
Հղում՝ https://www.arlis.am/hy/acts/225467/latest
10. Զեկուցողը ներկայացրեց ուսումնական գործընթացի կազմակերպման կարգում կատարված հերթական փոփոխությունները, որոնք ենթակա են պարտադիր կիրառման 2026–2027 ուսումնական տարվանից:
Իրավական հիմք. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2026 թվականի հունիսի 12-ի N 24-Ն հրաման՝ «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի մարտի 5-ի N 24-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին»:
Հղում՝ https://www.arlis.am/hy/acts/226563
11. Ներկայացվեցին գնահատման և ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ կարգավորումներում կատարված փոփոխությունները:
Իրավական հիմք. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2026 թվականի մայիսի 21-ի N 19-Ն հրաման՝ «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի հոկտեմբերի 14-ի N 40-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին»:
Հղում՝ https://www.arlis.am/hy/acts/225764/latest
12. Զեկուցողը ներկայացրեց ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 7-ի N 1162-Ա/2 հրամանում կատարված փոփոխությունները՝ նշելով, որ դրանք ևս ենթակա են կիրառման նոր ուսումնական տարվանից:
Իրավական հիմք. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2026 թվականի հունիսի 12-ի N 1135-Ա/2 հրաման՝ «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 7-ի N 1162-Ա/2 հրամանում փոփոխություն կատարելու մասին»:
Հղում՝ https://escs.am/am/news/8193

Արտահայտվեցին՝ Ա. Դաջունց, Մ. Պետրոսյան, Մ. Դանիելյան, Ա. Աբգարյան

Արտահայտվողներն իրենց ելույթներում կարևորեցին 2026–2027 ուսումնական տարվա նախապատրաստական աշխատանքների պատշաճ կազմակերպումը՝ ընդգծելով, որ հանրակրթության ոլորտում ընդունված նոր իրավական ակտերը նպատակ ունեն առավել արդյունավետ դարձնելու կրթական գործընթացի կազմակերպումը, կատարելագործելու Հանրակրթության պետական չափորոշչի ներդրման գործընթացը և բարձրացնելու կրթության որակը:

Նշվեց, որ յուրաքանչյուր մանկավարժ պարտավոր է մանրամասն ուսումնասիրել նոր ընդունված որոշումներն ու հրամանները, առաջնորդվել դրանց պահանջներով և ուսումնական գործընթացը կազմակերպել գործող իրավակարգավորումներին համապատասխան: Կարևորվեց, որ թեմատիկ պլանները, գնահատման ձևերն ու մեթոդները պետք է վերանայվեն և համապատասխանեցվեն Հանրակրթության պետական չափորոշչի նոր պահանջներին:

Արտահայտվողները կարևորեցին նաև մեթոդական միավորումների համակարգված աշխատանքը՝ նշելով, որ ուսուցիչների միջև փորձի փոխանակումը, իրավական ակտերի համատեղ ուսումնասիրությունը, փոխադարձ խորհրդատվություններն ու մասնագիտական քննարկումները կնպաստեն նոր կարգավորումների արդյունավետ ներդրմանը: Առանձնակի ուշադրություն դարձվեց հանրակրթական ուսումնական հաստատությունների անվտանգության ապահովման նոր չափանիշներին: Ընդգծվեց, որ դպրոցի յուրաքանչյուր աշխատակից պետք է իր գործունեության ընթացքում առաջնորդվի անվտանգության պահանջներով՝ նպաստելով անվտանգ, առողջ, ներառական և սովորողակենտրոն կրթական միջավայրի պահպանմանը:

Արտահայտվողները համոզմունք հայտնեցին, որ ընդունված իրավական փոփոխությունների պատշաճ կիրառումը, ուսուցիչների մասնագիտական պատրաստվածությունը և հետևողական համագործակցությունը կնպաստեն 2026–2027 ուսումնական տարվա արդյունավետ կազմակերպմանը և Հանրակրթության պետական չափորոշչի լիարժեք իրականացմանը:

Որոշեցին՝

1. Ընդունել ի գիտություն 2026-2027 ուսումնական տարվա նախապատրաստման և հանրակրթության ոլորտում ընդունված իրավական նոր կարգավորումների վերաբերյալ ներկայացված զեկույցը:
2. Ուսումնական գործընթացը կազմակերպել Հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին համապատասխան՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2026 թվականի մայիսի 21-ի N 699-ն որոշումը:
   Հղում՝ https://www.arlis.am/hy/acts/225446/latest
3. Ղեկավարվել հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեությունը կարգավորող իրավական ակտերում կատարված փոփոխություններով, մասնավորապես՝ ՀՀ կառավարության 2026 թվականի մայիսի 21-ի N 714-Ն, 2026 թվականի հունիսի 4-ի N 782-Ն, N 778-Ն, N 804-Ն, ինչպես նաև 2026 թվականի հունիսի 11-ի N 821-Ն և N 831-Ն որոշումների պահանջներով:
   Հղումներ՝
   https://www.arlis.am/hy/acts/225420/latest
   https://www.arlis.am/hy/acts/226106/latest
   https://www.arlis.am/hy/acts/226149/latest
   https://www.arlis.am/hy/acts/226218/latest
   https://www.arlis.am/hy/acts/226392/latest
   https://www.arlis.am/hy/acts/226393/latest
4. Հանձնարարել մեթոդական միավորումների նախագահներին մինչև 2026-2027 ուսումնական տարվա մեկնարկը կազմակերպել նոր ընդունված իրավական ակտերի քննարկումներ և ապահովել դրանց պահանջների միասնական կիրառումը մանկավարժական անձնակազմի կողմից:
5. Հանձնարարել բոլոր մանկավարժներին վերանայել թեմատիկ պլանները, ուսումնական նյութերը, գնահատման ձևերն ու գործիքները՝ դրանք համապատասխանեցնելով գործող իրավակարգավորումներին և Հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին:
6. Ապահովել հանրակրթական ուսումնական հաստատությունների անվտանգության չափանիշների կատարումը՝ առաջնորդվելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2026 թվականի ապրիլի 8-ի N 07-ն հրամանով:
   Հղում՝ https://www.arlis.am/hy/acts/223768/latest
7. Ղեկավարվել նաև ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի N 15-ն, N 19-ն, N 24-ն և N 1135-Ա/2 հրամաններով սահմանված կարգավորումներով՝ ուսումնական գործընթացի կազմակերպման, գնահատման և փաստաթղթերի վարման ընթացքում:
   Հղումներ՝

https://www.arlis.am/hy/acts/225467/latest
https://www.arlis.am/hy/acts/225764/latest
https://www.arlis.am/hy/acts/226563
https://escs.am/am/news/8193

8. Որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել դպրոցի տնօրենին:

Լսեցին 19. «Տարվա սովորող» մրցույթի ամփոփման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում առաջին անգամ դպրոցում կազմակերպվել է «Տարվա սովորող» մրցույթը, որը կարգը հաստատվել է դպրոցի տնօրենի հրամանով: Զեկուցողը ներկայացրեց մրցույթի կարգըև հրամանի մանրամասները.

1. Յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին «Գորիսի Յուրի Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում անցկացնել «Տարվա սովորողին» մրցույթը: Մրցույթի նպատակն է խրախուսել այն սովորողներին, ովքեր աչքի են ընկնում ոչ միայն բարձր առաջադիմությամբ, այլև ակտիվ քաղաքացիական դիրքորոշմամբ, օրինակելի վարքով, պատասխանատվությամբ, ստեղծագործական և սոցիալական կարողություններով՝ համաձայն հանրակրթության պետական չափորոշչի պահանջների: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս ընտրել ոչ թե միայն լավագույն սովորողին, այլ դպրոցական կյանքի բոլոր ոլորտներում առանձնացող և չափորոշչային պահանջներին համապատասխան զարգացող սովորողին:
2. Հաստատել «Տարվա սովորող» մրցույթի գնահատման չափանիշները.
   2.1. 1–4-րդ դասարաններ
      2.1.1. Ուսումնական առաջադիմություն (30 միավոր)
         - Բարձր և կայուն առաջադիմություն
         - Ուսումնական առաջադրանքների բարեխիղճ կատարում
         - Սովորելու նկատմամբ հետաքրքրվածություն և նախաձեռնողականություն
      2.1.2. Կարողունակությունների դրսևորում (20 միավոր)
         - Հաղորդակցման կարողություն
         - Համագործակցային աշխատանք
         - Ստեղծագործական մտածողություն
         - Ինքնուրույն աշխատանք կատարելու կարողություն
      2.1.3. Դաստիարակվածություն և վարք (20 միավոր)
         - Հարգալից վերաբերմունք ուսուցիչների, համադասարանցիների և մեծահասակների նկատմամբ
         - Դպրոցի ներքին կարգապահական կանոնների պահպանում
         - Ազնվություն, պատասխանատվություն, բարեկրթություն
      2.1.4. Մասնակցություն դպրոցական կյանքին (15 միավոր)
         - Մասնակցություն միջոցառումներին, հանդեսներին, նախագծերին
         - Ակտիվ ներգրավվածություն դասարանի և դպրոցի նախաձեռնություններում
      2.1.5. Հաճախում և կարգապահություն (10 միավոր)
         - Անհարգելի բացակայությունների բացակայություն
         - Ժամանակին ներկայանալ դասերին

2.1.6. Համադասարանցիների նկատմամբ վերաբերմունք (5 միավոր)
- Օգնողական վարքագիծ
- Ընկերասիրություն և համագործակցություն

- Ընդամենը՝ 100 միավոր

2.2. 5–9-րդ դասարաններ

2.2.1. Ուսումնական առաջադիմություն և կրթական արդյունքներ (25 միավոր)
- Բարձր առաջադիմություն
- Գիտելիքների կիրառման կարողություն
- Ուսումնական պատասխանատվություն

2.2.2. Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված կարողունակություններ (25 միավոր)
- Լեզվական գրագիտություն
- Սովորել սովորելու կարողունակություն
- Թվային և մեդիա գրագիտություն
- Մշակութային կարողունակություն
- Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն
- Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն

2.2.3. Օլիմպիադաներ, մրցույթներ, նախագծեր (15 միավոր)
- Դպրոցական, մարզային, հանրապետական մրցույթների մասնակցություն
- Նախագծային աշխատանքներ
- Հետազոտական և ստեղծագործական նախաձեռնություններ

2.2.4. Դպրոցական և համայնքային ակտիվություն (10 միավոր)
- Միջոցառումների կազմակերպում և մասնակցություն
- Աշակերտական ինքնավարության աշխատանքներ
- Կամավորական և հասարակական նախաձեռնություններ

2.2.5. Վարք և դաստիարակվածություն (15 միավոր)
- Կարգապահություն
- Հարգալից հաղորդակցություն
- Դպրոցական արժեքների պահպանում
- Պատասխանատվություն և առաջնորդական հատկանիշներ
- Դպրոցի ներքին կարգապահական կանոնների պահպանում

2.2.6. Հաճախում (5 միավոր)
- Անհարգելի բացակայությունների բացակայություն
- Դասերին կանոնավոր մասնակցություն

2.2.7. Դպրոցի հեղինակության բարձրացմանն ուղղված ներդրում (5 միավոր)
- Դպրոցը մրցույթներում և միջոցառումներում արժանապատվորեն ներկայացնելը
- Ակտիվ մասնակցություն կրթական և հասարակական նախաձեռնություններին

➢ Ընդամենը՝ 100 միավոր

3. Հաստատել «Տարվա սովորող» մրցույթին մասնակցության պարտադիր պայմաններ.

3.1. «Տարվա սովորող» կոչմանը չեն կարող հավակնել այն սովորողները, ովքեր՝

- ունեն կարգապահական տույժ,
- ցուցաբերել են անհարգալից վարք կամ բռնության դրսևորումներ,
- ունեն բազմակի անհարգելի բացակայություններ,
- խախտել են ակադեմիական ազնվության սկզբունքները
- խախտել են դպրոցի ներքին կարգապահական կանոնները։

4. Հաստատել «Տարվա սովորող» մրցույթի հանձնաժողովի կազմը
   - տնօրեն՝ հանձնաժողովի նախագահ
   - տնօրենի տեղակալ՝ անդամ
   - ԿԱԴԱՀ՝ անդամ
   - հոգեբան՝ անդամ
   - ներառական կրթության բաժնի համակարգող՝ անդամ
   - մեթոդական միավորման նախագահներ՝ անդամներ
   - ԷԿԴԱՄ՝ անդամ
   - գրադարանավար՝ անդամ

   4.1. «Տարվա սովորող» մրցույթի հանձնաժողովի անդամը չի կարող ներկայացնել և առավելություն տալ իր դասարանի սովորողին, իր ազգակցին:

5. Հաստատել «Տարվա սովորող» մրցույթի ընտրության կարգը.
   5.1. 1-4-րդ դասարանների դասվարների և 5-9-րդ դասարանների դասվարների կողմից թեկնածուների ներկայացում՝ յուրաքանչյուր դասարանից մեկ սովորող՝ հիմք ընդունելով սույն հրամանի 2.1 և 2.2 կետերը:
   5.2. Սույն հրամանի 2-րդ կետով սահմանված չափանիշներին համապատասխան սույն կարգի 4-րդ կետով սահմանված հանձնաժողովի կողմից հայտերի գնահատում: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ համապատասխան ձևաթղթում գնահատում է մրցույթի մասնակիցներին, որից հետո հաշվարկվում է միջին թվաբանական գնահատականը և փոխանցվում ամփոփագրի մեջ: Գնահատման համար հիմք է հանդիսանում նաև սովորողի էլեկտրոնային օրագիրը, բնութագրիչները, միավորային գնահատականները (emis.am), դասագրքերի վիճակը, ներքին կարգապահական կանոններին հետևելը, ներքին կարգապահական կանոնների 7.2.5 և 7.2.6 կետերին հետևելը:
   5.3. 1-4-րդ դասարաններից լավագույն երեք և 5-9-րդ դասարաններից լավագույն երեք թեկնածուների քվեարկություն «Google Forms» հարթակում դպրոցի մանկավարժական աշխատողների կողմից:

6. Հաստատել «Տարվա սովորող» մրցույթի ամփոփման և սովորողների խրախուսման սկզբունքները.
   6.1. 1-4-րդ դասարաններում մրցույթի հաղթող է ճանաչվում սույն կարգի 5-րդ կետի արդյունքներով առավելագույն ձայներ հավաքած մասնակիցը:
   6.2. 5-9-րդ դասարաններում մրցույթի հաղթող է ճանաչվում սույն կարգի 5-րդ կետի արդյունքներով առավելագույն ձայներ հավաքած մասնակիցը:
   6.3. 1-4-րդ դասարաններում մրցույթի հաղթող ճանաչված մասնակիցը պարգևատրվում է հիմք ընդունելով դպրոցի «Գորիսի Յուրի Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրության 115-րդ կետը, ներքին կարգապահական կանոնների 7.5 կետը:
   6.4. 5-9-րդ դասարաններում մրցույթի հաղթող ճանաչված մասնակիցը պարգևատրվում է հիմք ընդունելով դպրոցի «Գորիսի Յուրի Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի

կանոնադրության 115-րդ կետը, ներքին կարգապահական կանոնների 7.5 կետը:

7. «Տարվա սովորող» մրցույթի արդյունքներն ամփոփել, պարգևատրությունն իրականացնել ուսումնական տարվա վերջին մանկավարժական խորհրդի նիստի ընթացքում:
8. Հաստատել «Տարվա սովորող» մրցույթի սույն կարգի 4-րդ կետով սահմանված հանձնաժողովի կողմից մրցույթի մասնակիցների գնահատման ձևաթուղթը (կցվում է Ձև 1, Ձև 2, Ձև 3, Ձև 4):
9. Սույն հրամանի կատարումը վերապահել դպրոցի ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյանին:
10. Հրամանի կրկնօրինակը տրամադրել «Գորիսի Յուրի Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունները կատարող Սերգեյ Ավանեսյանին:

Զեկուցողը նշեց, որ մրցույթը կարգին համապատասխան ամփոփվել է և արդյունքները հետևյալն են.

«Տարվա սովորող». 1-4-րդ դասարաններ

- Բաբաջանյան Կարինա Հրայրի, 3-րդ «Բ» դասարան, դասվար՝ Կարինե Պողոսյան, 20 ձայն, 32,3 տոկոս
- Գիչունց Լիա Լևոնի, 3-րդ «Գ» դասարան, դասվար՝ Ռիտա Շալունց, 13 ձայն, 21 տոկոս
- Երիցյան Նարե Քաջիկի, 4-րդ «Գ» դասարան, դասվար՝ Կարինե Մալխասյան, 29 ձայն, 46,8 տոկոս:

«Տարվա սովորող». 5-9-րդ դասարաններ

- Տատինցյան Ալետա Վահեի, 6-րդ «Ա» դասարան, դասղեկ՝ Լուսինե Բաղդասարյան, 24 ձայն, 38,7 տոկոս
- Մելքումյան Միլենա Միհերի, 8-րդ «Գ» դասարան, դասղեկ՝ Մերի Դանիելյան, 22 ձայն, 35,5 տոկոս
- Քոչարյան Հենրի Արթուրի, 6-րդ «Բ» դասարան, դասղեկ՝ Սիրուշ Բաղդասարյան, 16 ձայն, 25,8 տոկոս:

Զեկուցողը նշեց, որ «Տարվա սովորող» մրցույթի 3 փուլերի արդյունքներով հաղթող են ճանաչվել.

«Տարվա սովորող». 1-4-րդ դասարաններ

- Երիցյան Նարե Քաջիկի, 4-րդ «Գ» դասարան, դասվար՝ Կարինե Մալխասյան:

«Տարվա սովորող». 5-9-րդ դասարաններ

- Տատինցյան Ալետա Վահեի, 6-րդ «Ա» դասարան, դասղեկ՝ Լուսինե Բաղդասարյան:

Արտահայտվեցին՝ ՄԽ անդամները

Արտահայտվողները կարևորեցին «Տարվա սովորող» մրցույթի կազմակերպումը՝ նշելով, որ այն խթանում է սովորողների ուսումնառության նկատմամբ պատասխանատվությունը, ակտիվ մասնակցությունը դպրոցական կյանքին և ձևավորում առողջ մրցակցային միջավայր: Նշվեց, որ մրցույթի գնահատման բազմակողմանի չափանիշները հնարավորություն են տալիս արժևորել ոչ միայն ակադեմիական առաջադիմությունը, այլև սովորողների վարքը, կարողունակությունները, նախաձեռնողականությունն ու հասարակական ակտիվությունը:

Արտահայտվողները շնորհավորեցին մրցույթի հաղթողներին և ընդգծեցին, որ նման նախաձեռնությունները նպաստում են սովորողների մոտիվացիայի բարձրացմանը և դպրոցի արժեքների ամրապնդմանը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն «Տարվա սովորող» մրցույթի 3 փուլերի արդյունքներով հաղթող սովորողներին

«Տարվա սովորող». 1-4-րդ դասարաններ

- Երիցյան Նարե Քաջիկի, 4-րդ «Գ» դասարան, դասվար՝ Կարինե Մալխասյան:

«Տարվա սովորող». 5-9-րդ դասարաններ

- Տատինցյան Ալետա Վահեի, 6-րդ «Ա» դասարան, դասղեկ՝ Լուսինե Բաղդասարյան:

Խորհրդի նախագահ՝ _____ Ս. Ավանեսյան

Քարտուղար՝ _____ Լ. Բաղդասարյան

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Մանկավարժական խորհրդի արձանագրությունների ամփոփման

2025-2026 ուսումնական տարվա ընթացքում *Մանկավարժական խորհուրդը* գումարել է *11 նիստ (որից 1-ը՝ արտահերթ)*, որոնց համար կազմվել է *11 արձանագրություն։*

Մանկավարժական խորհուրդը նիստերի տվյալները՝ ստորև.

№	ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԸ	ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ	ՔՆՆԱՐԿՎԱԾ ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՔԱՆԱԿԸ
1	1	28.08.2025	20
2	2	31.10.2025	6
3	3	26.12.2025	13
4	4	23.02.2026	12
5	5	27.03.2026	2 (արտահերթ)
6	6	03.04.2026	2 (արտահերթ)
7	7	29.04.2026	4 (արտահերթ)
8	8	23.04.2026	13
9	9	14.05.2026	14
10	10	27.05.2026	5
11	11	29.06.2026	19

Մանկավարժական խորհուրդի սույն արձանագրությունների մատյանը կազմված է *127* էջից։

Խորհրդի նախագահ՝ _____ Ս. Ավանեսյան

Քարտուղար՝ _____ Լ. Բաղդասարյան

«29» հունիսի 2026թ.